սիրուս առաջնութրայ առներ, և ես յինչն և ասացած  
խօսքերես կ'ամսաշէի: Խնչ բանի կուզայ իմաստանէր  
լինեյն, ասէի ինքնիրենս, երբ մեր ալ ուրիշներուն  
պէս գերի եմք շնչնու պատշաճութեանց և նախա-  
պաշարմանց աշխարհնի, թողով բարեկամնիս մերձա-  
կոյ վասանցի մեջ և չհամարժակելով գոնե խօսքով  
մի վասանցն իրեն իմացնելու: — Այլ առաջ, ուզիզն  
զրուցեմ, որչափ ալ որ կ'ամսաշէի վաստութիւնն բա-  
նի աեզ չդրի. և թեարեւ խիզն կը զարներ լռու-  
թեամս և առաներուս զրայ, առկայն հիւանդին ցու-  
ցած սիրովս ու իմամբովս կը բանայի խզնիս ձայնն  
ըսեցնել: Խեզ կ'առկարն ալ շնորհակալ լիներ. և թեր-  
ես այսպիսով բաժնուելիս յառաջ քանի մի քաղցր  
վայրիեաններ անցնելով տուի իրեն. որովհետեւ ալ յոյս  
ըսենի նորեն զինքն առանելու: Բայց ինչ բանի կու-  
զային իրեն այս խօսքերս. անցեալ կենաց ամեն հա-  
նոյական յիշատակութիւններն՝ ապազային մի յու-  
սոյ հառագայթ ոչ արժեն: Այն սարսափելի ապա-  
զայն որ առկաս ժամանակէն ներկայ պիտի լինի՝ աշ-  
քերնուս առնել բերելու կը մասիններ, և առկայն նա  
մեր առնել կեցած և իւր խորհրդական մի՛ ութեամբն  
սպանացից ուրուականի մի պէս:

Քառորդի մի լափի իր հետ մինչեւ մասցի, և պէտք  
է խօստավանիմ որ իրեն զրայ ունեցած սիրովս հան-  
գերձ շատ երկայն կ'երեւեր ինձ այս ժամանակս, և  
կը նայեի որ կերպ մի գանեմ կեծիկն զնեմ հեռանեմ  
ոչ այնպիս մահուան մասնեալուն ախուր տեսարա-  
նեն գամբուելու համար, այլ աւելի կեղծաւորական և  
իմ պիհակիս անպատճի գիրքն ազատելու համար:

Բարեբազզաբար քանի մի բարեկամներ վրայ հասին  
և անկողնոյն բոլորտիքն շարուեցան որոց ամենուն  
ալ ինտում երես ցուցնելով՝ գրեթե ինձ առաջած-  
ներն իրենց ալ կրկնեց իւր առողջութեան ու համ-  
բորդութեան վրայ խօսելով։ Բայց խօսելին հազնե-  
լով՝ յանկարծ սասափի հազ մի բանեց զինքն և ակառ  
արիւն փախել, այնպէս որ կոնքն լեցուեցաւ, և ինքն  
անկառ փռուեցաւ՝ հանգերած թերժի տաքութեամբ։  
Կանայք վազեցին շորս կողմէ առին կարելի եղած  
դարմաններն առնելու. իսկ ուրիշներն առզերնին դա-  
մաւած մեացին ինչ առնելիքնին և առելիքնին չցիաելով  
ու ահուգողի մեջ անկանելով։ Իսկ հիւանդն գրեթե  
բոլորովին անզգայացած ոչ կը լսէր ոչ կը տեսնէր, և  
եթէ խօսելու համար սակաւ մի ինքզինքն բռնագա-  
տէր՝ բանն բուսած էր. մեք ամենքնիս ալ լեզունիս  
կապուած՝ այքերնիս հագեգարբին վրայ անկած՝ կար-  
ծեինք թէ համար պիտի մեռնի. իսկ ես առանձինն կը  
մասնէի թէ որչափ անզօր ևն բոլոր աշխարհիս ոգ-  
նութիւններն մահուան ժամանակ. չո՞ն եօթն ութէ  
հազի ոզի առողջ մարդիկ՝ որ սրտանց հիւանդն կը  
սիրեինք և կը փափաքէինք կերպով մի նմա զգնելու.  
և սակայն առելիքնիս առնելիքնիս ոչ գիտեինք. և  
ակամաց մոքես կանցնէր թէ կայ մարդ մի՝ որ ուրիշ-  
ներուն բան մի շերցած առենն ինքն կարեր կերպիւ-  
իսիք ոզնել իրեն եթէ ոչ խօսքով զոր հագեգարբն  
կարողութիւն չուներ լսելու, գոնէ մասեցն լով իրեն  
խայելութիւնն զնանն փրկութեամբ զարթուցանե-  
լով իր հազւոյն մեջ անցեալ յանցուածոց զիզջն և  
զփափաք քաւելու զնոսա իր մահուամբն, և տալով  
նմա նշոյլ իմ յուսոյ և ակնկալութեան։ Աւ ինքն  
իրենս ասէի թէ Յիսուսի Քրիստոսի քահանացին իւր  
պաշտամոն իշխանութեամբն և խորհրդոց զօրու-  
թեամբ, կենաց և մահուան համար ոգնութիւններ  
ունին երբ աշխարհիս ոգնութիւններն բանի ոչ գան.

և ես իմաստառերս՝ որ 'ի բազմաց հետեւ եկեղեցին ուրբ կոխած չէմ', բայց մանեկութեանս հաւատքովն քահանային թիշ լինելը կը հանաւեմ, ակամաց կը ցաւեի որ մէջերնիս քահանայ մի չկար, և 'մահուան ամենէն աւելի հարկաւոր մարդն մեզ կը պահպահ' :

### ՅԵՍԻՒՆ օԳՆՈՒԹԻՒՆ

13. ԿՐՈՆԱԿԱՐՔ :

Ամեն բան աւարտեցաւ. Ետկար այս գիշեր հազին աւանդել է. Երեկուան իմ ականատես եղած հգնա- ժամին չէ գիտացել. բայց մեռնելէն առաջ քահանայ մի գանուել է քովն և միմիթարուել է. և եկեղեցւոյ պաշտօնելին ձայնն նորա սրտին մէջ զարթուցանելով իւր մանեկութեան հաւատքն՝ քրիստոնէական զգաց- մամբ վախճանել է. ուստի այն բանն զոր երեկ կը փափաքեի և կը ցաւեի՝ մերձակայից անկարոզու- թիւնն տեսնելով՝ եղել կատարուել է. ևս ալ ուրախ էմ, որովհետեւ մեր տալ չկարոզացած խազազու- թիւնն ու միմիթարութիւնն ընդունել է. Անցածն ինը որ կուզել թող լիցի. Եւ այնպիսի զարմանալի կերպով մի եղել և այս բանս՝ զոր չեի կարոզ գու- շակել. այն բանն զոր իմաստառեր և իմաստունն ու դրագետ բարեկամիք չեին կարողացած չնորդել հո- գեվարքին՝ որ է մահուան մօս յօս և խազազու- թիւն, բարի կին մի կարոզացել է առնել, և այն վայրկեանին՝ որ հոգւոյ յափառենական ապագայն պիտի որոշուի՝ իեղն աղախին մի պատճառ եղել է նորա փրկութեանն՝ եթէ փրկութիւն առացած բանց կայ. գեթ իւր հաւատքովն և քաթասրտութեամբ՝ զեղ ալ մեծ առատամութենէ ազատել է:

Ետկարին տունն իրեն երկրէն սպասուուր կին մի կար՝ որ ժամանակաւ իրեն ծծմացըն և իւր տզայութեան ինսամածուն եղած էր, և իւր զաւեկին պէս կը սիրէր, և թէպէտ ազախին էր՝ բայց իւր գրեթէ մայրութիւնն և տիրոջն ալ իւր վրայ ունեցած սէրն տան մէջ տանտիկնով իշխանութիւն մի տուած էին իրեն. ուստի գրեթէ առանձնաշնորհութիւն մի ունէր սրտէն կամ իւելքէն անցածն զրուցելու. և որովհետեւ գերգաստանին բարօրութեանն բոլորովին ինքնինքն նուիրած անձն մի էր, և բարիքէն զատ ուրիշ բան զործած լունէր՝ այնոր համար զրուցած նէրն ծանր չեին զար և շատ անգամ ալ կը կատարուէին:

Տիրոջն հիւանդանալէն 'ի վեր' Կատարինէն բուր կեանիքն զայն գարմանել, նորա ման հսկել և իրեն ծառայել էր. մանկութենէ նորա կազմուածքն զիտելով իւելքով կը գտներ թէ նա ալ պիտի չապրի, և մարմնոյն առզնանալէն յոյան կարած՝ եւանցեածն նորա հոգուցն քրիութիւնն կը հոգուցը, զոյ իւր բարի քրիստոնեաթեամբն՝ կորառն ան համբումէջ կը համարէր, քանի որ իւր տերն իմաստառեր լինելէն 'ի վեր ոտառուեան և իրիկուան ազգմքն ու կատարելու, և կիրակի օրերն պատարագ լսելու ու երթար': Արդէն շատ անգամ իւր տիկնովն ասացել էր՝ որ այսպիսի ծանր հիւանդութեամբ բռնուած քրիստոնեայ մի, կրօնից օգնութիւններէն զուրկ թուղուն մեծ մեղք է. և թէ մարմնոյն հետ հոգին ալ հոգալու է, և թէ իր երկիրն հիւանդութիւն մի հասածն պէս բժշկէն առաջ քահանացին կը վազէին: Ետկարի կինն իւր սիրով կուրցած՝ և տեղի վախճառով որ մի գուցէ իւր այրն խռովի ու վախճայ, նորա ազգարարութեանցն ականջ չեր կախած, այն պէս որ իւելք Կատարինէն՝ որ իւր հաւատոց աշըրն նորա վրայ կը հսկեր՝ անհանգարտ տափնապի մէջ էր

իւր տիրով անկողնոյն մաս, գիտելով և առթի մի ըստ պատելով որ նմա իւր որտե՛ն անցածն առէ, զնա առ Աստուած գարմանելու և քրիստոնէական պարտքին կատարել տալու համար, ու գիշեր ցորեկ այս բանս կը մտածեր:

Եթէ կուսան գեղքով ոչ խեղճպառաւին համբերութիւնն հատառ. ժամանակն յարմար էր. ուստի իւր հաւատոց եռանդեամբն և գրեթէ մոյրական իշխանութիւն մի ցուցանելով իր աիկնօջ հետ վիճաբանել սկսաւ բարկութեամբ՝ որ պարագային ծանրութեան նայելով ներեցի էր. Յոյտնապէս զրուցեց իրեն՝ որ ալ ինքզինքն շիսարէ, վասն զի Ստկարին բանն ընցած էր և քանի մի առուր կետեց միայն ուներ, և եթէ ոչ կամեր որ նորա հոգացն կորուսն իրեն յաւիտեան խիզէ լիցի՝ պէտք էր որ անյապազ քահանայ մի կոչել տար Աստուածոյ հետ զինքն հաշուեցնելու համար, և թէ ամօթ ու մեծ մեզք էր թողով որ քրիստոնեայ մի առանց Եկեղեցւոյ խորհուրդներուն մեռնի. և վերջապէս եթէ ինքն սիրու ոչ առեւր հիւանդին հետ խոսելու. ինքն իր մրոյ կառնուր այս բանս. Եւ այնչափ ուժով եռանդեամբ և միանդամյն խանդազատանք խոսեցաւ՝ որ աիկին Ստկարին սիրան շորժեցաւ ու տակնումքոյ եղաւ. Մարդկանց կողմանէ օգնութիւն մի շատենելով՝ Աստուածոյ մրոյ գրաւ յցուն, և իւր երկան իմաստասիրութեամբն իր թմրած հաւաքն ալ վասնդն առ անելով արթնցաւ՝ ազախնցն եռանդուն հաւապովն, ինչպէս որ գայլախաղըն կայծ կը ցատքէ երբ երկաթով կը զարնես։ Իւր խիզմն ալ որոյ գեմ կը բոզդիք այս բարեկինն, ասրաւագեցաւ՝ իւր սրատասիրանուառութիւնն առենելով. և ինքն ուժ չունելով այս բանս առնելու. Կատարինէի թողուց որ հիւանդին հետ խօսի։

Բարի կինն առանց տարտամելու. շիտակ Շամբայի բանեց, առանց երկայն գարմաւածներու մեզմզուր.

ցուածներու և Շարուասանտկան պատրաստութիւններու, և կարուեկ կերպով իր վախճանին հասաւ, որովհետեւ կորուսանելու ժամանակ ալ չկար, ըստով և առանձէլ ևս քրիստոնէական կարիք խօսքով իմացուց տիրովն որ պիտի մռներ, և մահուան պատրաստուելու ժամանակ միայն մեացել եր իրեն։ Յետոյ առանց ուրիշ խօսքերու՝ առաջարկեց որ քահանայ մի բերե իրեն, որպէս զի պէտք եղածն կատարե ինչպէս որ իր երկիրն առնեին, և ինչպէս որ իր ծնողքն և պապերն արարեալ էին, այսինքն բարի քրիստոնէի մի պէտք մռնիլ:

Հիւանդին սիրոն շարժեցաւ այս իւեզչ կնոջ հաւատքին և քաղցր սիրոյն որոյ ըարեպաշտ ու պարզ խօսքերն կարծես թէ զինքն յանկարծ իր հայրենիցն և իւր հայրենի առան մոխիագրեցին, և միուր բերին իւր մանկութեան կեանքն և հօրն ու մօրն քաղցր յիշատակն որ մինչև վերջի շունչերնին հաւատարիմ կաթողիկեայ ապրած և եկեղեցւոյ միութեան մէջ մեռած էին։ Այս կենցանարար մասածութիւնս հանգերմեալ աշխարհէն վայս անուշ հոգի մի պէս՝ իւր հոգւոյն ամսպերն վանեց վարատեց, զովացուց և քանդեց, և պարզութեամբ հանգարտութեամբ և առանց այլայլու պատասխանեց. Իրաւունք ունիս կատարինէ. գնաւ քահանայ մի բեր ինձ որպէս զի մեր երկիրն ինչպէս որ կը մռնին՝ ես ալ նոյնպէս կեանքս աւարտեմ։

Կատարինէն վազեց իւր խոստվանահայրն թերաւ՝ որ պատռաւկան և սուրբ քահանայ մի եր՝ թէ ելիւ իմաստուն չեր, որ մահուան առն ալ աւելի լաւագոյն և թէ իւր անմին և թէ այլոց համար. սակայն իւեզչ կնոջ մաստանթութիւնն այնու չըմնցաւ։ Երբ քահանայն հասաւ՝ հիւանդն ոզնամամ մ'ալ ունեցել եր, և թժիշին ահապարանոք գալով և պէտք եղած հանգարտցուցիւ վեզերն տալով՝ ապսպրել

Եր որ ամենենին մարդ չմանեւ հիւանդին քով և շիռափ ,  
առելով թէ իւր կեանդքն անտի կախուած էր , և իսու-  
քով հոգնութիւն մի կամ որ և իցէ յուզումն՝ կարեր  
արիւն փախել առև՝ որ վերջինն պիտի լիներ : Պա-  
տուական քահանայն համբերութեամբ երկու ժամ  
սպասեց՝ որպէս զի հիւանդն առկաւ մի հանդիյի և զ-  
րանց . և այս ժամերս իրեն առելի ծանր էկին տիկին  
Ատկարին հետ ունեցած վիճարանութեամբն . վասն  
զի այս կինո յուսահասութենին ինչ ասացածն ցցի-  
տելով՝ կարծեր թէ քահանայն իւր այրն փրկելու-  
գիտմամբ՝ նորա մահն պիտի գումարացներ : Քահա-  
նայն քաղցրութեամբ բայց միանդամայն և հասա-  
սութեամբ գեմ դրաւ . և վերջապէս թաղուցին որ  
ներս մոնէ , որ երբ անկողնայն մօսեցաւ՝ հիւանդն  
սիրով ընկալաւ զիս՝ նորա բասքերն լսեց և խոսու-  
մանեցաւ՝ իւլքին կատարեալ զլուխն լինելով՝ թէ .  
ովետ և մարմինն ակար և ցաւոց մէջ էր , և կէս ժամ  
քահանայն հետ մնաց՝ առանց արկած մի հանդիպե-  
լու . այնպէս որ երբ իւր յուսահատ կինն նէ րո մուա-  
զինքն առանելու , զիս հանգարաւ և զուարժ առանե-  
լով շատ զարմացաւ : Սիրով և խանդաղատանք համ-  
բուրեց իւր կինն , և վերջին մնաս բարօխն ասաց՝ նման  
յանձնելով իւր զաւկներն , առելով թէ Աստածոյ  
նախանձնամութիւնն զիրենք պիտի հոգար , որովհե-  
տեւ ալ հայրերնին կը կորուսանենին . շնորհակալ եղե-  
կեռքն որ թողել էր քահանայնն իւր քովն դալու .  
որովհետեւ իւր այն վիճակին մէջ առնենին մեծ ծառա-  
յութիւնն արարեալ էր իրեն այն բանով :

Այս բաներունոյն իսկ կինն պատմեց ինչ Երկրորդ  
օրն երբ առաւասուն զնացի հիւանդն հարցնելու .  
որ նոյն զիշերն հանգարաւ մարել մեռել էր զրեթէ  
առանց հոգեվարք քաշելու . մեռին մին կնոջ ձեռաց  
մէջ , և միւսովն կուրծքին վերայ սեղմելով փորբիկ  
խաղելութիւն մի՝ որ իւր առաջին հազարդութեաւ

առեն տուել էին իրեն, և զոր Կառարինեն բարե-  
պաշտութեամբ պահել էր մինչև այն առեն, երբ  
պառաւ աղախինն անկողնոյն ուղին ծնկան վերայ  
եկած՝ ըոլոր սրաով հոգեվարաց ազամքն կը կատա-  
րէր :

Արդեօք աւելի քրիստոնեայ քան թէ իմաստա-  
սիրի պէս մեռնելն լաւ արար թէ չէ, բան մի չեմ կա-  
րող զրուցելու, և ոչ կարեմ ալ զինքն մեղադրել:  
Այս մայն գիտեմ որ ես իմաստաւեր և իւր վար-  
գապեան լինելով թոլոր իմ գիտութեամբս չկարացի  
բան մի առելու և առնելու իւր վերջին մայրեան-  
ներն քաղցրացնելու և ապագային վերայ յոյս մի  
տալու համար, մինչգեռ խեզք ագետ կին մի լի հա-  
ւագրով իւր հաւատոց իրեն չնշած առաքինու-  
թեամբն և քաջութեամբ՝ եկեղեցոյ օգնութիւն-  
ներովն ետնմա մինիթարութիւն զրութիւն և յոյս:

## Թաղումն

Ա Ն Կ Ե Մ Ք Ե Ր :

Սասաիկ հոգնած եմ, ոչ այնչափ այս աւուր աշ-  
խատանցէն՝ որչափ սրտիս ալեկութենեն՝ ու ան-  
հանգստութենեն. մահուան երկայն ժամանակ տեսած  
տեսարանն վերջապես զմարդ արտօնութեամբ կը  
լեցընէ. շատ տարիներէ՝ ի վեր սիրելի եղած բարեկամի  
մի մահն սիրտս կը վիրառորէ ու կեղեգէ, մանաւանդ  
երբ կը մասնեմ որ ալ սիրաի շատ մեմ զինքն. իսկ  
եր վերջին ժամուց սրբագայներն զիս իր թազման  
հրաւիրեալ բարեկամաց առջև տագնապոզական զի-  
նակի մի մէջ ձգելով աւելի կը վհատեցնէ: Այս բարե-  
կամներէս ուսանք յիրաւի արտօնած կ'երեւին Ետկա-  
րի գազահաս մահուան վրայ, իսկ շատերն հան կու-

դայթն՝ միայն ընկերական պատշաճոց լուսաբարձր մի կա-  
տարելու գիտմամբ։ Իրենց երեսաց մրայ արտահո-  
թիւն ապաւորուած։ և սուզի զցեսաներ հազար։  
Ասծ ժայթով կը խռովին վախճանելոյն քրիստոնէա-  
քար մեռնելուն մրայ, և իրենց հայեցուածքն կը  
համենայի թէ շատ զարմանք կը թերեր իրենց այս  
բանն, և զիս ալ այս եղածիս պատճառ կը համարեին։  
թայց յանիբրաւի։ կամ գոնէ կարծէին որ Եթէ ես ու-  
զեի՝ ուրիշ կերպով կարեր աւարտիլ այս բան։

Կարելի է . . . ուզց այսպէս ուզելու համար՝ ես ալ  
պատճառ ունելու էի՝ զոր չունիմ։ Պետք էր որ ես  
ալ համոզուած լինէի՝ որ իմաստառերն ալ սոյի-  
կեանի մի պէս ամբարտաւանութեամբ մեռնելու է։  
կամ եպիկուրեանի մի պէս անհոգութեամբ, կամ  
վերջապէս անառնոց մի պէս ապշտեամբ և անրա-  
նութեամբ։ Խակ արդ որովհեան ես ոչ Զենոնի աշա-  
կերա եմ և ոչ Եպիկուրոսի և անքան անառուն մի  
ցլինելուս մրայ ալ կը պարծիմ, ապա ոչ կարեի բա-  
րե կամիս այնպիսի խորհուրդ մի տակ՝ զոր ես ինքն  
շեի կարող գործադրել այնպիսի գիտուածի մի մեջ։  
Խնչ առնելու էի ուրեմն՝ ես ալ ոչ գիտեմ։ և հաս-  
տատապէս միայն գրած եմ որ ինչ եզե՝ լաւ եզե,  
որովհեան զոնէ առնենէն աւելի ապահով կողմն և մեր  
աստամութեանց մեջ։

Հրաւիրելոց մեջ կային նաև խելացի մարդիկ և  
շատ քրիստոնեայիներ՝ յորոց ոմանք տաել կուզելին թէ  
ամեն մարդ ազատ և ուզածին պէս մեռնիլ, և ուրիշ-  
ներն իրաւունք չունին այս բանին մեջ խառնուելու։  
որովհեան վերջապէս վնասն ու վտանգն իրեն անկա-  
նի, ոմանք ալ շատ դու՛ կ'երեւեին որ վախճանեալըն  
եկեղեցւոյ հետ հաշտուելով՝ որշափ որ կարեր իւր  
հոգւոյն փրկութիւնն հոգացել էր։ Կային շատերն  
ալ որ կարծես թէ բան մի ոչ մասնեին, թազման  
համար հրաւիրուած լինելով ներկայ կը դառնեին։

որպես թէ պատկի հանգես մի լիներ, վոխամնակ ու բախակցութեան ցաւակցութիւննին յայտնելով, և ուրախ զիմաց տեղ՝ տրառմ երես ցուցանելով:

Շամբայ Ելաք Եկեղեցին երթալու՝ որ անեն բաւական հեռու էր: Թագիօրին կարդի մանելն, հրաշիրեց տեղերնին զետեղին և բազմութեան շարժումն ազոյ տիսուր խորհուրդներն հանդիսականաց մաքեն առկաւ մի վարատեց, և բանազրօշած աշխրաւթենեն զիրենք ազատեց: Խամբուն զով օդն ալ սրտերնին բացու, և ժողովրդեան բազմութիւնն որ իրարու վերայ զիջուած հանդիսատես լինեին մշտքերնին սթափեց: Եւ որովհետեւ մասանց զիտող շիար որ զմեզ բանագատեր՝ զազուած ընութիւնն արձակութիւն գանելով վոզոցին խառնաշխով ազականին մեջ այր ընդ ընկեր խօսակցութիւնն ակըսաւ նոյն օրն հագիպածներուն վրայց: Թէպէտ և ցած այցել առկայն ամենքն ալ ժամանակին նիւթոց վերայ կը խօսեին, քազաքականութեան, գրամատան և օրոգրաց՝ որ աշխարհին ամենեն առելի կարեւոր նիւթերն կը սեպուին. որովհետեւ պատշաճութեան համար թատրոններու և հանդեմերու վերայ չեր խօսուեր. այսպէս և ահա աշխարհիս ընթացքն զեթ աշխարհասիրաց և իմաստասիրաց մեջ: Իսկ քրիստոնեայց պատկառելի ըստ թեամբ մի իրենց մեռելին եռեւէն կերթային. իսկ ես որ առն այնպատի արտմած և շիտութած եմ՝ որ բան մի ոչ զանելի խօսելու:

Եկեղեցին համելով խեզ Առկարիս մարտին կառքեն վար առնլով առանքին մոռցին՝ ուր որ՝ 'Ի հող դառնազըն առաջ ուստի որ առնուած էր, վերըն օրհնութիւն մի պիտի արուեր իրեն: Յիրաւի գեղեցիկ արարողութիւն՝ որ յայտնապէս ծանուցանե որ մարզս ուրիշ անամենց պէս անրան մի չէ, և թէ իւր մացած մարտին ևս նուիրական է՝ որով

հետեւ զինքն կենդանացնող հոգւոյն վերջին մացորդն է : Մանաւանդ թէ նոյն բոկ մարմարյն յարութեան նշանն ու ակնկալութիւնն կը համարիմ այս բանս . որովհեան եթէ այս ակնկալութիւնն չլիներ՝ պատ- ճառ մի չեար այսլափ արարազութիւններ կատարել և այօպափ պատիւներ շնորհել վոռւոյ մի որ քիչ ա- տենեն ուրիշ տարերաց հետ պիտի խառնուի և կոր- սուի : — Եաւ ատեն եր որ եկեղեցի մասն չեի՛ գեթ թաղման համար , ուստի շատ զգածուեցայ . պատա- րազն ազգու և վաեմ է , և եղանակներն ալ շատ բա- յարձարան են սրբազնն ասացուանեներուն հետ . Օր բարիւթեան երգն վաեմ , իսկ ի Խորշ ի-ը-ր-ին զմարդ կ'ընկնէ ու կը չեցի : Հան կիմանաս անբողոքելի ու անօպելի գատաւորին առջն կեցող մարդուն խեղ- հութիւնն : Ակամայ կերպով միայս եկան մանկու- թեան հաւասար , յիշատակներն , և ատենոք ունեցած բարեպաշտեանս եղեւել գրերն երեակայու- թեանս մեջ նորոգուեցան , և այս ստուերակներոյ պատերներս Յակարին ուրուականին հետ խառ- նուելով և նորա հանգստարանին շուրջը բոլորելով այնպիսի ազգեցութիւնն մի արարին վրաս որ գրեթե յանցդաստից և ակամայ եկեղեցւոյ ազթից ձայնա- կից լինեի՛ իմ խեղն բարեկամիս հոգւոյն համար : — Աւազ , ինձ հանդիսակից եղողներէն շատերն իրենց այսց առջին եղանեւրուն չեին մասնակցեր , թէպէ ա- և արտաքուստ պատկառանոք՝ արարողապետին նշան- ներուն հետեւելով ոոք կելնեին ծնրադրեին ու կը հստեին : — Եատերն ալ կերեկը որ բան մի ոչ իմա- նային . ուրիշներն ալ անտարակոյս կորովամութիւն ցուցանելու համար՝ և հաւատքն իրենց փոքրոցու- թիւն համարելով՝ կը ձեացնեին թէ անենեին մաս- նակից ոչ լինեին արարողութեանց կատարուելուն . այսուընին ազիս անդին նաև եաւնեին գարմնելով . ձեռուընին գրապանն կամ կռնակնեին դրան , որպէս ո զի-

իրենց արհամարհութիւնն կամ զանէ անտարբերութիւնն առելի յայտնի ցուցանին, որ ունացնամասնեւան վերջի աստիճանն էր. և իրաւոյնէ մարդ չկարէ հասկեալ թէ բնապիւ բանաւոր արարած մի այս յիմարութիւններս իրեն պարբեանք կարէ համարել մարդկօրէն խռովը երեսնին ապառկ զարնելով կուգար:

Որպափ որ անհաւատ եմ՝ այս բաներս զիս կը գոյ թակզեցնէ. զան զի վերջապէս մարզս պէտք է որ պատկառելի բաներն պատռէն եթէ ոչ համոզմամբ զանէ առ պատշաճի և մարդավարութեան. Այս մարդիկս իրենց աւուր գործն աւարտեցին՝ որ այնպափ անշնորհք կերպով կը կատարէն՝ շտապաւ օրհնեալ Ըուրն սրսկելով գաղաղին վրայ՝ առանց գործածնին գիտելու. այսպափ միայն հասկեալով որ զիրենք ձան. Հրացնող և խորվող հանգեան աւարտելու վրայ էր: Բարեբազզարար քանի մի բարի հոգիներ ալ կային որ կուլպյին ու սրանց կազմենին, և յուսում որ իրենց արցունիքն և ազգմքն եթէ ուժ մի ունին, հանգիստկանաց անհաւատութեամբ. Ասունծոյ գեմոր ծած նախատիքն քաւած լինի իմ, ալ միատեղ:

Գերեզմաննաց հասնելուում՝ յազարկաւորոց շատերն թաղել գնացել են, և գերեզմաննի բոլորտիքն քանի մի ազգականների բարեկամներէ ու ծառայներէ զառ ուրիշ մարդ չկար: — Ըստանին թագ ազատել էին որ դամբանոկան մի խօսիմ. բայց ես հրաժարեցայ. և անցած զնացան դիտելով՝ շատ վրայ շտանին, և հասկցան հրաժարման պատճառն. և ինչ կարէի խօսէլ: Այնոր անզ երկու պազարուր նաև երեք խօսուեցաւ. ոմն որ հանգուցելովն պաշտօնակիցն էր նորա վազահամ մահն կողքար՝ որ ընկերութեան կարեւոր անզամներէն մին յափշտակել էր՝ որ նման շատ ծառայութիւն կարէր մասուցնել, և այն իսկ այս երիտասարդս իւր երկայն աշխատութեանց պըտ.

զէն կը զրկէր՝ չիւշ նոյն առենք երբ իւր ցանկացած  
վախճանմբն պիտի համեւեր։ Ուստի այս խելացի պա-  
րանե մահն ուրիշ բան ոչ համարելը՝ բայց եթէ յա-  
սաթագիտութեան արգելք ու խափան մի։ Խակ այս  
աշխարհէս ելնելին ետև գաղի ապագային վրայ բան  
մի ցըրուցեց։ Հաւանականաբար այս բանս և ոչ մորէն  
անցել էր։ — Ազգականներէն մին ալ ճառ  
գաց՝ պարագային համեմատ առվորսկան սազաւար-  
տեալ խօսքեր առելով, և յաւիտենական հրաժեշտի  
ողջոյն մի տալով Ետկարին, որով կենթադրուեր թէն  
զինքն երբեք նորեն տեսնելու ակնկալութիւն մի  
չուներ։ և նորա արգի վիճակին վրայ ուրիշ բարե-  
մազթութիւն ջաներ առելու՝ բայց այս միայն որ  
իւր զիակին վրայ ծածկուելու հոգն թեթև լիցի։  
Հոգդ թեթև։ — Զգայութենէ զուրկ մարմայ հոգն  
ծանր եղել է թեթև եղել է, աստի ինչ իրեն հո-  
գայն՝ որ ալ հոն տեղն չէ։ — Ահաւասիկ ամեն որ  
այսպիսի խենթուխուլառ խօսքեր կը զրուցուին՝ իներ-  
քոյ արեգական՝ քրիստոնեայ երկրի մէջ մեռելոց  
ժիրմին վրայ, գերեզմանոցի խային առջեն և քահա-  
նացին որ հետութենէն ետք։ Եւ մինչդեռ բոլոր մեռելոց  
զայտն՝ հոգւոյ անմահութիւնն և հանգերգեալ  
կեանքն կը առրիտողէ՝ կը համեմ հոն տեղն Փարիզու  
քաղաքացի մի և կամ ռամբէ գործառոր ոնն՝ որ ամե-  
նենի այս սարսափելի խնդրոց վրայ մասցած ան-  
զամ չէ։ և իւր ագէւտ անհաւատութեամբն զանց  
առենք կը ձեացնէ՝ այնոր վրայ խօսելն, մանաւանդ  
թէ երբեմն անհանձար խօսքերով կը յանդդնի զայն  
ուրանալու։ Եւ այս բանս կը լսեմք ու կը տեսնեմք  
իննետաներորդ գարուս մէջ, և քաղաքակրթեալ  
աշխարհի մայրագաղաք սեպուած երկրին մէջ։

Բարեբազզաբար այս սգոյ կտակերգութիւնն՝  
անկեզծ և հըմարիտ ցաւոց տեսարանով մի գոցուե-  
ցաւ՝ որ իմ զգացած վրացոյ ալ մեծ սփոփակ եղեւ։

Պառաւ աղախինն պնդե հոգն իր տիրով մարմայն և աւելին եկած էր՝ զոր մանկութեան ժամանակն իր զիրին մածցուցել էր։ ուստի երբ դադաղն հողն զրին և ամեն մարդ որհնեալ ըուրին սրսկեց։ Բնչն ալ յետոյ հոռեցաւ և թրոյն հետ'ի միասնին իւր արտասուրն ու հեծեծանքն ալ եհեղ այնոր վրայ։ Այս անկեղծ ցաւոց արձագանքն ես ալ սրտիս մեջ զբացի և միաթարուեցայ։ արցունքն աչքերուս մեջ լեցուեցան, և թէ որ աւեղն անյարմար շլինէր՝ այն բարի կինն պիտի համբուրեմի։ բայց բաւական սեպեցի երթալու ժամանակս նորա ձեռքն սեղմելու։

Գերեզման փորոզներն իրենց գործն կատարեցին հողն դադաղին վրայ ծածկելով, և այն ահագնազը զորդ տիրուր և այնին՝ հանդիսակիցք ցրուեցան՝ իւրաքանչիւր ոք իւր գործին կամ զուարձութեանն փռութալով, մահուան տեսարանուն սակաւ մի արխրադէմ։ բայց շատերն և ոչ անդամ մառածէին որ թէրեւս վազն կարգն իրենց պիտի դար։

## Մեռելոց ներ հաղորդակցութիւն

15 Նոյեմբեր։

Ետկարն երազիս մեջ տեսի, և գեռ պնդե հիմաս անուշ զբացում մի կը զդամ։ Բնչ և թնդեմ լինելն մաքես ելին, և մանրամասն չեմ կարող պատել։ այս միայն միաբար թաց որ Բնիքն թշուառ ոչ երեւը, և Բնչ սրգողած ոչ աւանուելը։ ընդհակառակն զիս աւանուելուն վրաց շատ ուրախացաւ, և թէ ապէտ ամեն տառցածն միտքս չէ, տակայն իւր առջի սերն ու բարեկամութիւնն կը լիւէր։ Ո՞չ սիրելի հոգի, Բնչպէս կուզեի գիտել թէ ուր և արգեօք հիմա և թնդպէս և, որ շափ ցանկալի և Բնչ մեր զգացմունքն և խորհուրդ-

ներն իրարու հազարգել բնչպէս որ երկրիս վրայ եր-  
կայն ժամանակ առնելիք և որովհետև ինըն հիմա ազա-  
տած է մարմարդկէնիւթոյ Երկրաբարշ ծանրութենէն  
անշուշտ կարէ անդիի աշխարհին վրայ լուրեր տալ  
բնձ' որոյ վրայ այնչափ կը ցնորաբանէինք մեր ի-  
մաստափական խօսակցութեանց մեջ թերեւս այն-  
չափ սացզ տեղեկութեամբ որչափ որ կոյր մի գու-  
նց վրայ կարէ խօսիլ: Մեղք որ անդին մարզ մի ե-  
կած չէ՝ որ հան եղածներն մեզ պատմէ: արգելք այս  
արգարացի հետապրըութիւնս ամեննին պիտի շրա-  
ցենայ: — Եւ առկայն պետք է որ կերպ մի լինի ան-  
դիի աշխարհին հետ հազարգակցելու, և հան եղող-  
ներն բալորովին անմասն լինել չեն կարող իրենց թո-  
ղած աշխարհին մարդկանց հետ: Մարդկային ազգի  
մեռեալ մասն շատ աւելի բազմաթիւ են՝ քան թե-  
նոքա որ կ'ապրին և պիտի ապրին 'ի ներքոյ արեգա-  
կան, և անկարելի է որ մի և նոյն գերզատանէ ե-  
րեալ անհատքն՝ որ հետեւապէս նոյն մարմնոյ անդամքն  
են՝ իրենց մեջ կենդանի յարաբերութիւն սիրելու-  
թիւն և մասնակցութիւն շպահեն. որովհետև ամե-  
նայն բնչ որ 'ի միութենէ յառաջ գայ' գառնայ ան-  
դրէն 'ի նոյն միութիւն. ապա ուրեմն և մարդկու-  
թիւնն ալ 'ի սկզբան անդ մի լինելով 'ի կարողու-  
թիւնն, պետք է որ իրականապէս մի լիցի իւր կատա-  
րեալ բարզաւաճութեան մեջ: Ապա ուրեմն կայ  
տեղ ուր որ մի ամենայն մարդիկ պիտի համահաւա-  
քութիւն այս կամ այն կերպով, և ուր որ ազգ մարդ-  
կան իւր լրաննն պիտի համանի: Անարակոյ մինչև  
այն առեն՝ նոքա որ յառաջապայն մեկնած են այս աշ-  
խարհէն՝ գատփարանոր իրենց սիրելեացն կը սպասեն.  
այս վերթններս ալ զգալի կերպով իրենց սէրն գո-  
գոխակի իրարու հազարգել շկարողանալուն համար  
միայն՝ ոչ ենթագրեն թէ իրենց սէրն բոլորովին մա-  
րած է: Աթէ իրենց սէրն մաքուր է՝ իւր առար-

կայն. Կորեն տեսնելու յուսով կը պարարի. Ինչպէս  
որ բացակայք բացակայից դարձին յուսովն կը մին-  
թարուին:

Աշմարիս ուերև՝ որոյ արծառն հոգւոյն մեջ է՝ և ոչ  
թէ միայն զգացարանաց և երեակացութեան, իրա-  
ռու հետ զիրենք կը զօգէ, որովհետեւ քան զուր ա-  
ւելի հզօր բան չկայ, և զոր Աստուած մացուցած  
է՝ բան մի չէ կարող զնոսա անփառել: Մայրն կը յու-  
սոյ միշտ իւր կորուածք զաւակն գտնելու, որովհե-  
տեւ իւր արդանդին պառուզն է, ուելի յասկերաց և մար-  
մին՝ ի մարմեց իւրմէ, և իւր արգանդին ու գրեաց  
մեջ կրելու ժամանակին՝ ի վեր՝ նորա հոգին իրենին  
հետ կապաւ է, և զայն իւրին իւր մասն պիտի պահան-  
ձէ: այնպիսի ներքին կապ մի չէ հնար որ բոլորովին  
խղի: Ամսն որ իւր ընտրած այրն ողջախոհ և միակ  
սիրով կը սիրէ՝ ամսնեին ոչ հաւատաց թէ մասն՝ ի  
սպառ պիտի բաժնե զինքն՝ ի նմանէ. իւր հոգւոյն  
կեսն միւսոյն կը ցանեաց, և այս աշխարհիս մեջ զինքն  
որ մի գտնելու յուսով միայն կապրի, որ Աշմարիս  
և ստոյգ այրեաց միմին արութիւնն է: Վերջապէս  
Աշմարիս բարեկամութիւնն ալ՝ որ սիրելոյն համար  
ամսն բան զոհելու պատրաստ է, այնպահ աւելի  
կենդանի է՝ որչափ որ աւելի մաքուր է և ՚ի սպա-  
ռանից՝ ՚ի շահուց և յարկածից բազդի ազատ, և  
մահուամբ ալ ոչ աւարտի, որովհետեւ աշխարհիս  
նիւթերեն աւելի գերազանց բարույց վերաց հաս-  
տառամալ է. այնոր համար է որ մահուամբ բաժա-  
նումն զայն ոչ եղծանէ, թէ և կը արտի առ ժամա-  
նակ մի իւր առարկայէն բաժնութելուն համար: Եւ  
իւր արտմութեան մեջ՝ բարեկամութիւնն սրտի  
խորն կը քաշուի՝ մինչև ցարմասն բունը կտրուած  
ժամանի մի հցզին պես. բայց ինչպէս ժաման այսպէս  
ինքն ալ շուտով պիտի ծլի ու ծազկի երբ իւր սիրելի  
առարկայն առջն աւելնէ, որում վատահութեամբ

կը սպառէ : Նիմա իմ յոյսու ալ նիւդ այսոր պէս է .  
մահն իմ հոգւոց հատորն և ամենէն զեղեցիկ հրա-  
զերէն մին կարեց նետեց : բայց որովհետեւ մեր մէջ ի-  
րարու հազորդակից հոգեկան հոյզ կայ՝ կը յուսամ  
որ հեռաւորութեան մէջ ալ կենաց սիրելութեան  
շրջան մի կայ մեր մէջ . մինչեւ որ նորեն նոյն բանին  
մոյց գառելու երթանկութիւնն ստանամք :

Բայց այս հազորդակցութիւնս ինչո՞վ լինի : ար-  
գեաք այս սիրելութեանս գիտակցութիւնն կարո՞ն եմ  
ունել , և ինչ միջացներով այս խորհրդաւոր հազորդա-  
կցութիւնն հնար է հաստատել մահուան անգունդով  
իրարժե բաժանեալ երկուց հոգւոց մէջ , անգունդ  
մի որ մեր զգայարանաց անմերձենալի և մեր մասց  
անցագելի է : և նոյն իսկ երեակայութեամբ անգամ  
չեմք կարող ի միտս պատկերել : Մարդկային գիտու-  
թեամբ բացարձակապէս բան մի ոչ զիտեմք՝ գերեզ-  
մանէն անգին եղանեն երուն վրայ . թերես մեռեալք  
մեզ բոլորովին մօտ են , և քոզ մի միայն 'ի մէնք զնո-  
սս կը ծառեկե . բայց վերթապէս ինչ ալ լինի այս  
քզզո՞ւ մթին է և անթափառացելի , և ամենէն առելի  
պատես մասց աչքն բան մի չէ կարող տեսնել այնոր  
մէջէն :

Ապա ուրեմն իմ մասց բնական լուսովն միջոց մի  
ոչ գառնեմ իմ բարեկամին հետ հազորդակցելու .  
աչքս բան մի ոչ տեսանեն և ականջքս բան մի ոչ  
զանենորս վրայօք . իւր ներկայութեանն նշան մի չու-  
նիմ , և իմ սիրոցս խանգաղատանացն պատասխան մի  
ոչ առնում : Եւ միայն յիշառակազ և երեակայու-  
թեամբ զինքն կը մբանեմ . բայց այս յետոհայեաց  
պատեկերաւորութիւներս ալ ուրիշ բան ոչ ներկա-  
յացնեն : բայց եթէ անցելոց նկարն և ապագային հա-  
մար ենթագրութիւններ : ինչ որ իւր վրայօք ևս իմ  
մասցս մէջ կը զարթուցանեմ պարզ ենթակայիկան  
է , (այսինքն ևս ինքն եմ իմ մասց մէջ զայն զար-

թաւցանողն) շիրիմ մի է զոր խորհրդացս մեջ կը սա-  
նամ՝ գեթ մի անգամ ալ իմ սիրոյս առարկայն տես-  
նելու և սիրոս գոհացնելու համար։ Բայց այս շի-  
րիմն գատարել է։ այս գամբանիս բոլորն իմ արտմու-  
թիւնս կը յանի կը թափառի կոչելով զհոգին որ հե-  
սի է, և զոր ամեն ուժովս ալ չեմ կարող գտնել վայր-  
կեան մի հան թերել՝ գեթ իւր ներկայութեան թեթե-  
նշանով մի։ Այդեւորական մոլիոյ մի կարուութիւն ու-  
նիմայս երկու եզերքս իրարու հաղորդելու համար,  
որպէս զի այս զմեզ բաժնող Ովկիանոսին անցուցա-  
նեմք մեր սրախց շարժմունքն և մեր մասց և խորհը-  
գոց նշաններն։

## Երազ

17 Կոյեմիեր։

Դարձեալ Ստեաբն յերազեցի, և այս անգամ գոնէ-  
երեցին միտքս մասց, տրաում կը բայց ոչ յուսա-  
համ։ և թէպէտ առացածներն միտքս չեն, բայց իմա-  
ցայ որիմ պանութիւնս կը բնողրեր՝ աղաշելով որ ազո-  
թիմ և աղօթել տամ։ Այսոր վրայ ապշած զարմա-  
ցած՝ կարծեմ թէ երեակայութիւնս զիս կը խարե-  
աղօթել իրեն համար։ մինչ ես ինձ համար ևս ոչ ազո-  
թիմ, միտքս գնելով թէ անօպտատ բան է, և միայն ակա-  
րամաց սպասեար՝ որ այնոր վրայ վստահութիւն  
ունելով այնու կը զօրուան։ Եւ յիրաքի ինաւառուն  
մարդ մի բնողես կարէ հաւասար՝ որ բարեմիտ կնալ  
կամ որ և իցէ մարդու աղաշանզն բնութեան կարգն  
փոխուի, և ամենզերաց ընդհանուր որինաց զանցա-  
ռութիւն լինի։ Կընդունիմ Աստուծոյ նախախինա-  
մութիւնն որ զաշխարհս կը կառավարե, բայց նա-  
խախինամութիւն և անհուն իմաստութիւն լինելուն  
համար իսկ՝ պետք է որ ինքն իր հետ միտքան լինի, և

իւր նրագիրն և այնոր կատարութիւն ազիտաց հակառականը բներդուածքովն և մարդկանց կրից համաձայն շփոփոխէ:

Եւ առկայն այս երազոց կրկնութիւններուն մեջ կարգէ դուրս բան մի կայ՝ որ զիս կը նեղէ: Այս միշտ ուսուցել եմ որ երազն երկու աւասակ է: կամ թէ երազին զանազաննելու է աւսիլք առացեալներն որ աւելի կցարգութիւն և աւելի իմաստ մի ունին և զորս ամենայն ազգը մասնաւոր պարագայից մեջ՝ խորհրդական ազգեցութիւն մի համարած են՝ ուրիշ աշխարհէ առ մեզ հասեալ, որուն հետ կը հա- զորդէ զմեզ քունն՝ որ ինքն իսկ խորհրդաւոր բան մի է: Նորից և յունաց հին քերթութեանց մեջ ինչպէս որ Հոմերոսի և Աստուածացնի մեջ կը թեանումք, աւսիլքներով շատ բաներ եզած կը ս- պառին: գերազոյն աշխարհէ բացուած զաներն են՝ ուստի կը հասնին առ մարդիկ Ոլիմպոսի աստուած- ներուն կամ Եհովայի երկնուաոր գեապաններն: Եր- թի մեջ ալ զժոխոց և նորա արանեկաց թելագրու- թիւններ են՝ հազիններն անկարգութեան և մեզաց մեջ ձգելու համար: — Յիրաւի յինէն ազօմք խըն- դրելու մեջ յար բան մի շեսյ: շատ շատ անխել- քութիւն և անուեզութիւն մի է, որովհետեւ ազօմքից զօրութեանն ես ոչ հասաւամ: ուստի քնոյ մեջ հա- զիսած ցնորմանց ալ կարեւորութիւն մի պետք չե՞ որ առամ:

Ուսկայն որդասի ալ բանի տեղ ոչ գնեմ, այսու ա- մենայնիւ միոքս միշտ այնոր վրայ կը բանի... Երազ ասացած ընդհանրապէս աւուր մեջ հանդիսածնե- րուն և ապաւորութեանց՝ պատկերողութեան մեջ խառնաշփոխէ կրկնութիւնն է, որովհետեւ քնոյ ժա- մանակ կամքն ալ զպատկերողութիւնն ոչ կարէ ուզ- գել: շատ մեզամ մարմնոյ վիճակին և մանաւանդ մարսողութենին առաջ կուզայ և մեր սովորութեանց

և սրտի և մուաց արամագրութեանց հետեւակին է :  
Բայց ինձ հանդիպածն բոլորովին տարբեր բան է , ո-  
րովհետեւ նկանքելով ոգնութեան համար յինէն խըն-  
դրուած ազօնքն՝ իմ կարծիքէ , ու աեսութենէս բո-  
լորովին տար է . և արթնութեան առեն այնչափ այ-  
նոր վրայ ոչ մասեւմ՝ որ երազիս մեջ յաւիտեան տես .  
նելիք չտնելի . և շատ տարիներէ ՚ի վեր ալ առնենին  
այնոր վրայ մասածած չէի , և միայն երեկ չէ տարի որ  
նեխեցեցին պաշտօնեն կատարուած ժամանակ՝ ոչ զի-  
տեմ ինչ զցացում մի եկաւ վրայ՝ որ միայն ցաւ չէր .  
այլ ըերմեռանցութեան պէս բան մի : — Ուստի ես  
ալ ոչ զիտեմ թէ արգելք սրտին այլայլելուն հե-  
տեանիքն է , թէ երկնացին ազգարարութիւն երազի  
խորհրդական համբով ինձ հասած : Որովհետեւ քունն  
այնպիսի զարմանալի պիհաւէի մեջ կը մզէ զմեզ՝ զի-  
տակցութիւնն և ազատութիւնն բառնալով , որ հա-  
զին գրեթէ պարզ կրական եակ լինի՝ արթնութեան  
առեն ունեցած յարաբերութիւններէն զագրած . և  
տարօրինակ ազգեցութեանց ներքոյ անկած , այն .  
պէս որ տեղեացն ինչ կարելի է , և ենթագրութեանց  
ընդարձակ ասպարէց կը բացուի : Եղիպատացոց և  
Հրեից մեջ երազ մեխնելու աստուածային արուեստ մի  
եր , և եղան մեխնիչներ և մարդարներ՝ որ կը համա-  
րէին թէ այն արուեստն ունին : Յովսէփ երազի մեկ-  
նութեամբ մեծ բազզի և հարստութեան անը եղի .  
Փարաւունի արքունեաց մեջ , և միւս Յովսէփ ալ Մա-  
րիամն այրն՝ երազի մեջ հրեշտակէն հրաման առաւ  
որ զինքն շարժակէ , և Մարիամն ու Մանկան հետ  
Եղիպատ քաշուի՝ Հերովդէսի կոտորածէն ազատ-  
լու համար :

ԱԵՐԺԱՊԷԱ ԹԱՂԱՆՅՐ ինչ որ է . եթէ ոչ ինչ և ու-  
նայն պատկեր մի է . քունիս մեջ մորեւ անցածն ինչ-  
պէս ամպն ոգին մեջէն կանցնի , յետ տակաւուց պի-  
տի ցրուի . իսկ թէ որ ուրիշ բան է , կամ այնոր աղ-

սպառութիւնն մտացա մեջ շարունակէ և զիս նեղւ-  
լու որ լինի՝ այն առեն կը խորհիմք ու կը մտածեմք:

## Մետելադարձ Ռւբուականը և Ագիներ

18 Կայեմբեր:

Քանի մի օրերէ ՚ի վեր միակերպ միաքան  
ինչ որ ռւբուականներու վրայ լսեր եմ, մանաւանդ  
իրիկունեները՝ իմ կանթե զիս առջին մինակ նստած ժա-  
մանակս և մութն կոխած առեն՝ ինձ այնպէս կո-  
չաց որ Այտկարն պիտի առանեմ այս կամ այն կեր-  
պարանոք. և այս տարօրինակ պիճակիս մեջ՝ թեթև  
չայն մի որ լսուի կամ ամթոռ մի որ հանչէ՝ անդէն  
դոզ կ'ելնեմ. և և իմ իմաստասիրութեանս վրայ  
կը խոզնիմ՝ այսպիսի ակարութեանց ներքոյ անկան  
ընելուս համար: Թէ որ հրապարակաւ այս նիւթոյու  
վրայ խօսել պէտք լինեկը՝ շատ պատճառաներով կարէի  
այնոր պարագ ըստ ընենելն ցուցանել և ծազրել. և  
ասկայն հիմա վրայն մտածելն անգամ զիս զոզ կը  
հանե: Աւազ. հիմա կիմանամ՝ որ մեք ռւրիշի համար  
առելի իմաստաներ եմք՝ քան թէ մեզ. բնապէս բժիշկ.  
Ներն որ իրենց հիւանդներն կործնութեամբ կը զար-  
մանեն, իսկ զիրենիք խնամել ոչ զիտեն. վերջապէս  
զիտութիւնն ինչ ալ առնե և խօսի՝ բնութիւնն միշտ  
նու կը յազդէ:

Բոլոր կենացս մեջ մեռելազարձ մի տեսած չեմ, և  
առանող մ'ալ ոչ զիտեմ. և սակայն հին և նոր աշ-  
խարհք նոցա պատմութիւններովն լի է: Բայց ուր-  
ած ըլինելէ՞ ոչ հետեւ որ չկան և մանաւանդ չեն  
կարող լինել: Կերեսի թէ օրենք է որ իրենց մարմնէն  
բաժնուելով այս աշխարհիքէս ելած հոգիներն նորեն  
հոս ոչ գտանան. որովհետեւ աղ իրարու հազարզուե-

ըստ միջնադարին շունչին : Բայց արդեռք առելի նուրբ և եթերական մարմիններ լիան՝ որոց ամպամեն շագիսա-  
տիս ձևերն մեզ զգալի լինին , թուարէս օրինակի հա-  
մար հայելոյ մէջ երևած կերպարանիքն կամ անա-  
պատճերու մէջ կրկներեցիտ ասացեալ երեսցին բնա-  
բանութեան ուրուագէտ ասացեալ գործին ինձ կամ-  
կամել կուտայ թէ այսպիսի երեսցիներ չառ կարեն  
լինել : Կարելի է որ այս ուրուական ասացեալն ի  
մարմնոյ բաժանեալ հազի մի և՛ որ էակաց սովորական  
կարգին զանցուութեամբն կերպիւ իւիք կարգա-  
նոյ իւր կերպարանոց մեր աշացն երեխիլ , կամ զինքն  
յայտնել ոգոյ բարախմամբ ձայնիւ խօսքով հեծու-  
թեամբ կամ որ և իցէ ազնիա . ամ կարե անհնա-  
րին համարյիլ այս բանս , որովհետեւ հակախուսութիւն  
մի չկոյ այնոր մէջ որով անանդի բան մի համարուսի .  
մանաւանդ երբ այս անդիի աշխարհէ հասած երեսու-  
թիս սպատճառն՝ զերագոյն էակին կամբն յայտնել  
և կամ երկնից ազգարարութիւնն մի մեղ իւնցնելու  
համար է : Այս պարագային մէջ ուրուականներն  
հրեշտակաց պաշտօնն կատարած լինին :

Ուրիշ պատճառ մի ալ կայ՝ որ առելի իմաստամի-  
րական կարե երեխիլ : Մեր երկրիւ վայ ապրած ա-  
ռեննիս մեր հազին և մարմինն միշտ հազորզակցու-  
թեան մէջ են՝ կենաց պիտոյից կարեար եզած նիւ-  
թերուն հետ՝ որովք կը մնանին ու կը վայելն . մեր  
հազին փոքր ՚ի շատ այս նիւթոցս հետ կը կապուի՝  
թէ անձ լինի և թէ իր , մանաւոր յարակցութեամբ  
մի որ սիրոյ արմատն է , որ մինչև բռուն կիրք կարե  
գառնալ , և հազին զերի առնել իւր սիրածին : Ուս-  
քեր :

4 Ըսթերցովն պետք չէ մռանոյ՝ որ զբոյս հեղինակ պա-  
տռական և ինաւուն քահանայն զես անհաւասութեան  
մի զանուող իմաստաբիր մի բերնեն կը զբոյտ այս իսո-  
քեր :

ամ երբ այս երկրաւոր իրաց հետ բռնն սիրով կապուած ժամանակ՝ մասն զինքն բռնութեամբ կ'անջատէ՝ որպատի ալ ասիսպատի զայն թազլու՝ բռնն ցանկութիւնն իր մէջ կը մնայ. և առկեց զինք մի առաջ կուգայ՝ որ զինքն յետո յետո կը չգե. և Եթէ կարելի լինի կամքն ետ կը դառնայ իւր սիրածն գանելու, ագան զիւր գանձն, սիրելին զսիրելին, մայրն զիւր զաւակն, բարեկամն զրարեկամն. Ուր ձեր գանձն է՛ հանե ձեր սիրան, առեւ Ասեւարանն. ուստի Եթէ սիրան իւր բոլոր ցանկութեամբն հան գանձնայ՝ կարող չէ կերպ մի գանելու իւր գարձն և ներկայութիւնն իւմացլու. Աակայն հոգույն համար այս բանս առն շանց մի պիտի լինի՝ որովհեան իւր ցանկացածն չէ կարող վայելել, և թերեւս զարարածու և զիւրստական իրս աշխարհի չափազանց սիրելուն համար ալ պատիտ մի:

Աականիք ալ այսպիսի բանի մի կը հաւասային, և այնոր համար մեռելոց ուրաւականներն Ատիւրսի եզրերն կը թափառին առենին, մինչև որ նոցա ազատութեանն համար ովանեկղներ ու զոհեր մասացուելով Եցիւանեան գաշտերն կը մանենին. Արդ հոգույն ընդ մէջ երկնի և երկրի եղած պինակին ժամանակ՝ որով գեռ նիւթականացու հետ կապուած է՛ իրեն կարելի և թերեւս զգայի եղանակու մի յայտնուիլ չափով մի և ումանց միայն կամ անդիի աշխարհին իրերն յայտնելու համար՝ որ այն առեն պաշտօն մի վարած լինին, և կամ իրենց գեռ ունեցած ցանկութիւնն կատարելու համար՝ որ այն առեն իրենց պատիտ համարելու է:

Աակայն այս բանիս մէջ ալ կատարեալ ազիտութեան մէջ եմք, որովհեան այնպիսի աշխարհի մի մէջ կապրիմք՝ որոյ անհարթագոյն կերպարանին միայն մեզ ծանօթ են՝ իսկ նուրբ մասունքն բոլորովին անըմբանելի. Դիտակի և մանրացուցի հարրուելն ՚ի

վեր՝ առանձնելի՝ աշխարհիս սահմաններն ընդարձակեցան՝ յանուանիններ մեծ և փոքր էակներու միայնաբանուելով։ Հիմա զիտեմք որ մեր թողորդն և մեր մեջ բիւրաւոր անտեսնելի և անշաղափելի էակներ կան՝ որ մեր բարեաց և չարեաց պատճառ լինին։ Այսօր շատ հիւանդութեանց պատճառ կը համարուին այն անենկատելի որդունքն՝ որ արեան հետ խառնուել լով զայն կապտականեն։ և բաց աստի անողեամբ և շնչառութեամբ մահուան անենկատելի անբանունց միշտ մեր գործարանաց մեջ մանելու միայն են։ Եթէ բնական կարգի մեջ այսպէս է՝ ինչ պիտի լինի ապա հազեղեն աշխարհի մեջ զոր մեք ՚ի մեզ միայն զիտեկցութեան ըմբռնմամբը նախացնէմք։ Իսկ արտարուսան միայն մեր նմանեաց խոռոչն՝ որով կարելի չէ զամենայն զբացմունս և զիսրհուրդս բացատրել։ Տարակոյս շնչայ որ շատ աւելի գժուաբին և ըմբռնել զորիս քանի զմարմինս՝ որչափ ալ այս վերթիններս նրբին և շոգեառեակ ալ լինին։ և հետեւապէս թերեւս կարեմք հաւատալ որ ամեն անսակ ոգիներ մեր թողորափին առած կը ըրթին փոքր ՚ի շատէ մեր հետ վերաբերութիւն ունելով։ և որոց նրբին ազգեցութիւնն խորհրդարար մեր հոգւոյն կենաց միայն ալ կազդէ։ ինչ պէտ նաև այնոր արամազքրութեանցն որոշմանցն և գործաց։ — Աստի յառաջ գան թերեւս զազանի շարժմանք ։ Եածուկ մզմունք, անակնեկալ ազգմաննք, բարի կամ շար թելագրութիւնը, և վերթապէս ոգտակար կամ կամ վասարակար ներշնչմաննք մեր կենցազափարութեան մեջ կամ արուեստի գործաց և կամ համարաց յայտարարութեան մեջ որովհետեւ ամեն ներշնչմանց մեջ ներշնչող մի պէտք է որ լինի, և ոգեզնին իրաց մեջ շարժութեան տուողն պէտք է որ ոգի լինի։ Աւստի քերթուզն որ զբուայն յազնութիւնն կուշեց մի շեր իրաց մի շեր իւր կազման։ և առանցայինափոյն մուշ որում պէտք կը զբար կենցանի միջնորդով մի իրեն

կը հասներ : Աւ հաւանական է որ նոյն բանն կը հանդիսափ այն ամեն անգամ երբ օգտակար խորհուրդ մի կ'ունենամք՝ որոյ վրայ ամենենին ոչ խորհեւաք . կամ մեծ բանի մի ձեռք զարնելու յորդոր մի կ'ունենամք՝ որում կարող և ձեռնհաս ոչ համարեաք զմեզ : Ուկրաս՝ իւր ժամանակաց ամենէն խմասունն ընտանի ոգույ մի կը հաւատաք՝ որ վասնզն իրեն ազգելով կը զդուշացներ : որ քրիստոնէ ութեան պահապան հրեշտակաց հետ շատ նմանութիւն ունի , և այս երկու օրինակո ալ ցուցանեն թէ՝ կը հաւատամք որ երկրիս վրայ շատ անգամ առանց կասկածելու յարաքրութիւն ունիմք ոգեզեն եակաց հետ՝ որ մերինին նման մարմնոց հետ ակապուած չեն , կամ այն է որ մահուամք յայնմանէ մերկացած լինելով , կամ այն է որ ամենին մարմնազգաց եզած չեն , թնդան հրեշտակք :

— Աղդ ավ կարէ անհնարին համարել՝ որ այս ոգիներս յորաց ըստ բնական կարգի ընդունիմք զիտա . կցութեան և հանճարոյ ներշնչանմքն չկարասցեն յայանուիլ մեզ զերբնական եզանակաւ՝ զցացի երեսութիւն , կամ իրենց երկրիս վրայ ունեցած կերպարանոցն թնդան ուրուական ասացեալիներն . կամ ուրիշ որ և իցեւ երկանմք : Դարձեալ առեմ որ այս զիտի բան մի տեսած չեմ . բայց որովհեան շատ ըեւն լսած եմ որ տեսած են՝ այնոր համար ապահով եմ որ որ մի Ետկարն ալ ինձ պիտի երեխ՝ որոյ պատկերն միշտ ետեւէս կը չըթի : Յիբաւի որշափ ալ զինքն կը պիտի մ՝ սակայն այս բանին ոչ փափաքիմ . և մաս ծելով միայն որ այս բանս որ մի կարէ հանդիսավորէ՝ կը փշաքազիմ . որովհեան թնջ որ բնութենէ դուրս կամ վեր է՝ զիս անհանգիստ առնել ու կը վախցնել :

## Երկիւղ մահու

19 Կոյեմբեր :

Ուրիշ մուտանէթութիւններն և անհանգստութիւններն հերիք չենին՝ մազմացաւն ալ վրայ հասաւ. շատ ըն կը բանուին, շատերն ալ կը մեռնին. բայց ինչ է արգելոք մազմացաւն և ինչ առնելու է. Նախ այն զրուցեմ որ բժիշկներն իսկ ոչ դիմեն, և բժշկական դպրոցին մեջ որշափ զլուխ կայ՝ այնշափ ալ կարծիք կայ այս խնդրոյն վրայ. այս ալ դիմելու և որ բժիշկներն երբ կը վիճեն՝ սովորաբար ոչ միարանին. շատ շատ հիւանդին մի համար խորհրդակցութեան որ նոտին նորա ընտանեացն առջին, այն ալ գայթակազմութիւն շտաբու համար. մանաւանդ թէ այն պարագային մեջ իրենց մոտաց հակառակ եղած կարծեացն ալ կը հաւանին, որովհետեւ խորհրդակցութեան համար կողուած բժիշկն պատասխանառու չէ, և միայն իր կարծիքն զրուցելու պարական է: — Ուստի բժիշկներն ոչ դիմեն մազմացաւին ինչ լինելու. այս այս կերպով կը գարենանէ՝ այն այն կերպով, հիւանդներն ալ այս կամ այն կերպով կ'առողջանան կամ կը մեռնի: — Բայց արգելոք իմաստասերներն ինչ առն. ուզու ևս բժիշկներին աւելի բան մի ոչ դիմեն. միայն իմաստասերութիւնն այնպիսի խնդիրներ կ'առաջնարկէ՝ որոց վրայ իր ընկերն ու համամբան աւզուած բժշկութիւնն ամեննին շմանածեր:

Իմաստասիրութիւնն կը հարցանէ թէ ուստի կուգայ այս հարուածս, որ առեն առեն ոչ դիմես ուստի կելըն և երկրիս վրայ շրջան մի առնելով մորդկանց տառնին մին կառնու կը առնի, և շղիացուիր ալ թէ ինչով այնոր վարդին առջն առնելու է. յան-

կարծական հրոսակ մի է՝ որ ինչպէս սկսաւ այնպէս ազ կը դադրի առանց պատճառի : Եւ առկայն առանց պատճառի արդիւնք ոչ լինի . ինչ է ուրեմն այս կոտորածիս տարածելը պատճառն . գարձեալ արդեպ զիստառածական և առանց պատճառի բան մի է որ սիւրաւոր մարդիկ յանկարծ երկրիս վրային շնչութիւն : Սակայն տիեզերաց մեջ զեկավարութիւն մի կայ . ուստինեած արտարից և նախախնամնոց մի ունի . և չեմք կարող համարիլ որ զանե տանց իւր թոյլուռու . թեանն համեմ այս գժրազգութիւնն , եթէ իւր հրամանալին ևս յէ :

Արդեօք մազմացաւն ալ իւր ձեռաց հարուածներին է՝ յանցաւոր մարդիկն պատժելու համար . ինչպէս որ կը համարիմք ուրիշ տան մեծ թշուառ . թիւններն այլ որ ընդհանուր կերպով ազգաց վրայ կը համենին : Այս բանիս վրայ տարակոյս չկայ . եթէ նախախնամնական կառավարութիւն մի կայ՝ պետք է որ իւր զօրութեամբն զրուած կարգն ու կանոնն պահէ , և անկարգութիւնն պատժելով իւր զօրութիւնն ցուցանէ : Օրինազանցներն պատժելն անն կառավարութեան հարկաւոր հաստատութիւնն է : Հին կառակարանն այսպիսի օրինակներով լի է , այնպէս որ Առաւելոյ ժողովուրդ կոչուածն՝ աստուածոցն պատուիրանքն արհամարհելուն պէտք ոպառնացնալ պատուհաններից կը համենիր :

Եւ յոյժ արգարացի ալ է այս բանը եթէ յիրաւի որինաց զանցառութիւնն եղած է . միայն քննելու է թէ այս պատուհանը ալ անոի յառաջ կուզայ թէ չէ . եթէ զմարդկային գործա կառավարողն՝ աստուածութիւնն նախախնամութիւնն է՝ այս բանիս վրայ չեմք կարող տարակուածիլ :

Արդ հիմա ինչ առնելու եմք . նախ և առաջ գըտ . բազգութեան գլուխ կարձութիւն բանեցնելու եմք . որպէս զի վախճառ ըցուցանն մի , և քան զեղ տկար .

ներն ալ որ են կամայք մեր և մանկունք և ծառայք  
քաջալերեմք : Արդէն ես նոցա մէջ եղած տանեան ան-  
հոգ կերպ մի կը ցուցանեմ, որպէս թէ նոր բան մի  
կամ վախնազու պատճառ մի շնոյ : Բայց ինձ որ հար-  
ցընես՝ ես ալ ուրիշներու պէս կը վախեմ, և ոչ հաս-  
կընամ թէ ինչպէս կան մարդիկ որ կը պարծին թէ  
վախ ասացած բանն չեն գիտեր : Ամենէն սարսափելի  
թշնամին այն և որ քու բոլորդ կը պոլախ՝ յանակըն-  
կուս քու վրադ յարձակելու համար, այնպէս որ  
միշտ նորա հարուածոցն ենթակոյ ես և ինքզինքդ  
չես կարող պաշտպանել : Այսպէս է մազդացաւն ալ  
որ յանկարծ կը համեմի քաղքի գերզաստանի տան  
վրայ՝ առանց առափնան պայման հարստութիւն և  
առողջութիւն խորելու . իր հարուածոց գէմ եղած  
ամեն զգուշութիւն . և զինքն վանելու համար ամեն  
չափ գուման կը հանե : այնպէս որ ուր որ այս հիման  
գութիւնն կ'երեի՝ հան եղազ մարդիկ վարախի ոչ  
խորներուն կը նմանին՝ որ այսու կամ վազն պիտի  
ելնեն սպանդանոց երթալու համար, և ոչ որ զիտէ  
թէ կարգն երբ իրեն պիտի զայ : — Խելացի մարդն  
անկարելի է որ այսպիսի պատռհաստ շմախէ որով  
մահն միշտ վերահաս և սպանալից զմեզ կը գիտէ :  
Խոկ արդ ամեն մարդ ալ թէ բնազգմանք և թէ ինոր-  
հըրդածութեամբ երկնցի 'ի մահուանէ : — Բնազգ-  
մանի՝ որովհետեւ ամեն կենդանի արարած ապրիլ կը  
ցանկու : և բնականաբար կը վախէ ու կը վախչի այն  
ամեն բանէ որ իւր դոյլութիւնն կարէ եղծանել կատ-  
վառաւ . ոյս բանն յառաջ զայ իւրաքանչերին կե-  
նաց պահպանութեանն համար առևալ ինքնածին  
որէնքնէ : — Խարհրդածութեամբ և՛ վասն զի մահն  
բոլորովն կը վոխէ մեր ներկոյ կեանքն՝ մարդին 'ի  
բաց բառնազով՝ որ նորա կեան կը սեպուի, թէրեւս  
շատերուն համար կեանքն ալ աւելին : Աւատի ռամբին  
ասացածին պէս կորուածնիս զիտէ մը՝ բայց վասակեւ-

Ըլքնիս ոչ գիտեմք : Հոգւոյն մարմելն բաժնուիլն ցաւ-  
ալիք բան է , և սարսապիտ լի պատերազմ լինելն անոնք  
ևս կ'իմացուի՝ որովհետեւ հոգեվարք կը կուշեմք զայն :  
Իսկ անդին աշխարհի անցքն ալ մութ ու խաւար է ,  
և ոչ ոք գիտէ թէ ծայրն ինչ պիտի զանեւ . և ինչ հիւ-  
ռընկալութիւն պիտի ընդունեի :

Ուստարակոյս ոյք որ արգարութիւն գործած էն ,  
և միայն բարին կամել և գործել են՝ վստահ կարող  
են լինել , և մահուան մի միայն միտթարութիւնն ալ  
այս բանս է՝ գիտեմ : Բայց մատանց նայելով այսպի-  
սիս քանի հոգի կը գտնեմ՝ զիս ալ 'ի միտին հաշուե-  
լով : Ով կարէ պարծիլ թէ անիրաւութիւն մի չե-  
գործած , մանաւանդ սամրի մնասովն իր շահն չե-  
մնասած՝ նոյն իսկ արգարութեան՝ թէ երես և զթու-  
թեան իսկ պատրուակու : Մարդո ինչ գիտէ ար-  
գեար սիրոյ թէ ատելութեան է արժանի , ինչպէս որ  
ասէ Պաւղոս առաքեալ : Եւ երբ կը լսեմ որ նոյն  
իսկ սուրբերն՝ այսինքն նորա որ ամենայն մարդու-  
թեամբ յաշխարհէ հրաժարեալ առրած էին՝ իրենք  
զիրենք մեծ մեղաւոր համարելով՝ մահուան ատեն-  
ին կը գողացին կը սարսափէին , ևս ինձ կը հարցնեմ  
թէ ով ուրեմն կարէ զինքն վասնողէ ազատ համարիլ  
և շվախնալ : Որատիստի կեզծած սայրիկեան արգարն՝  
որ նոյն իսկ երկինք ալ գլխուն մրցայ վզչելու լիներ՝  
յանքն ոչ կռնչմուէր՝ ինձ միւտ իմաստասիրական բան-  
գագուշանք և քերթողական զրախօսութիւն կամ  
առարթանութիւն մի երեցած է : Այսպիսի բաներ  
կը զրուցուին և կը զրուին՝ մարդկանց ցնցում մի  
տալու համար ինչպէս թատրոնից ահարաներն ,  
բայց երբ եղած չեն , կամ յօյժ դժուարագիւան են :

Ուստի ով որ կը պարծի թէ 'ի մահուանէ ոչ եր-  
կընչի՝ սամիստ է ինքզինք կը խարէ . ևս առաւել այն  
որ մահուան կը փափաքի՝ նման այն փայտաւորին՝  
որոյ թեռն շատ ծանր կ'ուզար և մահն կը կոշեր և

երբ մահն քովից հասաւ՝ շուա մի թեռն կոնտին առաւ։  
ապա ուրեմն կամ խենթ է կամ խելաւ։ Կիրքն  
մարդուս խելքն դիմուն կ'առնեա, և այն առեն թեական  
է որ մահուան գեմ կը խիզախիւ, կիրքն յազեցնելու  
համար, առկային այս բանս ալ անտեզի և անմիտ բան  
է որովհեան նոյն իսկ մահն իւր սիրելի առարկային  
սուցումն իրան կը վերցնէ։ Դարձեալ թեական է  
վասնդի վարժելը, ինչողէս զինուորն և անփորձ առ-  
զայն որ կրակի հեա կը խազայ, բայց այս ալ ՚ի առ-  
վորութենէ առաջ եկած անհազութեան արդիւնք է  
կամ ապիտութեան հետեանք, և երկոցուն մեջ ալ  
պարթենազու բան մի չկայ. և երկուքն ալ անմասու-  
թիւն և որովհեան ինստառութիւն չէ զինքն մա-  
հուան վասնդի մեջ զնել՝ առանց հողուարելու միջոց-  
ներն ալ մասնելու։ Եթէ վասնդն կարելի է, կամ  
կարճութեամբ պատերազմելու, եթէ անհրաժեշտ է։

Թերեւս ասացեն ուսանք որ այս իմ ուզած մար,  
զիկս կարին զինուոր չեն կարող լինել. այլ ամեն վը-  
սանդի մեջ կանգ առնելով մասնազու են, և զինքնէք  
յառաջ վարելն իմժաններու կարօւ է։ Ատո գիպաց  
մեջ ասացածնիդ իրաւացի է, այսինքն այն պատե-  
րազմերէն շատերուն մեջ որոց վախճանն անմին  
օրինաւոր պաշտպանութիւն կամ ժողովրդոց վերկու-  
թիւնն չէ, այլ կառավարութեանց և իշխանաց վա-  
սահրութենէն ոչ կրից յառաջ եկած, ինչպէս որ  
շատ անդամ կը պատահէի։ Խոկ ընդ հակառակին ար-  
գար պատերազմաց մեջ ուր կենաց պաշտպանու-  
թեան վերայ է խօսքն և ուրիշ հար չկայ զայն վըրը-  
կելու։ քաֆարութեանն ըստակիր. ինչպէս որ ամե-  
նէն ակար անտանց վերայ ալ կը տեսնեմ։ Բայց  
Երբ զինուորն ոչ զիստէ թէ ինչու և որու գեմ կը պա-  
տերազմի ինչպէս որ շատ անդամ կը պատահէի մեր  
մշտակաց բանակներուն՝ քաֆարութեան սայդ շար-  
ժառթին պակասութիւնն լեցնել կը ջանամք՝ զի-

նուորական պատիւ կամ գրօշակի վառք ասացեալ  
բառերով. և սիրտ տալու համար պէտք է գինեզի-  
ւել զնոսա՝ զինուորներն նուազարանոյ և վառոզա-  
խան պատիւ, իսկ արայներն ուսանոցներով և շատ-  
նշաններով: Միու բանիւ քաջութիւնն կը յուզեմք  
փոքր ՚ի շատե վայրագ կրից գրգռմամբ, ուստի ու-  
սակ մի ազշութիւն առաջ կուզայ: որով վասնզն այլ  
չափանիք և մահուան դէմ կը խիզախէ: և այս բանս  
փառք կը սեպաւի: քան զայլ անենայն փառս գերա-  
զանց, հետեանքն ինչ որ կ'ուզէ թող լիցի: մինչեւ  
մահուան գիմազրաւելն այն առեն միայն փառաւոր  
է երբ հշմարտութիւնն և արդարութիւնն պաշ-  
պանելու համար է:

### Երջող սեղամնը

20 Կոյեմբեր.

Երեկ շրջող սեղամնի փորձի մի ներկայ գտնուեցայ  
որ ծազրածութիւնն մի երեցաւ ինձ, ոչ եթէ փորձող-  
ներու կամքն և ուզելովն, այլ այս կողմանէ որ  
զրական հետեանք մի առաջ չեկն անախ, և նոր բան  
մի չեարացի իմանալ: Որովհետեւ զիտութիւնն ինձ  
միջոց մի ոչ ցուցաներ՝ մուեցց հետ տեսնուելու  
ինչպես որ կը փափոքէի: այս վախճանիս համելու  
համար խորհրդաւոր համբայներն ուզեցի փորձել,  
որովհետեւ ունենք կը համարին թէ աս միջոցով հա-  
քաւոր է անդիի աշխարհն հետ հազորդիլ:

Կամն ՞... որ ընկերութեան մեջ պատուաւոր  
մարդ մի է և քրիստոնէութեան զդացոզութիւն ու-  
նող՝ ոգեկոչութեան եռանդով մի բանուած՝ ուրիշ-  
ներն ալ կուզէ հաւանեցնել, ուստի զիս ալ հրաւի-  
րից որ իր տունն լինելու փառձերուն ներկայ գրտ-

նուիմ, անտարակոյս գագաթելով այս զարմանացի յայտնութեանց վրայօք իմաստափրի մի կարծիքն ալ իմանալու : Ես ալ հաւանեցայ՝ նոխ ՚ի պարզ հետաքրքրութենէ՝ որովհետեւ իմաստափրն պէտք է որ քննէ իմանայ հոգեկան կենց երեսըթերն, և երկրորդ այս համբով մեռեալներն և անդին աշխարհի հոգիներն կոչելու և նոցա հետ տեսնուելու : Բնշպէս որ ինչը կ'ապահովվներ թէ կարելի է : Ես որովհետեւ զինքն անկեղծ մարդ կը հանաշէմ՝ որ զիս խարելու ալ չահ ու պատճառ չունի, ուստի մատահ եթ որ վախնալու բան մի չկար ոչ ՚ի պատրանաց և ոչ ՚ի Խարաւրահնար պատրաստութեանց և ՚ի շաղակրատութենէ, այլ շատ շատ համարեկի թէ ինքն և իւր բարեկամներն խարուած Երեակայութենէ մի բանուած էին՝ որ նոյն իսկ խելացի մարդկանց ալ կարէ հանգիստիլ :

Ուստի երեկ երեկոյ իւր տունն զենացի՛ ուր տան տասուերկու հոգի ժողոված էին՝ ամենքն ալ պատւաւոր գամէ մարդիկ՝ նուիրակներ գատաւորներ գիտուններ, և բաց ՚ի նոցանէ երկու ալ եկեղեցականք . ուստի որպէս ասացի այսպիսի պատաւաւոր ընկերութեան մէջ վախնալու բան մի չունէի, և միտք զրի որ ամեն բան լաւ գիտեմ և գննեմ առանց նախապաշտրման, և անկօղմաներ կէրպով ալ գատաւաւան տունեմ:

Ուստի փորձն ակառաւ միայն մի յենարանի կամուքի վերոյ կեցած կը որ սեղանի մի վերոյ որ գրեթէ մի մետր բարձրութիւն ունէր, ոյն անձն որ բան զամնեան յարմարագոյն հըսուր կը համարուեր՝ մեռնածել սկսաւ առանց սեղանին դպչելու՝ մազդիսական շրջաններ տալու պէտ ձեռքն շարժելով, և յետոյ մասունքն ակզնին վերոյ գրաւ առանց շարժելու . գամի մի վայրկեաննեն նայիս սեղանն սկսաւ զողալ, և յետոյ սկսաւ փորձառութի ձեռաց ներքեն

դառնալ. և պատգամին եռուսանին պատրաստ լինելով խորհրդաւոր ոգին սկսու յայտնութիւն:

Բայց որովհետեւ ոգին սեղանին միջնորդաւոն կը խռուիր՝ որ ձայն չունի՝ իր միաքան սեղանին զարնուածքովն կը յայտներ՝ որ իւրաքանչիւր հարցման վեր մեր կը նետուէր. և այրութենի զբերուն որոշեալ թուով զարնուածք սահմանելով զանդազու գժուարին կերպով բառերն կը կատելին, և կրցածնուն չափ կը բացատրեին: Այս կերպու ինձ շատ տարտամ շիբութ և մուստ երեցաւ. մեկնութիւնն ալ իւրաքանչիւր ոք իր կողմն կը քաշէր: — Ենր սեղանին շարժել կը սկսէր՝ միջնորդն իրեն կը հարցանէր. Ովէ հօն. և շատ այլանդակ պատասխաներ կառնուար: Եզիպացւոց և յունաց հին ժամանակներէն այլանդակ և անծանեթ անուններ՝ որ կուգային գրիստոնեաց իննետաներորդ դարու կենդանի մարդկանց հետ խօսակից լինելու՝ անծան ու պարտադ բաներ իրենց զրուցելու համար. և որչափ որ միջնորդը կը ջանար որոշ հարցութերով կարեւոր բան մի հասկնալ՝ այնպափ տեղի պատասխաներն խառնացնեն և մեթին լինենին: Երկայն առեն անցուցինք այս խաւարին և աղայական թափառմանց մեջ. և ինձ այնպափ անբանաւոր և ցատկըտուկ երեցաւ այս ոգեկոչութիւնն՝ որ մասնակից լինել չհամարժակեցաց. թեպէտ և շատ կը փափաքէի Եսկարին և իւր նոր միջնակին վերաց սեղեկութիւններ առնուած. ինձ այնպէս կ'երեւէր որ այս պարագայից մեջ և այս եզանակաւ իւր հոգին կոչելն սրբազզութիւն եր, և միանգամայն ներհակութիւն մի կը զբայի գերեզմանէն անգին զաւածտ անձանաթ հոգիններու հետ զորս չեի կարոզ որոշել՝ որ և իցեւ եզանակաւ վերաբերութիւն ունել. և որոց կարծեցեալ պատգամներն ալ վատահուսւթիւն մի ոչ այլին ինձ ուստի լուս կեցած կը դիմէի:

Սակայն չեմ կարող ուրանաւ որ առարինակ և

արտարնական (բնականէ գուրս) բան մի կայ այնոր մէջ։ Այն պատռաւոր և անկեղծ մարդկն որ միթեոր գումարինն առներ՝ ոչ խարեւութիւն, և խմառաւն մարդ ալ լինելուն՝ չեր կարող խարուիլ, և ոչ ոչ չահ մի ուներ՝ եղած հարցմանց պատռախուն այնպիսի անյարմար բաներ հնարել։ Եւ որովհետեւ հանգիստականք ալ պատռաւոր և ուսեալ մարդիկ են, և ոչ զիւրախար, ինձ հաւանական կ'երեխ որ յիրաւի՛ այն սեզանին ձեռքով խորհրդաւոր հազորդակցութիւն մի հաստատուեցաւ իրենց և անդիի աշխարհին եակաց մէջ, որոց եթէ կ'ուզես ոգի անունն տուր՝ որով հետեւ այսպիս կ'անուանեմք այն ամեն բան որ մեր ընդույրանաց ներքի ոչ անկանին։ Բայց արգեսք ինչ տեսակ ոգիներ են, և ամեզքերաց որ պարունակին կը վերաբերին այս անուեսանելի եակեներս և ուստի կուգան։ բարի են թէ չար, ոգիք լուսոց թէ խաւարի։ Հրեշտակ հշմարութեան թէ սատարք մոլորութեան, պաշտօնեայք երկնից թէ արբանեակք գըտնից։ Ահա զայսոսիկ կը մատնեի են, և անսանովս ու լսածովս չեի կարող այս բաներս որոշել։ Եւ բայց տասի՛ այս ոգւոց տասցածներն այնչափ մուժ անորոշ և անիմուսա բաներ են, որ այսպիսի պատռախաներ և լուրեր բերելու համար՝ անդիի աշխարհին զայն ոչ արժելու։ Ահաւասիկ որքա են այս կարծեցեալ յայտնութեանց՝ իմ վրաս գործած տպաւորութիւններն։ — Միայն հանգիստականաց մին իր սակաւ ինչ յառաջ վախճանեալ ազգականին մերայ հարցում մի առնելով՝ ընդունած պատռախանին մի բայց շատ զարմացաւ և շատ այլայլեցաւ։ որովհետեւ առած պատռախանաւոյն մէջ այնպիսի ծածուկ գաղանիք կը նշմարել որ միայն վախճանեալն կարեր դիտել, և այս բանս ամենուն վերայ մեծ տպաւորութիւն արար։

Այս վորձերուսմեջ գլխաւորապէս բան մի զիտեցի որ այս խաւարային վործոց ստարժերն ոչք որ են՝ քրիստոնէական նշաններէ մեծ խորշում մի ցուցանեն. Յիսուսի Քրիստոսի անունն զիրենիք կը խռավէ. Խաչակնքելն զիրենիք կը չփոթէ. և երբ իրենց որոշակի հարցանես թէ արդեւք բարեց թէ չարի վործիք են. Աստուծոյ թէ ստամայի. իրենց պատասխաններն կը կոմիզկորեն կը ծռմնին. ու այս կամ ոչ պատասխան մի ոչ տան: Տեսի նաև որ սեղանին վերայ սրբազն բան մի որ ուզեցին դնել՝ սեղանն ետ ետ կը նետուեր. և սեղանին վերայ զրուած կոզովն՝ որ ձեռնածութեամբ սկսել եր զառնազ՝ երբ Աւետարանի իրեն մատեցուցին. ոճի պէս սողալով սկսաւ ժամանիլ:

ծերն իրարու հակառակ լինելուն պատճառաւ։ Հայե-  
ցականին մեջ անհաւատ էմք, որովհետեւ զամենայն  
ինչ գերբնական մերժեմք, իսկ գործնականին՝ այս-  
ինքն կենաց ընթացքին մեջ հաւասարելոց պէս կը  
վարուիմք, գոնէ նկատմամբ մեր կանանց և որդւոց։  
Արդ եթէ համոզուած լինեաց թէ կրանից մեջ մոլո-  
րութենէ սառութենէ կեղծաւորութենէ ու պաս-  
րանքէ զաւ ուրիշ բան չկայ՝ միթէ յիմարութիւն  
մանաւանդ թէ սճիր չեր սեպուեր մեզ՝ մեր ամենէն  
աւելի սիրելիներն նորա ձեռքն յանձնել։ և մի թէ  
ընդհակառակն ամեն ջանք առնելու չերնք զիրենք  
անախ հեռացնելու և զգուշացնելու համար։ Այս  
շանելուս պատճառն այն է՝ որ մեք մեր կարծեաց  
մրաց վատահութիւն չունիմք. այս բանս զիս կամա-  
շեցուցանէ։

Քրիստոսի գործոց զօրութիւնն :

7 Դեկտեմբեր :

Իրաւ է, մեք մեր կարծեաց մյուս վատահութիւնը չունիմք, և մասամբ միայն իմաստատեր եմք . Եւպէտ և կան ունանք որ մինչև ծայրին կը ըթանի իրենց գրած սկզբանց հետեւոնքէն ետ շդառնալով, և սակայն որ շափ որ իրենց ընթացքն բանախառական ալ սեպեմ սակայն իրենց հետեւիլ ոչ կամքմ:

Սոցա ասացածն պարզապես այս է . Որովհետեւ գերբնական բան մի չկայ և զուք անհնարին ևս կը սեպեմ զայն, առաջ յայտնաւթեան մյուս հիմնեալ ամեն գրական կրօնք, և հետեւապէտ քրիստոնէութիւնն իսկ՝ մարդկային հնարք են քահանայից կողմանէ սուսաթեան և կեղծաւորութեան զործ՝ հաստացելոց կազմանէ ալ երևակայութեան ու պատրանաց : Աւրեմն Ծիռուս ու ուրիշներու պետքանարկի մի է՝ որ ուզեց Հրեից թագաւոր լինել՝ գոներ բարոյապէտն՝ իւր վարդապետութեան գերազանցութեամբ, ուրոյ մեջ շատ լաւ բաներ ալ կան որչափ ալ շափազանցութիւն գտնուած, ինչպէս Արեւելքէն և կատա ամեն բաներու մեջ : Անքն հախարսնութիւն շնորհք նարաւարութիւն և հմուսութիւն ունելով և ժողովը գեան սերն իրեն քաշել ուզելով այս ամեն հնարքներու բանեցուց՝ այն կրօնից գեմ՝ զար կուզեր տապալել : Բայց ուստին մյուս շափազանց վատահայաւ՝ որ ամենէն վատահաւասր ժամանեակն իշխանութենէ վախնալով զինքն երեսի մյուս թողուց, ինչպէս որ միշտ կը պատահի, մինչև սախովուեցաւ ալ խնդրելու որ ի խաչ հանուի, զայն որ սակաւ մի յառաջ յազ թանակաւ Երուսաղեմ տարած էր . Տարուպէտական

ժայռն՝ Ասպիտողիոնի միշտ մօս է։ Ասկայն պէտք է խոստվանիմք՝ որ Յիսուս քաջութեամբ մօռաւ և իր խօսքն եւ շառաւ։ Համառաւ առելով՝ ինքնն հարտար զաւաճան մի է կրծնից, որ հրեից ժողովարանն ուզեց կործանել այնոր տեղն անցնելու համար, և առնջանաց մէջ ալ մեռաւ։

Յիրաւի առեմ որ այս խօսքերս զիս կը կատղեցրնեն։ թէ Յիսուս Քրիստոս Առառածն չէ՝ կը հաւատամ, կամ գոնի կարծեմ թէ կը հաւատամ, որովհետեւ սոյց չեմ զիտեր։ բայց ոչ երրեր կընդունիմ թէ ինքն փառատեր ու նեղաւոր մարդ մի էր, և կուզեր ժողովուրդն խարել վրանին տիրելու համար, և կրօնից իշխանութեամբ նոցա դլուի և թագաւոր լինել։ և Առեւարանի պատմութիւնն ալ այս զրագարատութիւններս սուս կը հանեն, և անվայել և անարժան քան է մարդու մի վրայ յանցանը ձգել ենթագրելով թէ ծածուկ զիտաւորութիւններ աւնի իւր գործերուն բոլորտին հակառակ։ Այս այնպէս կը խորհիմ թէ ինքն մարդ խարել ուզած չէ, ոչի իր հշմարիս հաւատացածն ինչպէս որ կը տեսներ՝ պարզապէս ուզել է քարոզել, և ժողովրդեան վրայ ալ այսոր համար մեծ ազգեցութիւն ունեցել է՝ որովհետեւ նախ ինքն համոզուած կը խօսեր որով և ուերհութեամբ, և երկրորդ որ իր ուսուցածներն ալ իր բարերարութիւններուն ու առաքինութիւններուն կը հաստատէր։ Կը հաւատամ որ ինքն իւր վարդապէտութեանց համար մողեխինդ խմելն յանձն ունել էր։ Այսպիսի մեծապահն գործի մի մէջ ունայնամութեան անարդ զիտմունք իրեն տալն՝ ցածութիւն ու քորրոզութիւն է։ Ծշմարիսն առելով Առուցի պէս ինչ ալ առելի հրաշալի կերտի Քրիստոս՝ քան Սովորիսրեայ որդին (Սոկրատ)։ որով

հետեւ նաև խայլի վրայ հոգին աւանդեց լքեալ թու-  
զեալ յանձնեցունց . և մեծաց և փորունց ծազրու-  
թանակ եղած և արհամարհուած : մինչդեռ Առկար-  
տոյ մահն թատերական վրայը մի ունի . որպէս նաև  
իւր աշակերտաց հետ խօսակցութիւնն . յորում  
փոքր ՚ի շատեւ մնապարծութիւնն մի ալ կ'երենի գոնեւ  
Պլատոնի պատմութեանն նայելով :

Սակայն բան մի կայ որ Քրիստոսի վրայ ունեցած  
զարմանեցու կը խռամի , և կը վախեմ որ մի գուցէ նորա  
անկեղծութեան վրայ ունեցած համարումն նուա-  
զեցնէ : Մատենազիր ոմն՝<sup>1</sup> որ բազորութիւնն սուսաւ և ան-  
հման նկարագրութիւնն մի արարեալ է Յիսուսի Քրիս-  
տոսի զինքն հոգիւ մանաւանդ թէ շոզոմարար մի  
ծպաելով ու ձեացուցանելով որ շոզոքորդ խօս-  
քերովն ամենուն սիրան կը վասարեկեր , զիա անոնցա-  
զիր առնելու համար՝ կը հաստատէ թէ ինքն իւր ան-  
ձին ոչ երբեք Որդի Առածեց անունն տուած է .  
բայց երբ իւր աշակերտունեցն իրենց կարգէ գուրս մոլ-  
եռանցութեամբն իրեն տուել են այս անունս՝ ինքն  
ալ գետ չէ կեցած իրենց նախանձաւորութիւնն քա-  
ջազերելու և նոցա վստահութիւնն առելցնելու հա-  
մար : Աերոյիշեալ մատունազինն այս խօսքս բազորո-  
ւին սուսաւ է . և յիբաւի զարմանալի բան է որ Յի-  
սուսի Քրիստոսի վարք գրել ուզոզ մարդն՝ Աւետա-  
րանն ուշագրութեամբ չէ կարգացել . որովհետեւ  
Աւետարանին մէջ շատ տեղ կը տեսնեմի որ Յիսուս  
թէ իւր աշակերտաց մէջ և թէ քահանայից և որի-  
նաց վարդապետներուն և փարիսեցոց առնե յայտ-  
նի կերպով կը զրուցէ որ ինքն Որդի է Առածեց .  
մի ընդդ Նոր , և ամենայն աստուածացին հատարե-  
լութիւննեցն ունող :

1 Կարծեմ Ռուսանի համար է այս խօսքս որ պյանդակ  
հարք մի զրած է Յիսուսի :

Արդ այն բանն որ այս մատենագիրս յանձնահանութեանայ՝ զՅիսուս իր խելքովն անմեղագիր առնելու և արգարացնելու համար, այն բանն ինձ պատճառ կուտայ՝ Քրիստոսի գեմ բողոքելու և զինքն ամբաստանելու. վասն զի այս իր պահանջմանը և աստուածային բնութեան թեակոխութիւնն՝ որ ըստ Աւետարանաց անհերքելի է, և աստուածութիւն յափշտակել ուզելին կամ ամբարտաւանութեան մակեզնութիւն մի է՝ հռովմեական կայսերաց գործածին պէս՝ որ իրենք զիրենք կ'աստուածացը նէին, կամ անկեզնութեան պակասութիւն և ստութիւն իր գառան յառաջ վարելու համար. Խնդիր լինելով՝ Աստուածոյ տեղ զնել տալ զինքն. այս անգրագարձութեամբ իմ նորա առաքինութեան վերոյ ունեցած համարմունքս բոլորովին կը վերնոյ. միայն թէ իրաւ չըլլայ ասացածն, և յիրաւի Աստուած չըլլայ. արդեն այս բանս հաստատելու կերպեն և խօսքերեն ալ այնպէս կ'երեխ ինձ՝ որ ինքն ալ այսպէս կը ժառանձէր, այսինքն՝ ինքընք Աստուած կը համարէր. եթէ այսպէս է, ստութիւնն կ'արգարանայ, այս ինքն սուտ զրուցած ոչ լինի, բոյց յիմարութեան կեզով կ'արգարանայ. այսինքն եթէ սուտզրուց ալ չէ՝ յիմար է: — Հապաւ թէ որ ասացածն Խմարին է. այս ինքն Տշմարտապես Աստուած է. ո՛հ, ոչ ո՛չ, այս բանս անկարելի է. բնաւ չեմք ընկունիր որ մարդ Աստուած լիցի, ասսա թէ ոչ հեթանոսաց պէս կամ պաշտ լինելու էինք, կամ պատի պէս յոյժ տկարանի որ առանց խորհելու կը հաւասար:

Տանջանաց մեջ մեռնին ալ իրաւ է, որովհետեւ ասացածներնուն նայելով շատ չարշարուած պիտի լինի խաչ ելնելին առաջ և նոյն իսկ խաչին վերոյ. իւր վարդապետութեանն վկայ լինելով. քաշած տանիւանքը մոռածելն միայն զննարդ կը փշոքաղե. բոյց զուր տեղի տանիւուցաւ առելն՝ սուս է. վասն զի այսոր

շագի արդիւնաւոր մահ բնաւ եղած չէ : և իւր ա-  
րիւնն հաւասացելոց սկզբն եղած է : Իւր աշակերտ.  
ներն չուտով բազմանալով հոգեւորական ընկերու-  
թիւն մի կազմեցին՝ որով ձեւցաւ քրիստոնէական  
Ակեղեցին . որ այսօր աշխարհիս ամեն դին առ-  
րածուած է . որ ինձ մեծ յախոզութիւն կ'երևի .  
տասնութ գարերու յախոզութիւն մի աշխարհիս  
ամենէն աւելի բարդաւանեալ ազդաց մեջ որոց  
կենցաղն որենազրութիւնն և քազաքականութիւնն  
քրիստոնէութեան ձեռք բոլորովին այլափոխեցան :  
Աւրծապէս իմաստասէր մի եղած չէ 'ի ներքոյ արե-  
գական՝ որ այսպէս ինչ գործելու փառք ու բազդն  
առացած լինի , և ոչ իսկ այնոր կէան :

Քրիստոսի զօրութեան ընութիւնն ի՞նչ է : —

8 Դեկտեմբեր .

Մարտիրոսաց վկայաբանութեանց մէջ կը կար-  
գամք որ հալածողներն զիրենք ծաղրելով կը խըն-  
դրեին որ հրաշք մի տանեն՝ տանիտներն ազատելու  
և իրենց հաւատոց Հմարատութիւնն ցուցանելու հա-  
մար , և երբ ուզածնին կը գործէին՝ որ քրիստոնէից  
առացածնն նայելով՝ շատ անգամ կը պատահէր . զի-  
րենք կ'ամբաստանէին՝ որպէս թէ զիւթութեամբ  
գործել են . ինչպէս որ փարիսեցիք ալ Քրիստոսի վե-  
րայ ամբաստանութիւն տանէին՝ ասելով թէ ինէ զ-  
զերուզի ձեռքն սատանայներն կը հանէր : Մեր  
որերս ալ նոյն բանն կը տեսնեմք . վասն զի կան մար-  
դիկ որ կարծեն թէ Քրիստոս վհուկ մի էր՝ Եթէ ոչ  
որպէս Մամաւ որ եղիսպացւոց իմաստութեամբն  
մեծցած էր , սակայն զանե հրեից մէջ գործածուած  
ամեն զիւթական արուեստներն զիտէր՝ 'ի մանկու-

թենէ այնոց դազանեացն տեղեակ լինելով։ Այսով  
է որ առն այնչափ տարօրինակ և զարմանացի դոր-  
ծեր կը դործեր՝ հրաշխ տեղ գնելով զնուա, որպէս  
նաև իւր աշակերտներն առնեին։

Այս ալ կարծիք մի է. միայն հարկ է տպացու-  
ցով հաստատել զայն վասն զի ևս Աւետարանին  
մէջ Քրիստոսի պրայզ պատճռուած դործերուն նը-  
կամամամբ մոգութեան գիւթութեան վարպետու-  
թեան նման բան մի չեմ առնեեր։ Յիրաքի կան բա-  
ներ որ հրաշխ պէս կը պատճռուն, յորոց ունուք  
բնական կերպով ալ կարեն բացատրուիլ. ինչպէս  
որ բոզովական մեկնիցք դրոց փորձած են բացատրե-  
լու. և երբեմ ալ յաջոզել են. բայց շատ անզամ  
բոլորութին եացրական մեկնութիւններ տալով Աւե-  
տարանի մէջ կան ուրիշ դործեր ալ՝ որ ինձ բոլորո.  
մին անբացատրելի կ'երեւն. և առեմ թէ առելի կը  
հաւտամ որ տեսնազներուն կողմանէ պատրակը և  
շացութիւն եր՝ քան թէ դործոզին կողմանէ նենդու-  
թիւն և շազակրատութիւն անաստրակոյ ժողովը-  
գեան երեատկայութիւն՝ փոքր ՚ի շատէ զարմանացի  
դործերն փոթոքուցել է. և բերնե բերան անցնե-  
լով և երթալով գեղեցկանալով գերմարդկային դոր-  
ծեր դարձել են։

Ուրիշ կողմանէ մեր խնդրայն Բնէ գիւրութիւն  
կուտայ զՔրիստոս մազ համարելն. մի թէ այս որս  
մոգութեան հաւտացոզ կաց. ինստատասէրը որ Որդի  
Առտուծոյ ոչ ընդունին զինքն՝ մոզի անունն ալ չեն  
կարող տալ իրեն, որովհետեւ ոչ մի առափնան գեր-  
բնականի կամ արտաքանականի կը հաւտառան. հրեայը  
և հեթանոսը որ այսպէս առելին՝ մոզական արու-  
եամի կը հաւտառացին, և Քրիստոսի և աշակեր-  
տաց վերայ այս անունն գնելով գիտեին ինչ առել  
կ'ուզեին. բայց մեզ համար անիմաստ բառեր են. և  
հետեապէս այս կարծիքս ալ այիտաց և մեռաբա-  
պաշտից մէջ միայն զըրութիւն ունին։

Մոգութեան հաւաացզեթքն ետև՝ որ մեր ուրեմն յոյժ սակաւ են. Հոգելու ասացեալիներն կուզան, և այսպէս կողուելիուն պատճառն այն չէ՝ որ ուրիշներէ աւելի խելք ունին, հասպա որովհետեւ կը լուսունին թէ ուրիշ աշխարհքին մէջ ալ կը թափառին, և կը համարին թէ այս ոգուց մերձակայութիւնն կարեն զբայի առնել աեւակ աեւակ կերպերով՝ յորոց յառաջ կուզան տարօրինակ յայտնութիւններ՝ որք շատ նմանութիւն ունին Փրիստոսի և առաքելոց զործած հրաշքներուն. Հոգեկաններու այս վարկածն ինձ անհիմն կ'երեք. ինչ որ իրենք առն թէ կարեն առնել ոգուց միջնորդութեամբն և ազային կը մերժեմ և ոչ կը հաստատեմ. թէպէտե ասացածներուն շատն ալ մութ շփոթ և անարդիւն մնելն ալ գիտեմ: Բայց զայս ասեմ որ Աւետարանին մէջ երբեք աեւած չեմ որ Փրիստոս ալ նման միջոցներ բանեցուցած լինի. ինչ որ իրենք կը զործածեն՝ շրջող սեղաններ, պարազ կողովներ և այլն, որ մեքենական այրութենի ձեռքով ոգիներուն իրավիլ կուտան, և այլ ուրիշ նման կերպեր. Փրիստոս պարզ խօսով և զայեցով մոյսն կը զործէ. մատն խուզերու ականնն կը զնէ, ՚ի ծնէ կուրին աշքին սակաւ մի թառք կը քսէ, աեւատես կինն իր զգեստուց զըստ ըլուզ կը թժէնէ. Պազորու կը հրամայէ որ զերեզմաննեն ելնէ. և ամեն զործածներուն մէջ պարզութիւնն պատճին և մեծութիւնն կը փոյլի. այնպէս որ եթէ մարդկանց մէջ զերբնական զօրութիւն ունեցող մի գոռուեր՝ անշուշտ նիքն պիտի լինէր: Բայց նորին կը զրուցեմ. մէք այս աշխարհքին մէջ զերբնականի արտայայտութիւնն կերպին իւիք ու Ընդունիքը, այնոր համար մօգ եղել է հոգեկոչ եղել է՝ ինդրոյն լուծութեամբ քայլ մի ևս առաջ չերթար բանաւոր և խելացի մարդկանց առնեն՝ որ ոչ այս կը հաւաատան և ոչ այնց:

Վերթապէս մազնիսութեան հետեղք ալ՝ իրենց  
կողմն քաշել ուզեցին զ՞իրիստոս՝ համարելով թէ  
իւր բազմաթիւ բժշկութիւններն այս հնարիւքս առ-  
ներ, եթէ մազնիսութեամբ բժշկութիւն ընեի, զոր  
աշխատ տեսած լինելով չեմ կարող ուրանալ։ Բայց  
մազնիսացուցիչ չեմ տեսել որ մռեալներն յա-  
րուցանէ, և սակայն Քրիստոսի գործոց մեջ երեք  
հատ կայ այսպիսի գործ, և ասի թէ իւր մահուա-  
նէն եռե իւր աշակերտներն ալ շատերն յարուցել  
են, նաև և մեզ մատ առեններու մեջ ալ որ այս աղ  
շատ մեծ զանազանութիւն մի է։ մանաւանդ կը տես-  
նեմք որ Յիսուս և իւր աշակերտներն և Եկեղեցւոյ  
սրբացուցած անձինքն՝ ոչ երբեք մազնիսացուցաց  
կերպերն և ձեռնածութիւններն բանեցուցած են։  
Իրաւ մազնիսութեան եռանցնոաք կը համարին թէ  
միայն կամաց ներգործութեամբ այ առանց նիւթա-  
կան միջնորդի կարեն ազգեցութիւն տանել, բայց  
զեռ մինն անգամ ՚ի նոցանե շեարե պարծել թէ մե-  
ռեալ մի յարուցել է։ Սակայն ինչ և ինք մազնի-  
սացուցիչ, մոր կամ հոգեկոչ սորտ ամեներեան մի  
են իմաստամբի առջևն՝ որ ուրիշ բան չընդունիր՝  
բայց ինչ որ բանն այս ինքն իւրիքն, կարե ըմբռնել և  
բացառընել։

Արդեօք Քրիստոս զաղափա՞ր ինչ է կամ  
անձն առասպելեալ.

9 Գեղագումբեր:

Կորևն կը հարցածեմ իմաստասիրութեան և զի-  
տութեան առևն արձագանգայ. Խնչ է Յիսուս Քրիս-  
տոս, և կը լուեմ որ ոմանկը առնեն թէ Քրիստոս առա-  
շանդ չկայ և եղած չէ. և իր անունն աղ, Բնապետ  
Հոմերոսի, Պիւթագորայ, Հոռմուլոսի և ուրիշ շա-  
տերու անուններ՝ զորս ժողովրդեան երեւակայու-  
թիւնն ազգաց նահապեաներ համարեցաւ և ջահ  
մարդկութեան՝ ուրիշ բան ոչ նշանակեն՝ բայց եթէ  
որոշեալ գարու մի մեջ մարդկային մասց զարգաց-  
ման երեւթից անձնաւորութիւնն որում հիմա ա-  
ռասպելեալ անձն ասեմք. այսինքն զաղափար մի մաս-  
նաւորող ձեւ՝ ընդ կերպարանք մարդոյ եկեալ յի-  
րականութիւն. — Այսու նկատմամբ Քրիստոս ա-  
սացեալն անձնաւորապես եղած չէ. այլ ինչ որ ի-  
րեն կ'ընծայուի մարդապետութիւն և գործ՝ որ մա-  
սնամք իւնիք Հմարիս են՝ որպէս մարդկային մասց  
ձնունդ, և մասնաւոր ժամանակի մի մեջ մարդկու-  
թեան զարգացումն. ՚ի բաց առեալ հրաշքերն և  
գերբնական իրերն՝ որ յետոյ յաւելեալ են ՚ի մեռ-  
տիազարդաւթենէ ժողովրդոց. որպէս միշտ պատահէ:

Այս կարծիքս մեզ հասաւ յամպրապայինն Պեր-  
մանիոյ՝ որպէս նըրազայն և եթերական մասն բո-  
զգական մեկնարաւութեան զրոց. ևս և վերաբար-  
ձական իմաստասիրութեան՝ որոյ պատգամախու-  
եզե հռչակաւորն Հեկլ. Այս գրութիւնն իմաս-  
տասիրիս հնարած նոր համաստուածութեան հե-  
տեանկան է. յորում զաղափարե զատ իրական բան

շիայ , ոյնովէս որ Անթակայականն և առարկայական  
բացարձակապես նոյն լինելով աշխարհքիս գոյու-  
թիւնն և զարգացումն ալ բանախօսական ինչ լինի  
մասնաւուարապես : Ըստ Հեկելի նոյն ինքն Աստուած  
ուրիշ բան չէ՝ բայց Եթէ անհուն բացարձակ գոյու-  
թար՝ յարձ այլքն ամենայն յառաջ գան . տիեզերաց  
կեանքն ալ այն գաղափարիս հարկաւոր շարժումն  
է , և մարդուս միաբնիւր խորհրդոյ աշխատութեամբն  
այնոր սատարն է , և նիւթն իրեն մեւն է : Ազա և ան-  
հատից կեանքն ալ անհուն կենաց մասնական և ան-  
ցողական արտայայտութիւնն է՝ որ անդրագարձու-  
թեամբ նշքն իր գիտակցութիւնն ստանայ : Կամ ոչ  
եսին կը հագիտմանայ : որպէս զի գիտութեամբ նորմն  
այն անհուն գաղափարին հետ նոյնանայ և բացար-  
ձակ հանգստան մեջն լինկզմի նորա ինչ լինելուն  
ծանօթութիւնն ստանալով : որ է իւր շարժմանց և  
կատարելութեան գերազայն վախճանն :

Ըստ այսմ մեք ամենքս ալ մի մի առասպելեալ ան-  
ձինք եմք : այսինքն նշանակք և կուտարակք գաղափա-  
րաց : որ ուրիշ բանի համար ոչ երեխմբ առ Ժամանակ  
մի աշխարհքիս հորիզոննին վերայ՝ անցողական գերե-  
ւութից և Ժամանակաւոր առանցաց պէս , բայց Եթէ  
մայրեան մի փայլեցնելու համար մի և տիեզերա-  
կան գաղափարին մի մասն՝ որոյ ներկայացու ցիներին  
եմք մեք : իրականութիւնն առացելոյն մեջ որ է աշ-  
խարհս : Եւ երբոր մահուամբ մեր խոզին մասն ա-  
ւարտմբ և պաշտօնին կատարեմբ՝ պիտի մասնմբ  
մեծ բավանդակութեան կամ Համայնքն և տիեզերա-  
կան նոյնութեան մեջ : Բայց թէ ինչ պիտի լինի վեր-  
ջապէս մեր անձնաւորութիւնն , այսոր վերայ բա-  
ցարութիւնն տուազ չիայ : Ազա ըստ այսմ Յիսուս  
ալ այլոց պէս մարդ է . այլ և քան զոյլու առելի մարդ՝  
որովհետեւ բացարձակին առելի մեծագոյն մասն յայտ-  
նելու համար երկցած է յաշխարհի . և որովհետեւ

քանի զայլս աւելի գործակցութիւն ունեցած է մարդկան մասն ան զարդացմանն զիտութեամբ և քազաքականութեամբ : որով և ամեն զերական գազափարբն կամ առառանձութեամբ փառացն՝ աշխարհիո մեջ, առաք բրաւամբ կոչեցաւ մարդուն անսանող և նոյն իսկ Որդի Աստուծոյ՝ որոյ ամենէն աւելի հրաշագուռ մարմաւորութիւնն և զօրաւոր գործիքն եզեւ մեր մեջ՝ ի զարութեանեւ ի զործ անցած ժամանակն : Վասն զի ըստ Հեկելի Աստուծուն է ՚ի լինել<sup>1</sup>, այսինքն Աստուծուն հետզհետէ կատարելագործուելու հետ է ՚ի մենա խորհրդաց մասց մարդոյ, և Քրիստոս ալ աշխարհիո ամենէն գերազանց միոքն եզեալ է :

Այս այլանդակ հրեշ զարգապետութիւնն ուր առեալ ածէ զմեզ բայց եթէ գժուարութիւն գըժաւրութեան վերայ կը գիզէ, բնչպէս Տիտանը կամ հսկայք որ զՊելիս լեռան Ոսոց լերին վերայ կը զնեին՝ Երկինք հասնելու համար և ոչ հասնեին, և Ծերիւս բացաարութիւնն բացաարել ու զածէն աւելի անընդհանութիւն է. զինն ինչպատճ մեկնարանն ուղեղով: Յիրաւի իմաստափրութեամ և պատմութեամ հիմնային քանզելու և ամենայն կարդ Եղեանելու համար՝ զայտոսիկ ուստանելն չարժեր, Եթէ Քրիստոսի զօյութիւնն ոչ կարեմք ապացուցանել որ բանի զօյութիւնն կարեմք ցուցանել, և ինչ բանի կուգան պատմական զիտոյութիւնն և աւանդութիւնն և զատարենութիւնն, եթէ ամենայն բացայացութեամից իրեն ոչ կարեմք ուրանալ: Հոմերոս եզեալ և թէ չեւ տարակաւանել՝ պինչ առաջնանի մի կարեմք ըմբռանել՝ որովհեան ժամանակաւ այսպահ հեռի է ՚ի մեջ, և իւր քերթուածոց մեջ պատմուածներն առասպելեալ ժամանակաց կերթան կը համարին: այսու ամենայնիւ այնոր մեջն են:

ողջառութեան և խելքի հակառակ մեծ աներկիւզու-  
թիւն պէտք է՝ հաւաշալու համար որ այսպիսի զար-  
մանալի և երկույն յարակից և շշմայշար գրուած  
մի որ ամենայն ազգաց քերթողութեան օրինակ ե-  
զած է, զանազան զարերու մէջ զանազան մարդիկ-  
ներ շարագրուած և յարմարցուցած լիցի, կամ  
թէ ինքնին եղած լիցի ուստիական երգերու և առան-  
գութեամբ եկած քերթուածոց պատահական հա-  
ւարձակիրն։ Ճիշդ նոյն բանն ասել է՝ որ գիրք մի շա-  
րագրելու համար պէտք եղած տպագրութեան գրե-  
րը չառ անզամյօդս նետելով կարեմք զայն գիրքն  
շարագրուած զանել երկրիս վերայ՝ առանց հեղի-  
նակին մուաց և գրաշարին մեռաց ոգեստեթեանն։

Դարձեալ ինչպէս զպատճռութիւնն այսպէս ևս զի-  
մասամասիրութիւնն ալ բանազրուել ասել է. որով  
հետեւ հոգեխօսութիւնն զիմանկյութեան վկայու-  
թեանն վերայ հիմնեալ, արդէն մարդկային անձնառ  
րութիւնն ցուցանել՝ ներկին զգացման, խորհրդոյ և  
կամաց գործերովն՝ որովք մարդկային կեանքն կազ-  
մի։ Յիշողութեամբ մէք ունիմք զառուցութիւն մեր  
անձնառորդական նոյնութեանն, և եթէ արդի գոյու-  
թեանն յաջորդական վայրեկ աններու մէջ՝ այն նոյ-  
նութիւնն կը շարունակէ՝ ինչո՞ւ անսի ևս անզին ալ  
պիտի յայրառեւ։ Դարձեալ եթէ մեր գոյութեան  
վախճանն մեծ բավանդակութեան կամ համայնքն մէջ  
խառնուի բանել է, ուր մեր անձնառորդիւնն պիտի  
եղծ անի, ուր կը մնայ այս և անզիի աշխարհին մէջ բա-  
րոյական պատասխանառութիւնն և ինչ հաստա-  
տութիւն կը մնայ աստուածային և մարդկային ար-  
գորութեան։ Եթէ առենքնիս՝ ինչ որ առենքը՝ բացար-  
ձակին մէջ պիտի կարնչիմք, ինչպէս զետք յԱվելիանոս,  
վասկը՝ ի զետք, առուակը՝ ի վասկս և կամքիլք լրոյ  
յառուակս, ինչ բանի կուգայ առա բարեոյ և շարի.  
արգարոյ և անիրառեի, բարոյական զանազանութիւնն.

և ինչ առարգերութիւն պիտի լինի ախտի և առաքինութեան թէ իրենց էռթեան և թէ իրենց վերջնական վախճանին նկատմամբ։ Այս զրութեամբ բարոյականութիւնն և ազատութիւնն միանգաւայն է զնանին վասն զի այն առեն մարդկային գործք՝ անրան և անկամք բնութեան շարժմանցն նման։ անհունի հարկաւոր փոփոխութիւնները, այնպէս որ աշխարհաքիւս և ընկերութեան մէջ ինչ որ հանգիստ՝ պիտի առեմք թէ իր գոյութեանն հետեւանքն է և իր գոյութեանն առաջ կուգայ։ — Ամենայն գիմնաստրայ՝ գաղափարի վերամբարձական միութեան մէջ կ'ընկղզին՝ որ նորա սկիզբն է, և հակառակաց բացարձակ նշյութեանն լրումն է ամենայն իրաց։

Բնազանցութեան բարձրաբերձ առեցուխ մի է այս բան։ ոտքն ովնութեան վերայ հիմնած՝ տիեզերքու վերաստեղծելու համար։ վասն զի իմ խուզարկած խնդրոյս ինչ բանի կուգայ առելն թէ Յիսուս Քրիստոս առասպելեալ անձ մի է։ մի թէ ասկէ ետև աւելի գիւրաւ կարեմք բացատրել նոյն իսկ առասպելեալ անձին կերպաւորութիւնն, այսինքն ցուցանել թէ ինչպէս այն առեններն, յանկեան ուրեք աշխարհիւս, անծանօթ փոքրիկ ժողովրդեան մի մէջ՝ յունաց և հառվայեցոց քաղաքականութեանն անհազարդ, և ՚ի ժամանակին յորում տիեզերակալ պետութիւն վերջնոց կերպաւորելու ինչպէս առեմ կը ձեանար գաղտնաբար ուրիշ պետութիւն մի քանի մի անուսունծ և անեկիրթ ձենորսաց խոսքով և գործով, որ իրենց զիրենք կ'անուանենին առաքեալ և ներշնչեալ Որդւոյն Աստուծոյ որ աշխարհը եկել և մարդացել էր՝ լուսաւորելու թիշկելու և փրկելու համար զմարդկութիւնն անենազ և թազեալ ՚ի ծառայութեան շարի և սոսուերաց մահու։ Եւ մեծապահ գործոյս այսմիկ՝ որ հրեից զայթակղութիւն և հե-

թանուաց յիմարութիւն էր՝ ձեռն արկին տկարա-  
գոյնքն և թշուառագոյնք՝ ի մարդկանեւ, և ոչ իսկ  
նոյն ժամանակի զիառութիւններն և զրականու-  
թիւնն իրենց օգնական ունեցավ, և հակառակ իսկ  
առնեայն պետութեանց ժամանակին, և մանաւանդ  
հռովմայեցաց որ մինչդեռ ընկճեր զամենեսին՝ ինքն  
յազդահարեցաւ՝ ի նմանեւ, Առան զի մինչդեռ հռով-  
մայեցաց պետութիւնն զինու զօրութեամբ բոլոր  
աշխարհք կը տարածուեր՝ տերութիւնն Վրիստոսի  
մրայն բանի՝ այսինքն խօսքի զօրութեամբն կը մնա-  
նար. և այս երկու պետութեանց մինչեւ՝ ի մահ  
բացառած մենամարտին մեջ՝ տկարագոյնն հզօրագոյ-  
նին կը յազդեր և կը տապալէր զոյն՝ ընդզգեմ ամե-  
նայն մարդկային կարծեաց և հշմարատնմանու-  
թեանց, որպէս Դաւիթ զԳրողիամ. և նորա մոյրա-  
քազարն մանելով Կապիտոլիոնի մեջ նորա տեղի նըս-  
տաւ, և այնոր տեղին սկսաւ զաշխարհն կառավարել՝  
զօրութեամբ ոգւոյ եեթ, որ մինչև ցայնժամ եղան  
բան չէր:

Եւ իրաւցեն այս բանս պարզապես բազզի խազ  
համարելն կամ անհրաժեշտ հարկի անձնուզրելի ար-  
գասիք ուեպելն՝ բանաւորութենեւ հրաժարել ասել  
է՝ որ սովորաբար զհակառակն հակառակօք ոչ մեկ-  
նարանեւ, այլ կը չանայ իր բացատրութեանցն բաւա-  
կան պատճառ գանձել. Ես որ ոչ հեկելեան եմ և ոչ հա-  
մասառուածեան, և չեմ կարող ալ ըմբռնել թէ ինչպէս  
ողջամբու մարդն և մարդկային արժանապատռու-  
թիւնն զիառցոզն՝ կարէ նոցա կարգն անցնիլ, շատ  
աւելի կը նորում ասել թէ քրիստոնէութիւնն՝ որոյ  
ծագուած և հաստատութիւնն ոչ ըմբռնեմ, զործ և  
Նախախնամութեան՝ որ խազ առնեւ զիմաստու-  
թեամբ և զիառհրդալի մարդոյ՝ յորժամ կամի կեր-  
պարանափախ առնել զաշխարհն և զարձեալ կը հաս-  
տառեմ թէ Վրիստոս ալ ով և բնչ և է և բնչ ա-

նուն ալ իրեն տրուի՛ գործիք եղած է այս բանիս։  
Վերջապես այս առելի խելքի մոտ և առելի պայծառ  
երեկ ինձ, թէ և միայս գեռ շատ մեթին և անհասա-  
նելի բաներ կը դանել այնոր մեջ։

### Վերջապէս մտադրութեամբ քննեմք։

12 Դեկտեմբեր։

Մինչդեռ ուրիշ աշակերտներն վարդապետներն այս  
հարցմանն թէ Ո՛վ առեն ինձ համար, ժողովրդեան  
կարծիքն կը կրկնեն, Սիմոն առանց առասամելու  
պատասխանեց. « Դու ես Քիրիառոս՝ Որդի Առ-  
տուծոյ կենդանուոյ ։ Կը համարուի թէ այս պատաս-  
խանուոյս համար արժանի եղած զիշաւորութեան ՚ի  
վերայ առաքելոց և արժանապատուութեան գլուխ  
լինելոյ Եկեղեցւոյ։ Եւ յիրաւի Յիոնոս յետ տակըց  
նման թէ մարտին և արինն չեր իրեն այս դաւանակն  
սորմեցուցած զինքն Պետրոս անուանեց և արար  
զինքն վեմ հասասառութեան Եկեղեցւոյ իւրոյ առ-  
լով. » Պու ես վեմ, և ՚ի վերայ այդոր վիճի շինեցից  
զԵկեղեցի իմ։ Այս առենենքն այսինքն առանութ գա-  
րերէ ՚ի վեր բավանդակ կաթողիկութիւն կը կըրկ-  
նել այս խօսքս, որ ախեղերաց առաջին առձարին՝ այս  
նիզն շառվմայու ։ Ուրբ Պետրոս Եկեղեցւոյն գմբէ.  
Թին բոլորին զբած է։

Այս բանս միանգամայն իմ գժուարութեանս ըս-  
ծութիւն է. և հարկ է խոսանվանիլ որ ՚ի շրջանա գա-  
րուց և մեր սրերն իսկ յոյժ շատերն ունի իրեն կողմ-  
նակից. և դանէ այս նկատմանը՝ արժան է որ զինքն  
յարգեմք և մտագրութեամբ գննեմք։

Ապա ուրիշն Յիոնոս Քիրիառոս՝ որ ըստ իս ոչ մար-  
դարէ է, ոչ իմաստառէր, ոչ մոզ, ոչ հոգեկազ, ոչ

մարդիստուցիչ, ոչ դիմում, ոչ խարեւայ, և ոչ վերջապես մարդ որպէս զայլը՝ ի մարդկանէ, որովհէտեւ իրմէ առաջ շատամուած գործեր գործած է, արդեւ յիրաւի Որդի Աստուծոյ է մարդացեալ կամ Բանն մարդին եղեալ, որպէս զառաջինն զաւանեցաւ Պետրոս, և որպէս վարդապետն իսկ յայտնապես տաց իւր սիրելեացն և թշնամեաց։ Վասն զի ծաղրելի բան է համարելն թէ ինքն այս անունն ոչ երբեք իրեն տուել է, այլ իւր աշակերտը եռանդագին զարմացմամբ իրեն այս անունն տալու առեն տկարութեամբ նոց հաւանել է։ Ուստ է այս խօսքս որովհէտեւն կը տեսնեմք որ քահանայապետին տականին առջն՝ հայ հոյութեան յանցանոք ուրիշ բանի համար չամբաստանուեցաւ ու չգտասպարտեցաւ՝ բայց եթէ այսոր համար որ աստուծացին ընութիւնն իրեն կը տեպհականեր։

Աւրեան հիմա ինչի հաւատալու է։ Այս ինկդիրու արդեն տառնութ գորերէ՝ ի վեր արգեւամբ լուծուած է՝ միջարտոր միջար մարդկանց հաւատալովին, յորոց ունենք իրենց հաւատոցն համար կեանքերնին առած են, իսկ այլք ևս այս հաւատոց մէջ զատէ են զաղընիր առաքինութեամսն, զմինիթարութիւն յարկածու կենաց և զբաժաշերութիւն՝ ի ժաման մահուամն։ և այս վերջնոց մէջ զատնին յայտ շատ մարդիկ անուանիր համեմարտվ գիտութեամբ և պերճախոսութեամբ։ և անտարակցու արդի աշխարհիս մէջ հանձնորոյ առաքինութեամ և զարդացման կողմանէ՝ ինչ որ չքեզ և լուսաւոր բան կայ՝ առնենքն ալ Աւետարանի կողմին է։ և քազարականութիւնն զոր իր ոգուին վերանորոգած է՝ աշխարհօրէն Որդի Աստուծոյ զաւանած է զիթիսուս, և այնպէս ալ երկրպագութեամ պատիւն մասուցած է իրեն։ Միայն գորերու մէջ քանի մի յերուցան իմաստակերնիր, որ յետին երկուց գարուց մէջ սակաւ մի առելցած էն՝ յան-

զըգնել են հասարակաց հաւատոց զէմբողպելու, և  
կամեցել են ժողովրդեան հոգւոյն մեջ դրդուեցու-  
ցանելու զայն և մթազնելու: Խմաստասէրք այս կող-  
մանէս շատ կը նեղուին՝ որ հասարակ կարծիքն և  
ընդհանուր հաւանութիւն ժողովրդեան՝ իրենց հա-  
կառակ է, և նոցա գրօնակիրներն՝ որ կը պարծին թէ  
Աշմարտութիւնն ուր ալ զանեն իրենց ընդունելի  
է, պէտք է որ իրենց զասախոսութեան մեջ անկեղ-  
ծարար այս եամբ ինքրոյս վրայ խօսին որպէս զի վեր-  
ջապէս գիտացուք և վատահութեամբ քարոզես-  
ցուք թէ արգեղք իրբն զԱստուած պաշտելու է ըզ-  
ֆրիստոս, թէ իրբն խորերացից ամենէն մեծն ա-  
նորդելու է զնու:

Ես իմ կողմանէս՝ այս բանիս մեջ կ'ուզեմ սիրոս  
հանգարեցնել՝ գոնէ ևս իմ անձիս կառավարու-  
թեամին համար: Վասն զի մինչև հիմա այս առարկուա-  
ծէս վրախուաս տուած լինելուս վրայ ալ կ'ամաչէմ,  
որպէս թէ վախ ունեի այնոր երեսն նայելու: Այս  
այ խոստովանելու եմ՝ որ ոչ միոյն իմ անցեալ հա-  
ւատոց յիշատակն և ներկայ կենացս անհոգու-  
թիւնն իրզնիս կը զարնէ և զիս կը խոռին: այլ և  
հոգւոյս մեջ ապագայնն վախ մի կը զցամ՝ որ ինչզն  
Եսկարիս մեռնելէն՝ ի վեր այլ առեցաւ: Սակայն  
խոհեմութեամբ և ըսութեամբ առաջ երթամբ: և  
զցուշանամբ անխօհեմ խորերով իմ գիտաւորու-  
թիւններս հաջակելի: որովհեան ինչպէս որ առնն  
այս տեսակ գործոց մեջ ըսութեամբ գործելի ամե-  
նին ըստն է: ազազակն ըստ գործ չգործելը, ըստ գոր-  
ծըն ալ ազազակ չհանելի: Այս մեծ առաջարկու-  
թեամս վրայ ևս իմ խզնիս մեջ պիտի խոր հիմ՝ յԱռ-  
տաւծոյ և յինէն գուրս ուրիշ մի լինելով, և սապէ  
հետ ալ պիտի չխօսիմ՝ բայց եթէ պէտք եզակ ժա-  
մանակն՝ երկու կողմանէն նայն նիւթեցն հմուտ մարդ-  
կանցն խորհուրդ հարցնելու համար: երբ զիս

Համեզելու համար հարկաւոր սեպեմ Ահա այս գիտամամբ է որ այս օրագրիս ալ ձեռք զարկին և զայն պիտի շարունակեմ մինչև որ Եւ միուր թէ խնդիրն ըոլորովին լուսաւորուի :

Քրիստոնէութեան իմաստասիրութեան գաղափարն :

13 Դեկտեմբեր :

Եթէ Քրիստոս Որդի Աստուծոյ է որպէս ինքն հաստատէ, և Եկեղեցին դաւանի և ամենայի նշանաբիս քրիստոնեայք կը հաւատան, կը հետեւ ուրեմն որ շատ աստուածներ կան, կամ զոնէ երկու՝ Նայր և Որդի, որ զմեզ՝ ի բացբասառուածութիւն տանի, ինչպէս որ յիրաւի մահմէտականք ևս և հրեայք քրիստոնեութեան վրայ այս կեզաս կը զնեն, և կամ Նայրն և Որդին մի Աստուծն էն գոյացութեամբ և բնութեամբ՝ զոր և Եկեղեցին կ'ուսուցանէ Երրորդութեան վարդապետութեամբն ոչ միայն Երկու՝ այլ և երեք անձինս ընդունելով յ Աստուծն : Ասկա զի՞ւսուս Քրիստոս կամ զՈրդին Աստուծոյ մարգացեալ ըմբռնելու համար՝ նախ պէտք է զինքն խորհիմ աստուածային որդիութեամբն իւր՝ ի յաւիտնից ծընթագեամբն, որովհետեւ Բանին մարմնաւորութեան վարդապետութիւնն ի վարդապետութենէ Երրորդութեան յառաջ գայ:

Աստուածաբան շեմ և չինելուս վրայ հիմա շատ կը ցաւիմ, որովհետեւ ակամայ իերազով ինքզինք վերամբարձ խնդիրներու առածն եմ՝ որ թէպէս աստուածաբանութեան առարկայներ են՝ սակայն ի մաստասիրութեան ալ յայտ կարեւոր, զոնէ զինքն խոռվելու շաբի։ Աւստի իմ միայքս քրիստոնեութեան

Հմանելով քննել չե՞ որ ինձ ոչ անկանի և կարողութիւն ալ չունիմ: Միայն կ'ուզեմ որպէս իմաստառքը և իմ խիզն գոհացնելու համար՝ պարզապէս և անկեղծաբար քննել թէ արդեօք յիրաւի քրիստոնեական վարդապետութեանց մէջ անտեղի կամ մարդկային մասց հակառականորա բան մի կայ թէ չե: Եթէ կայ, յայտնի է որ չեմ կարող զնոսա ընդունել, և իմաստասիրութիւնն որ բանիւ վարի յանենայնի իրաւունք ունի հեռանալ՝ ի նոցանէ: Բայ թէ չկայ, ինչու քան զհատարակաց միտու մարդոյ գմուարահանց լինելու եմ, որ այսչափ դարերէ ՚ի վեր այն վարդապետութիւններն կ'ընդունի և կը պատուի:

Կան իմաստասակրի որ քրիստոնեաց լինելուուն վրայ կը պարծին, և քրիստոնեացք որք իմաստասէր կոչուելով հանգերգ՝ սրտի մտաք ոչ միայն Աւետարանի կը հաւատան, այլ և նոյն Հշմարտութիւնն իրենց գըրեանց մէջ կը հաստատեն կրկին համբով, այսինքն յայտնութեամբ և բանիւ մասց: Մեր որերս հանձնուզ զարգիկ մեծարոյ երեցուցին այս կարծիքս՝ յորմէ յառաջ եկու իմաստասիրութիւն քրիստոնեաթիւնն ասացեալ գիտութիւնն, որոյ վախճանն ոչ այն է որ հաւատաց վարդապետութիւններն բանիւ մասց ցուցանէ՝ որ խորհուրդներն բնական գիտութեանց առաջնանն խննարհեցնել լիներ, այլ Նկեղեցոյ տաճանաւետ աստուածային խոսքն հիմն բանելով մարդկային գիտութեան ըռասով ալ զայն առելի լուսաւորել, որպէս զի մարդոյ և ընութեան խորին ծանօթութեան մէջ առելի պայծառ հաստատութիւն մի գանեն յայտնեալ Հշմարտութեան: Յիրաւի այս բանս գեղեցիկ ձեռնարկ մի է, և ես ալ ամենայն ըղմիւ այնոր յաջողութիւնն վախճառչներուն առաջնն եմ, որով մարդկային գիտելեաց երեք մասանց մէջ ալ որ են աստուածաբանութիւնն, իմաստասիրութիւնն և տիեզերաբանութիւնն, ներդաշնակու-

թիւն մի հաստատուելով նոցա իրարու հակառակութենքն յառաջ եկած գոյթակղութիւնն զերնայ:

Այս կերպով ՀՀմարտութիւնն ամեն աեղ կարեք դանուիլ առանց իրարամարտ յարդարելու այն վարդապետութիւններն որ զայնո կը սորվեցնեն իւրաքանչիւրն իւր եղանակովն և իրեն յարմար երեցած կերպովն: Վանզի ՀՀմարտութիւնն ՀՀմարիս՝ անձնամարտ չէ կարող լինել՝ ինչ նամբով ալ որ յայտնուի: Վասն զի եթէ Աստուած նոյն ինքն ՀՀմարտութիւն է՝ ամենայն ինչ որ 'ի նմանեն յառաջ գոյ' Հըմարիս է: թէ ուղղակի իւր խօսքովն մարդուս ուսուցած լինի զայն: և թէ հոգեկան և նիւթական ըստեղծուածոց գործովն նոցա յայտնած: Խաստավանիմ որ այս նոր ուղիո ինչ հանցական կ'երեի, և ինքզինքս երթանիկ պիտի համարիմ թէ որ այս համրես վաւահութեամբ յառաջ երթամ, գոնէ ևս զիս պոհացնելու համար, և իմ առանձնական խորհրդածութեանց մէջ:

Փորձելն մասս շտար, որովհեան այլոց պիտի չի մացնեմ իմ միարս: և վերջապես պարզ և անփառ փորձ մի է զործածու, որովհեան կ'ուզեմ ես իմ անձինս ցուցանել թէ մարդս կարէ միանդամայն քրիստոնեաց լինել հաւատով և իմաստասէր մոռք, կամ թէ առեմք կարելի է բանն ու հաւատին 'ի համբոյը հաշտութեան ածել: Այս բանիս կարելի լինելուն համոզուած՝ կը միտթարուիմ: որովհեան ալ հոգնեցայ՝ որովհես իմաստասէր տարածայն գանուելովն թէ և ոչ թշնամի: այնպիսի վարդապետութեան մի հետ՝ որ աշխարհիս երեան յեղափոխեց և այս աւուր քաղաքականութիւնս յառաջ թերաւ, և որ մինչև ցայտօր կը կառավարէ զայն իւր գաղափարաց բարձրութեամբն և բարոյականին վեճութեամբն՝ զոր իւր թշնամիքն անդամ հանալին և խոստավանին:

## Երրորդութիւն.

18 Դեկտեմբեր:

Սրբոյն Ամեանասի հանգանակն՝ յորում դառնի Երրորդութեան վարդապետութեան ամենէն հիշց առևանն առէ։ «Կաթողիկէ հաւատար պաշտէ զմի միջն Աստուած յԵրրորդութեան, և զԵրրորդութիւն՝ ի միութեան։ — «Առանց չփաթելոյ զանձինս, և առանց անխառելոյ զբացացութիւն։ քանզի այլ է անձրն Հոր, և այլ Որդւոյ և այլ Հոգւոյն արրոյ։ և առկայն Հոյր Որդի և Հոգին սուրբ ունին զմի մայն աստուածութիւն, զինաս հաւատար և զմեծութիւն մշանքնեաւորակից։ — «Հոյր է Աստուած, Որդի է Աստուած, և Հոգի սուրբ է Աստուած։ և սորա ոչ են երեք Աստուածք, այլ մի Աստուած ։»

Եւ ահա այսպէս հաւատալ արժան է՝ առ ՚ի գըտանիւ ՚ի կաթողիկէ այ ուղարքառութեան։ Այս լսելով՝ առջի թերան եւ ալ կը ստիպուիմ աշակերտ առց շատերուն պէս ասելու։ Երբ Յիսուս յայսնեց նոցա թէ ինքն եր հացն կենդանի իշեալ ՚ի յերեկից։ և զի առանց ուաելոյ զմարքին նորա և ըմբռոյ զարիւն նորա։ անհնարք եր նոցա ունել զինանման յաւիտենական, զոր լսելով աշակերտք ասացին։ «Խիստ է բներ այդ ։»

Երրորդութիւնն՝ ի միութեան է և միութիւն յԵրրորդութեան։ այս չէ որ մարզուս միուն կը շփոթէ, վասն զի նոյն բանն զամանէ ՚ի հոգեղէն և ՚ի նիւթեղէն արարածու աշխարհիս, ՚ի գործու բնութեան և արուեստի։ Պերդաստանն կազմի յերից անձանց որ են հայր մայր և զաւակ, և համաձայնութիւն երց ցուեցու սահմաննե զմիութիւն նորա։ Երեք եզերը են

՚ի գիտակցութեան մարդոյ և ու խոհուն, եւն խոր-  
հեալ և կյորդութիւննոցա . ծանօթութիւն՝ ՚ի միտո  
ձեանայ անդրագարձ ըմբռնմամբ ենթակայցին և ա-  
ռարկացին՝ միաւորութեամբ նոցին՝ ՚ի խորհրդեան,  
որ և արտապայտի առաջարկութեամբ որ ունի ե-  
զերս երիս : Ի բնական կարգի ևս ամենէն պարզ ձեն  
երեք գծովք կերպաւորի, և ամենէն պարզ հաստա-  
տուն մարդին երեք տարածութեամբ լրանայ . և մար-  
դին ինչ հաստատուն կազմ համար երեք յենարանի  
կարուա է : — Կարծեա ինն թէ յաստաւածային էու-  
թեան աղ նոյնպէս է, և ըստ պայտի հանգիտութիւն  
ինչ գոյ անհունի և հետարի գոյութեան մէջ : Բայց  
այս հանգիտութեան չափն անցնելու չէ . և որբ ան-  
դըր քան զաշխարհս և զմիջոց և զժամանակ կամ-  
ցան ձգել զնա՞ անկան՝ ՚ի մազորութիւն՝ առև Եկեղե-  
ցին, զամն զի պյուռ համարեցան ու ոյլ ինչ անսա-  
նել յԱստուած՝ բայց երրորդութիւն մի սասրուց-  
լիաց, կամ զիխաւոր երեք եղանակ յայանի լինելոց  
և գործելոց, որ և կերեամիկոսութիւն միաւորակա-  
նաց :

Հաս է ուրեմն գժուարութեան կնճիռն, այսինքն  
թէ կաթոցիկեայց գաւանած երրորդութեան երեք  
անուանք ոչ եթէ մի և նոյն էակի արտապայտութեան  
երեք ժամանակներ են, ոյլ իսկապէս երեք անմինք  
զանազանք և անշպովք ՚ի մի և նոյն էակի, և ՚ի միակ  
գոյացութեան : Անեայն գժուարութիւն մին բա-  
սին վերայ է :

Ամգ զինչ է անմին յաւս բանի, բայց եթէ էակ բա-  
նաւոր ունող զցիտակցութիւն իւր, և այս զիտակ-  
ցութիւն որ հաստատէ զիւր եան զանազանէ զիս  
յայլմէ եակ և յու ։ էակ, պյուպէս որ ունի ոգեղին ինն  
անթափանցութիւն, որպէս մարմինք ունին անթա-  
փանցութիւն թեական : և արտապատամ որ և է կեր-  
պաւորութիւն ալ որ ընդունի ինքն նոյն ևս մայ,

և ոչ կարել զայլ գոյացութիւն յինքն ընկղմու և կամ յայլմէ գոյացութենէ ընկղմու յինքն Այսպէս բնական կարգի ներքին միութեան մէջ հայրն որիշ է 'ի մօրէ , մայրն 'ի հօրէ : և զաւակն յերկոցուց ևս . և այսու է որ ետից անհատականութիւնն պահի և իւրաքանչիւրոց յառակ պատասխանատուութիւնն առհմանի անձնաւորական նոյնութեամբն :

Ապա ուրեմն եթէ Երեք անձնուք են յԱռողջած , ապա և Երեք գիտակցութիւնը անձնն Հօր , անձնն Որդւոյ և անձնն Հոգուցն որրոյ . և այսպէս ալ կը վարդապէտուի 'թէ իւրաքանչիւրոց յառակ անցոյն անձանց ' հանաշելով զայլ Երկուսն որոշ 'ի նոցանե ծանօթութեամբ անձն իւրոյ և սեպհական ներգործութեամբ 'ի ներքին կեանս Արրորդութեան . յորմէ յառաջ զայ անշփոթ զանազանութիւնն աստուածոցին անձանց անձնաւորական սեպհականութեամբ և գործովք : — Բայց 'ի սեպհական գիտակցութենէ նոցա որով որոշն' ոչ զայ յառաջ անժատումն գոյացութեան նոցա որպէս է յարարածս : Երեք անձնուք մասն մի միոյն աստուածութիւն 'մի և նոյն 'ի յաւիտենական բնութեան զանազանելով սակայն 'ի միմանց 'իւրաքանց անձնաւորութեամբն : Եւ ահա այս ինչ զոր ոչ ըմբռնեմ , և կարծեմ թէ բանն ոչ Երեք իւլզամուտ լիցի այնու :

Եւ ինչ կը հետեւի ասամի . մի թէ ասելու եմ թէ Արրորդութեան վարդապէտութիւնն իւլզի զեմէ , որովհետեւ միոյն զոյն շկարե բացառել , որպէս թէ բանն մարդկային անսխալ շափ լիներ գերազոյն կակին , և որ և է կարելեաց : Ու . այլ անկեզծ և անկողմասէր իւստասիրի մի պէս կը խռատվանիմ որ յիրաւի այս նիւթոյս մէջ մեծ զժուարութիւն միոյն կայ ' մարդկային մուայ համար . վասն զի տեսանեմ որ այս վարդապէտութիւնու յշյտ կարենոր իր եղած և յաշխարհի , որովհետեւ հիմն է Երեքիս ամե-

Նէն աւելի բանաւոր և ամենէն աւելի ազգու կրտելց՝  
որ մարդկային բարոյականի կատարելութեան առ-  
նէն աւելի ձեռնուու եղած է, և անկարելի է որ անմիտ  
և անտեղի սկիզբէ մի այնչափ գեղեցիկ հետեւնքյա-  
ռաջ գան, և կամ այնչափ հշմարատեթիւնք բղխեն  
՚ի մոլորութենէ և ՚ի ստութենէ. կամ այլապէս իս-  
տեղով անկարելի է որ չար ծառ մի այլափ սրանց-  
լի պառազներ յառաջ բերէ:

Ուստի իմ քննութիւնս ուրիշ կողմանէ ալ յա-  
ռաջ կ'ուզեմ տանիլ, որպէս զի ստուգեմ թէ ար-  
գեօք այս առերեսիթ կամ իրական ընդդիմագրու-  
թեանս մէջ յանցանքն մեր մասց ակարութեան չէ.   
որ կ'ուզե իւր չափն չափիցն և գործին գործածել՝  
՚ի նոցանէ մերագոյն նիւթոյ մէջ. և անհուն էակին  
արեգերական հութիւնն իւր ընական բանախօսու-  
թեան օրինաքն գատելու ժամանակ՝ որոց կարողու-  
թիւնն այս աշխարհէս անդին ոչ հասանէ, իւր գոր-  
ծածն զԱստուած մարդակերպ համարել ոչ լինի:  
Եւ յիրաւի մեր մասց գործածն ուրիշ բան չէ բայց  
եթէ հնաւոր արարածներէն որ աշքերնուս առջնու-  
նն անհունին մերայ հետեւ անք հանել՝ որում խել-  
քերնիս ոչ հասանէ, որ անտարակոյս հակախօսու-  
թիւն է: — Բաց ասաի եթէ մարդու խելքն չհամնե-  
լուն համար՝ ուրանայ զերրորդութիւն յԱստուած՝  
հասպա թիւպէս կարէ ընդունել զվարդապետութիւն  
մրութեան և աստուածույին անձնաւորութեան՝ զոր  
ասկայն կ'ընդունի քնական կրօնք ասացածին մէջ ան-  
աստուածութեան գեմ պատերազմելու համար,  
առանց կարելու անտի յառաջ եկած ամեն զժուա-  
րութեանց բաւական բացարարութիւն առլու. զոր և  
կ'ուզեմ աւելի մօտանց քննել:

Բանաւորականութիւն։

20 Դեկտեմբեր։

Ովեւորական իմաստասիրութիւնն՝ որում պատիւ-  
անիմ պատկանելու՝ հանգեց և 'ի վեր հնաւորին՝  
ընդունի զանհունն։ բայց երկու գլխաւոր գործոց կը  
բաժնուի, իրարու հակառակ շաւզք և վախճանաւ-  
յոր հասանեն։ մին 'ի սոցանէ որ թերեւս աւելի տա-  
րածուած է՝ բանախօսական գործոց անուանի, և ի-  
րեն գլուխ ճանաչէ զԱրիստոսել, և թեղետ հնաց  
պէս նորա ամեն խօսքն պատզամի տեղ ոչ ընդունի՝  
նա ասաց ասելով, սակայն նորա ոգին պահած է և  
նոյն ճամբէն երթալով աւելի բարձրերն հասած չէ։  
Բնական իրաց գիտողութենէն կը սկսի և զբիսաւ-  
րազէս զգացի փորձերէ, և 'ի ձեռն վերացման հան-  
րացման և բանավարութեան վերացեալ գաղափար-  
ներ կը ձեացնէ 'ի միտ' որբ իրաւամբ էակը մուաւո-  
րականիք անուանին։ Այսպէս հնաւոր, իրաց գոյու-  
թենէն՝ անհնոյ գոյութեանն կը հասնի' 'ի պատկառա-  
ւորութենէ սախզեալ։ Հետեւապէս անհնոյ ծանօ-  
թութեան գաղափարին մէջ իրաւամբ ուրիշ որակ-  
ներ ոչ հնար է ենթագրել բայց եթէ հնաւորի ո-  
րակներն՝ իրենց բարձրագոյն և վերջին զօրու-  
թեամբն մտածեալ, այսինքն զայն ամենայն կատարե-  
լութիւնս զորո կարծէ աւասնել յաշխարհի՝ անսահ-  
ման չափի մէջ զնոսին ըմբռնելով։ որովհետեւ սահ-  
մանաւորութիւնն անկատարութիւն կամ թերու-  
թիւն է։ Այսու անհնոյ գաղափարն արուեստա-  
կան գաղափար ինչ լինի՝ որոյ հանգետ առարկա-  
կան բան մի չկայ տիեզերաց մէջ։ այս կերպով պար-  
զապէս բանաւորական իմաստասիրութիւնն՝ միշտ

ապրուամբ անօստու զութեան մէջ միայ նկառամամբ ան-  
հնոյ , որովհետեւ իւր պարզ ենթակայ ական խորհըր-  
դալոյ չկարեւ նշմարիտ առարկայ մի գաղանել որոց  
հետ գաղափարն ըազգատելու . և՝ նշմարիտ լինելն  
խնաշեց համար : Միու բանիւ բանախռասկան զը-  
պրոցն անոյ տեղ առանձն զնեւ հնաւորին որակներն  
յանհուն բարձրացնելով և յանհուն զնոսին  
հասուցնելով : — Առափ կը հետեւի որ անհնոյ և աի-  
եզերական էակի և Առառուծոյ վերայ ունել կարծե-  
ցեալ ծանօթութեան մէջ իրականապէս ուրիշ բան  
չկայ բայց ինչ որ ՚ի ընութեան կամ իւր մէջն զատ-  
նեւ անհուն առաւելութեամբ և առանց չափոյ և  
առհետանի :

Այսպէս է եապէս բանախռականութեան ըն-  
դունած Առառուածն ալ , որ է գաղափար ինչ՝ կամ  
բայ ևս տաել ծանօթութիւն ինն վերացեալ , բանա-  
խռասպէս սահմանեալ , օրինաւորապէս արտածեալ  
և ներածեալ , բայց բայ եռթեան պարզ վերացումն  
մի բազորովին նեթակայական որ բայ առելոյ վանիթի  
ոչ այլ ինչ է բայց մարդկացին հասկացողութեան  
մէջ անհնոյ պարուզութիւնն , զոր և բանավարու-  
թեամբ հաստատել ուզան ժամանակ՝ որպէս հիմն  
զիտութեան՝ ընդհանրապէն զրդուեցուց զայն իւր  
հակախռա օրինացն , և ՚ի հիմնաց առազալեց՝ զայն  
հաստատողաց գեմ հակառակամարտ պատճառներ  
բերելով և ցուցանելով թէ այն գաղափարն պարզ  
նեթակայական էր և անհազորդ առարկացի . և ինքն որ  
Արիստոտելին եան ամենեն հզօր բանախռան կամ  
արամարանն էր՝ ականայ անկառ գաղափարնեական տա-  
րակաւութեան կամ սկզբանականութեան մէջ : Առ-  
վերջուագիւ առելի անհառենայի հակախռանութեամբ՝  
երբ իւր բարօյականն հաստատուն հիմնն մի վերայ  
ուզեց զնել : Ընկալու զԱռառուած կամ զեակն աին-  
զերական ինքն յինքեան և ՚ի վեր բան զմիտու որպէս

սկիզբն պարտուց և որովհե հիմք և հաստատութիւն բարոյական պարաւորութեան՝ զոր ինքն պարագան էր առաջանած կ'աւու անելը :

Բանաւորականաց համար Արտօնեց գաղափարն՝ հետեւապես և Աստուած մնանին մերացական և մաս-  
ւոր նույն եակ լինելով՝ ոգուց վերոց շատ ազգեցու-  
թիւն լունի, և միայն զիաւութեան դատարկութիւննե  
լեցնելու կը ծառայե, և բանաւորական աստուածա-  
թառութեան բանախօսական կատարըն կը համարի -  
իսկ որտի վերոց առնենին ազգեցութիւն լունի, ո-  
րովհեան մերացեալ գաղափար մի՛ անձնաւորու-  
թիւն լունելով՝ ոչ կեռանք ունի և ոչ զօրութիւն։ Այ-  
սոր համար և որ բանաւորականը որշափ ալ կը պար-  
ծին Արտօնեց գոյութեան հայեցողական առաջոց-  
ցեր գոտան լինելուն վերոց սակայն գործնականի որ  
գոյ։ Արտօնեց վերոց շատ ոչ մասնեն, վասն զի ե-  
րենց համար Արտօնեծ սահմանադրական թագաւոր  
մի է՝ զոր մարդուս միայն ստիպուած է ընդունել, ի  
վեր քան զցցութիւնն որ յայինարհեա՛ այնոր մեջ  
երեցած սկիզբն և կարգն բացատրելու համար բայց  
չեն կարող ՚ի միա առնուլ զարարշաւթիւնն որ զայն  
կարդա սահմանեց, և ոչ զնախախնամութիւնն որ ըզ-  
նուան սահմանէ։ Արտօնեծ մի է զոր բանախօսու-  
թիւնն կարեւոր հանաչե, բայց չե կարող առելու թէ  
ինչ է նորա և ուսնիթիւնն և զինչ զործ նորա ՚ի ամենզե-  
րիս, և այս ազանդին շատերն կարենեն թէ Արտօնեծ  
ալ երկրիս թագաւորոց պէտ՛ որոց նախատիպն է,  
կը թագաւորէ առանց կառավարելու։ Եւ ոյսպէս  
մասնելուն սպացոյցն ալ այս է ո՞ր առնենին պաշ-  
ան մի ոչ մասուցանեն նմա, ոչ ազօնեն և ոչ յագ-  
նութիւնն կոչեն զնա։ անտարակոյս կարծելով թէ  
իւր ամենզերական ըրութեան մեջ չկարէ անթիւ և  
յանհաւան մաներ եակաց վերոց խորհել որ յիւրմէ-  
կը կախուին և իւր առջն ոչինչ բաներ են, մաս-

ւանդ որ այս մասնական հոգերեն ազատելու համար աշխատեղագործութեան առենքն հանրական օրէնք առհմանած է, և այն օրէնքն այնպէս կարեւոր գործադրութեամբ և անփափոխ կարգով կը կառավարեն զաշխարհ՝ որ մահկանացուաց ազաթքն և պաղտառն քը չէ կարող բան մի փոփոխել:

Այսպէս նկատելով զԱսուած՝ կը հետեւի թէ կրծիք առացեալի անօգուտ է, և իմաստափրի միակ պաշտօնն այն պիտի լինի որ Աստուծոյ գաղափարն ցուցանել և հաջակէ, որպէս կարեւոր կառարր զուտ բանի և սուրոգութիւն անհնոյ յոր երթան յանդին մարդկային հոգւոց ամենայն զգածմանքն իզմէ և է ընակերպութիւնը։ Բայց որովհետեւ այս անփափոխ էակիւս համար բան մի չկաց տանելու, եթէ յիրաւի այնպիսի էակ մի կայ, և ամեղերաց հարկաւոր և անփոփոխելի օրինաց համար աշխատ ին նմանէ բան մի չեմը կարող ընդունիլ՝ ուստի բոլորովին անօգուտ ին մեծարել զնա և կարգաց յօդնութիւն, որպէս և ոչ իսկ սիրել զնա և երկնչիլ ին նմանէ, և նշմարիս իմաստակերն որ առանց պատճառի բան մի ոչ առնէ՝ այս ունայն արարոգութիւններէ ազատ կը համարի զինքն։

Դարձեալ կը հետեւի (և այս բանս մեր ներկայ ինդրոյն կը վերաբերի) որ Աստուած կամ սիրելը բական էակն՝ աշխարհիս մեջ գտուածներուն վերացումն և հանրացումն լինելով յանհունս նոցա որակ ներն ընդարձակած և յանսահմանս տարածուած։ ըստ Տշդագոյն բանախօսութեան Աստուծոյ գաղափարին մեջ ալ այն միայն կ'ընդունուի ինչ որ յիրս աշխարհի տեսանեմք Արդ հնաւորի պարունակին մեջ ոչ երբէք տեսանեմք մի էակ յերիս անձին։ ապա վարդապետութիւն Երրորդութեան՝ որ երիս անձին զնէ ի միում գոյացութեան եթէ ոչ հակառակ գոնէ օտար և ի բանէ, վասն զի իւրաքանչիւր անձն

ունի զանգնական գոյացութիւն, ապա ուրեմն այս  
կարծիքա ընդունելի չէ:

Այս է ահա Երրորդութեան ինդրոյն վրայօք՝  
պարզ բանաւորականութեան մտածածն: Աս աղ եր-  
բեմ այս մատաց համակարծիք էի մինչև 'ի կետ մի, ո-  
րովհետեւ որչափ աղ միտքս այնպէս կը ցուցաներ՝  
առկայն խիզնս 'ի ծանուկ կը բազոքեր, և յետոյ ա-  
ւելի լուսաւորուեցաւ, և իմաստասիրութեան վար-  
դապետութեան մեջ աստիճանաբար, յառաջ Երթա-  
լով աեսի որ այս բովանդակութիւնն կամ եղբակա-  
ցութիւնն՝ բաւական պատճառաց վրայ հաստա-  
տուած չեր. թնդպէս որ պիտի ջանամ ես ինձ ցուցա-  
նել վազուան օրագրութեանն մեջ: Այս որ այսչափս  
հերիք է, պլուխս հոգնեցաւ:

### Պլատոնականութիւն:

21 Դեկտեմբեր:

Երրորդութեան յԱստուած վարդապետութեան  
զեմ՝ բանաւորականութեան հանած բովանդակու-  
թիւններն կամ եղբակացութիւններն ընդունելի չեն  
տասցի, որովհետեւ բանն հնաւորն անհունի վերաց  
յարմարցնելով ուրիշ բան ոչ տանե՛ բայց եթէ մը-  
տաց մեջ հնաւորի զազափար մի տալ յանահմանն  
ձգտեալ, որ պարզապէս ընութենականութիւնն կամ  
մարդակերպութիւնն է՝ անկարոզ առլոյ զնմարիս  
ծանօթութիւն անհնոյ: — Իսկ ոգեսրական պլատո-  
նոկանութեան մեջ այսպէս չէ՝ որ անհնոյ տաքն բա-  
նախօսութիւն ոչ գործածէ՝ այլ բնազանցութիւնն և  
էակարգանութիւնն, և ուզզուի տո նոյն ներն էակն  
կը դիմէ նորա զօրութեամբն հոգւոց մեջ այնոր ծը-  
նած զազափարն ըմբռնելու համար: Աս այս զազա-

միարս տմբովք ձեւացնելու համար վերացութիւն և հան-  
դացութիւն ու բարեցնել յորոց ուրիշ բան յառաջ ու  
գան' բայց եթէ մասորական համեմեր՝ որ առար-  
կայտեան դոյսութիւն չունին:

Պլատոնականութիւնն որ աշխարհու լուսաւորոց  
իմաստափրաւթեանց մեջ ամենեւն զերազանցն և մը-  
տաւորական ներհայեցութեամբ անցանեւ անզր քան  
զատկանու աշխարհի զգացութեանց և բանի և ուզ-  
պակի և վերաբարութեամբ կը վերանոյ ՚ի զազա-  
ժարեն ինքն իսկ կակին. յակին եակաց կամ Այս  
որ էն: Այսու բարձրագոյն ներհայեցութեամբ կեն-  
զանի վերաբերութեամբ կը հազարդի ընդ կակին  
կենցանեաց, և ոչ թէ միայն մարդկային համացը-  
զութեան ծանօթութիւններովն սարազներովն և ըս-  
տարողութիւններովն: Ըստ Պլատոնի՝ հոգին ոգե-  
կան ինն աշք և որ իւրաքանչիւր ինչ տեսանե իրին  
սեպհական զգացութեամբ, զբանական իրու թեական  
տեսութեամբ, և զբարոյականն բարոյական զգացու-  
թեամբ կամ զիտակցութեամբ, զատուանեացինն  
աստուածային զգացութեամբ, որ զմարդ թեականա-  
պէս կրօնական եակ մի յարզարե: Այս ամեն աստի-  
նանենք բռն համեմատ՝ փոքր ՚ի շատէ ըստաւոր՝ և  
ստոյգ ըմբռնազութիւն ունի՝ որ իւր ըմբռնածին ա-  
ռարկային զգացութիւնն աներկեցիս կերպով կը հաս-  
տատէ՝ թէ և իւր փոքրաւութեան միացութենեն  
զատ ուրիշ սարացոյց և կարոց ցուցանել Ես որպէս  
զգայի իրաց համար՝ եթէ զգացութեանց ստուգու-  
թեան վերաց սարակուաթիւն՝ որ և իցէ պատճառա-  
րանութիւն անբռնական և իրաց սամրկայի անու-  
թիւնն հաստատեցաւ, այսպէս ուլ յաստուածային  
և ՚ի թեազանցական ամել զերական կակին զազաժարեն  
կամ ծանօթութիւնն հաստատեցաւ համար թերուան  
պատճառարանութիւններն՝ նորաց սամրկայի ան-  
տարութիւնն չեն կարոց առջ առանց աստուա-

նոյին զբայռութեան և բնայրեցութեանն' որ և արմատ  
մարդկային հաւատաց գերմարդկային հաւատացէաց  
համար :

Ուրեմն պլատոնականութեան մատուրական և վեր  
ամբողջ ներկայեցութեանը՝ որ 'ի մարդուն եզակ  
աստուածային զբայռութեան գործն կամ սպասանն  
է, հոգին անմիջապէս անհնացն կը հայտարի, և ոչ  
թէ միայն նորու սառու երին և երկրառու ուրուակա-  
նին ինչպէս նեմական ազանգն կը վարդապէտէ :  
Աւ անհունն զար հոգին տեսանէ և թափանցէ՝ ոչ  
եթէ անսահմանն է, այլ ախշպերական խակն ինքնին  
բացարձակ՝ ունող զիտութիւն գոյութեան որոյ ինքն  
յաւիտնական ազրիւրն է, և այս խակն կենզանի՝  
որ քան զգոյութիւն գոյուառ է՝ որովհետեւ ինքնին  
է կենաց սկիբոյն ունի անհնաւորութիւն անհուն, այս  
նկատ կամաց անհնազօր, զիտութիւն անսահման, կարու-  
զութիւն անչափ, միավ բանին զամենայն կարողու-  
թիւնն է անկան սառուածային բնութեան : Աւ այս  
անհունն ունի անմին և աշխարհնիւն էն հազարդ է՝ ինքնա-  
խախնամութեամբն և սիրով, ուստի և մարդիկ կա-  
րեն իրենց պիտոյից և թշուառութեանց ժամանակ  
զիմել առ նա՝ ոգնութիւնն և բարիր ընդունելու հա-  
մար : Սի է 'ի նման հոգի' մարդուս հոգւոյն պատաս-  
խանոց, և որպէս որենադիրն կամ որևէ՝ որչափ աշ-  
խարից և յուսալի՝ և որ մարդ այն օրինաց անխա-  
սագելի՝ հարկելն ազատի՝ զերագոյն խակն զթու-  
թեան և բարութեան զիմելով, և այսոր համար կրօ-  
նական պաշտամնակը և նոյս ոգին տեսպուած ազգի՝  
քը՝ շատ բանուառ է և զօրաւոր և յօյս տառզ :

Ահաւասիկ ոյսոր համար է որ պլատոնականու-  
թիւնն ամենաց ցածէ զերծն և ամանգակէ, նոյն մո-  
խանակ տապակելոյ վայն և աւերելոյ՝ որպէս առնէ

բանաւորականութիւնն, որ զԱստուած վերացեալ  
ինչ համարելով աղօմքն և պաշտօն անտեղի կամ  
գոնե անօգուտ կը համարի: Դարձեալ Երրորդու-  
թեան վարդապետութեան նկատմամբ՝ պլատոնակա-  
նութիւնն այնոր գեմ տուարկութիւններ ոչ հանե  
աշխարհին և մասց որենքն նորա գեմ զինելով որոց  
հակառակ կ'երեկ վարդապետութիւնս, որովհետեւ  
ինքն իսկ այս օրենքես չկաշկանգուելով մարգուս  
կատարելութիւն համարի զայն բազելն վերնադոյն  
աշխարհին հետ հազորդակցելու և աստուածու-  
թեան մերձենալու համար: Կ'ուսուցանէ որ Աստու-  
ծոյ և երկնային իրաց վրայ մարգս բան մի չէ կարող  
զիտել՝ բայց ինչ որ Աստուած ինքնին ուսոյց մարգոյ  
անձամբ կամ ՚ի ձեռն այնոցիկ զորս զրկեց յան-  
նայն տեղին և յանձնայն ժամանակի: այսոր հա-  
մար է որ Պլատոն այս նիւթոց մեջ ՚ի միայնութիւն  
կուէ զաւանդութիւն նախնեաց և զմարդարեական  
յայտնութիւնն աստուածարելոց անձանց կամ ոգ-  
աց՝ որ են պաշտօնեացք ընդ մեջ երկնից և երկրի:  
Եւ այս թնդրոյս մեջ շտա բաներ ալ ուսոյց՝ զորս  
այսոր իւր աշակերտներն ոչ ընդունեն: թէ և նորս  
զրած բարցյական և աստուածային զբայցութիւն-  
ներն կը նախալին, բայց զերբնական իրաց և երկնա-  
յին յայտնութեանց ոչ հաւատան:

Արդեօք իրաւունք ունիմք թէ չէ՝ արգեօք Պլա-  
տոն քան զմեզ ակարամիտ ոք եր, թէ մեք քան զինքն  
կարութամբ: և աւելի Տշմարիան այն չէ որ մեր այս  
հակառական գիրքի մեջ գանութիւնիս ուրիշ բանէ յա-  
ռաջ շդար՝ բայց եթէ մեր ծածուկ ընդ զիմութենէն  
զոր ունիմք քրիստոնեական յայտնութեան գետ՝  
նորա աղջեցութենէն և իշխանութենէն աղատելու  
համար: Առ ժամանակ այսոր վրայ բան մի չէ մ կարող  
ասել, և մեր ինդրեն ալ դուրս է, բայց զայս ինչ  
կարեմ հաստատել՝ որ Պլատոնի Տշմարիտ աշակերտ

մի Երրորդութեան վարդապետութեան համար չէ կարող ասել թէ անհատութիւն կամ անոնցութիւն է և անընդունելի՝ թէ և զայն բնդն չընդունի. վասն զի նոյն բնդն Պլատոնի համար կը զրուցուի թէ այս խորհրդոյս վրայ նախազգացութիւն մի ռենեցած էր և կերպիւ իւիք մարդարեացել էր թէ և շատ մթին խօսքերով զորս ևս ալ մինչև ցայտմ անհշան խօսքեր համարելի:

## Միութիւն անհուն.

25 Դեկտեմբեր:

Որչափ ալ խմառաւաներ եմ սակայն չհասկած կամ մեկնել չկարացած բանս ուրանալ կամ մերժելն ինձ իրաւունք ոչ համարիմ. և ոչ կարծեմ թէ իմ միտքս նշմարտութեան չափն է, և այնչափ մասպարծութիւն չունիմ որ ինչզնիքս իրականութեան անբողոքելի գտառառն սեպեմ. որովհեան թէ զիտութեանց և թէ գործեական կենաց մէջ շատ սկըզբունք և գործեր կան՝ որ ինձ համար անբացատրելի են, թէ և առն առն առջեռ կ'երիեն և սախզեազ եմ զայնս գործածելու իմ միտքս բանեցուցած ժամանակ. Այսոր համար է որ Երրորդութեան վարդապետութեան անհատանելի լինելն՝ ինձ բաւական պատճառ ոչ երեխ՝ զայն մերժելու համար, մոնեաւ անդեմէ Պլատոն ալ ինչպէս որ կարծուի՝ գաղափար մի ռւներ այնոր վրայ թէ և շփոթ. Մանուանդ որ զայն մերժելով ալ շատ բան մի ոչ վաստիմք. վասն զի նոյն կերպով և նոյն պատճառաւ Արտուծոյ միութիւնն և նորա գլխաւոր ստորոգելիքն ալ կարեմք հերքել. և այն առն Երեք աստուածներ ունելու վախեն՝ թնդիս որ առն, առնեին աստուած չեմք

ունենար, որ իմ իմաստափրութեանս ոչ երբեք կը  
յարմարի:

Եւ յիրաւի թէպէտ և բանաւորականութիւնն՝  
անաստուած լինել չուզելուն համար՝ կը լանց Առ-  
տուծոյ գոյութիւնն և միւսթիւնն ցուցանել ամե-  
նայն անսակ պատճառաբանութեամբ՝ որոց զօրու-  
թիւնն ոչ ուրանամ, սակայն ինչ գիտէ և զինչ ու-  
սուցանէ մեզ անհուն Խակին վրայ ինքն յինքեան նկա-  
տեալ և այլ եակաց հետ ունեցած յարաբերու-  
թեան վրայոք: Անմաղրելով ևս թէ պարզ վերա-  
ցեալ գաղափար մի շհամարեացի զայն՝ իրեն բուր-  
զի ծայրն յարմարագոյն կերպով աւարտելու հա-  
մար գրուած: որով բանի մի բացասրութիւն չը-  
արտիր, և միայն զենթակայցին ինչ պայման բացա-  
տրելուկու դայ կամ մարդկային հանկացողութեան  
սարուգութիւն մի մեկնարանելու կը ծառայէ: և  
համարելով ևս թէ բանաւորականութիւնն առար-  
կայկան ինչ իրականութիւն ևս շնորհէ աստուա-  
ծոյին գաղափարին և եռթիւն ինչ ևս գոյացական  
և անձնաւորական, ոյտու ամենային շկարե ցուցա-  
նել թէ ինչ է այս Խակս եակաց և այս անհուն գո-  
յացութիւնս, որ անմա տեղ է: և 'ի նմա շարժին  
այլ ամենայն գոյացութիւնը եթէ ոգեզենք և եթէ  
նիւթեզենք, անդադար տիեզերական կենցը կենցա-  
նացեալք, և ոչ բնաւ: 'ի նմա ընկզմեալք: և ուստի  
ամենայն եակք մշանթեարար ընդունին զիւրեանց  
մնունդ՝ առանց իրենց բնութիւնն նորս մեջ նցյա-  
լու: թէ և մը առ այն գիտեն, որ այն իսկ պիտի լի-  
ներ իրենց կատարելութիւնն: Ինչ է արգելոք անձ-  
նաւորութիւն մի անհուն և տիեզերական՝ որ 'ի մի-  
ջոցէ և 'ի ժամանակէ ոչ պարփակի և զամենայն ինչ  
լուս: և ինքն յայլմէ ոչ լուսնի: ով կարէ 'ի միա առ-  
նուլ զանբաւութիւնս զայս և զիւրեանցորու-  
թիւն:

Դարձեալ եթէ խորհիմք թէ այս ամեզերական  
զցացութիւնն իւնգանի խոհուն և սիրող անձնա.  
արութիւն ինչ է, և մեզ մեզ հարցանեմք թէ ինչ է  
արդեւ նորա գործն իւր ամենու թերութեան և յա-  
սիսենականութեան մէջ մատասնուց յառաջ քայլ  
զատեզն ագործութիւն հնաւոր էակաց՝ որ կերպի-  
բնիք առարկայ եղեն իւր սիրոց և մասց և գործու-  
նեաթեանն այս ամեն հարցուածեերաւ մարդկային  
մարդ պատասխան մի չեն կարող տալ և առիթ մի  
ցուցանել գործելոյ և պատճառ ինչ շարժման այս  
ամեզերական միայնութեան մէջ և այս աստուածու-  
թեան անապատին մէջ, կամ թէ կ'ուզես համարից  
այս միայնակ դոցութեան ըրութեանն մէջ՝ յորում չը-  
կայ ինչ մի փափաքելի և խնդրելի, որովհետեւ այնոր  
մէջ բան մի ոչ պակասի և բան մի չեարէ յաւելուալ  
լինել:

Այս հարցմանց պատասխան տալ ուզելով բա-  
նաւորականք՝ 'ի յախունից այսպէս եզած է տան',  
և ունիպետչ խնկ են պատպէս տակըս. և որովհետեւ  
ակիզըն եզած չէ՝ վայսնան ալ պիտի չընին, այնպէս  
որ մարդուս միայն՝ եթէ ամեզերաց օրինաց հարկա-  
ւորութիւնն և հանրականութիւնն քարոզէ՝ տեսն-  
զոսքելի հակառականարա օրինաց մէջ կը բանուի:  
Առանց պատճառի արգասիք ոչ ընկի առէ միարեն, և ա-  
հաւասիկ այս գիպուածիս մէջ կ'ընդունի գործ մի՝ որ  
պատճառ չունի. և թէ պէտ պատասխան տայ թէ  
գործս այս միակ յիւրում սեսի ոչ է արգասիք՝ որով-  
հետեւ ոչ յումքը յառաջ եկեալ է, սակայն յայսնի  
և որ Աչ արգասիք տանց պատճառի տաման կամ  
ակիզըն պատճառաւորութեան՝ որ մասց և խորհըր-  
գոյ հիմնական օրինաց մին է, այս պարագայիս մէջ  
բացառութիւն մի կ'ունենայ՝ կամ զոնէ տաժամա-  
նակեաց գաղարում մի, զոր հրաշից վրայ զրուցուած  
ժամանակ ոչ ընդունի. և եթէ ընդհակառակին պատ-

Առաւորութիւն տառցեալ օրինաց զօրութիւնն  
պահպանելու համար՝ զնոյն անհանուն կակին վրաց  
ու գնել՝ որպէս հնաւոր հակաց՝ հարկաւ համա-  
տուածութեան մեջ անկանի՛ որ կը պարծի իւր առ-  
առածագործութեան վրաց՝ թէ և մեզ ոչ առէ թէ  
ուստի նորա նիւթէ առած է։ Եւ շինարանութեամբ  
կողէ ազատիլ առելով թէ կարելի չէ յանհանու  
պատճառէ պատճառ վեր ելնել այլ վերջապէս հարկ  
է՝ ՚ի զոյր ինչ զեյց առնուշ՝ որում կարեմք պատաս-  
խանել թէ իմաստասիրաբարար և թէ բանաւորաբար  
այս բացառութեանս հարկաւորութիւնն մեր ոչ առ-  
անձնաք։ Որովհետեւ պատճառաւորութիւնն առա-  
ցեալ առելու է։

Հապա ինչ առելիք առնեն նորա որ զափեզերս յո-  
ցնել առեզնեալ կը համարին՝ որ բոլորովին քրիստո-  
նութեան գաղափարը է։ Բնապէս ովնչիւ բան մի կարե-  
լինել։ Յոնց այն առէ առանցն բանաւորական։ և ան-  
հայն նախկին իմաստասիրութիւնն Պլատոնին ևս ՚ի  
պատճառ առելու, այս առանցն վյաց հաստատուելով՝  
կընդունեին թէ աշխարհս իրէ մի եղեալ է, կամ որ-  
պէս արտագրութիւն կամ ծառացունն ինչ անհոյ։  
ուստի յառաջ զոյր համաստուածութիւնն զափե-  
զերս յառելեալ ինչ մասն համարելով Աստուծոյ։  
կամ որպէս կերպաւորութիւն կամ յարգարու-  
հանիսագոյակ նիւթոյ՝ որով նիւթն մշանվենաւորա-  
բարկից լինի ընդ Աստուծոյ գերտագոյն հարաւրապե-  
տի։ աստի ու յառաջ զոյր մանիքեցւոց մօլորու-  
թիւնն կամ երկաւորութիւնն։ Այդ այս երկու  
կարծեարս ալ արարից և արարութիւն ոչ նոյ։  
Հապա ըստ առաջնորդն՝ ծառալունն ինչ անհոյ, և ըստ  
երկրորդին գործածութիւն կամ յարգարունն նա-  
խագոյակ նիւթոյ։ Այսպէս բան չկարէ ընդունել  
զափեզնագործութիւն յառաջ զի հակառակ է օրի-  
նաց Յոնց ունեւ որովհետեւ բան մի առեզնելու հա-

մոր կամ հնաւորն յանհունեն հանելու է՝ որով լինի համաստածեան, կամ յաւիտենական նիւթն զարծածելու է՝ որով լինի մանիրէական :

Այս գժուարութենես ուրիշ մալ կը ծագի եղյնափ ծանր, որ է այս Խօն Առառածեն մակ որ իւրով անբաւութեամբն զամենացն ինչ ըսոյք և իւր միայնութեան մեջ անհուն երանութիւն կը վայելէր այն երանութիւնն որ Խակին լրումն և կատարելութիւնն է՝ թէ և չեմք կարող հասկնալ թէ այն բացարձակ միայնութեան մեջ ինչ երանկութիւն կարեր լինել, ինչու առեմ իր անհունութենեն և կատարեալ հանգստենեն ելաւ, և հնաւոր էակներ առեզեց, որ այնափ առկա արժանաւորութիւն անին իւր սիրոցն իւնամոցն : Որովհետեւ ասի թէ անգեն ի սկզբան իրեն գեմ ապաստամբեցան, և թէպէտ մարդ ինձ պէս սկզբանական մեջքն ալ լընդումի զօր չեմ կարացած հասկնալ, առկայն չէ կարող ուրանալ որ այս էակներս իրենց անկարգութիւններովն և ոճիրներով ըիւր կերպերով անդադար զինքն կը նախատեն : Դարձեալ Խօն որ անփոփոխելի է, և իյաւիտենից ունեցած է զիսրհուրդ և զկամա առեզեցէլոյ հնաւոր էակն ինչու արտոր զնոսա առելիք այն առեն և ոչ ուրիշ ժամանակ, կամ ուրիշ կերպ առելով ինչու իւր յաւիտենականութեան առջին զժամանակն կարգեց : Խահուն էակ մի, ևս առանել խոհականութիւնն զերագոյն անզատանառ զործ մի ոչ առեն, և ոչ առանց բառական պատճառի : Համար իմաստառելք գուք որ ձեր մասց մրոյ կը պարծիք և առեք թէ ամենայն ինչ մեկնելու էք, և ինչ որ միորն կը մեկնէ զայն միայն հմարիս համարելու է : և թէ ամենակարող Առառածոց կը հաւատաք որոյ անհուն իմաստութիւնն զայնարհս առեզեց և իւրով նախախնամութեամբ զայն կը կառավարէ, կ'երդուընցընեմ զայք ծանուցեք ինձ թէ ընդէր և ինըդեւ եղած է այս խորհրդաւ-

ևոր անցքու յԱստուած՝ յինքենէ առ արտապս : որով  
Աստուած Եշելով իւր ինքնազոյանթենէն և անփո-  
փոխելիութենէն : իւր անհաւան եամբ առջէ՝ որում բան  
մի ոչ պակասի ոչ պառք և ոչ երանաւթիւն : գրել է  
առհմանաւոր և առեկատար ոչ-եւուր, որ զերեն և  
զերեիր այստի խռովին :

Վերթապէս բնապէս պիտի առարտի այս ամենն բան,  
ուր պիտի յանդի ստեղծագործութիւնն և ինչ պի-  
տի ընի այնոր վախճանն : Տարակոյս շկայ թէ ՚ի բա-  
րին, որովհետեւ Կահանինամութիւն մի կոյ և զերա-  
գոյն բնապատճիւնն շկարել պիտուիլ ՚ի կատարութիւն  
առելոյ իւր գիտանենքն և հասանելոյ ՚ի վախճանն իւր :  
Բայց ոչ էն իւր վերթին վախճաներն, և ինչ պիտի  
ընի արարչագործութեան մեծ արարուածոյն հան,  
գոյցին լուծութիւն պաշտի կրած և զեռ վերթի շնա-  
սոծ կրելի ժամանաւթիւններն են : Վասն զի  
շարն այս աշխարհին մեջ կոյ և կարծես թէ կը տի-  
րէ ևս : Մարդկանց կեանքն մշանթենաւոր պատե-  
րազմ մի և ընդ երկնեց՝ ընդ միանանաւ նաև իւրաքանչ-  
իւր ոք ընդ անձին : Խնչ պիտի ընի վերթական վախ-  
ճանն այս մեծ պատերազմոյ որ անընդհատ կը նորո-  
գուի գարուց ՚ի գարս : Եւ Եթէ անվախճանն որ և  
Աստուած վերթապէս յազդող պիտի ելքէ՝ որում  
տարակոյս շկայ, ինչ պիտի ընին յազդեալքն ՚ի ափե-  
զերական նորոգութեան իրաց՝ երբ բարին յազդէ  
և Աստուած թագաւորէ : Եթէ շարն իւր սկզբան  
մեջ պիտի ապրի մասյ այսինքն յազդահարելոց կամաց  
մեջ որ թէ և յազդեալ բայց միւս ապստամք պի-  
տի մասն թէ և ընկնեալ և անզոր ՚ի զարութենէ երկ-  
եից բարձանց՝ որ զնոսին պիտի նուանէ՝ բայց պի-  
տի շկարե հեազանեցեցէ, որպատ ալ այս ամբարիշտ  
հոգիններն թազուած եալ ընին խռուարի և ցաւոց  
վիճն մեջ որ գտնիք կը կոչուի, ասկայն այսու ամե-  
նայնիւ յաւեժական լուսոյն քով ստուեր մի պիտի

շհամարութիւն և հիւանդութիւն ամեղքը բական կենաց  
մեջ, և արտաստանածային գործոց վրայ, թշուա-  
ռութիւն յերթանկութեան, և պատ բանիւ չար մի  
՚ի բարութիւն: Արգելու չարն ալ իւր յաւիտենականու-  
թեամբ պիտի մշտնդիւնաւորէ:

Այս որ աւելի հեռի ոչ կամիմ երթալ: Խնձ կ'երեխ  
թէ բաւական և այստափացուցանելու համար՝ որ ե-  
թէ վարդապետութիւն մի բացատրելու գժուարու-  
թիւնն կամ անհնարութիւնն բաւական պատճառ  
լինելու զայն ուրանակու՞նոյն պատճառն կարէ նոյն-  
շաբի յարմարիլ աստուածութեան պութեան մյայ՝  
որդափ Երրորդութեան, որովհետեւ աստուածու-  
թեան երեխ անձնաւորութեանէն աւելի զիւրըմբուն-  
մի չե մի պիտի և ամեղքը բական անձի վարդապետու-  
թիւնն ալ, և առկայն որդափ այս վերընու ալ գժուա-  
րին և միթին է՛ առկայն պիւորական բանաւորականք  
ընդունին զայն, այսինքն զի՞ Աստուած անձնաւոր: թէ  
և ոչ գիտեն թէ ինչ բանի գործածեն զի՞ս՝ ոչ ինչն  
յինքեան իւր առախտենականութեան մեջ, և ոչ իւր  
յարաքերութեանց մեջ ընդ այլոց է առկաց ՚ի ժամա-  
նակի: Եւ հանրական օրինաց առջի՞ որոց անփոփո-  
խութիւնն բարձրածայն կը հաշուկին՝ Աստվածու-  
թեանն ալ զիրենիք կը շփոթէ, և աստուածային  
զթութիւնն ու սերն ալ չե՞ն կարող ըմբռնել: բայց  
վերըապէս ինչ որ է կ'ընդունին զինէ առջ մի լեցնե-  
ցու համար՝ որ մի զույգ ուրիշ բան նորա առջն բանէ: Այս բանիս համար ոչ հասկանամ թէ ինչու այնպափ  
գժուարութիւն կը քաշէն Երրորդութեան նկատ-  
մանք. ինձ այնպէս կ'երեխ որ Երրորդութեան ՚ի  
պութեան բացատրութիւնն կամ զանէ մոտք յզա-  
ցութե կամ ընթանութե՝ այլ աւելի ընդունելի է՝ քան  
թէ պութիւնն բացարձակ անբայ անհան և անփո-  
փոխ յիւրում պիտինութեան յառաջ քանի զանեց-  
ծագործ ութիւն, առանց զանազանութեան առանց

յարաքերութեան և առանց իսկ պատճեան մի ունե-  
նալոյ 'ի գործել, թէ և Աստուծոյ համար առեն թէ  
պարզ ո՞չ մի և միւս դորժան:

### Տեսութիւն 'ի վերայ Երրորդութեան:

27 Պահապահութեար:

Միաւորականաց և Երրորդութիւն ընդունողաց  
կարծիքն ինձ համար բոլորպին անառարեր խնդիր մի  
է, մանաւանդ թէ իմ նախընթաց իմաստափական  
առարիջու մէջ աւելի առաջնոց կարծիքն ինձ ըն-  
դունելի երեցած էր: Բայց հիմա շատ օրեր պատր  
վույ մասեւելն եաւ՝ ինձ այնպէս կը թռի թէ որը-  
մարտութիւնն այս երկու վարդապետութեանց միա-  
ւորութեան մէջ է, զոր կարծեա թէ կաթողիկէն Եկե-  
ղեցին կը դաւանի Սրբոյն Ալմանասի հանգանակին  
այս խօսքերովն: Զերոքանին 'ի համեմատ պաշտէ: Մի  
թէ չենք կարող առել թէ վարդապետութիւն Եր-  
րորդութեան աստուածային մրութեան վարդապե-  
տութեանն վարդապետն կամ բացայսաւութիւնն է:  
և մի Աստուած զոր միայն հրեայք պաշտէին յառաջ-  
բան զԱւետարանն քրիստոնէական յայտնութեան  
ձեռաց Երրորդութեամբ յայտնուեցաւ: այնովեւ որ  
Յիսուսի Քրիստոսի բանին՝ զարդացում մի եզր՝ ոյ-  
լԱստուած որ անփառնախը է, և որ չկարէ լինել ա-  
ռել չեկել 'ի մամանակի և 'ի միտս մարդկացին: ոյլ  
'ի գիտութեանն Աստուածոյ յաշխարհիս յայտնիք, և  
գրական Ֆանութութեամբ աստուածայնոյ Խակին որ  
առաւու մարդկան 'ի մեռն Աւետարանի:

Տարակցու շիայ՝ որ իմ ասացածս Աստուածոյ գոյս-  
ցական զազափարին համար և՝ որպէս ընդունելին  
հրեայք և նշանիքու միաստուածեամբ, և ոչ թէ բա-  
նաւորականաց ընդունեած աստուածայնոյ վերացեալ ծա-

Նով՛ութեանն վրայ է խօսցա, որ մասց անպատճ  
գիւռա մի է, և կենդանի հետեանք մի չունի, և այսոր  
համար ալ բանաւորականութիւնն կը ըստ մի տահմա-  
նած չէ, և ոչ իսկ ողջամիտ բարոյականի հրահանգ մի  
կարացել է առաջ:

Խորայելի Աստուածն ինքզինքն կը կոչէ Այն որ էն.  
Աստուած կենդանի, Աստուած հզօր, Աստուած նա,  
խանձու, Աստուած ոչ մեռելոց ոյլ կենդանեաց:  
Եւ յիրաւի իր ընարկալ ժողովրդեան հետ առնե-  
ցած յարաբերութիւններն միշտ կենդանի են. իր  
հրեշտակաց և մարդարեից ձեռացն նոցա հետ կը խօ-  
սի. և ծանուցանել թէ ինքն է նոցա թագաւորն ակրե-  
և իշխանն, և այսու անուտմի առաջ նոցա պրեն և  
հրամանու 'ի ձեռն Ապօպիսի: Վանի որ իր խօսքին կը  
հնազանդին' կը ծաղկին կը բարգաւանն, բայց ան-  
մի հեռացածնուն պէս՝ անեն անսակ Ծշուառու-  
թիւն վրանին կը համենի. այնպէս որ բալորովին անձ-  
նական կառավարութիւնն մի է կամ թէ առեմք առ-  
տուածով տական. բայց որովհետեւ միայն հրեից հա-  
մար է այս կառավարութիւնն նոցա հետ ունեցած յա-  
րաբերութիւններով զինքն Աստուած Հանացել կու-  
տայ. որչափ որ հարկաւոր եր՝ իրենց մասնական ա-  
ռաքելութեանն համար որ եր Աստուածոյ Տշմարիս  
զազափարին աշխարհիս վրայ պահել: Տերն օրենսդիրն  
և զատաւորն՝ զեւ իրեն Հայր յոյշանուած չեր ի-  
րենց. բայց այս յոյշանուածիւնն երբոր համեներ՝ առ-  
տուածայնաց իրաց գիտութիւնն ալ ամենամեծ յա-  
ռաջազիւթիւնն մի պիտի առենք, և աշխարհա նոր  
յոյշանուածիւնն մի պիտի ունենար: Արդ նախ և ա-  
ռաջ Յիսուս Քրիստոս եղի՝ որ Որդի Աստուածոյ  
զինքն ծանուցանելով և մի ընդ Հօր իւրում, զորեւ-  
լով ընդ նմա և վասն նորա, ասաց. « Հայր իմ հայրը  
մեր է, և որպէս ես մի եմ ընդ նմա, զուք ևս պար-  
աիք մի ըննել ընդ մեզ»: Ուզ հոգւուին Աստուածոյ

վարին՝ նորա որդիկին են, և թրաւունք ունին զա-  
շելու յերկինս՝ ի վեր Աքբար, Հայ. Հայը մը աւ տէրին-  
ես: Այսինքն՝ Ձե մայն Սրբորդութեան վարդապէ,  
առաջեամբն և որ առաւածային հայրութիւնն  
յացանի եղեւ, յայտնութեամբ խորհրդոց առաւա-  
ծային ձննդագործութեանն կոտարելոց՝ ի յաւ-  
տենից՝ զուգընթացութեամբ երից անձանց յիշ-  
առած, որ են Հայր, Որդի և Հոգի սուրբ: — Յոր-  
մէ յաւալ գոյ՝ զի՝ ի նման որ՝ ի յաւիտենից և և  
անձինչն զի թնդն իսկ և սկիզբն էութեան, գոյ ար-  
դարե ձննդագործութիւն՝ որ և գերազոյն գործ  
կենդանութեան, և ՚ի նմանեւ և սկիզբն և պահ-  
պանութիւն և յաւերժութիւն կենաց: — Ապա  
ուրեմն գոյ յիստուած գերազաւան իմն, որովհետեւ  
յաւիտենական ձննդեամբն Որդին միւս յանդիման  
կոյ Հոգ, և սորա անցականի միացեալք են սիրով  
կամ Ոգւտի կենաց բղինելոյ յանդրագարձ գործոց  
նացին և ՚ի հակագործութենին:

Վասն որոյ անհնա՞ և այլ և կոչել զԱստուած  
մենաւոր մեծ. քանզի և ՚ի նման մշանվենաւոր և միա-  
մական ընկերութիւն Հօր և Որդույ և Հոգույ: Եւ  
որովէս ամենոյն ուրեմք յաշխարհի միւս երեք և-  
զերք պիտին առ՝ ՚ի կազմել թնական թնը կամ բար-  
յական գոյութիւն. այսպէս ևս երեք եզերք են՝ ՚ի  
տիեզերական գոյութիւնն, որ և ամբագոյն է՝ ՚ի հաս-  
տառութիւնն, քանզի՝ ՚ի նման մայն երեք եզերք մի-  
են գոյացութեամբ կամ թէ առեւ համագոյական  
որ ոչ երեք գտանի՝ ՚ի հնաւոր արարան: Եւ աս-  
տի մարթիմք համարել եթէ երբորդութիւն՝ ՚ի մի-  
ութեան՝ միայն կրօնական վարդապէտութիւն չէ, այլ և նախակարգ և տիեզերական որենիք կենաց, և  
կրօնից հիմն լինելուն պատճառն ալ այն է՝ որ գոյու-  
թեան ալ սկիզբն է:

Աստի գարսւալ՝ ՚ի միւս առնուամբ մէկ թնը գործեր

Առառած յիւրամբ անքառութեան՝ յառաջ քան  
զանցագործութիւն՝ կեսը յանուպահ և 'ի յա-  
ւեժական երանութեան իւրամբ վերանորոգելոց  
միշտ յաւիտնական ձննոցագործութեամբ։ այս մը-  
տաշարժ ծագմամբ իւրավ յանձին Որդւոյ՝ որ և  
լոյս վառաց և նկարագիր էռաթեան նորա և պատ-  
կեր անթերի իւրայ կատարելութեամբ։ և 'ի յաւե-  
ժական անգրագործութեան աստի Նոր և Որդւոյ՝  
ցայտեր ամեղղերական զիտութիւն լամփն, կամ ծա-  
նօթութիւնն զոր աստուածութիւնն ունի զանձնե-  
նորդործութեամբ նաևին իւրայ, զիտութիւն ան-  
հաւն յանհաւն միաս, և յանուպահելի լոյս աստուա-  
ծային անսութեանն յաւելոյր կցորդութեամբ Որ-  
ւոյն՝ անձառելի վիափեկութիւն անուանման սիրոյ։  
Որդ եթէ այսպէս և որպէս ևս համարիմ այժմ՝  
ազա առաւելաւն իսկ զան վայելոց մասց և սրափ ընդ  
բավանդակ իսկ յաւիտնականութիւն։ ազա 'ի զուր  
և հարցանել թէ զինչ գործ էր Աստուծոյ մայնոց  
յառաջ քան զարարչագործութիւն ամեղղբաց։

Յետութիւն 'ի վերայ Երրորդութեան  
( շարայարութիւն )։

50 Դեկտեմբեր։

Այս օրերս միշտ երրորդութեան 'ի պատճեան  
նիւթոյն վրայ կը մասնեմ, որ աստի ամիս մի յառաջ  
մոցէ, և անգամ ոչ անցաներ։ Այս նիւթու գրեթէ իմ  
մասարական կենաց կեդրոնն՝ և խորհրդանու-  
թեանս միակ առարկայն եղած է, այնպէս որ ամեն  
առջ նոյն կարենեմ թէ կը առանեմ։ թէ յանձին ի-  
մասմէն թէ յինէն զուրու։ Այս բանիս մէջ գոզցես  
Բազմամու կը նմանեմ։ որ զիսրայէլ անինանելու հա-

մար կոչուելով՝ զԱստուած կը փառաբանէր։ Բայց  
ես չե թէ Աւետարանի Աստուածոյն թշնամի էի, այլ  
միայն անտարեր։ որովհետեւ Թրիստոսի առաքելու-  
թեան և խոսքին վյայ հաւատք շունելով՝ ամեն աւ-  
սակ յայտնութեանց և ամեն գրական կրծնից անիբա-  
րիր էի. և իմաստափրական գիտութեամբս կը հա-  
մարեի թէ Երրորդութեան վարդապետութիւնն որ-  
պէս նաև միւսորդն քահանայից հնարք էին՝ իրենց  
անհասանելիութեամբն ժաղովոցեան մասց մրայ իշ-  
խելու և տիրապետելու համար հնարուած։ Տակի-  
տոսի ասացածին պէս Անձնութիւն չէի համուի։ Կան  
կէս մի համազուած էի որ մասնաւորապէս Երրոր-  
դութեան վարդապետութիւնն բոլորովին ազատ չէր  
՚ի կռապաշտութեան մեզագրանաց՝ բնշպէս որ կը  
բամբառեին հրեայք, մահմետականց և միաւորա-  
կանք։ Այս նախապաշտուածներս հիմն մօքես փարա-  
տած կամ գոնէ ակարացած է, և այս վարդապե-  
տութիւնն զոր բանսատասիրական ամբարտաւանու-  
թեամբս կարծեի թէ սուորին կերպարանք մի և բաց-  
արձակի պարզ գազագրաբին։ կամ անհանի մար-  
գակերպական և գեղագիտական նշանակ մի է, ոյտմ  
պատկառանոր իմն կը հայիմ այնոր վրայ՝ անմելով  
անտի յառաջ եկած պազաւեա հետեւնքն։

Որինակի համար՝ ուս ինչ անցաւ յանկարծ այս  
տառաւոր իմ մուրեա, և այն թիզնայօժար՝ այնպէս որ  
ոչ գիտեմ թէ ուստի ունեցայ այս խորհուրդս, որ  
լուսոյ հասագոյթի պէս յանկարծակի լուսաւորեց  
ծանր բնոգիր մի՛ որ շատուց ՚ի վեր զիս կը տանջնէր։  
Թէ որ Աստուած, առեւ թիզն իրեն, իսկական  
գործունեութիւն մի է յինքեան, ազաւ ուրեմն չիք  
՚ի նմա անցք ՚ի զարութենէ ՚ի զարն, ազաւ ուրեմն  
նորա համար չկայ ոչ մասնաւի ու յաջորդութիւն  
ոչ փափանամն և ոչ զարդացութիւն։ Եւ սակայն իս-  
կական և անզագարելի գործն պէտք է որ առարկայ

մի ունենայ, առարկայ մի ծանուցեալ 'ի մուց, սի-  
րեցեալ 'ի կամաց և ծագեալ 'ի գործունեւթենէ: Արդ տիեզերական ծանօթութեան հարկաւոր ա-  
ռարկայն է ՀՀ արքաւթիւնն բացարձակ՝ որ ինքն իսկ  
Աստուած է: Ապա ուրեմն Աստուած նկատէ զնը-  
մարտութիւն յանձին իւրում, և նորա հաւատարա-  
շայի ծանօթութիւնն ունի, Երեք եղերք որ են են-  
թակայն որ նկատէ, առարկայն նկատէալ, և զօդն  
միոյ ընդ միւսոյն: բայց այս Երեք եղերքս յինքեանս  
մի են, որովհետեւ Աստուած է որ նկատէ զնքին, ա-  
պա և համագոյական այ են՝ որովհետեւ ամենայն ինչ  
գոյացութիւն է յԱստուած, և միանգամայն որին  
են՝ ի միմանց և անցութ: Արդեւք այս իսկ չ' յԱս-  
տուած Երեք անձինք աստցեալն կամ Երբորդու-  
թիւնն 'ի մունք եան:

Դարձեալ ինը իրենս առեի: Աստուած պարզ սէր  
է, և աւըն պարտի ունել զառարկայ ինչ: առարկայն  
սիրոյ և բարին, և անհուն սէրն այ կարէ զայլ ինչ սի-  
րել լինալէ՞՛ բայց զնքին, որովհետեւ ինքն միայն է բա-  
րին գերագոյն: Արդ հարկաւորաբ Երեք եղերք են  
՝ ի սէր նորա ենթակայն սիրոզ առարկայն սիրեցեալ,  
և միութիւն Երկոցունց որ անախ յառաջ գայ: Այս  
Երեք եղերք նոյնականք են՝ ի գոյացութեան, որով-  
հետեւ նոյն եակն են՝ բայց որիւք և անցքութք իւ-  
րեանց գոյացութեամբն, և ոսքա Հցգիւ Երեք գո-  
յացութիւննքն կամ Հնաւայսանի առ ըստ յունաց՝ զորս  
լամբիք կունցին ալին:

Դարձեալ այսպէս ևս կարեմք առել: իսկական  
գործն պարտ է յարդիւնս ածել զի՞ն: արդ յառաջ  
գան զարարւագործութիւն զի՞ն յարդիւնս ածեր  
գործունեւթիւնն աստուածային, և զի՞ն էին ար-  
դիւնք պարզ և անգագարելի գործոյն: Միաւորա-  
կանաց աստուածախոսութիւնն շատ գժուարու-  
թիւն կ' իմանայ այս հարցմանս պատասխանելու: ո-

բավիճեան ոչ համարձակի հաստատել որ անհուն  
գործունեաւթիւնն բան մի ոչ պատագրէր , և թէ  
իւր շարժութեան անհապատկ առանց առարկոյի եր .  
որպէս մերենաց մի որ գատարկութեան մեջ զառնայ ,  
որ անարժան և անվայել է տիեզերական զօրու-  
թեան : Դարձեալ իր բերանե առաջ չերթար առե-  
լու թէ ոչ զիտէր , և իւր ազիտութեան զառնար  
ամօնին ծածկելու համար՝ կը ստիպուի առելու թէ  
յԱստուած պարզ գործունեաւթիւնն առեզրագոր-  
ծելու վրայ հաստատուած է , և այնարհո և այնոր  
առարկոյն . առափ յառաջ զայ արարդութեան կո-  
րուրութիւնն որպէս անանարինելի լրումն աստուա-  
ծային զօրութեան , և կետեազես հարկաւորաբար  
անքաժան և կցորդ իւրաց է ուժեանուն : Ուրեմն առե ,  
և ստիպեալ իսկ է առելու թէ յԱստուած 'ի յաւի-  
տենից արարդագործէ . որովհեան չկարէ ներգործել  
առանց գործելոյ ինչ , և գործունեաւթիւնն յարակից  
է նմա :

Այս ասուցածեն կը հետեւ ուղիւ թէ արարածը  
մշակենաւորակից են արարին և մասն բնութեան  
նորա՝ որ առեզրելուն զնոսին հաստանէ յիւր անթե-  
րի կատարելութիւնն . առա թէ ոչ՝ անհուն գործու-  
նեաւթիւնն լիներ առանց առարկոյի . առանց ար-  
գեանց . ուստի և ումարէտ և անզատնու : Այս ա-  
ռելի նրբին քան զնաւալումն և զարտադրութիւն  
անհույ համաստուածեանց . քայց միշտ գարձեալ  
կարծիք համաստուածեան : Այսոր համար է որ մեր  
որերս անուանի իմաստութէր մի չամաշեց ազագրու-  
թեամբ իսկ համատարակելու թէ Արրորդութիւնն առ-  
տուածային մեանայ՝ յԱստուեայ 'ի մարդոյ և 'ի հա-  
մագոյից . որովհեամագոյը և մարդիկ նոյնանան ընդ առ-  
տուած ութեան , և լինին նմին համագոյակից . որ համ-  
աստուածաւթեան ծայրայեղն և չափազանցագոյնն

է. ոչ արդարն. Այսուզայի առաջեալ կերպութիւն, ոյլը ըստ Հեկեղի որ Առառած առելով կը հասկեայ գուշտուի զարդարացումն՝ որ խորհան գիտակցութիւնն կը ստանայ ամբողջական շարժմամբ իւրոք որով գա զափարին լինի առարկայի ան, և զարձմամբն յինքն՝ որ այս զարձումն ալ զինքն իր Ենթակայութեանն մեջ կը հաստատէ, կամ ըստ հեկեղեան բառախո, ստանան ին ամիս զերսկան գործ յինքեան ՚ի կող շահեան, ելանե յինքեան զոշուն. առ ՚ի զամաց անդրին յինքն՝ առարկայի անին և Ենթակայի անին բացարձակ նոյնութեամբն։<sup>1</sup>

Ահա այսպէս իմանան և բացարձին իմաստառեց ունակը զերբորդութիւնն քրիստոնէական. ոյք Ակեղեցւոյ նուիրական բառերն կը զործանեն՝ բարութիւն տարրեր իմաստ առաջ Նոցին և կամակորելով և ուսմին կ'ուզեն կըսեցնել թէ անհաստեղի խորհրդացոյն հաստ եղել են, և եթէ այս վարդապէտութեանն մեջ Հշմարիտ բան մի կոյ իրենց առացածն է, ուր ընդհակառակն զներհակն այսինքն զներեափ կոստութիւնն ուսուցանեն: Կը խօստավանիմ որ այս կերպու զիս կը զայրացնէ, և որշափ ալ իմաստառեց եմ բիւր անզամ առելի լաւ կը համարիմ աղիսութիւնն խօստավանիլ կամ բալորութիւն հակառակիլ, քան թէ գրիստոնէութեան առա երեցիթն մըսա առնելով և նորա վարդապէտութիւնն ազաւազելով և ծամանելով ժողովրդեան առին գառք վաստը կիլ. և եթէ առնե խօսզարկութիւն առնելին և առ ալ չհաւատամ այս խօսհրդաց զնեն քանութեամբ և անհիշեամբ առ առջ որ զայ պիտի խօստավանիմ, և ոչ երբեք բառից և առաջօց նմանութեամբն ինքզինքս պիտի պարտեմ՝ մասինազով որ անհիմարան շերեխմ այն կրտեից հետ որոյ հաւատա-

1 In sich, aus sich, und für sich պահենք յինքեան, յինքեան և կամ նոյն:

ըստոց ոչ հաւատամ՝ վասնդաց և գմբատեհութեանց մէջ շանկանելու համար :

Այս առուր խորհրդածութեանս պատուզն՝ (որ ինձ կ'երեխ որ թէ Երրորդութեան վարդապետութեան և թէ իմաստափրութեան և ինձ համար ալ կարեսը է) այն է՝ որ աստուածուային միութեան մէջ Երեք անձանց յարաբերութեամբն՝ որ միութեան կան են իրենց անհուն գոյացութեամբն և որիշ իրենց սեպհանկանութեամբը և գործովք, շատ լաւ կը մեկնուի արարշագործութեանն է յառաջ Աստուծոյ պարզ գործութեանն, այսինքն թէ այս բակական գործոյն առարկայն նկատմամբ մասց և կամաց և զօրութեան Անհոյն, արարշագործութեանն չէ . վասն զի եթէ այնպէտ լիներ՝ արարշագործութեանն աստուածային կենաց հարկաւոր պիտի լիներ, և հետեապէս իւր ընութեանն է ական, այլ ինքն Աստուծոյ իւր անձին ենթակոյն-առարկայն լինելով իւր գործունենիութեանն կայանայր բացարձակ նշանարտութեանն խորհելուն վրայ, և զերագոյն բարին սիրելուն վրայ, որով և վայելեր զանազան երանութեան՝ յանդրագործ գործունենիութեան անդ Հօր և Որդւոյ յենթակայական միութեան իւրեանց 'ի մեռն Հոգացյն Սրբը :

Այսոր համար է որ Աթանասի հանգանակին մէջ գրաւած է . « Հայր ոչ յումնիք է արարեալ, ոչ ստեղծեալ և ոչ ծնեալ. Որդի 'ի Հօրէ եեթ է, ոչ արարեալ ոչ ստեղծեալ, այլ ծնեալ. Հոգին Առոր 'ի Հօրէ և յՈրդւոյ՝ ոչ արարեալ, ոչ ստեղծեալ և ոչ ծնեալ, այլ բզինեալ » : Ապա ուրեմն յանիտեական գործունենիութեան յանիտեական արգասիքն է Բանն աստուածային կամ Որդին 'ի յառիտենից ծնեալ 'ի Հօրէ, յորոց յառաջ գոյն Հոգին Սուրբ՝ կամ յօդ և շաղկատ միրոյ նոցա, որ բզին յերեսցունց : Այս արգասիք՝ եթէ այս բառու կարեմք

գործածել՝ ուս՝ 'ի ըցոյէ պըսոյ, և աստուածային դո-  
յութեան սահմանն, և մշտակայ հաստատութիւն  
տառուած ութեան 'ի զօրութեան բւրում և 'ի ըցո-  
յէ 'ի սէր' անոնակելի երանութեամբ յաւիտենական  
ծննդագործութեանն, և լիովին յայտնութեամբ ան-  
հոռու կենացք։ Կամ որպէս նիկէական հանգանակն  
առեւ Աստուած յԱստուեց, ըցոյ 'ի ըռուց, Աս-  
տուած Շնմարիտ յԱստուեց Շնմարտ։ յԱստուած  
յամենայնի և ամենայն տեղին հանաչելով զինքն և  
սիրելով յանքաւութեան և յանհոռութեան իւ-  
րոց կատարելութեանց։

### Տեսութիւն 'ի վերայ Երրորդութեան ( շարայարութիւն )։

4 Յանձնուար։

Երկու որ յառաջ կը գրէի թէ ես որ ամիս մի յա-  
ռաջ ամենաեին Երրորդութեան վրայ խորհած չեմ՝  
այժմ ամեն աեզ նոյնն կը տեսնեմ, և նախ իմ ան-  
ձիս մէջ։ Եւ յիբափ ես այ կենզանի Երրորդու-  
թիւն մի եմ իմ գիտակցութեան մէջ, իմ խորհը-  
գեանս մէջ։ և իմ ծանօթութեանս մեացման մէջ,  
երբ կը գատեմ, կը բանավարեմ և կը խոսիմ, և ա-  
մեն անգամ որ Շնմարիտ բարի և գեղեցիկ բանի մի  
վրայ կը հիմնամ։

Եիբաւի աշխարհիս մէջ մարդս ուրիշ էակներէն  
այսու կ'որոշուի՛ որ նկըն նկընան վրայ գիտակցու-  
թիւն ունի և նկը որ իր մէջն կ'անցնի։ իւր նմ եցեալ  
հանգեց ու ես յարմէ կը զանազանի։ առափ յառաջ  
գոյս իւր անձնաւորութիւնն և նիզգինքն կը սահմայ։  
Այդ ոյս վախճանիս համեմելու համար՝ խոհուն էակի  
որ 'ի մեզ նիզն իր վրայ կը գառնայ անդրագարձու-

թեամբ զինքն տեսնելու համար, և այս գործովու-  
թեամս մէջ յարում ինքն իսկ է միանգամցն Ենթա-  
կայ և առարկայ՝ կը որոշուի առանց բաժնուելու՝ ի  
ես հայեցազ, 'ի ես հայեցեալ, և յարաբերութիւն  
միոյ առ միւսն' որ յերկոցունց մի կետն գործէ։  
Երբարդութիւնն այս որ 'ի մեզ' հիմն է հագիխուս-  
կան գիտակցութեան՝ որ ինքն իսկ Ենթակայկան  
խարիսխ է խորհրդոյ և ծանօթութեան։

Նոյնն է գործեալ առար եախ կամ ոչ եախ ծանօթա-  
թեան մէջ ալ. պէտք է որ այնոր յանդիման զինքս  
զնում՝ նորա ազգութեան կամ Տառագարին ընդունելու  
համար՝ որ տանե յիս ապաւորութիւն ինչ, և յե-  
տոյ պէտք է որ մասգրութիւնն գործածեալ եղան  
ապաւորութեան և այնոր պատճեանի վրայ։ Այս  
միջրագարձեալ գործոյս մէջ կը կատարի միաւթիւն  
մի 'ի մէջ երկուց, կամ արգիշտիք մի իրերահազորդ  
թափանցութեան։ Այսպէս առանց տեսազական  
գործարանի առարկայ մի ոչ առանենք. բայց գոր-  
ծարան ունելին բաւական չէ, պէտք է որ առարկայն  
նորա մասն լինի, և առարկայէն միջրագարձեալ  
ըստոյն ձեռաք միայն տեսութիւնն կը կատարուի,  
զոր Ենթակայն ընդունելով՝ յօրինե յինքնան զզառ  
կեր առարկացին՝ յարաբերութեամբն որ է 'ի մէջ եր-  
կոցուց։ Ազա այս երկու եզերը՝ երրորդի մի մե-  
ռոք միանան, և երեքին միանգամցն նոյնանան յա-  
ռաջրերաւթեան կամ յարգեան գործովութեանն  
սակայն ոչ պատրեն 'ի լինելոյ որիւ և իւրաբան-  
շիւր առանձինն։

Երբ առանց ես յինեն ելնելու՝ որ և իցե ըստի մի  
վրայ կը խորհիմ կամ կը պատյերեմ կամ 'ի երեակա-  
յեմ'. հարկաւորապես կը բամնուիմ յենթակայ  
խորհուզ, որ է միանգամցն գործող և վայր պատկերո-  
վութեան, և յառարկայ խորհեցեալ՝ այսինքն պատ-  
կեր իմն կամ ծանօթութիւնն կամ գործափառ նախուա-

դպյակ՝ ի միտո իմ՝, և հետապնդու մասն համարելով  
անձին՝ զոր գոզցես անշատեմ՝ ի նմանեն՝ ուս՝ ի առ  
նել զնա մասնաւոր առարկայ գիտողութեան մասց  
կամ մատագրութեան նորա։ Բայց այսափով շաւար  
աիր գործն։ այլ ընդ մեջ ենթակայի և առարկայի  
խորհրդոյ գործն կը մտնէ կամ մտաւորական գոր  
ծոզութիւնն՝ որով ենթակայն թափանցէ զառար  
կայն։ մինչդեռ առարկայն ալ ենթակային վրայ կ'ազ  
գէ Եւր ոգեւորական լուսովն։ բնչպէս որ նիւթա  
կան իրք ցոլացուցանեն յաշն զգալի լոյն որ զնոսին  
աեւանելիս գործէ։ Ազա երեք կարեոր եզրէր Են  
ի կերպաւորութիւն խորհրդոյ՝ որ ըստ նշանակու  
թեան անրաժանելի է՝ ի միութեան։ այլ երեւակ  
ի յայտնութեան իւրօնմ, որ է երրորդութիւն ի  
մրութեան։

Ամենէն պարզ խորհուրդն զատումն է՝ որ է եր  
կու առարկայից մեջ յարաքերութիւն կայ թէ չը  
կայ աեւանել։ Այն է զատումն հաստատական է, երեք  
ինչ Են՝ ի նմա վերածեալ ՚ի միութիւն, այսինքն եր  
կու առարկայից բազգատեալը և յարաքերութիւնն  
մուծեալ ՚ի մեջ նոցա, որ է շաղկապ միութեան  
նոցին։ — Դատման այս էտիան երրորդութենէ ո  
յառաջ զայ և երրորդութիւնն առաջարկութեան  
որ գատման բացատրութիւնն է։ առաջարկութիւնն  
ալ երեք եզերք յօրինի որ գատման եզերաց կը  
համապատասխանէն, և Են սոքա ենթակայն առա  
ջարկութեանն, մակագիրն և բայ՝ զոր քերականք  
իրաւամբ զօդ անուանեցին որովհետեւ լեզուի մեջ  
կապակցութեան կամ խօսքի առարեցն միացընելու  
պաշտօնն ունի։ Կոյնոպէս յօդաւոր բարբառոյ մեջ  
բան մի կատարելապէս չեմ կարող բացատրել՝ ա  
ռանց առաջարկութեան երեք մտանցն, բնչպէս որ  
երկրաշաբութեան մեջ ալ երեք գեւերէ պակասով  
մե մը ըլբանար առեմք, այսինքն ամենէն պարզ ձեն  
ալ գոնէ երեք գեւերով կը մեանայ։

Եւ ննոցես որ գատում մի չեմ կարող արտաք։  
Իել՝ առանց առաջարկութեան երեք եզերաց, այս  
պէս աշ պատճառաբանութիւն կամ շարաբանու-  
թիւն մի յօրինել չկարեմ առանց երեք առաջարկու-  
թեանց, յորոց առաջնուն որ մեծագոյն անուանի՝ ցո-  
ցանե զյարաքը բութիւն մեծ ծայրին ընդ միջին եզրի,  
Երկրորդն կամ փոքրագոյնն զյարաքը բութիւն նոյն  
միջին եզրի ընդ փոքր ծայրի, և երրորդն կամ բո-  
վանգակութիւնն հաստատե զպատշաճութիւն եր-  
կուց ծայրից ընդ միջնան, վասն զի իւրաքանչիւրն՝ ի  
նոցանե յարմարի ընդ միջնոյն, ըստ առանձին թէ Եր-  
կու իրք Երբ իւրաքանչիւրն երրորդի մի հետ կը յար-  
մարի իրարու հետ աշ կը յարմարին։ Որ մի են ընդ  
միւսմ երրորդի՝ նոյն են ըն զմինան։ Ապա առա ևս  
կը տեսնեմ որ շարաբանութեան աշ հիմն երրորդու-  
թիւն է, որ և եռոտանի բանավարութեան։

Նոյն գարձեալ հիմն է առաքինութեան, վասն զի  
առաքինութիւն կամ գործոյ մեջ բարոյականութիւն  
լինելու համար՝ Երեք բան հարկաւոր է, ծանօթու-  
թիւն օրինաց ՚ի մեռն խզնի, կամք կամ գիտութի  
կատարելոյ զնոյն, և գործադրութիւն կամաց գոր-  
ծով որ համեմատ իցե օրինաց, կամ կատարութի  
գիտման։ Խոչ որ ըստ հայեցողական կարգի ա-  
ստցար ծանօթութեան յօրինուածոյն համար՝ գոր-  
ծնական կարգի մեջ ալ նոյն է - որէնքն որ չէ յի-  
նէն է ևնթակայականն զերագոյն, կամքն որ է յիս  
կը միանայ ազատութեամք՝ հաստանելու այնմ, և լիս-  
որէս իր ցառանար՝ բայց լրացմանը իրենց յարաքե-  
րութեանն ՚ի կատարութի առաքինական գործոյ։  
Ապա առաքինութեան մեջ ալ Երեք եզերը թէ և  
անջառք սակայն մի են։ Ապա երրորդութիւն բա-  
րոյականի ալ հիմն է՝ որպէս և գիտութեան։

Քնոյն գատնեմ գարձեալ գեղագիտութեան մեջ  
ալ որ գեղեցինն հայեցողութիւնն է. վասն զի իրա-

ւաճի տառցեալ է թէ գեղեցկութիւնն է զանազա-  
նութիւնն 'ի միութեան, և ուրիշ բան չէ բայց եթէ  
բազում գեղեցկութեանց նոյնութիւնն առ 'ի կազ-  
մել զժի գեղեցկութիւն։ Բայց զայն հանացելու և  
սպանչածալու համար՝ հարկ է որ իմ պատկերողու-  
թեանն կամ երեակայութեանն մեջ գեղեցկին գա-  
զագուարին ունենամ, որ իմ գեղագիտական գատմանն  
ոկիզրն և շաբին է, և բանի մի գեղեցիկ լինելն ուրիշ  
բանով ոչ հաստատեմ՝ բայց եթէ այս տիպարիս  
հետ ունեցած յարմարութենէն, այսինքն զորը 'ի  
շատեւ այն գաղափարին նման լինելըն կամ այնոր կնիքն  
ունելըն։ Առա այսոր մեջ ալ երեք եղերք հարկաւոր  
են՝ գաղափարականն, խռականն և նոցա յարմարու-  
թիւնն ըստ գատման կամ ըստ հանութեան մասց  
ինց՝ որ զնոսին միացուցանէ ըստ երեանց պատշա-  
ռի։ Առա ուրեմն երբ բանի մի համար առեմ թէ յի-  
րափ գեղեցիկ է, առել կ'ուզեմ թէ գաղափարա-  
կան գեղեցկութեան մասնակից է, առա և նորա կե-  
նացն յաւեժակից, զոր և ես ինքն վայելեմ երկու  
եզրերն միացնելով, որ թէպէս անջապ են՝ բայց իմ  
մասց մեջ մի են։ Առա յառաջ զայ այն ներբին և  
անհաման վայելքն և յափշտակութիւնն զգայութեանն  
զոր կ'ունենամք նշանաւուայես գեղեցիկ իր մի նկա-  
ռած առենիս։

Աերթապէս կարեմք առել որ երրօրդութիւնն  
խարիսխ է ընկերական կենաց, որպէս և անհամա-  
կանին։ Ըստերութիւնն 'ի գերզատառնէ սկսի և 'ի  
Պետութիւնն աւարտի։ Աբդ գերզատառն երեք ե-  
զերոք սահմանի՝ հայր, մայր և զաւակ, որոց անդրա-  
գարձ սեր միաւորելով զնոսա առնէ մի։ Նոյնպէս և  
Պետութիւնն՝ ինչ սահմանազքութեամբ ալ որ լինի  
եթէ միապետական, եթէ իշխանապետական, և եթէ  
ուսմբավարական, կամ այս երեք մեոցս խառնուր-  
դը՝ միւտ պիտի ունենայ եզր մի գերագոյն կամ

պետ հրամայող, Եզր մի սառին կամ ժողովուրդ  
Հնազանդող, և 'ի մէջ երկոցունց Եզր մի միջին՝ որ  
գերդասահնի մէջ մայրն է, որ պետին և ժողովը  
դեան անդրադարձ գործերն իրարու հասցընէ, որ և  
կոչի կառավարութիւն, զեկավարութիւն կամ պաշ-  
տօնեայք պետութեան: Ամենայն սահմանագրական  
ազգաց մէջ իշխանութիւն մի պետք է՝ ուստի կ'ու-  
զես եկած սեպէ, և ինչ կերպով որ հաստատուած  
լինի: Ազգն կարգով և խազազութեամբ յառաջ  
շերթար՝ բայց եթէ յիշխանութենէ դրուած օրինաց  
Հնազանդելով, և ոյս օրէնսդրութիւնս միջին Եզրի  
գործն է՝ որ երկու Եզրերն իւր միջնորդութեամբ  
ոյիտի միացնէ: Ապա Երրորդութիւնն քաղաքական  
կենաց և սնական կենաց ալ հոգին է:

Տեսութիւն 'ի վերայ Երրորդութեան  
( շարայարութիւն ):

Կ Յանձնաբար:

Հիմա Երբ իմ բոլորս Եզած արտաքին աշխարհին  
վրայ կը գարձնեմ աչքս՝ առն գոյութեանց մէջ ալ  
Երրորդութեան պատեհը կամ նշյլ մի կը տեսնեմ.  
այսպէս առն ծաւազ կ'ետէ մի ելնելով որ երթալով  
զի՞ւ կը ձեանոյ, բենոի մի կը հասնի ու կ'աւարտի.  
ուստի զօրութիւնն զարձեալ իր սկզբան կը գտա-  
նոյ, և երթեեկ մի կը հաստատուի կեզրոնի և բե-  
ւեռի մէջ որ իրարու հետ շառաւթզով կապուած էն:  
Ամենայն զի՞ւ ունի սկիզբն մէջ և զի՞ւթ: Եռանկիւնն  
որ առնենին պարզ ձեն և երեք կողմունք և երեք ան-  
կիւններ ունի, միութիւնն ձևոյն բավանդակութեան  
մէջն է, և Երրորդութիւնն իր Երրեակ և մի մասանց  
մէջ: Առանց Երրեակ տարածութեան հաստատուն

մարտին մի չեղք կարող ըմբռնել, և անշունչ մարմին  
մի կենալու համար՝ գտնել երեք յեցման կետ հար-  
կաւոր է: Երբեակին ամեն կը սականութեան խարիս-  
խան է, վասն զի գոյութիւն մի չկայ՝ որ երեքէ պա-  
կաս յեցման վրայ հաստատ կենայ: Ամեն անզ կեն-  
առարութիւնն կեցրոնէ մի եղանէ և ճառագոյժա-  
ծե տարածուելով վերջին կետի մի վրայ կը բնեաս-  
նայ, և արամագինն առանցքին կեցրոնին վրային  
խաչաձե անցնելին կը մեանայ, ուստի բոլորի նաև  
շրմանակն: Բնախանն Պիշտ ասելը (թէ գործարանաւոր  
կետնք մարդոյ՝ սրախ, ուզոյ և սասմուխ եռուա-  
նոյն վրայ հաստատուած է: և յիշաւի այս երեք  
գործարանքս մարմնոյ երեք գիտաւոր մասանց մեջ  
կը տիրեն՝ ուր որ կենասական չարժութեան ալ կը բանի-  
սիրան կրծոց մեջ որ է կեցրոնական վայրն: ուզեղն  
'ի գլխի կամ 'ի վերին բնեախ, և սասմուխն 'ի փորի  
կամ 'ի ստորին բնեախ: Գլխաւոր գործարանաց և  
նոցա տիրած վայրաց մեջ ալ այնպիսի եռանդուն  
կրակցութիւն և զօրաւոր գործակցութիւն մի կայ,  
որ միոյն կրածին կամ վայելքին համեմատ՝ միւսերն  
ալ կը վատանան կամ կը իննզան, և յակը օրինակն  
անզ կ'ընծայեն՝ որ այլոց բարին ալ իրենին պէս կը  
խնդրէ:

Այս գործերն և գիտողութիւններէս ինչ կը  
կետեի, յիշաւի ես ալ ոչ զիտեմ: Արդեպ ես ալ  
գարձի գալով Երրորդութեան վարդապետութեանն  
պիտի հաւատամ, թնդակ որ կաթողիկէ Նկեղեցին  
ուսուցանէ: Ու կարծեմ, այս հաւատոց համեն-  
լու համար՝ գեռ շատ արգելք ունիմ մասցա մեջ, և  
գեռ առենն հասած չէ, որովհետեւ գեռ գրական  
կրմից հարկաւորութեան վրայ կը տարակուախիմ, և  
աշխարհին մեջ գերբնական բաներ լինելուն համո-  
զուած չեմ: Աակայն որովհետեւ այս գրած ո ինչ հա-  
մար է միայն՝ պէտք է անկեղծութեամբ խոստավա-

նիմ՝ որ քրիստոնեութեան այս Հիմական վարդա-  
պետութեան և բնական աշխարհին օրինաց մէջ ե-  
ղած այսպահ հանգիստութիւններն զիս շատ կը զար-  
մացնեն։ Եւ որովհեան հիմա փորձով համազեալ  
եմ՝ որ այս աշխարհին անեն գոյացութիւնք՝ ոգիք և  
մարդիք, հազիք և գործարանաւորութիւնք, չնա-  
որ և անշռնչ եակը, կեանք և նիւթ՝ երբակի օրի-  
նար հաստատեալ են, ես ինձ հարցանելը կու գոյ թէ  
արդեւք նոյն բանն լինելու չէ նաև եակաց Խակին  
համար ալ, և տիեզերական կենաց սահմանագրու-  
թեան համար ալ այնպէս որ վերջապէս Երրորդու-  
թիւնն կամ երբակի օրէնքն՝ որ կրօնական լեզուով  
վարդապետութիւն կ'անուանի, և հիմ և քրիստ-  
ոնեութեան, թէրեւ իմաստասիրական լեզուով կո-  
չուելու եր տիեզերական օրէնք գերազայն Խակի և  
այլ ամենայն եակաց, կամ որպէս առէր Պիշտ՝ եռո-  
տանի կենաց յամենայն պարունակու սկսեալ յաս-  
տաւածային անբաւութենեն մինչև ցարդն անարդ  
և պիտի ցրոյս և ցքարինս։

Այս օրագրին մէջ արձանագրուած վերջին խոր-  
հըրգածութեանց հետեւութիւնն և այս գիտազու-  
թիւնն. և կարծեմ թէ այս գիտազութիւններէ ար-  
ուրիշ շատ հետեւութիւններ ալ պիտի ելնեն, թէ  
ովէտ և առ այժմ մտաց մէջ մուժ և տարտամ բա-  
ներ են։ Այսու ամենային այնպահ կարեւորութիւնն  
ալ ու տամ այս անութեանցը՝ որով ներսի գիտ  
խոռնի և խիզն շփութի։ Պրածու պարզ գրաւոր  
զրազանք մի եւ բայց ուրիշ զրազանցնե առելի հար-  
կաւոր նախ որ նիւթն շատ առելի կարեւոր է, և եր-  
կրորդ իմ արտիս և մտաց ներկայ հանգամանաց նա-  
յելով պէտք մի կը զգամ զգուշաւոր և գործեական  
համոզման հասնելու, չէ թէ պարզ կարծեաց և գը-  
րութեան։ Միայն մոռք՝ մտաւանդ թէ աւազ շատ  
անզամ ալ միայն երեւ ակացութեամբ իմաստասիր

լինելէն ձանձրացայ. այլ յայսմնեաւէ կ'ուզեմ ոգւով  
և Նշանառութեամբ իմաստաներ լինել. այսինքն սըր-  
տով և դշեռով, կենաց և խորհրդոց մէջ, դոր-  
ծով և բանիւ:

### Դիպուած մի.

15 Ապրիլ:

Ահաւասիկ երեք ամիսը Են որ օրագիրո բացած  
չեմ և ընդհատելուս պատճեան ալ ոչ գիտեմ. Աս-  
տուածաբանական հականառութեանց գեղեցիկ նա-  
խանձ մի զիս վասեց : ամբողջ ամիս մի եռանգուն  
և անխանձ մասք հանգերեմալ աշխարհի իրաց ե-  
տելէն անկայ, և մանաւանդ զինուոր նիւթոյն որ է  
ամձնաւար Աստուածոյ միոյ գոյութիւնն և իւր երրեակ  
անձնաւորութիւնն . բայց ոչ գիտեմ թէ այս կող-  
մանէս վախճանի մի հասի՞ թէ չէ : Ինձ այնոպէս կ'ե-  
րեի թէ շատ գազափառներս լուսաւոր եցան, և զոնէ  
կաթողիկեութեան զէմ ունեցած նախապատար-  
մունքս ակարացան : Իրաւ զեւ հաւատացեալ լինե-  
լու համար շատ բան պետք է . բայց կը սկսիմ հաս-  
կանալ թէ մարդ կարող է հաւատացեալ լինել՝ ա-  
ռանց անմիտ անհանձար և անբան լինելու : որպէս  
ամեր Բասքալ : Միայն կ'երեի թէ որովհեան իմ աս-  
տուածաբանական եռանգեանս պատճեան իմ զն  
Սակարիս վազահաս մաշն եղեւ, որ իմ բոլոր մտած-  
մունքս և զգայութիւններս յուզելով սաստիկ վա-  
փաք մի տուաւ ինձ գիտելու թէ արգելք ինչ եղեւ  
նմա, և թէ կազ արդեօք իրեն հետ վերաբերութիւն  
ունելու միջոց մի : և հիմա որ ժամանակն անցնելով  
զինքն մոռցայ՝ օրագիրո ալ այնոր հետ մոռացու.  
թէ ան մէջ անկայ :

Սակայն այսօր նորէն կ'ուզեմ ձեռք զարնել որով-

հետեւ սրտիս վրայ ծանրութիւն մի ունիմ՝ զոր ու-  
րիշի չեմ կարող հազորդել. բայց սիրառ թեթևցընե-  
լու համար՝ պէտք է որ առեմ, կամ գոնէ գրեմ. Օ-  
ապրէ առելի կնոջս չեմ կարող բանալ այս նիւթու,  
որովհետեւ այս տարփապիս պատճառն ալ ինքն է.  
թէ և անտարակոյս անմեղարար կամ գոնէ բարի դի-  
տաւորութեամբ. այնպէս որ այս նիւթոյս մէջ ինքն  
միանգամայն դատաւոր և դատախազ պիտի լինի, որ  
անկողմանակցութեան ապահովութիւն չտար. Բայց  
առափ որովհետեւ ուզած զիւմանն չհասաւ և պա-  
րապ տեղ շտանց հատցուց, ու ես ալ առկա մի խթա-  
տութեամբ մերժեցի զինքն՝ զոր կը խոստվանիմ.  
Հիմա եթէ սակաւ ինչ անուշութեամբ իրեն հետ այս  
նիւթոյս վրայ խօսիմ՝ այնպէս պիտի երեխ թէ յաղ-  
թուել եմ և սիրան առնուց կ'ուզեմ և ուզածն առ-  
նել. իսկ արդ այս բանաւան մէջ շատ հետեամբ կա-  
րէ յառաջ բերել. Ապա ուրեմն թուզում որ ինքն նո-  
րեն խօսք բանայ՝ ինչպէս որ տապահով եմ թէ պիտի  
առնեմ, որպէս զի ես ալ գերգաստանիս զլուի լինե-  
լու պատիւն պահէմ. Աւրծագետ որովհետեւ իր ուր-  
տին բարութիւնն զիտեմ, և այս ժամփուկ խնդրոյս  
մէջ մոնելն՝ իր խզմին պարացն կատարելու համար  
եր, և իմ հոգւոյս փրկութեան ունեցած սաստիկ  
փափաքէն յառաջ կուգար՝ ինչպէս որ ինքն կը հա-  
մարի, միաբ զրած եմ որ այսոր մէջ ալ զինքն լիւշ-  
տացնեմ. ինչպէս ուրիշ բաներու մէջ ալ, և եթէ  
չորոշեմ ևս իր ուզածն առնելու՝ գոնէ մոռածեմ թէ  
ինչ անոյշ խօսքերով կարեմ զինքն միանթարել և յօյս  
տալ:

Հիմա դամք եղածն պատմելու. քանի մի առենէ  
՚ի զեր և որ գիւղն կը նսանիմ՝ մօրես մեացած փոքրիկ  
կալուածի մի մէջ, որ պարզ բայց միանգամայն հան-  
գիտ և սիրուն տուն մի է, և այս տաւակլութիւնն  
ալ ունի որ գեղի մէջ ալ լինելով՝ քաղքէն շատ հե-

ոի չէ, այնպես որ իմ զբաղմանց համար ամեն որ  
կ'երթամ կուգամ. ոզն մաքուր, արևն պայծառ, հո-  
րիզնն ընդարձակ, և ամեն զին ծլած ծաղկած, ձիս-  
վարելու և ազայոց խազալու ալ ընդարձակ տեղ  
կայ. Խոկ կիրակի օրերն Բարիզ ու Երթամ և շատ  
գոհ եմ. ամեն կիրակի ձայնաւոր պատարագ կը  
զրուցուի գեղի նկեղեցին, և զանգակներն շատ ան-  
գամ կը զարնուին բնակիչներն կուելու համար՝  
որք զժրազդաբար ոչ երթան, բնապես որ սօվորու-  
թիւն է մայրաքազքին մօտ եղաղ գեղերուն մէջ: Այս  
բանիս վրայ կը ցանիմ. որովհետեւ վերջապէս այս գե-  
զացիներս անկիրթ և անուսունի ընելուն՝ որպէս  
զեղ բարոյականի սկզբունք և պատշաճից զգած-  
մունք չունին, որով միշտ իրենց անկիրթ զգածմանց  
և վատթար կրիյ մէջ կը մնան. եկեղեցին որ եր-  
թային՝ զոնէ բարոյականի վրայ երկու խօսք կը  
լսեին. այս բարոյականիս նկատմամբ մէք խմաստա-  
սէրըս մոքերնիս գրած եմք թէ ժողովրդապէտին  
ասացածներն ամենցն ալ զիտեմք՝ ուստի զեղ ա-  
զատ կը համարիմք նորա յարդուակներուն գանու-  
լին՝ որ յիրաւի մէջ համար չեն:

Բայց այս բանիս մէջ նկատելու ուրիշ բան մի ալ  
կայ, և կինս ալ այն նկատմամբ այս նիսթոյս վրայ  
խօսք բացաւ, և միորն զիս յանդիմանել չեր. այլ  
պարզապէս բնագրեց յինէն որ ևս ալ իրեն և աղջ-  
կանն հետ եկեղեցի երթամ, որպէս զի ժողովրդեան  
բարի օրինակ տամ, կում զոնէ իմ չերթ աշուխ նոցա  
ալ համարձակութիւն շատը սրբազն պատամաննե-  
քին ետ մնալու. մէջ չվայլեր, ասաց, հեթանոս և  
անհաւատ երեխիլ յալու ոգիտոց, և մանուսանդ ժո-  
ղովրդապէտին և հաւատացելոց. և թէ զիւզի քաղ-  
քի պէս չէ՝ ուր բազմութեան մէջ այլի շզաբներ,  
այլ փոքրիկ գիւղի մի մէջ ամեն բան տեսնող ու խո-  
սզ կը գտաւի, և նոյն խոկ իմ գրիցս և պաշտօնիս

նկատմամբ՝ որ հասարակաց ուսմանց պաշտօնաւոր  
կը համարիմ, թերեւ լու բան չէ առել առզ թէ  
կրօնք չունի, որովհետեւ կրօնքն ալ դաստիարակու-  
թեան եւկան մասն է: Բարիդ եղած ժամանակնիւմ  
ոյս նիւթեց վրայ բան մի չէի խօսած, առաջ, վասն  
զի գայթակղութիւն չկար, որովհետեւ հօն ամենենին  
հոգերնին չէ թէ գրացին թնջ առնէ թնջ չառներ,  
թնջու որ ազ լինելին անզամ ոչ նաևաչեն: Թէսպէտ և  
նոյն բակ հօն եղած առեննիս ալ բաւական գժուա-  
րութիւն կը կրելի երբ ազիկան հետ եկեղեցի գեա-  
ցած ժամանակս՝ աղոյական պարզմութեամբ կը  
հարցաներ՝ թէ ինչու հայրս ալ հետերնիո չդար:  
Ակրթապէտ իրուն վերջին պատճառ այս ալ առել  
ցուց կինու թէ զինքն չառ պիտի ուրախացնելի եթէ  
առջնի կիրակին միատեղ եկեղեցի երթայի: և զիս  
իւր քովին և Աստուծոյ առջին առանելով առելի ուր-  
տանց պիտի ազմելու թնձ և զաւկիս համար՝ Աստու-  
ծոյ նուիրեալ առնորին մէջ: Այս վերջի խօսքերս  
զրուցելու առեն՝ որ յայսնապէս իր սրտէ ն կը բըղ-  
իսէին: և կ'երեւեր թէ ինքզինք բանադառնելով կը  
զրուցեր՝ այնուես այլայլցաւ: որ նոյն անզամ կը  
դադդար, և շունչն ըերանն հասնելով բոլոր հոգին  
և զուին վրայ էր:

Ուրիշ ամեն պատճառներն ալ արդարացի էին.  
բայց այս յետինս առելի գազաւ թնձ: բայց երբ կար-  
գըն թնձ եկն պատասխանելու: պիրաւորուած ան-  
ձնասիրութիւնն թնձ յազմեց: և նոյն բակ նոյնիս  
մէջ խօսութիւնն մի կը նըմարուեր՝ թէսպէտ և կը չա-  
նայի ըստ կարի քաղցրացնելու: Կորա ասացանեներն  
յանդիմանութիւնն մի կը համարելի թնձ, և չէի ուզեր  
որ կինս զիս յանդիմանելու վարժի՝ նոյն բակ յան-  
դիմանութեան արժանիքի եղած ժամանակս: Ուստի  
իրեն պատասխանեցի՝ որ ինչպէս ես ոչ հակառա-  
կելի իր հաւատացած, բաներուն և իւր կրօնական

պարտքերն կատարելուն՝ պատվես ալ իրաւունք ու-  
նեի նոյնն իրմէ պահանջեցու. և թէ ոյս խնդրոյս  
պայ՝ ի հիմանց ոչ կամեի իրեն հետ հականառելու՝  
վախճաղով որ իր հաւատորն շատանեմ՝ որ մաքես ու  
կամքես շատ հետի եր. և թէ ինքն ալ զիտեր որ ես  
ալ բաւական ինչը ունեի իմ նշարիս պարտքերս  
հանաշելու. և բաւական ալ արգարութիւն զնոսա  
գործագրելու թէ որ խիզն զարներ. առա նիզն ալ  
համոզուելու եր թէ ես ալ բաւական պատճառ ունեի  
զայն շկատարելուս համար. ոչ զինքն և ոչ ուրիշ  
կատարողներն մեղագրելով. և վերջապես ինքն ալ  
կարեր հասկնազ թէ ինչ որ կանանց և աղայոց օր-  
տակար է. թէ իրեւն իմաստահրաց համար այնպիս չէ.  
և իմաստահր անունն կրեցուս համար ալ առմին  
կարծիքն հոգս չեր. և անարժան բան կը համարեի  
ինձ առանց հաւատուլու եկեղեցին երթալ զեղացոց  
զրախօսութիւնն արգիլելու համար. Այս տեղով  
պաղութեամբ մի իրմէ հեռացայ՝ առանց բարկու-  
թիւն երեցնելու. բայց այնպիսի տեղուն կիրապով  
որ յինէն բաժնուած ժամանեակ աեսի որ աչքն ար-  
ցունքով լցուեցան :

Ունեւասիկ սպանապից անզ մի իմ ընտանեցոց  
պայ՝ որոյ արտմութեանն ես պատճառ եզէ. Յանի  
բան մի չխօսիր. բայց կարծեմ թէ կը մոտեէ ու կը  
զգայ. ևս ալ կ'իմանամ որ խռպերում զինքն աննեւ-  
սին չհամոզեցի. այլ իւր սերն պազեցուցի. և իւր  
խիզն և թէ իրեւն սակաւ մի անմնափրութիւնն մի-  
րաւորեցի. Բայց ոյս խզնի և սիրոյ նիւթերն մեռ-  
նուելն՝ այնչափ վասփուկ բան է՝ որ ոչ զիտեմ թէ  
ինձ համբաց բանելու և՛ զայն հանգարտեցնելու.  
համար առանց յազթուած երեւլու. որ մի գուցե  
չարիքն մեղմացնելու տեղ տեղի զայրանայ. այս  
առանց բաներն որւափ որոպես այնչափ վասնա-  
ւոր է. Բարեբազզարար գեռ շարթաւն կեսն եմք.

ուստի մինչև կիրակի երեք որ ունիմք խորհելու։  
Եաւ գուշ պիտի լինիմ՝ եթէ այնպէս յարմարցնեմք  
այս բաները՝ որ իմաստասիրական պատույս և այ-  
րական իշխանութեան մըսա մի չհամփի, միանդա-  
մայն այս խեղճ կնոջ ալ համութիւն մի պատճառե-  
լով, որ ինքզինք բոլորովին ինձ նուիրած լինելուն  
յայտնի նշանն ալ տուաւ այս խրատովս, զոր առ-  
նելու համար մեծ զժուարութիւն քաշած լինելուն  
ոչ տարակուամի՛ շապա երբոր աղջիկս ալ այն սար-  
տափելի ազայն մօրն ինչպէս որ հարցուցել է՝ թէ  
ինչը հայրն ալ իւր կրօնական պարտքերն ոչ կա-  
տարէ՛ զորս իրեն այնշափ կը պատուիրեն, և որոց  
որինակն մօրն վրայ կը տեսնէ, պարզմութեամբ  
միտքն զրած լինելով թէ Եկեղեցին ամենուն համար  
է, վաղն ելնէ ինձ ալ նոյն բանն հարցանէ, ինչպէս  
որ կը յուսամ, ինչ պատասխան տալու է աեմնեմք։

### Տատամութիւն։

#### 17 Առեւ

Պատարագի երթամ՝ թէ չերթամ. երեք որէ ՚ի  
վր այս բանս ինձ մեծ մամուռք եղած և զատերես  
գործերես և ուսումնական զրազանցմէս աւելի։  
Մի թէ իմաստասիրի մի համար ծազբական բան չէ որ  
կնոջ խօսքով այսպահ տառամի՛ ու շվանթի, փոխա-  
նակ իւր գործոց պատճառն իւր խելքին հարցնելու,  
և սարի կարծեն պն չայլայլելու։ Ինչ բանի կուգայ  
ուրիշի ուսուցանել՝ որ մարդ պէտք է ինք իրմէ խոր-  
հի, և իւր զատմամբն ամեն բան գործէ, երբ զոր-  
ծեականին որ կուգայ՝ փորքիկ արգելք մի մեզ գետ  
կը գնէ։ Ուտարակցյա կնոջ խօսքն իրեն մեծ  
բան մի չէ, որովհետեւ նոքա շատ անդամ աւելի զդա-

յութեան երեակայութեան և կրից ազգմամբն կը խօսին ու կը դորեւն՝ քան թէ խելքով, ուստի այ-  
նոր համար ալ շատ անգամ եթէ դիտմանքնին և ա  
բարի լինի առկայն իրենց խորհրդոց մէջ իմաստու-  
թիւն չկայ: — Այսու այս բան իրաւ է, քայլ  
երբ մեր կինն է խառովն՝ բանն կը փոխուի. որովհետեւ  
որպագի ալ այրական իշխանութիւն ունենամք՝ կինն  
ալ ուրիշ զրութիւն մի ունի, և ուզան առեն բա-  
նի մի զրոյ ամեգոհութիւն ունեցածին պէս նոյն զր-  
ութիւնն մեզ իմացնել կռաւայ ասն մէջ թէ և առն  
տիկինն թնդն չկին: Ամենէն ապահովն այնպիս զա-  
րուիլն է որ առն մէջի խազազութիւնն չվրդովի և  
խռավիլու պատճեռ չտրուի: Յիրաւի ես ալ ուրիշ  
բան ոչ կամրի: Վասն զի Ֆաննեն ալ սրամանց կը  
սիրեմ որում արժանի բակ է, և ինձ մեծ ցաւ պիտի  
լինի զինքն վշտացնելու, մասնաւոնց երբ իմ ձեռքս է  
իրեն սիրաց չկոտրելու:

Այս պիտի հետեւի որ կինս ոչ միայն պիտի զըժ-  
կամակի այլ և պիտի արտօմի. վասն զի իրեն ոյս բա-  
նիս ետակեն անկանելու անձնապիրութեան կամ իր ի-  
րաւունքն առաջ առնելու համար չէ, և ոչ ալ զիս  
իր կամաց հեազանգեցնելու մաք. այլ խզնմանաց  
գործ մի համարած լինելուն համար է. իրու նշան-  
րիս քրիստոնեայ ամուսինն իւր պինակն իմնեւս ամե-  
նենին չուզեր զատել, և կը փափարի որ յաւիտեան  
ինձ հետ միացած մեայ. ուստի զինքն անհանգիստ  
առնողն իմ հոգւոյ պինակն է, և իրաւուն իր հա-  
մացածին նայելով իրաւունք ունի անհանգիստ լի-  
նելու, որովհետեւ սրտով համազուած է որ առանց  
հաւատոց փրկութիւն չկայ: Այս հիմն ես իր ալաց  
առնի հաւատոց չունիմ որովհետեւ առնենին եկեղեւ:

ցին ուղը ոչ կոփեմ՝ բաց է պատկի և թաղման հան, գէմներէն, այն ալ յընտանեկան և յընկերական պատշաճից սախզեալ։ Ուրեմն ինքն կը մտածէ որ եւ թէ այս վիճակիս մէջ մեռնիմ՝ իմ հոգիս իրենինէն յարիսեան բաժնուած պիտի մեայ։ այս մտածութիւնն զնիքն յառաջառութեան մէջ կը ձգէ։

Եւ որչափ ալ այս նիստոյն վրայ իրեն հետ պատ, հասներով խօսիմ և բմաստասիրութեան ուսուցածն իրեն զրուցեմ՝ աւելորդ է ու պարապ տեղն պիտի հոգնիմ, և իմ պատճառաբանութիւններս իւր համոզմաւնքն ամեննեն պիտի լիցարեն փոփել, և ինչպէս որ ես կրօնից՝ վարդապետութեանց և հրահան, գաց ոչ հաւատամ՝ ինքն ալ ևս առաւել ոչ հաւատայ թէ իմ բմաստասիրութիւնս կարէ կանոն լինել վարուց։ Առակ է զան խօսք մի է թէ մարդ իր սենեկասպանին առջն մեծ մարդ չկարէ լինել, այսինքն որչափ մեծ մարդ ալ լինի՝ իր գազանիքն գիտցող ծառ ու այն զնիքն չյարգեր, ևս ալ առմամ որ մարդ իր կը նոյն համար բմաստասեց չէ, որ նախ և առաջ Առ կրասայ վրայ կը նշմարանի՝ որ ամեն բմաստասիրաց հայրն ու հեղինակն էր, և առկայն անպատճառ ու գեղ վիսանթիսպակէն ամեն որ թուք ու մուր կը կրեր ու կը նախատառէր, թէպէտ և Պելլիսիս պատզամն մահկանացուաց մէջ ամենէն աւելի բմաստանն հըռ շակէր էր զնա։ Փամաք Առառուծոյ, իմ կողակիցս Վասնթիսպակէն ոչ նմանի, այլ բարի ու հաւատառութիւնուանեցուաց մէջ ամենէն աւելի բմաստանն հըռ շակէր էր զնա։ Փամաք Առառուծոյ, իմ կողակիցս Վասնթիսպակէն ոչ նմանի, այլ բարի ու հաւատառութիւնն ալ այս է, բայց ոյս ալ պէտք է խոստավաճամիմ որ շատ զիւրին բան ալ չէ, և երբեմն նաև ներացուցիւ ալ է։

Արիտառարգութեանս առանք Աստվածին սիրահարեց.  
ցայ, և շատ աշխատեցաց նորա հետ կարգուելու հա-  
մար. և թէպէս ինքն ալ զիս կը սիրեր, բայց եր-  
կայն առեն գեմ դրաւ, որովհետեւ առելի կ'ուզէր  
հաւատարիմ քրիստոնէի և կրտեց պարագերն կա-  
տարազ մարգու մի հետ կարգուիւ. ես զինքս այնպէս  
ցուցանելով զինքն չհաւատացուցի, որ առա զրու-  
ցել և խարել լիներ, հասկա այսպահ միայն առացի  
որ ես ալ առենք Եսանդուն քրիստոնէոյ էի, և  
թէրեւս Աստուծոյ շնորհիւն և բարեպաշտ կնոջ իմ  
սրախ մրաց գործած բարի աշցեցութեամբն՝ ման,  
կութեանս հաւատքն կարեր նորեն արծարժիլ. Այս  
յոյս իրեն տալով ոչ կարծէի որ զինքն կը խարեմ,  
որովհետեւ անկարեցի բան ալ չեր, և առկայն այս  
յոյս ես ինքն ալ շունելի, և ոչ ալ ունելու վատիպ  
մի ունելի սրախ մեջ, որ ինձ տեսակ մի խիզն եղած  
է, որովհետեւ մինչեւ ցայտմ խեզմն մեծ բան մի շը-  
մասակեցաւ այս կողմաննեա, և ապացոյցն ալ այս և  
որ երեկ չէ առջի օրն այնպէս խիստ կերպով մերժե-  
ցի իր առաջարկն կիրակի օրն միատեղ եկեղեցի եր-  
թաղու: Ապա ուրեմն ինքն ալ միարեւ գրած և թէ  
խարուած է, և որշափ ալ ինքզինքս պարտական  
ոչ համարիմ նմա հանոյ լինելու համար գարձի գոլ,  
բայց զուտ մուրզավարութեան համար պարտառը  
կը սեպեմ ինքզինքս՝ որ այս բանիս մէջ նորա արցու-  
մութիւնն շատ լցնեմ, և ապէրախտութիւն ընուխա-  
րինեմ իրեն սիրելամբաւ և բարեացակամ ինւամոցն  
որով իմ հոգւոյս քրիստութեանն համար կ'աշխատի,  
ինչպէս որ ինքն առէ: Արդեպ ինքն այս վախճանիս  
համելու համար գործածած միջոցներու ընարու-  
թեան մէջ կը սիսալի մէջ չէ, իմ զիսանլու բանս չէ.  
սույզն այս և որ իմ մրաս ունեցած սիրոյն առելի  
մեծ նշան չեր կարող տալ:

Հիմա ենթադրեմք թէ իր ազաշանց մաիկ առ-

նելով ուղածն կատարեցի. ի՞նչ մեծ և քաշցը ուրա-  
խութիւն պիտի լինի իրեն սրանին և հոգւոյն, որով  
հետեւ միտքն զբել է թէ այսու պիտի վաստին յաւի-  
տեան յաւիտենից իր երկանն հոգին. Այս նկատ-  
մամբ ունեցած ամեն յօյս ըն պիտի կենցանանան, և  
պատարագի ներկայ գտաւելովս և իր ժողովրդապե-  
տին յարդորակն լսելովս՝ պիտի համարի թէ կետ մի  
գարձի եկի և փրկուեցաց, և այս սիցընաւորութեան  
յաջողութեամբն բորբոքած՝ աւելի ևս եռանգագին  
ազգօթքով ամեն սուրբերն յօդենութիւն պիտի կոչէ,  
և երինից ամեն խորհն իր սիրելի անհաւատին մրայ  
պիտի իջեցնէ. և անտարակոյս զիս ալ աւելի շատ  
պիտի սիրէ, և ամեն կերպով պիտի ջանայ իւր սէրն  
ինձ ցուցանելու. Հոս ուրիշ բան մ'ալ կայ գիտե-  
լու, այսինքն թէ իր սրանին մշշ անհանգատութեան  
աեզ յօյսն մանելով աւելի երջանիկ պիտի լինի, և  
իւր այրն ալ երկնից և երկրի ամեն քաջցրութիւն-  
ներովն պիտի զեղանի:

ԱԵՂԴ կանացք, որըափ զիւրաւ կը տարութերին  
՚ի վրաց և յուրահութենէն՝ իրենց սրանին շարժ-  
մանց և երեակայութեան արամագրութեանցն հա-  
մեմատ, որ ճախող և յախող բազզին թեթէն հովովու-  
մերթ կը ցածնան մերթ կը բարձրանան. Աւ սակայն  
այս ակարութիւնս ալ իր խանգականթ մասն ունի մա-  
նաւանդ ուր բարեսրտութիւնն կը սիրէ, որպէս և  
Յաննին սիրան: Բաց աստի, այս սակար արարածներս  
որ միտքերնին շատ բարձր և խելքերնին շատ սուր լին-  
ելունն համար՝ որոշողութեան և պատճառապահու-  
թեան տառամասութենէն և տարակոյսներէն ալ ա-  
զատ են, երբ անձի մի կամ իրի մի մրայ վատահու-  
թիւն ունին՝ շատ անգամ բան զեզ աւելի լաւա-  
գոյն ապահովագոյն և ինքնայտար կը դործեն, ա-  
ւելի ովթառութեամբ և եռանգեամբ. որովհետեւ միշտ  
պատրաստ են իրենք զիրենք սիրածնուն նուիրելու.

զոր մեք արքա մարգիկս ընդհանրապես ոչ առնեմք՝  
որշափ ալ զիտուն և իմաստատեր լինիմք։ Ասի որ  
եթէ անկեղծութիւնն աշխարհէս աբսորուելո՛ թա-  
գաւորաց սիրտն ովեաք էր ապաւինել. աւելի հըշ-  
մարտութեամբ կարեմք հաստատել՝ որ եթէ քրիս-  
տոնէական հաւատաբն զաշխարհս կը փրկէ՝ կանանց  
ձեռքավճ պիտի փրկուեի։

Վերջապես եթէ կիրակի օրն եկեղեցի երթամ՝  
կինս շատ երջանիկ պիտի լինի. և իւր երջանիու-  
թիւնն իմ վրա ալ պիտի ցայտէ. իսկ եթէ յուղեմ  
երթալ սաստիկ պիտի որումի, և ժամանեակ մի մասմ  
ամսզ մի մեր վրայ պիտի ծանրանայ, խաւարն ըռւսոյ  
տեղ ախրելով։ Բարիլ քաղաքն պատարագ մի կ'ար-  
ժէ առեր Պէտրոցն (ՀԵՆՐԻԿՈՆ Պ)։ զեռ ևս իմն  
ալ առելիքս կուգայ՝ թէ մեր տան խաղաղութիւնն  
ալ որ իմ թագաւորութիւնս է՝ ոյն ալ պատարագ  
մի կ'արժէ։

### Տատամութիւն (շարայարութիւն)։

18 Ապրիլ։

Կարգն աղջկանո եկաւ. բայց այս պարտգոյին մէջ  
երկուքն ալ մի են. անտարակցա ծանուել գաշնա-  
կցութիւն մի կայ մայն ու զաւեին մէջ իմ հոգւոյս  
փրկութեանն համար. սակայն պղտիկն իր նորանին  
հաւատաց եռանգեան հետ սարսափելի ազու ան-  
մեղ ժառութիւնն ու թախանձանքն ալ կ'առելցնել։  
Ուցեալ առուր մի հարանութենեն եան։ Սովի քա-  
նի մի խոռք լասն լինելով, առնե կերպով զհայրն  
շոյելու շողոմելու կը լանայ՝ իւր հասակին շնորհա-  
լից կերպերով ու որաբն փափկութեամբն. իսկ  
մայրն զցուշաւոր կերպ մի բանելով ծանրեն կը քա-  
շէ։ Բնաւ այս աստիճան սիրուն և կամակատար

կերպ շեխ աւստած զաւելիս վրայ : որպէս թէ ինձ հաս-  
կըցնել ու զելով՝ որ այսպիսի միրուն զաւելի մի ու-  
զածն չառնելը անկարելի է : Ո՞հ մըսափ գժուար է  
այս պղտի համբարուաց անոյշ ձայնին հանդուրժել  
կամ գեմ գնելն , թէ և թիւր պատճառ ալ ունենաս-  
ուրիշ հնարք չկայ . երբ ոչ կամիս ուղածնին առնել՝  
պեսիք է որ ականջներդ թիւս դոցես : որպէս զի՞նոցա  
հրապուրիչ ձայնն մինչեւ միրուն չհամեմի . խելքն ալ  
այս է :

Աւրծապէս եթէ տզայն այսպափ կը վասփարի այս  
բանիս թիւն իրեն այս հանջոյք ոչնորդնեմ . մանուանոր  
որ իր կոզմանէ բարի վասփար մի է այս բան , և առ-  
բակցս չկայ : որ եթէ համոզուած չլինէր թէ իր ու-  
զածն ինձ ալ մեծ բարիք պիտի զառնայ : այսպափ է-  
տեհու ոչ անկանէր . իրաւ կարէ խարուած լինէլ՝ բայց  
վերջապէս այնպէս համոզուած է : ապա ուրեմն այս  
բանիս մէջ իր բարի զիտմանն նայելու է : որովհե-  
տեւ մեացածնն վրայ զատաստան չէ կարող առնել :

Բայց այսոր մէջ ուրիշ խնդիր մի ալ կայ : որ է  
խնդիր խզէի : Ազջիկս իւր ունեցած հաւատքովն՝  
այնպէս համոզուած է որ կիրակի օր պատարագի  
ներկայ զառնիլն՝ ամեն քրիստոնէից համար էական  
պարագ է . և եկեղեցւոյ պատուիրան լինէլով ամեն  
հաւատացեալք պէտք է որ պահեն . և զիւնապէս  
չզուհովերն անհաւատ էն : Աւստի եթէ յանձնն չառ-  
նեմ երթարու՝ միտքն պիտի գնէ թէ իր հայրն ալ  
այն անհաւատներէն է . քրիստոնեայ չէ , կամ ողի-  
կեայ չէ , այլ Եկեղեցւոյ թշնամի , կամ զոնէ յԵկե-  
ղեցւոյ բաժանեալ՝ յորմէ գուրս մըրկութիւն չկայ .  
ապա ուրեմն կորսառած և զժոխոց համբուն մէջն է :  
Աւտի այս երկու ցաւոյի հետեւնացս մին պիտի ել-  
նէ . կամ այն է որ այս ողացս միտքն պիտի գնէ թէ  
իր հայրն զատապարտուած է և յաւիտեան իրմէ  
պիտի բաժնուի . որու ցաւեն մինչեւ կարէ ևս խել-

քին զալ ու խենթենալ, կամ այն է որ աւելի վըս-  
տահութիւն ունելով հօրն իմաստութեան վրայ՝ քան  
թէ եկեղեցոյ ուսուցածին, այս կրօնական անխը-  
տրութեան պիտի հաւանի՛ այնպիսի մեծ որինակ  
մի տաթեն ունելով, և քիչ առենեն այնոր պիտի հե-  
տեւի, և պիտի լինի տեսակ մի կրօնավաճառ և ազատա-  
խոհ կին, որ ամենն ին իմ բանիս ոչ գոյ: Ա՞չ ոչ, ոչ  
առեմ, հազար մեզամ ոչ: այս բանիս ոչ հաւանիմ,  
այլ կ'ուզեմ որ զաւակո ալ իր մոր պէս հաւատա-  
ցեալ և հաւատարիմ լիցի եր կրօնից, կ'ուզեմ որ  
ֆրանսանդ կին մի լիցի և բարի քրիստոնեայ՝ զար-  
գարեալ ամենայն առարգիւթեամբը՝ զորս ոզնամբու  
կրօնք ուսուցածին կանանց, և որոյ քաշը ազգե-  
ցութիւնն նոցա բնութեան գեղեցկութիւնն կ'ա-  
ւեցնէ:

Այսպէս հա. բայց թէ որ ես կ'ուզեմ որ ազիկո  
քրիստոնեայ ու կաթողիկեայ լիցի, հասպա ննջու ես  
որ իր հայրն եմ այնպէս չեմ. և ննջու կարեմ զա-  
նալ իրեն իմ ոզափս համար այն բանն՝ զոր կը ցան-  
կամ որ ննջն իւր ոզափս համար ունենայ, և զոր այն-  
շաբի թափանձանք յինէն կը բնոգրէ: Զոր աեզ  
պիտի աշխատիմ իմաստասիրական բացատրութիւն-  
ներ առցու իրեն այս իննոգրոյս վրոյ: մասն զի եթէ  
հասկանայ և՛ իր հաւատոց և ոզնաւթեան  
գեմ պիտի չզարեն. և ննջ պատասխան պիտի ուսու-  
երը լալով հառաջելով ինձ առէ: Դու ոչ ուզես ու-  
նել այն բանն՝ ինչ որ կ'ուզեմ որ ես առենեմ. ինչու  
այն որ իմ հոգւոյս ոզափսկար և՛ քուկինիդ պիտի  
չլինի: Պարագ աեզ պիտի առեմ՝ թէ ինք կին է,  
ազիկէ է, ու ես պար եմ, ինքն ոզէս է՝ ես իմաստան  
եմ. և թէ իմաստասիրութիւնն ինձ ուսուցած է  
ինչ որ իրեն կրօնք ուսուցել են, և ուրիշ այս առ-  
սակ խոսքեր: Կարծես թէ կը լսեմ իր անզիներ  
կերպով ինձ առցու պատասխանն՝ թէ նիսուսի

Քրիստոնի Եկեղեցւոյն մեջ այբ և կեռք տպիանի և  
իմաստնոց զանազանութիւնն չկայ : այլ ամենքն այ  
Որդւոյն Աստուծոյ արեամբ վերածնեալ հոգիներ  
են որ իր շնորհիւն միոյն կարծին փրկութեան հաս-  
լու: Մինչև առ վայր մի կը հասկանամ թէ ինչպէս  
Աղամայ մեզաց արան՝ իւր արեամին իր սերնդոցն  
անցաւ, որովհետեւ ամենեցին նորա ՚ի կարելութեան  
էին ՚ի նախահայրն իւրեանց. այսոր համար է որ  
կարծեմ Պաւլոս առաքեալ իր Ծզընց մոյն մէջ  
առէ. ՚ի մուտք ամենեցին մեզան ։ Աստի յա-  
ռաջ զայ զանազանութիւն երկու աւստակաց մեզաց-  
սկզբանանն որ փոխունցեալ է, և մարդկութեան  
պարտակցութիւն ունելիուս համար մեզ աղ կը տի-  
րե, և ներգործականն որ մեր սեպհական կամքեն  
յառաջ կուգոյ, և յօրում մեր անձնաւորաբար  
յանցաւոր եմք: Բայց նոյնափ որոշ ոչ տեսանեմ  
թէ ինչպէս և որով ճամբով աստուածացին կեանք:

զոր յերկնից երեր Միջնորդն՝ կը հազորգուի ա-  
մեն քրիստոնեից և ամեն վերածնեալ մարդոց ։ այն-  
պէս որ այսու հազորդակցութեամբ լինին որդիք  
Աստուծոյ և եղբարք Յիսուսի Քրիստոսի ։ Իրաւ է  
որ միայն որդեգրութեամբ և այս որդիութիւննա-  
որովհետեւ միայն Բանն Աստուծոյ և բնութեամբ  
որդի մաշն ծննեալ 'ի Հօրե՛ որում և համագոյակից  
է և հաւասար իշխանութեամբ և մեծութեամբ։  
Աստուծային էռաթիւնն անհազորդ է արարածոյ ։  
և հնաւորն որ միանոյ ընդ անհնոյ՝ չկարէ նոյնական  
լինել ընդ նման զի Աստուծոյ մի միայն է ։ Բայց մի  
թէ մարդու իւր վերածնեալ բնութեամբն նշմարտա-  
պէս եղբայր Քրիստոսի չէ ։ Նախ գերբնապէս զո-  
լով անդամ փառաւորեալ մարմեոյ Փրկչին ։ և եր-  
կրորդ նաև բնականապէս 'ի Կուռամային որոյ յար-  
դանդի Բանն էաւ զմարմին և զարիւն մարդկութեան։

Արդ այժմ այս խնդիրս մեզ ընդ առաջ եղա-  
նե թէ Ո՞րպէս աստուծային կամ զերբնական  
կեանքն միացեալ 'ի Յիսուս Քրիստոս ընդ բնական  
կենաց մարդոյ՝ զոր այլակերպեաց և աստու-  
ծացոյց անցաւ 'ի ուրունդն Ադամոյ առ 'ի մա-  
քրել զնա 'ի սկզբնական արաւոց և առ 'ի լուծա-  
նել 'ի կապանաց մզաց ։ 'ի գերութենե և 'ի մա-  
հուանե ։ ինչպէս զայն նոր արարած մի արար՝ հա-  
նոյ աչաց Աստուծոյ որոյ զըլեժն կրեր յառաջա-  
ցոյն ։ Այս բանս Փրկչին բնական կենաց փոխանցու-  
թեամբն եղած չէ ։ որովհետեւ նա իր մօր պէս կոյս  
մաց ։ և յայլ կոզմանե ալ այն միջացն որով շարժ  
ծաւաղեալ էր գարմանին գործադրութեանն ալ  
գործածել ու յարմարեր ։ Եւ սակայն որովհետեւ  
կեանքն ամենուրեք ծննդագործութեամբ կը վորի-  
անցի ապա ուրեմն այս գիտուածին մեջ ալ ծննդա-  
գործութիւն մի կայ ։ և որովհետեւ խանգարեալ մար-  
մինն այսմ չեր կարող մասնակից լինել ։ ապա ուրեմն

այս ծննդագործութիւնս բոլորտին հոգևոր լինելոց  
էր : Այս իսկ է զոր Քրիստոս կը հասկացընէ Նիկո-  
ղեմասի այս խօսքերովս . և Մնեալն 'ի մարմնոյ' մար-  
մնէ է , և ծնեալն 'ի հոգւոյ հոգի է ։ և միաբա կու-  
գայ որ Յովհաննու աւետարանի առաջին գլխոյն  
մեջ առենք առ նշանաւոր խօսքերն կարգացել եմ .  
որոյ իմաստն այս առաջին անդամ է որ կը դանեմ .  
և Ուրբ ընկալան զնա (զ Բանն մարմնացեալ ) եւ նոցա  
իշխանութիւն որդիս Առառւծոյ լինել՝ որոց հաւա-  
տացեն յանուն նորա . ոյք ոչ յարենէ և ոչ 'ի կա-  
մաց մարմնոյ և ոչ 'ի կամաց առն' այլ յԱռառւծոյ  
ծնան ։ :

Ահաւասիկ այս խօսքիս մեջ կը դանուի 'կարծեմ  
իմ խնդրոյս պատասխանն : Այս . Յիսուսի Քրիստոսի  
կեանքն փոխանցեցաւ յորդիս Առառւծոյ' որ այն կե-  
նք նորաստեղծան և եղեն նոր մարդ : Եւ այս իւր  
շնորհաց գործն և Առառւծոյ առ մարդիկ ունեցած  
սիրոյն արգեւնքն՝ կատարուեցաւ և զեր ևս ամեն  
որ ալ կը կատարուի պարզ հոգի որական ծննդն .  
գեամբ' որ լինի իւրաքանչիւր նոր քրիստոնէի վայ  
մկրտութեամբ . որոյ համար վերածնութեան նոր .  
հուրդ կը կուռի , բնուպէս նաև խորհուրդ մեռելոց  
որոնքնետն երեխից կեանքն այս նոցա՝ որ զայն կո-  
րուսեալ և հոգւով մեռեալ էին : Այս ծննդագա 'ի  
հոգւով լինի և ոչ 'ի մարմնի , և հետեւապէս մարդին  
և արիւն մասն չունին այնոր մեջ . և լինի ջրով և  
Հոգւով որոյ աստուածային խօսքն հաւատով ար-  
տասանեալ փոխանցիւն է : Երբ մկրտուողը չտփա-  
հաս են այսինքն որ ունին զրանավարութիւնն և  
զազատութիւնն՝ հարկ և յառաջադրյն հրահանգել  
զնոսա՝ որպէս Քրիստոս ուսոյց զաւակերտա իւր .  
վասն զի իրենց առ բանն յաւիանական ունեցած  
հաւատոյն զօրութեամբն կ'ընդունին զկեանս , և այն  
բանն կամ խօսքն է որ զիրենք նոր արարած առեւ :

Այսոր համար է որ Յիսուս առաքելոց իշխանութիւն տալու առեն առաջ . և Գիացէք ուսուցեք զամենայն հեթանոսս . որք մկրտեսցին և հաւատացեն յանուն իմ կեցցեն . այսինքն նորա որ ընդ ըրոյ մկրտութեան ընկացցին 'ի սիրոս իւրեանց' իմով բանիւ զշողին Առւրբ' լիցին վերածնեալք նորածնեալք , և այսպէս ոչ ևս լիցին «Ծնեալք յարենէ և ոչ 'ի կամաց մարմնոց . և ոչ 'ի կամաց տռն՝ այլ բնիքն իսկ յԱստուծոյ» :

Իսկ 'ի նորածնին երախայս և յանշափահաս մանեկունո՞ւ որ խօսք խելք և ազատութիւն չունին' լինի հեղութեան հաւատոց և կենաց՝ պաշտմամբ իսկ խօր հըրդոյն . որովհեան լիք ինչ 'ի հոգւով նոցա որ ընդդեմ գարձցի այնմ ոչ երկմատութիւն ոչ հակառակութիւն և ոչ մրգովներն մուոց և արտի : Խրացնե ուրիշներու պէս 'ի սկզբանկան արաւոյ ազատուած հոգիներ են , բայց զեւ բան մի գործած չունին կամաւորապէս մեզաց յարելով զոր և ոչ իսկ հանեալին : Ապա ուրեմն նոյն համար մեծագոյն բարիք մի և իրենց կենաց սկիզբն վերածնանիւ . և աշխարհին մէջ մանել՝ ունելով աստուածոցին կենաց սերն իրենց սրաբն մէջ , և զշուածն հաւատոց իրենց մուոց մէջ և զմերձակաց մեռնութիւն Հոգւոյն որրոյ՝ որ սակաւ մի յետոյ (խօր հըրդով գրում) սկիսի լիցին զիրենիք իւր սրաբ պետքն՝ 'ի ձեռն պաշտմանն Եկեղեցւոյ եթէ հազարդ որդիք մասն Հօրին իւրեանց երկինաւորի :

Աչ զիտեմ թէ ինչ ծրեցի , և ոչ ժամանակ եզե նորեն զոյնս աշքէ անցընելու , միոյն ըանացայ և սին բացատրել թէ մարդս կարէ առանց անմիտ և ապուշ լինելոյ մկրտութեան զրութեանն հաւատալ . կը մասիսէմ որ մի գուցք ինչ ոչ նոյն զեզքն պատահի ինչ որ եզն այն գերատանին՝ որ հառվեմական ժողովրդնեան առջն թատրերդութեան մէջ մարտի .

ըսուի մի գերն կատարած ժամանեակ՝ այնշափ եռան գետամբ գուցեց Վրիստոնեայ եմ, որ յիրաւի եզե յանկարծ ընդունելով զոդի հաւատոց հոգւոյն գումամբն՝ 'ի վոխարձէն հանդիսաւ որ մկայութեանն. Իր մեացուցած գերն իրականի վոխուեցաւ, և 'ի թատրոնէ 'ի կրկեան անցաւ, և յիրաւի մարտիրոսութեամբ կատարեցաւ: Ես գեւ շատ հեռու եմ, և տակաւին ոռւրբ Կենեսառոսի հաւատքն չունիմ. մանաւենդ թէ ինքն է որ բնձ կը պակսի, թէ և շատ բաներու մէջ մասց ընդ դիմութիւնն կը նուազի. անմառութիւն և անակզութիւն համարած իրերն կը տեսնեմ որ կարելի բաներ են եզել, և միաբա երթալով կը բացուի ու կը բարձրանայ. բայց կամքս գեւ կ'ընդ դիմանայ, և տակաւին բաւական պատճառներ ոչ տեսանե իւր գիրքն թողլու:

## Նոր քննութիւն

### 21 Մայիս:

Եսու օրերեւ 'ի վեր օրագիրս յառաջ վարելու շհամարձակեցայ. վասն զի ներսի զիս շատ ամբոխեալ եր, և կը վախէի ես իմ վրաս նայելու և հոգւոյս արամագրութիւնն կամ յօժարութիւնն իմանալու. կ'երկնչէի որ մի գուցէ ուզածէս աւելի քրիստոնեայ գանեմ իմ հոգիս, և զրեթէ անապատի չայլամին պէս առնելի՛ որոց համար ասեն թէ գլուխն աւազին մէջ կը թազէ որ մերահաս վտանգն չտեսնէ: Այս բանս շատ ինելացութիւն մի չեր, և այսօր մասն ելով ամաչելս կուզայ: Ոմնն բանէ յառաջ նշմարտութիւն, և որովհետեւ ես ալ շատ մեծ կարօտութիւն ունիմ, և յիրաւի անկեղծութեամբ ալ զիս կը բնառեմ, առա ամեն լանդ առնելու:

է յերեան ածելու համար զայն, և աւելի առ ՚ի զշեա երթալ այնմ և ընդդրել Շեէ բարեբազդա-  
բար այնոր հանգիստիմ. Մուրիմ Պատռ, ճանիսկոյն  
ճշարդունին. մի Շե այս առածս որ իմաստամբու-  
թեան համար կը զբոցեմք, կրօնից նկատմամբ ալ  
նոյնպէս Շըմօրիտ չէ, և չե՞ն մի առանուած ընօ-  
շարս դարուց, և մանաւանդ յառաջին ժամանակս  
քրիստոնէութեան՝ բազմաթիւ իմաստաներն եւ  
ամենէն աւելի առաւանիներն, որ իրենց ժամանակի  
մարդկանց՝ յորոց ինձ չափ շահ ունելով պէտք չե՞ն  
խրտեցնել, քայլութեամբ ասացին. Մուրիմ իմաստ-  
բանին, ոյ ճաւեմագոյն մըկնառ:

Միայն Շըմօրիտն խռատավանելով ես ինձ համար  
զես ոչ կարեմ առել Շե իրեն մուրիմ բարեկամ  
եմ, բայց սառւգապէս թշնամի ալ չեմ. և կ'ու-  
զես իմ կողմանէս ներոզամութիւն ունեմ կ'ու-  
զես խորհրդաւոր սիրելութիւն մի զոր ես ինք-  
նին չեարեմ մեկնարաննել, քանի մի ժամանակէ ՚ի  
վեր զգայի մերձենալ մի կ'իմանամ իմ սրտէս, և  
այս բանիս զանազան կերպերով կ'անդրազանամ.  
Նախ իմ զիտակցութենէս որ յայտնապէս վկայէ Շե  
իմ աւսութեանց տրամադրութեանց և յանարու-  
թեանց մեջ փոփոխութիւն եղած է. յետոյ այն սի-  
րոց առաւելութենէն զոր կինս և զաւակս ինձ ցու-  
ցանեն որ մանաւանդ այս վերջի օրերս աւելի քաղցր  
և զռարթ կերպ մի առած է, և վերջապէս իմ ի-  
մաստաներ բարեկամաց զժկամակութենէն որ ինձ  
նկատմամբ անբնական և խորշելու կերպ մի բանա-  
նէն, և կարծես Շե կը զռւշակեն Շե իրենց ընկե-  
րութենէն հեռանալու մըսյ եմ, կամ Շե ինչպէս  
առեմք դրօշակն զարձելու մըսյ եմ:

Իմ ձեռքէս ինչ կուգայ. Շե որ Շըմօրառութիւնն  
է զիս քարշազն, ինչու զեմ զեմէ, որովհետեւ իմ ու-  
զածս ալ այն է: Անշուշտ զիս միտմանի առջ չե՞ն

կարող զնել, որովհետեւ որչափ որ կարեմ ահա կը կռուիմ ու կը ծեծկուիմ, և այս բանիս կը վկայէ այս իմ օրագիրս ալ՝ որ իմ ամեն աւուր խորհըրդակիցն է, և կռուէս պիտի շդադրիմ մինչև որ միուրս համազուի և կամքս յազբժահարի. և առա երկուքին ալ յազբէկու է. մինչև հիմա թէպէտ և մասց ամրոցին գրափ պատճենեներն չառ խրամա-տեցան. բայց կամքն միշնաբերգին մէջ կեցած է ուր իմաստափրական գրան կը ծածանի և պիտի շխռնարհի՝ մինչև որ Աշմարտութեան լոյն Շառա-գայթէ:

Բայց հիմա աեսնեմք մերժապէս ինչ պիտի առնեմ առ նուռայրանիւն. արդեօք կարեմ առանց սոսո-թեան ու կեղծաւորութեան ընդունիլ. Ստութիւն ոչ կարենմ որ լիցի այս բանիս մէջ, որովհետեւ քրիստոնէից մկրտութիւնն ինչ խորհուրդներ ու կ'ենթագրէ՝ ես ալ զայնս ոչ ուրանամ, և թէպէտ բա-ցայցատ ոչ գաւանիմ սակայն ոչ ալ մերժիմ. որովհետեւ բաւական Աշմարտութիւն կը աեսնեմ ՚ի նո-սա: Խոկ մկրտութեան արարողութեանն և այնոր մէջ պարունակուած բաներուն գալով եթէ զօրու-թիւն մ՝ ալ յանենեմ նոցա մէջ՝ սակայն գոնէ կը համարիմ զնոսա նշանակ մաքրութեան հոգւոց՝ որով շարի արան զոր Եկեղեցին մեզք կ'անուանէ. կը թնդուի, և նորոգէ զնոսա աեսակ իմն հոգեւո-րական վերածնոգեամբ. և եթէ աստուածային օրի-նագրութիւն ալ չէ՝ գերե չառ գեղեցիկ և յշյժ օդ-տակար գիւա մի է, որովհետեւ կատարելութեան և մարդկանց վերհամբարձման համեսց մի կը բանայ: Հիմա ինչ հարի է որ բառերու վրայ վիճեմ և գլու-խըս նամեւցնեմ իմանալու համար թէ ինչպէս լինի այս մերածնութիւնս, և Նիկողեմասի պէս տում. և Զիարդ կարէ մարդ անդրէն յորովայն մօր իւրոց կրկին մասնել և ծնանել: Ոչ անտարակոյս. ոչ

ուղեմ որ ուրիշներն զիս վարդապետ Խարսյելի համարին, և Պիտմաս անունն ինձ առն՝ որ այն առենին ՚ի զեր տկարամբա մարդ կը նշանակէ (1): Ակիզըն գեռ ինձ համար մոռթ է, բայց հետեւութիւններն իրենց յառաջ քերած բարեզն, շատ սրանցնի կ'երեխն. և ով որ այս վարդապետութիւնս հաւատքով կ'ընդունի, և իր հաւատքն աղ գործով կը կատարէ զերազանց մարդ լինի: Առեւարանն որ նման լցու և իմաստութիւն կուտայ՝ այս աշխարհիս մէջ իւր հանապարհն առենինելու, և կամին աղ կը զօրացնէ այն համբեն յառաջ երթալու համար՝ բաւական գիտութիւն կը չնորոնի, իրեն աշխարհիս մէջ ուղղուելու համար, և բաց յայսցանե խզնի խաղաղութիւն և սրաի զաւարթութիւն որ այնպիսի թանեկագին բաներ են՝ զարս մեր իմաստասիրական սկարապեմանց մէջ ամեննեին աղ գամենեմք:

Բայց արգելոք կեզծաւորի աեզ պիտի չզնեն զիս առենինելով որ հրապարակաւ մասնակցութիւնն առնեմ կրծիքց՝ որուն համար մաքերենին դրանք են թէ եռ ու հաւատամ, և որոց պարուքերն յայտնապես ոչ կատարեմ: Բաց աստի երկայն բարակ ու բարձրաձայն պիտի յարտասանեմ առաքելոց հանգանենին, և ինչ պատասխան պիտի առամ քահանացին երբինձ հարցանե: Թէ կամ ողիկեայ քրիստոնեայ եմ թէ չե, որպէս զի կարող լինիմ երաշխաւոր և պաշտօնական կալ իմ սանիս հաւատացն: Որովհետեւ վերջապէս Ակեղեցւոյ առջե ես պիտի պատասխան առամ պիտոր տեղն մինչև իւր առաջին հազորդութեան օրն՝ որ ինքն իրեն պիտի նորոգէ միքառութեան ուխտերն:

Այս բանս առելի ծանր է, և նորանոր խորհրդածութիւններու կարստ. զեռ ամբողջ չկարգացի այս հանգանակս, և որչափ որ կը միշեմ մէջն շատ

(1) Գր. Nigund բարին համար է այս երգինակը:

յօդուածներ կամ՝ որք ինչ ընդունելի ոչ երևին. սրբնակի համար Փրկուտոսի ՚ի գժոխս իթանելն, իւր յարութիւնն ու համբարձումն ՚ի յերկինս, և նըս- տելն յամառ Ամենակային՝ ուստի պիտի դայ ՚ի դա- տել զիենդանիս և զմռաւազս։ Եւ յիրաք սորս հանգերձեալ աշխարհի իրեր են. որովհետեւ ոչ զիտեմ թէ այս աշխարհիս մեջ մարդ մի զառի որ գժոխք զնացած ու եկած ըլցի. բաց ՚ի բանաստեղ- ծից երզնիքներէն, Մարդ մի տեսած չեմք որ յա- րութիւն առած ու երկինք վերացած ընիփ, և առա- ւել ես Աստուծոյ ամեռն նատի, և վերթապէս մինչև հիմա երկնիքն գտառաւոր մի իջնելով զմարդիկ դա- տելու համար առեան մի կազմած չւ։

Ուրեմն այս հանգանակիս մեջ մասց հակառակ իսկստ բառքեր կան՝ որ կը ստիպէն զիս խուզարկու- թիւններու յառաջ վարելու. գոնէ թիզզիքս ապա, հոգցնելու համար՝ որ այսոց մեջ առնելի և անկա- րելի բաներ չկան՝ թէ և յօյժ մընին են։ Ես ալ այս բանս կ'ու զեմ որ խիզնս ապահովցնեմ. զան զի վերթապէս ինչու կրանից նիստերու մեջ առելի սաստիապահանի ընելու եմ քան թէ զիտութեանց մեջ յօրս այնպահ բաներ կը գտնեմ որ բացա- տրուած չեն կամ չեն բացատրուիր, և սակայն ու- զեմ չուզեմ պէտք է զայն ընդունիմ՝ հասկացած- ներս բացատրելու համար։ Ես որովհետեւ ընու- թեան մեջ զաղանիք կան, թիզու ընութենէ վեր և զերազանց բաներու մեջ չըեցի, և ով է այն հշենարիս իմաստաւերն որ յանդ դնի հաստատելու թէ ընու- թենէ վեր բան չկայ։

Քրիստոսի իջանելն ի դժոխս

22 Մոյկ։

Քրիստոս խաշին վրայ իր հոգին առանցելն անմշապես ետև կը ՚ի դժոխս տակ կաթողիկէ հանգանակն, ուրիմն հաւատոց մասն է։ Յայտնի է որ այս գործու ուրիշ առզե իմացուած չէ։ բայց եթէ Վարդապետն Խօսքովն՝ որ իւր առաքելոց առացել է՝ իւր մարմանն նոցա մէջ նորին երեցած ժամանակ՝ երր քառասուն որ զիրենք ուսուցանելու և իրենց առաքելութեան հրահանգելու համար կ'երեւ, ինչպէս որ կը պատմեն Պարծք առաքելոց զիրքն զբեալ ՚ի սրբոյն Ղուկաս։ Բանն մուաց որ յայտնութեան ոչ հաւատոց և հաւատոց իշխանութեանն վկայութիւնն կը մերժէ՝ անտարակոյս այս իրս ոչ ընդունի, պատրուակաւ որ այսպիսի բան առնենին տեսնուած չեւ, և քնութեան օրինաց համեմատ՝ ոչք որ մահուամբ այս աշխարհու կը թողուն աչ միւսանենքամ հոս ոչ գառնան։ Ա տաց այս բանս մերժելն աչ ուրիշ հաստատութիւն չունի։ այլ պարզաբար տակ։ այս ինչ նշմարիտ չէ։ վասն զի առնենին պատմիսի բան տեսնու չեմ, և ոչ աչ մարդ մի կը նաւայէմ որ տեսած լինի։ Ա իթէ հաստատուն պատճառարանութիւն մի կարենք համարիլ այս խօսքու։ ամեն որ պատմական անցքերն կը հաստատեմք՝ տռանց նոցա վկայնը ըն նանացելու։ ապա թէ ոչ պատմութիւն առացեալն անկարելի պիտի լինէր, և մարգիսնց մէջ տռուցութիւն կամ առանցութիւն առացածք պիտի լինէր։ Այս իրերուն մէջ կան որ անշմարտանման երեքն, և պէտք է քննագառութեան տակ ձգել, առն։ Թող այնպէս լիցի,

բայց նոյն իսկ քննադատից մեջ որչափ տարածայ-  
նութիւն կարծեաց կայ նաև հակախօսութիւն, մա-  
նաւանդ այս մեր օրերս որ զամենայն ինչ խնդրոյ  
տակ կը ձգեն:

Ուր թողունք որ Փրիստոսի ՚ի գժոխս իշխանելը  
ալ եթէ իրական ինչ է, զործ մի է, և իրաւոյնէ  
գործ հանգերենեալ աշխարհի. բայց այնպիսի իր  
որ տառենեւթ գարերէ ՚ի վեր միլիարտոր մարդիկ  
հաշտկել և հաւատցել են Ակեղեցոյ վկայութեան  
վրայ հաւատատուած՝ որ այն ոչը իր հիմնագրին խօս-  
քերուն վրայ նոյն իրն սառուցել է: Վերըազես իրին  
եռութեանն մեջ անտեղութիւն չկոյ. այլ տարօրի-  
նակ իր մի է, և ով կարէ յանդգնիլ և ասել թէ ան-  
հնարին է: Ամենն ոչ գիտեմք թէ հոգին զմարմինն  
թողմն ետե՞ւ ուր կ'երթոյ, և մարդկային ամեն զի-  
տութիւն այս նիւթոց վրայ սարոյդ բան մի ոչ ու-  
սուցանեն մեզ: Եւ սակայն հաւատամբ որ մարմնոյ  
հետ ոչ մեռանի՝ այլ կենդանի մնայ, և հետեւապէս  
տեղ մի կ'երթոյ գատառելու համար. ուր և որպէս,  
ով կարէ ասել: Արդ ով կարէ ոչնչութեամբ մեր-  
ժել թէ Փրիստոսի հոգին ՚ի գժոխս իթան չէ: Ով  
որ կը հաւատայ թէ նա Աստուած է Տեր կենաց և  
մահու, խնդիր չմնար. վասն զի որպէս կամի կարէ  
զնել զիեանս և առնուլ: Իսկ նորքա որ իր տառուա-  
ծութեանն ոչ հաւատան՝ ոմանք ասեն (թէ նորա ՚ի  
գժոխս իշխանելը ալ իր ուրիշ գործերուն պէս մարդ-  
կային զիւտեր են, իսկ այլք նշանակ կամ առաս-  
պել համարին այս բանս. կան ուրիշներ ալ որոց ան,  
հաւատութիւնն աւելի բանաւոր է, ուստի իրին  
նշանարտութիւնն ստուգելու միջոց մի չունելով՝ ա-  
մեն (թէ խելքերնին չպառկիր այս բանիս. բայց ՚ի  
հակառակէն այ պատճառ մի չունենին մերժելու՝ բայց  
եթէ գործին տարօրինակ լինելը. ես ալ այս վերըին-  
ներուս կետ եմ:

Առ առկայի մարդու գժոնաց խորերն իշխանելին այն,  
չափ անհաւատավի բան չէ՝ որ հին առենի առեն հե-  
թանոսք այս բանիս հաւատացել են, և իրենց զիւ-  
ցազանց շատերն ալ այս Խամբորդութիւնս արա-  
րեալ կը համարեին. և քերթողք ալ նոցա գովա-  
թիւնն և քաջութիւնն հայակած են: Որքեռս իր  
Եւրիդիկեն նորեն գանելու համար հոն զնացել եր՝  
զոր իւր սիրոյն անհամբերութեամբն նորեն հո-  
րոյս: Թեանոս իր Պիրիթօրոս բարեկամն մահուան  
շըթայներեն ազատելու համար հոն իթաւ: Վիր-  
պիլիոս ինեւան ալ հոն կ'իթեցնէ՝ ոչ զիտեմ ինչ  
բանի համար. մինչև Տանթէի ալ կարգն կուգայ  
հոն երթալու Վիրդիլիոսի առաջնորդութեամբն իր  
Երանեակն գանելու համար: Վերջապէս հանձա-  
րեզն Ֆենելոնն արքեալիսկոսպոս լինելովն հանդերձ  
Տելեմազն հոն կը ասնի: իր հօրն Ոդիսասի մրայ  
աեզեկանալու համար, և սույզ զիտելու համար  
թէ արդեպ գեռ ողջ և թէ չէ: Անշուշա ինձ պիտի  
ասեն թէ ասքա քերթողական կեզծիք են, և քեր-  
թողութիւնն պատկերողութեան կամ երեակայու-  
թեան գործ է: Տարակոյս չկայ՝ ես ալ նոյնպէս  
կ'ընդունիմ. բայց այս ալ Խշմարիս և որ երեա-  
կայեալ գրուածներն ալ մազովրդեան հանց լի-  
նելու համար: անտեղի բաներ լինելու չեն, և այն  
բանն որ մարդկանց ողջմութեանն և իրենց խելաց  
օրինացն զէմ կ'ելնէ: այնոր մրայ ոչ հիսնան: Ապա  
ուրեմն այս առակներուս մէջ և այս առասպելնե-  
րուս տակ Խշմարութեան մասն լինելու է՝ թէ  
և քերթողաց խանդովն շաբազանցի տարուած կամ  
ծամեակած. ուստի միրժապէս ոչ զիտեմ թէ նշու-  
ուրիշներեն առելի անԽշմարաանեան պիտի լինի  
Քրիստոնի 'ի գժոնս իթանելի:

Հիմա աւեանեմք թէ Քրիստոս ինցու էլ ՚ի գժոնս,  
և հոս գժոնիք ասելով ինչ կը հասկուի: Ըստ կաթո-

զիկէ վարդապետութեան դժոխ կամ սրբներ բառն  
հոս տեղը նշանակէ խոր տեղ մի ուր ըստ առան-  
գութեան՝ հին Կատակի արգար հոգիներն փայտա-  
քանք կը սպասեին խոստացեալ Փրկչին կամ Մե-  
սիային դաշտաւան՝ որ միայն կարէր բանալ մարդ-  
կութեան՝ և նոյն խի ամենէն աւելի արդարոց առ-  
ջին զգրունա Երկնից՝ որ Արտամոյ մեջքն փակեալ  
էին առաջի որդւոց մարդկան։ Հարկ էր ապա որ  
առաջ Աղատիչն ամենէին և իր խօսքն լսէին, որ-  
պէս զի էր լուսաւին լուսաւորութեան և նորա գորու-  
թեան վրայ ունեցած հաւատքուն ազատին։ Այսոր  
համար ասի թէ Փրիստոս սառայնոց այցելութիւն  
առնելին ետե՛ Երբ Երկինք ե՛ այս հոգիներէս առ  
անենիւ զանք մաքրեալք ազատեալք և յաղթա-  
կանք ընդ նմա ընկերացան։ Այս ամենայն Ֆիլ-  
իւեռութիւն է քրիստոնեութեան սկզբանց։ և  
թէպէս ամբողջ աշխանդունիմ այս վարդապետու-  
թիւնս սակայն իր խորհրդոց շղթայաշար շարքին վե-  
րաց կը հիմնամ, ուր ամենայն ինչ այնպէս իրարու-  
կապուած են՝ որ զանին մին կոտրելուն պէս բոլոր  
շղթայն ցիրուցան լինի. որովհեան իւրաքանչիւր  
կէան ամբողջութեամբն ամբացան է։

Առափ Փրիստոսի թիած տեղն ընթրուն էր և ոչ թէ  
անարդելոց բնակարանն կամ ապրանքուն ուր երկ.  
նոյնին ըստն այլ ևս չկարէ ծագել, և այնոր համար  
խաւար արտաքին կը կոչուի. որ և օթեան է նոցա  
որ իրենց ապստամբութեամբն իրենք զիրենք Առ-  
առւծոյ որենիքէն և արքայութենէն գուրս ձգեցին։  
Խակ ընդ հակառակն ընթրոսի մէջ եղաղներն մարդկու-  
թեան այն մասն էին՝ որ այս ախարհէս ելած էին  
առառածածայինն խօսքին հաւատալով և նորա աւե-  
տեացն յուսալով, և նոցա կատարուելուն կը սպա-  
սէին՝ համրերութենէ զատ ուրիշ նեղութիւն չու-  
նելով։

Նիմա կարեմ ուրեմն այս բանին հաւատալ : Այս  
լաելեայն : Եթէ ընդունիմ զատուածութիւնն  
ֆրիստոսի , և ահա 'ի վեր անգր հաստատեցի՝ որ  
գժուարին է ուրիշ բան համարել զնա՝ բայց Եթէ Առ  
տուած : Բայց ինչ նշանակութեամբ պէտք է հաս  
կանալ և բացատրել այս աստուածութիւնս . այս  
բանս ուրիշ խնդիր մի է՝ որոյ վրայ գեռ որոշակի  
միտքս չեմ հաստատած : Սակայն ինիզն գեմ ոչ  
եղանէ և ոչ հակառակի՞ Երբ կը մտածեմ որ պի-  
տի արտասանեմ հանգանակին այն յօդուածն՝ որ  
կը հաստատէ ֆրիստոսի 'ի գժուիս իթանելն . իմ աշ  
հիմա և ներկայ պարագայիս մեջ բնուածս ուրիշ  
բան չեմ :

### Յարութիւն և Համբարձումն

23 Մայիս :

Իսկ ֆրիստոսի յարութեան և յերկինս համ-  
բարձման մարմնովն զոր 'ի գերեզմանեն նորեն առաւ-  
ինչ խորհնելիքս ոչ զիտեմ : Եթէ բաւական վկայուն-  
բան հաստատալ գործ մի է՝ առելիք չունիմ : Ինչ  
պէս այն ամենայն տարօրինակ գործերն զորս պատ-  
մութիւնն կը յիշէ՝ և այսօր ընկալեալ էն յամե-  
նեցունց : Իսկ արդ ըստ աւետարանաց յարութեան  
աշ վկայք եզեն հինգհարիւրեն առելի մարդիկ՝ որ  
իսրեանց աշօք առօին զթիսուս կենդանի յետ մեռ-  
նելցին , իրենց ձեռազն չաշտիւցին , իր ձայնն ըուան-  
նան կերան և արրին ընդ նման , որպէս զի հաստա-  
տուիթ թէ ոչ մեռելագարք մի եր՝ և ոչ ուրուական :  
Իսկ համբարձման վկայք կացին ամենայն առա-  
գեալք՝ որք առօին զնա վերանալ 'ի յերկինս , և  
իրենց աշխին նորա եռեւ էր՝ մինչև որ բոլորունին  
աներևոյթ եզի :

Արդ այս յիշաւի կարգե գուրք ապրօբինակ գործերս՝ այնուագի ըստ ապացուցեալ կ'երեին որչափ պատմական աւանդութեամբ ուղղ հասած առար գործեր, և քրիստոնէական հաւատաց մասունք եղած են, և այսու անուամբ ընդունելի եղած են յԱնկ. զեցւաշ միջիարաւոր մարգիներէ. արդ իմ խնայր լինի որ եղնեմ ուրանամ այսուափ միջից և հաւատացելոց առջև այնոր սառւզութիւնն. և ինչպէս կարող եմ ցուցանել որ Համարիա չեն այլ նեն. գաւորութենէ յառաջ եկած կամ հաստատվեցրած կողմանէ պատրակ. Այս խնդիրս լուծելու մի միջյն միջոցն այն է որ ցուցանելու և թէ այս բաներս անկարելի են. ինչպէս որ շատերն գերբնական իրաց համար առնեն ըստ իս շատ թեթևամուռ. Թեամբ՝ յննել անգամ լուզգելով. այսու պատրաւակու որ գերբնական բան անկարելի է, և թէ իմաստակին զառանցանց և անդոյ հիւազաց վրայ խորհելու առնեն չունի: Այս կերպով խնդիրն մերժելն զբարին է: բայց իմաստակիական չե առնենին. որովհետեւ խնդրոյ տակ եղածն՝ ցուցուած կը համարի, և միոյն իր իրանութեամբն կ'որոշէ: Թէ այն իրն որ իրմէ բարձր և անկարելի է. և է այս բանա խօսութեան մեջ յիշուած այն իմաստակութիւնն որ ամի՞ որ ինչ ցուցանելի է:

Այսպէս Քրիստոնի յարութեան խնդրոյն մէջ ունին կը համարուին այն բազմաթիւ պայմաններն որ զայն կը հաստատէն, վասն զի կենցանի տեսել են զայն զոր մեռած և թազուած տեսել են: Ոնկարելութիւնն հաստատելու իրաւունք ունելու համար՝ նախ բացաարելու էր թէ կեանքն ու մանն ինչ են ոչ միոյն իրենց կերպարանքն և երեսութիւնն. այլ և իրենց գոյութեան և էութեան կողմաննէ: Ասի թէ մանն և զրկում կամ զազարումն ի կենաց. որովհեան միոյն շարժման տեղ միւսոյն անշարժու-

թիւնն կը յաջարգէ : Բայց այս կեզքբայ բացատրութիւնն մի և զբայութեանց վեցութենէն առեալ զոր միացն անգամ ոչ ընդունի՝ եթէ սակաւ մի առջեակ է համագոյից գիտութեանն : Վասն զի միունք առնենուրեք անգագարելի յաջորդութիւն մի կը տեսնէ կենաց և մահու . այնպէս որ մահն զայցութիւն մի կը վերցնէ այնոր աեզ ուրիշ մի կենացանցներու համար . և պողցես կեանքն մշամենապէս ՚ի մահուանէ յառաջ կուգայ : Արդեաց հակախառութիւնն կարէ լինիլ երկու իրաց մէջ որ միշտ ներգործութեան և հակագործութեան մէջ են , և որք յիրերաց յառաջ կուգան : Ապա ուրիշն մարմաց յարութեան կարծեաց մէջ ու միոյն անտեղութիւն չկայ՝ այլ մահուանց յընդհանուրու իրաց միոյն որ խորհիմ գրեթէ բնութեան որենիք մի է՝ ուր որ կեանք կայ , այնպէս որ ոգևոր կակք կեռան մանելու համար և մեռանին կելոյ համար . և կարեմք առլ թէ կենաց վարութեան մահուան գործագրութիւնն է , և մահն գուռն է կենաց :

Անտարակոյս ևս ալ կը տեսնեմ Քրիստոսի յարութեան մէջ տարօրինակ բան մի զոր եթէ կ'ուզես հրաշալիք աւապէ . վասն զի յիրաւի աշխարհին տավրական բնթացքին գուրս բան մի է , ուր մեռաւլք որ իրենց կեանքն կարուսել են՝ կարողութիւն չունին նորէն զայն առնկու : Հրաշից ինգիբոն ուրիշ անգամ պիտի լուսաբանեմ՝ որ ինձ ալ շատ անգամ մասնել տուած ու ատզնապած է : Հիմա ներկոյ ինգրոյս գառնալով . և մահն հոգւոյն ՚ի մարմաց բաժանուանն համարելով որոց միութեամբն լինի մարդ , կը հարցանեմ թէ արդեակ միջոց մի մայոյ որով բաժանեալ հոգին նորէն միանայ իր թողած մարմանցն հետ , այնպէս որ հոգին իր գործերն նորէն սկսի կենաց չըլանն նորէն գառնալով մարմանց մէջ : Եթէ այս բանս համարաւոր է՝ անտարակոյս

գերմանցից կային զօրութեամբ մի կարող է լինել՝ որ  
'ի նախնաւմ այս հոգիս այս մարմարյա հետ մաս-  
ցուցել էր' մարդո յարինելու համար։ Այդ ով կարէ  
յանդ զնել առելու թէ նա որ կարողութիւն ունի  
մարդ սահզնելու։ Կարողութիւնը շունի զայն վերաս-  
տեզնելու։ Եթէ նախախնամական պատճառ մի կայ  
այս բանին։ Կամ ուրանալու և զԱրառած արարին,  
կամ հանուչելու և թէ ունի կարողութիւն իր  
գործն նորոգելու։ Կամ թէ առ մի նորաստեզնե-  
լու։ Անտարակոյս այս վերընա տոքինեն զիւրին է։  
որովհետեւ տոժամանակ մի բաժնուածներն նորէն  
միացնել է միայն։ Այդ եթէ Քրիստոս Աստուած է։  
որպէս գաւանի Եկեղեցին, ոչ ապաքին աէր է կե-  
նաց և մահու։ Խնչ զարմանք ուրեմն որ խաչին վրայ  
հոգին աւանդելուն ետե՛ առ ՚ի հասուցանին զորո-  
տիս մարդկութեան, երեք օրեն ետքը նորէն կ'առնու  
զայն մարմարն։ զոր զգենուլ արժան համարել էր։  
Նախ իւր աստուածութիւնն բացայսայ ցուցանելու-  
համար, և յետոյ իւր ներկայութեանն և սիրոյն  
ցոյցերովն քաթալերելու և սրասապնդելու իւր աշ-  
կերաներն, և կատարեալ կերպով ուսուցանելու, և  
իւր խրասներովն պատրաստելու վճառ այն բարձր  
առաքելութեանն որում սահմանուած էին։

Խոկ վասն համբարձմանն ՚ի յերկինս տուարկելու-  
րան մի ցունիմ, եթէ իւրա և որ ինքն անտի իջած  
է՝ որպէս հաստատե զնոյն խորհուրդն մարդեզու-  
թեան զոր արդեն քննեցի և կարելութիւնն ընկա-  
ցոյ։ Յայտնի է որ Յիսուս Քրիստոս աէր և երկնի և  
երկրի, և ոչ ինչ կարդէ արգելուլ զա լորիւ ընդ  
անբաւ պետութիւն իւր, վասն զի իւր ամենակարս-  
զութիւնն ընդունելուն ետե՛ անտեզութիւն ընի  
այնոր գործադրութիւնն իրեն զբանալ։ Յայրմէ կող-  
մանէ՛ ինչպէս որ ասացի ստորգելու դործ մի է, և  
հետեւապէս պատմական վնայութեան վերաբերեալ

իր։ Ամեն առաքեալց առաջն նորայերեխնա եղնելն։ և  
Աւետարանն նոցա վկայութիւնն մէջ կը բերէ՛ զոր  
Եկեղեցին հաստատած է առանգութեամբ և վար-  
դապետութեամբ։

Եւ ինչ որ յառաջ առաջի՞ նոյնն հիմու այ առաջ-  
ոյս խորհրդական իրերս որպէս կարեցի կ'ընդունիմ՝  
առանց բացացոյտապէս հաւատալու։ Զգուշանամ  
զայն մերժելն, մանաւանգ թէ առելի հաւատա-  
լու կը յօժարիմ։ զամն զի՞ մոյ կողմանէ անտեզու-  
թիւն մի ոչ տեսանեմ ՚ի նոսա, և միւս կողմանէ  
ներբին կապակցութիւն մի կը նկատիմ, կամ թէ  
առաջ միաբանութիւն ընդ ոյլ քրիստոնէական  
խորհրդոց։ Ապա ուրիմն եթէ զայտափիկ հանգա-  
նակին մէջ արտասանեմ մկրտութեան առազանին  
զրայ՝ իմ խզնիս և մոացս հակառակ խօսք մի պիտի  
շնորհցեմ։

### Դաստաստան վերջին

ՀՀ Մայիս։

Հանգանակին առէ եթէ միքատոս յերեխնա վերա-  
նալին եռաւ։ ուր նոսաւ ընդ աջմէն Առառնծոյ առե-  
նակարոցի մարդկութեամբն զոր ֆառաւորեց յան-  
ձին բարում, ՚ի վախճանն զարոց և ՚ի յետնում  
առուր նորին պիտի զայ՝ ՚ի զատել զիննդանիս և  
զմռուեալս։ — Այս երկրորդ գալուստու այնձափ ա-  
ռելի շքեզ և ֆառաւոր պիտի լինի։ որըսափ որ խո-  
նարհ և նուսաս եց առաջին զալուստն։ Աւետա-  
րանն զերահրաշ նկարագրէ զայն։ Յիսուս պիտի  
Երեխ՝ ՚ի մէջ ամսոց՝ շուրջ պար առեալ բազմու-  
թեամբ հրեշտակաց։ և մարդկիկ ամենայն ազգաց և  
ամենայն գարուց պիտի երեխն առաջի երկնաւոր

տառենին : Այս առեն պիտի բաժանել զոդիս յայծեաց՝ առջիններն իւր աշխագովն կարգելով առ ՚ի մասնել ՚ի գառա, և վերջիններն իւր ձախակողմն առ ՚ի երթաւ ՚ի հոռըն յափառեական :

Աւետարանի այս վերջի գատաստանի նկարագրութեան մէջ երկու իրք զիս կը հիացնեն . առաջինն այն որոշ և բացայսոյ զուցուածքն վերջի գատաստանի մրայ իւր ամեն մանր պարագայներուն . մրայն կրօնքն այսպէս կարեն խռով, և կրօնից մէջ աշխայն քրիստոնեաթիւնն այսպէս իշխանութեամբ և որոշակի կը խռոի հանգերմեալ աշխարհի բրաչ մրայ, որ կարծես թէ մարգարեաւթիւն մի է : Իրաւ և որ ամեն ազգոց մէջ աշխատակութիւն կայ դատաստանի որ իւրաքանչիւր մարդոց համար պիտի աեւանուի յայս կենաց ելած ժամանակ, և ամենքա աշ կը միշեմք Մինավն : Հաազամանթռուն և խակուն որ գատասոր կը նուան առ գրան գժուիոց կամ Ելիսան գաշտաց : Արդարութեան գաղափարն այնքան նկատենին և մարդուս հոգուոյն որ եթէ այս աշխարհիս մէջ չէ կատարուած՝ կը համարի թէ ուրիշ աշխարհի մի մէջ հարցաւ պիտի յուրա մանու : Բայց ամենզի բական գատաստանի գաղափարն մրայն քրիստոնեաթեան մէջ գատանի, որով յուրա մի և վախ, ման պիտի լինի գարուց, գատաստան հանրական ըստ ամենայն նկատմանց, որ նորոգելով և հասանակով առանձնական գատաստանի վնիքներն որ իւրաքանչիւր մէջներն եաւ լինի, պիտի տարածուի նոյն առեն ամեն մարդոց մրայ աշ, և զամենայն ինչ պիտի ուզզէ ու շակէ :

Երիբորդ յոյժ հիանամ վարձատրութեան և գատաստարութեան զիսաւոր պատճառին մրայ . և անախ կ'իմանամ Աւետարանի վերացած հոգին՝ որ և սկզեւ : Այսու զի նորա զոյս Թրիստոս իւր հար օրհնեալներն կը կոչէ և իւր արքայութեան մէջ յա-

Քակողմն կացուցածէ՝ ոչ թէ ամենէն աւելի խօսա-  
տուներն հզօրներն և աշխարհի ու մեծամեծներն են,  
և ոչ իսկ նորա որ լեռներն փոխադրելու շաբ հա-  
ւառ ունեցան, կամ մարգարեւթեան և լեզուաց  
միրքովն Շնիացան, և ոչ նորա որ իրենց ունեցածն  
ազքատաց բաժնեցին, կամ իրենց կեանքն գրին առ-  
անափառութեան կամ սակա մարգկային պատճա-  
ռաց. ոչ, ոյլ իւր աջակողմն կը գնէ և առ ՚ի ժա-  
ռանզել զիտաս զայնոտիկ միոյն կ'ընդունի՝ որ յան-  
ձին աղքատաց իրեն ծառացեցին. այսինքն որ իր  
անուանն և սիրոյն համար զնոսա միրքտարեցին.  
վասն զի ասէ թէ ինչ որ ամենէն փռքրկան արարից  
ինձ արարից. Ապա այս խոսքերովս կը ծանուցանէ  
թէ յառաջ քան զամենայն սիրոյ գործերն են երե-  
նային պատկաց արժանի, և հշմարատապէս այսպի-  
սի գործերն այնպիսի են՝ զբրո մարդ. Ասունցոյ սի-  
րոյն ներշնչմամբն կը գործէ. և ոչ առ անապար-  
ծութեան և շահամիրութեան. կամ թէ տաեմք  
նշմարիս սկը ունեցովն բարեք կը գործէ առանց  
ինքնիմք մասնելու, մինչև իւր անձն ալ նուիրելով,  
անխոռն և միակ փափաքով ընդհանուր բարոց,  
ամեղերական բարոց որ է յԱսուած, և ինչն իսկ  
Ասուած. Ահաւասիկ այս է՝ որ Աւետարանի բա-  
րոյականն այնչափ կը բարձրացնէ և կը պայծառա-  
ցնէ. և միանգամայն այնչափ ազգու առնէ զայն.  
վասն զի իւր պատռերներովն ու նրատերովն  
բարձրագոյն կատարելութիւնն ուսուցած ժամա-  
նակ, և սիրոյ ամենէն գերազանց մասն որ է այլոց  
համար զինքն զահել. կը ցուցանէ միանգամայն իւ-  
րաբանյալ քրիստոնէի այնոր օրինակն յանձին  
Յիուսի Քրիստոսի. Եւ Յիուս Քրիստոս՝ որինակ  
ամենայն առաքինութեանց քրիստոնէին, և որ որ  
մի իւր բատուորն պիտի լինի վարձատրելու կամ  
պատժելու համար զինքն ըստ պահպանութեան

կամ զանցառութեան օրինաց. ինքն է գարձեալ նորա յուսոյն պատճառն և վախճանն, որովհեան վերջ նախան առարկայն և լրութե է իւր սիրոյն:

Հարկ է խոստավճակի որ իմաստափրաց ենթադրութեաններն և ներածութիւններն որչափ ալ հաստատ հրաժերուա և խոսանաց ամին: Խրաւ է որ նոցա ասածներն ալ բարոյական գիտակցութեան կամ ինչնի վրայ հաստատեալ են: որ արգարութիւնն պատիւթեալ և այնոր պարաւարութիւնն հաջակելով հետեւապէս ապարդիւն անդունելի և պատոյ արժանի կը համարի զայնոսիկ ոչք գիտութեամբ և կամ զեմ կը դործեն: Առկայն ամեն յանցաւորք այս աշխարհիս մեջ իրենց պատիմն ոչ ընդունին. ապա ուրեմն ուրիշ անջ պիտի գտնեն, որովհեան արգարութեան գեմ գործողն անպատճե շնորհ մեալ վասն զի արգարութիւնն աննախագրելի է: Առասի միոցն կը հետեւցնէ թէ ուրեմն այս աշխարհիքն անդին արգարութիւն մի կոյ: յորմէ մարդ շնորհ վախուսատապ, և որ իր մահուանեն եաւ համար պիտի պահանձն ինչ որ իր կենաց մեջ գործել է. և զինքն իր արգեանց ու ապարդեանց համեմատ պիտի վարձատը կամ պատճէ: Տայց ովք պիտի լինի գատաւորն, և առեանն ուր որպիսի պիտի լինին վարձն և պատճը: արգեաք ժամանակաւոր թէ մշանելնաւոր և անվախճան: Կայ արդեպ քաւութեան և մարրութեան տեղ մի այն հոգւոց համար՝ որ թէ և բարի դործել են՝ բայց միանգամայն մեղք ազտատած: Մեք իմաստաները այս խնդրոց ոչ մատենամք, և իրաւունք ալ ունիմք, որովհեան կերպիւ իւիք զայն չեմք կարօզ լուծանել: Առա հանգերձեալ աշխարհի իրեր են, և որովհեան ՚ի միոյ կողմանն մարդ մի ոչ նանաչեմք՝ որ հոն գնացած և եկած լիցին հոն եղածներն մեզ ծանուցանելու համար, և մեր մասց լուսովին ալ

շեմք կարող խելամռւս լինել, և 'ի միւս կողմանէ ալ որովհետև համազուած է մք որ ոչ անախ իւսնէ և մեզ հան Եղածն ուսուցանելու համար, խոհեմութիւնն կը համարիմք խօսին անգամ շառնել, որով հետև ինչ առելու է՝ ոյն ալ ու զիստ մք:

Սակայն կ'ուզեինք մեք ալ բան մի զիստել, և մեր խոհեմական լուսութիւնն մարդկանց միուրն և սիրան զոհ ոչ առնե՛ որք փարբ 'ի շատե ոյլ իմն աշխարհի Նախազգացումն ունելով կ'ուզեն զիստել թէ մեռնելին եւս ուր պիտի երթան, և բնչպես պիտի երթան, որովհետև որ մի հարկաւ երթալու է: Այսոր համար կը սախառութիւնք խօսուցանելու որ իմաստափրութիւնն մարդկութեան իզներն ոչ յագեցուցանէ, և ժողովրդոց բարըցական պիտույքն ալ ոչ լցնեն: ուստի իմաստափրութեան քովին եթէ չհամարիմք ևս 'ի մեր քան զնա, վասն զի ես ոչ երբեք ընկառնիմ առել 'ի վայր քան զնա որպես ուսնենք առեն, կրոնիք մի հարկաւոր է՝ իւր իրաւ կամ սուս յայտնութիւններովն, իւր խորհուրդներովն և պատուերներով յաստուածութենէ հրամայուած կամ 'ի մարդկանէ հայրուած, վերթապէս իւր ամեն քերթողական շքեզութիւններովն և երաժշտութեամբ և առեն առասկ հնաբըններով ժողովրդոց միուրն զարթուցանելու համար, և իրենց մուակ կարուցութեան համեմատ զիրենք լուսաւմբելու համար, որպէս զի վարձատրութեանց իզնովն և պատժոց երկիւղիւ բարին գորենելու յարդորութիւն: Մանաւանդ որ Պատուն ամենուն վեհագոյն վարժապէսն, և Կիկերոն որ ամենուն ասացածներն կը կրկնէ: հանգերեն ալ աշխարհի իրեւրն միշտն առեն առեն թէ և Մեք այս Նիւթոց միուր սայդ բան մի պիտի չկարեմք գիստել մինչեւ որ Աստուած մի չգոյն զայն մեզ ուսուցանելու համար ։ Այս բազմաւել բարողնալ և գրեթէ 'ի Պատուն աւխափւր:

ինդրեալ Աստուածն՝ սուսպութեամբ ուսուցանէ.  
Ըստ համար մարդկութեան զերինային իրս. արդեռ  
եկած է՝ որպէս հաստատէ Եկեղեցին. և արդեռ  
այն է՝ զոր պաշտէ ընդ անուամբ Յիսուսի Քրիս-  
տոսի. Բայն մարդկութեալ. Որդի Աստուածոյ և Աս-  
տուած մարդացեալ: Խնդիրն այս է:

### Դատաստան վերջին (շարայարութիւն)

1 Յունիս:

Ըստ քրիստոնէական վարդապետութեան՝ մա-  
հուանեկ ետև երկու գատասասան կայ զայլիք. մին-  
առանձնական որում պիտի ներկայանայ իւրա-  
քանչիւր հոգի այս աշխարհէւ եկեղեւն ետև՝ երբ  
հոս տեղի փորձի ժամանակին առարտէ. և այս գա-  
տասասանաւ. մասն նոր աշխարհն մէջ իւր տեղին  
պիտի որոշուի. որովհետեւ երկիրս թողին ետև  
հարկ է որ տեղ մի երթայ. և այս տեղս պիտի որո-  
շուի իր վարուց առառածային օրինաց հետ ունե-  
ցած համաձայնութենէն: Միւս գատասասանն որ է  
ընդհանրական և որ զառաբինն պիտի հաստատէ և  
ըստցնէ. ստեղծագործութեան մէջ ամեզերական  
կարգն հաստատելու համար է, որ ժամանակի պա-  
րունակն փակելով յարիտեական ազգայութեանն  
պիտի ուկսի. բարինիրն անքակտելի կերպով միանա.  
բոլ ընդ Աստուածոյ՝ որում ամրազապէս իրենք զի-  
րենք նուիրել էին մենելին յառաջ. և չարերն որ  
մինչև մերժի իւրեց թշնամութեան մէջ նացին՝ ու-  
լորովին շարին տալով ինքզինքնին՝ որում հետ սրբի  
մասք զանագրեցան. և ոչ իսկ իզմ ունելով անտի  
բաժնուելու: Իսկ այն հոգիք որ թէ և սիրով ընդ  
Աստուածոյ միացեալ էին, բայց իրենց զեւ ոչ բաւեալ

և ջնջեալ յանցանքն արգելոց լինեին զինքն տեսն.  
լու երջանկութեանն ժամանել նոցա ալ պատճց  
ժամանակն լրացեալ պիտի լինի կամ ասառածային  
դժութեամբ իրենց պիտի թողուի: Որով տիեզե-  
րաց մէջ երկու բանակ միայն պիտի մնան: Յաւի-  
տեհականին բանակն որ յազդող պիտի լինի իւր  
որդւովքն զօր պիտի լեցնէ իւր կենաքն և ժառագը և  
երանութեամբ, և յորում մահն պիտի ընկզմի՝ ի  
յազդութենեն, որովհետեւ ամենայն ինչ որ մահ-  
կանացու և ապականացու եր՝ զանապահանութիւն  
և զանմահութիւն պիտի զգենու: և երկրորդն ալ  
բանակ մանաւանդ թէ անգունդն Պարին յազդա-  
հարեալ և շըթայակատ՝ իւր ամեն արբանեակն.  
բայն անկարոզ եղեալ, և այլ ևս ուրիշի լինաւ չկա-  
րելով առնել՝ ինքզինքն պիտի խածառէ և ուտէ:

Այս ամեն բանիս առարկութիւն լունիմ առն.  
լու, վասն զի թէ և այսպէս լինելիքն սույգ ոչ զի-  
տեմ, առկայն այս վարկածներս իրեն անտեղութիւն  
չեմ կարող մերժել, և ոչ իսկ գուշակուած գործերն  
անկարելի եր համարիմ: Մանաւանդ որ եթէ մեր-  
ժէմ ևս և ուրանամ այնոր աեզն ուրիշ բան մի չեմ  
կարող առհմանել:

Խմաստասիրութիւնն հոգւոց՝ աշխարհէս անզին  
ունեցած վիճակին վրաց ոչ մասնէ, և միոց մի չունի  
զիտելու թէ արգելոց ինչ լինին. և որովհետեւ այս  
բանս զիտելին ամենան հարկաւոր և վասն զի իրենց  
ապագայն անաբի կախուած է, ուստի պէտք չէ զար-  
մանամբ որ մարդիկ այս պատակար տեղեկութիւն-  
ներս տռնլոց համար այլոց կը զիմնե քան թէ մեզ.  
ուստի կրօնից կը հարցանեն՝ որ կը համարի թէ  
ինքն յԱրտութոց ընդունած է այն բաներու զիտու-  
թիւնն ի մեռն յայտնութեան: Այսոր ալ բան մի  
առնելիք չունիմ, եթէ կարտոցն ցուցանել յայտնու-  
թիւն ասացելոյն Տէմարտութիւնն ու գործն՝ որովես

Ակեղեցին կը հաստատէ, որ ուրիշ գործոց պէս  
գործ մի լինելով պատմական քննադատութեան կը  
վերաբերի՝ անկողմասնէր կերպով ցուցանելու և  
հաստատելու՝ եթէ բաւականապէս ապացուցուի  
առաջ թէ ոչ մերժուի։ Բայց գատաբնեսութիւնն  
իրաւունք լուսնի դատն և քննութիւնն ազ միանգա-  
մայն մերժելու պատճառաւնք թերելով թէ իրն ան-  
հարին է, ինչպէս որ յանդկնին ունանք առելու յա-  
ռուրու մեր վառն զի այս պարզութիւն արգարութիւնն  
զլանալ է՝ որ արգարասնէր մարգու գործ չէ։

Համ ուրիշ գժուարին խնդիր մ' ալ ընդառաջ  
ելանէ մեզ՝ զոր ոչ զիտում ինչպէս ըռածեմ, վասն  
զի այն ալ հանգերծեալ աշխարհի իր մի է, ոչսինքն  
թէ ինչ պիտիկի մէջ գտանի հոգին՝ մահուամբ՝ ՚ի  
մարմնոց բաժնուակէն եռեւ, և ինչ անսակ գոյութիւն  
ունի՝ գործարանաւոր մասնէն մերկանալէն եաւ՝  
որոյ մինորդաւն կը զդար և գործէր այս աշխարհիս  
և ներկայ կենացս մէջ։ Թերեւս ասացեն ունանք թէ  
մարմին յունադ ոգուց պիտիկին մէջ կը մասն՝ որով  
և աւելի արձակ և ազատ՝ որովհետեւ ՚ի մարմնոց  
կապանաց և ծանրութեանց ազատալը է, որ անտա-  
րակոյս շատ անզամ իրեն նեղութիւն և արգելք էն։  
Այս պատասխանս միայն պղատնականաց թերանն  
կը յարմարի որ բոլոր մարդ իւր միտքն միայն կը  
համարին, կամ ստոյիկեանց որ կամաց միայ կը  
հաստատէն մարդկութիւնն։ ուստի այս երկու գաս  
թմասաւախրաց համար ալ՝ մասն ազատաւթիւնն մի է՝  
որ բանափն գռներն կը բանայ, շվեյշներն կը խոր-  
տակէ, և անարդ գերութենէ զմարդ կ'ազատէ։

Դժբաղջարար մարդկութիւն ասացած գ այս վար-  
դապետութեանց հասկացածին պէս չէ։ և ոչ որ  
միտքն զրած է թէ մարմինն առ մասնակէնց բանու  
մի է կամ պատահական արգելք ինչ։ այլ ընդհակա-  
ռակն լրացուցիչ մասն մարդոյ՝ որոյ անմն յերկուց

Էական տարերաց բազկացեալ է՝ որով կ'որոշուի  
նաև՝ ՚ի պարզ ոգեզինաց։ Աստի յառաջ գայ որ մահն՝  
կենաք միացեալ այս երկու մասերն բաժնելով զմարդ-  
կութիւնն կը կրնառէ, որով ոգեզին մասն կ'երթայ  
ոգւոց օֆենանն, և նիսթական մասն գառնաց՝ ՚ի հոգ  
ուստի սաեղծաւ։ Աը հետեւ ուրեմն որ հոգին այս  
աշխարհն եւնելով ինչ որ ալ լիցի իրեն համար  
սահմանեալ պինակն, ամբողջ մարդ չէ, այլ թեկոր  
մարդոց, և կարուտ է իր լրացուցիչ մասն գանձելու՝  
որպէս զի իր բնութեան կատարելութեանն հաս-  
նի։ աստի յառաջ գայ իրեն համար գտատարկու-  
թիւն և զրկում մի՝ զոր թէ և թերութիւն ալ  
չկացեմ։ սակայն զոնէ անկատարութիւն մի է իր  
գոյութեան ամբողջութեանն։

Որդ որովհետեւ սասց է որ մարդկացին բնու-  
թիւնն էականապէս բազկացեալ է՝ ՚ի հոգւոյ և ՚ի  
մարմեց, ապա ուրեմն հոգւոյն համար մեծ կո-  
րուստ է մահուամի յիւր մարմնոյն մերկանալն, և  
այսոր համար է որ մարդիկ բնազդաբար մեծ վախ  
ունեին՝ ՚ի մահուամի՝ որպէս թէ այնու պիտի ոչնչա-  
նացին։ Ապա ուրեմն ՚ի մարմնոց բաժանեալ հոգին՝  
յաւիսնան այնպէս չէ կարող նաև՝ կատարելու-  
թեան և երանութեան ժամանելու համար որպէս և  
ըզմաց, և հետեւապէս յիւրաւի այս երանութեան  
համանելու համար՝ հարկ է որ իրմէ վերցուած էա-  
կան մասն զարձեալ որ մի իրեն արուեի, կամ թէ  
առեմբ մարդու նորեն ամբողջանաց իր բնութեան  
լրութեամբն։ Առ այս անէ զմեզ հարկաւ ուզիզ  
բանախառանաթիւնն մարդկութեան յերկուց բնու-  
թեանց յօրինեալ լինելուն սկիզբն ընդունելին էաւ։  
կամ զմբութիւնն մարդկային անձին՝ յերկուց տարե-  
րաց շաղկապեալ, որոց երկուքն ալ անտարակոյա  
հաւատարագն, և կարեռը չեն իւր կենացն՝ բայց ամ-  
բողջութեան լրացուցիչ մասերն են։

Հոռ տեղու համարաթեամբ կը տեսնեմ որ իմ իմաս-  
տասիրութիւնս՝ քրիստոնէական կրօնից հետ կը  
համաձայնի, որ ուսուցանէ մարդկապին բնութեան  
եական երկուորութիւնն. Այսպէս որ 'ի լրման գա-  
րուց և ժամանակաց' յորում քրիստոնէական հա-  
ւատոց համեմատ' ամենայն ինչ պիտի վերանորոգի .  
և 'ի կարգի պիտի մտնե՛ իրենց Արարյն մտաց հա-  
մեմատ, հոգիք ալ պիտի ընդունին իրենց մեակա-  
կան մարդուն առ 'ի ելանել 'ի գառասառան վեր-  
ջին . և հոն պիտի վարձաւրութն կամ պատմուին  
իրենց գոյութեան երկու մասովն աշ՝ որք աշխարհիս  
մէջ իրարու գործակից եզեն բարւոց և շարի իրենց  
անձնաւորական միութեամբն: Այս է մարմաց յա-  
րութեան վարդապէտութիւնն որոց կարելութիւնն  
և որպիսութիւնն յետոյ պիտի քննեմք:

Պայ ո ինչ հաստատելին եռու՝ հիմա կը հարցանեմ  
թե յիւրեանց մարմանն բաժանեալ հոգիներն ինչ  
պես կ'ասպին հանգերձեալ աշխարհի երեք վեճա-  
կաց մէջ յորու կարեն զատկիւ, այսինքն յերկինս  
ընդ Աստութց, 'ի գժուիս ընդ սատանայի, և վեր-  
ջապէս ընդ մէջ երկինց և գժուիոց այն քաւութեան  
և վերցին մարդութեան տեղոն զոր Եկեղեցին պա-  
րա անուանեն: և զոր խելքն ալ շնչարէ մերժել կամ  
ընդունին: եթէ կը հաստաց հանգերձեալ աշ-  
խարհին մէջ առափնանարար և յառաջնեթաց կա-  
տարելութեան մի:

Եթէ՝ որպէս ուսուցանէ Եկեղեցին, հոգին բոլորո-  
վին մարդուան լինելուն և իւր ազատութեան լիու-  
թեամբն ինք զինք Աստութց տուած լինելուն համար՝  
մտանե՛ 'ի մասնակցութիւն աստութային կենաց՝  
միջնորդութեամբ Յիսուսի Քրիստոսի՝ որ իւր մարդ-  
կութիւնն հոգւով և մարմանով յերկինս վերացոյց՝  
զնա իւր աստուածութեան հետ անխցելի կապելով,  
ուրիշ ապահովագրէս կարենք առել թե այնպիսի

հոգւոյ բան մի ոչ պակասի . որովհետեւ գերազոյն ըարւոյն մէջ կ'ապրի և մասնակից է վառաց և յաւերժական երանութեանն Աստուծոյ : Եւ սակայն՝ թէ և նուազութիւն մի շիմանայ, արգելոք իրականապես բան մի պակաս չէ իրեն, որովհետեւ իւր նշանորիտ ընութիւնն ամրող չէ՝ քանի որ իւր մարդին իրեն տրուած չէ : Եւ ըստ քրիստոնէական իսկ վարդապետութեան այսպէս չեմք կարող արգելոք հաւատալ, որովհետեւ նու ալ կ'ուսուցանէ՝ թէ մարմնոյ յարութիւնն ալ այն առեն պիտի լինի՝ երբ լրումն լինելոց և նորա վարձատրութեան : Ո Յունէ Խորեն հոգեց, առև Պաւլոս առաքեալ, յանէ առաջ ազականակեան, յանէ պրոտէոլիք : Երբ նորեն այն վերածնեալ մարմնոյն հետ միանայ՝ որ իրեն սեպհական և յատուկ պիտի լինի, ոչ այսպէսն առելի փառք պիտի ունենայ իւր մարմնոյն ալ վառաւորութեամբն, և իւր արգեն մեծ երջանկութիւնն առելի պիտի չաւելինայ իւր այլակերպեալ մարմնոյն անխառն ուրախութեամբ : Ինձ այս բանս անտարակոյս կ'երևի, և իրեն իմաստասէր կարծեմ թէ իրաւունք ունիմ զայն հաստատելու, սակայն զեւ բաւական քրիստոնեայ և աստուածաբան չեմ որ համարիմ թէ Եկեղեցին ալ այս կարծեացս վրայ է :

Դժոխոց մէջ ալ որ անվախճան տանջանաց տեղ է, ի մարմնոյ անջանելոյ հոգիք մարդկան՝ Աստուծոյ թշնամեաց տանջանացն մասնակից են՝ իրենց յանցանաց ծանրութեան համեմատ . վասն զի պատիք՝ մեզաց համեմատ լինել պէտք լինելուն՝ ամենէն առելի չարագործ մարդն ալ՝ զինքն փարձողին և ապստամբեցնողին շաբ պիտի չզգառժուի . վասն զի չարեաց գտիչ մարդն չէ, այլ առ ակարութեան և փորձութեամբ այնոր մասնակից եղած է, և թէ պէտը զի գումար ամենայն զգնութեանց տատուածային գիտութեան՝ այնոր մէջ յարակել է պինը ի մահ .

և շարի հեղինակին նմանել է, տակայն որովհետեւ  
սկզբնաւորութիւնն յիւրձե չէ՝ ապս պատեց մէջ  
ալ երկրորդ կարգն պիտի ունենայ՝ որպէս և յան-  
ցանաց մէջ։ Առկայն չկարեմ արդեզ առել՝ թէ  
քանի որ իւր մարտին իրեն արուած չէ՝ իր պա-  
տիժն ալ անկատար է, և արգարութիւնն բովան-  
դակառէս տեղն երթալու համար հարկ է որ իր  
մարտին ալ մասնակից լիցի տանջանաց հոգւոյն՝ որ  
նորա արրանեակն և մեզանկիցն եղած եր շարն  
գործելու։ Ապս ուրեմն իր ցաւերն պիտի առենան՝  
երբ գատաստանի համար յարութիւն առած մար-  
մունքն հոն գառնայ՝ ինչպէս որ երանելեաց ուրա-  
խութիւնն պիտի առանելու՝ մասնակցութեամբ փա-  
ռաւորեալ մարմարն յաւիտնական երանութեան։  
Այս առաջածս ալ գարմեալ իմաստափրական կար-  
ծիք մի է՝ զոր ոչ համարժակիմ Եկեղեցւոյ ալ հա-  
մարելու՝ որոյ անհաւան և անուս անդամներէն և մ  
տակաւին։

Ալ մոյ քաւարանի հոգւոց մինակն՝ որոյ մէջ  
զժուարութիւն մի ոչ աեւանեմ, որովհետեւ նոքա  
անափ ելնելուուն պէս լրւաց օժեն անն պիտի մասնեն, և  
մերժի գատաստանին ներկայանալու առենինին իրենց  
մարտին պիտի զգենուն, որով և իրենց մինակն ալ  
նոյն առեն՝ երանելեաց հետ հաւատար պիտի լինի՝  
իրենց քաւութեամբն աստուածային արգարու-  
թիւնն հատուցած լինելով, վասն զի մարդուական  
հուրն արդէն իրենց մացած երկրաւոր ազնն մա-  
քրել զուել է։ Առկայն այսոր մէջ ալ մինանեալ և  
երկրորդական ինդիք մի կայ՝ այս հոգւոց մէջ թա-  
փանցող և մաքրող կրակին թնութեանն վրոյ՝ որոյ  
համար հաւատականապէս յետոյ պիտի խօսիմք։

Յիրուի ևս բնձ ուրախութիւնն մի եր զգամ՝ որ  
այս անգամ ինքզինքս համաձայն կը գտնեմ քրիս-  
տոնէական վարդապետութեան հետ՝ զէթ որըտի

որ զայն կ'ըմբռնեմ : Եւ ինձ մեծ միսիթարութիւն՝  
մանաւանդ թէ հաստատութիւն մի է՝ որ իմաս-  
տասիրութեամբ կարեմ արդարացնել և հաստատել  
զայն ինչ՝ զոր ուսուցանել քրիստոնեոց յայտնու-  
թիւն ասացեալն՝ որ յաշ Եկեղեցւոյ ուրիշ բան չէ՝  
բայց եթէ նոյն իսկ աստանեալին խօսին :

Աղջիկ մի որ կարմեղական կուսան  
կուզէ լինել

2 Յանիս :

Երեկ ծանրակշիռ բարեկամի մի հետ խօսակցու-  
թիւն մի ունեցայ որ յետոյ ինձ անհանգատութիւնն  
պատճառեց . և խզմի վրգավման պիս բան մի իմա-  
ցայ : Իրաւ ես իմ գիտցածու ասացի՛ բայց վախեմ  
որ շատ կրիսք խօսեցայ , որովհետեւ իր հետ խօսած  
ժամանակու ես ինքզինքս կը մտածեի , և եթէ նմա-  
հանգիստածն ինձ ալ պատահի ինչ պիտի առնեմ ա-  
սելով երեակայութեամբ իմացած ցաւովս տար-  
նապի մեջ եի :

Այս բարեկամն եկու ինձ գողովարար իմա-  
ցուց՝ որ իւր զաւակն քանի ասքուան որիորդ կ'ու-  
զեր կուսասատան մտնել՝ այն ալ խօսակրօն վանքե-  
րեն մին : Իւր ամեւսինն որ թէ և բարեպաշտ կին մի  
է՝ ամենեին անմիտթար վիճակի մեջ է . իսկ ինքն  
ըոլորովին յուսահատեալ : Սակայն որովհետեւ ին-  
չացի և խզմանակրաւոր մարդ է , թէ ազեւ և քան զիս  
առելի կաթողիկեաց չէ , առանց ինձ խորհուրդ հար-  
ցանելու՝ չէ ուզած զաւեկն պատասխան առզ ուս-  
տի երկու ժամ այս նիսթոյս վրայ վիճնչցնիք : Այ-  
սեցնիք առելս սիսալ խօսիք է , որովհետեւ արդեն

երկուքու ալ ոչ ասելու հաւանած էինք, և կարծես  
թէ ուրիշ բան չէինք առներ՝ եթէ ոչ թէ արդեօք  
որերնին առելի բան մի կարենինք գանել ասելու այս  
ազդեան տարագետ փափաքին գեմ որ ինչամուս  
կրթութիւն մի առած է՝ քաջ ուսեալ և հանցյական  
հանձնարայ տէր, զեզեցկագեմ ու բարեբարայ և  
բաւական սժիտ ալ ունի, այնպէս որ եթէ աշխարհ  
մանել բարեբազդ կարէ լինել և գերգաստանի բարի  
մայր մի համարուիլ, Եւ ահա յանկարծ միտքն գրել  
և կուսան լինել որ և ասել բազոր իւր կեանքն մաքէ  
շանցած զրկանոց զատապարանէ, զոր անշաւշտ պի.  
որ կարծեցնէ պահօք մեռելութեամբ և ապաշխա-  
րութեամբ:

Ոչ հասկանամբ թէ ուստի այս մասնութիւնն  
իր ուզեղն մուել է՝ որ մինչև հիմա հանգիստ վիճակի  
մի քաղցրութեան համեն միայն առած է՝ իւր ծնո-  
զաց սիրոյն և փափուկ խնամոց մը որ անենոյն  
կերպով լանցցել են զինքն չվատացնելու։ Իրաւ և  
որ իւր առաջին հազարդութեան ժամանակ՝ քանի մի  
ասրի կուսաստան մի գրել են զինքն . որովհետեւ  
բարեկամն որպատ որ նու պէս իմաստասեր ալ է և  
կրօնից պարտքերն ոչ կատարէ՝ որում ոչ հաւա-  
տամբ, առկայն կ'ուզէ որ իինն ու զաւակն հաւատոց  
տէր լինին և կրօնից պարտքերն ալ կատարեն, և  
այս բան իրենց առարինութեան և երթանկութեան  
հաստատագոյն երաշխաւորութիւն կը սեպէ։ Միայն  
կ'ուզէր որ այս ալ չափով՝ մի լիցի . այնչափ միայն՝  
որպատ պէտք էր զինքնց բարեկարգելու համար,  
և չէ թէ չափազանցն երթալու համար՝ ուր հասած  
կը տեսնէ այսօր իւր զաւակն։ Դժբաղդաբար որափ  
զգածմունքն չափաւորել մեռքերնիս չէ և զայնոսիկ  
բանեցնելը ալ չատ գժուար է։ Հիմա իր ուզանէն  
առելի ազդիկն բարեպաշտ եղել է, և զրեթէ կը  
չաւի որ ինքն ալ այս բանիս պատճառ տռել է։

Այս բանիս մեր զեղ համազելով՝ տեսակ տեսակ խօսքերով հաստատեցինք թէ կրօնաւորական կեսարը բնութեան գեմ է և բնութիւնն բանաբարել է, և թէ կաթողիկէ Եկեղեցին՝ որ ամեն բանի նկատմամբ այնչափ խռնեմ և իմաստուն է՝ այս նիւթոյս մէջ անգիր ծայրն անցնելով ինքզինք աշխարհիս ատելի առնէ : Այս թէպէս բողոքականութիւնն ոչ ախորժիմք՝ որ առաւելի իմաստափրութիւնն կ'երեսի մեղ քան թէ կրօնք, սակայն իրեն յայս մասին իրաւունք կուտայինք : Հիմա հարկաւոր կը համարիմ մեր զբանաւոր առարկութիւններն նորեն քննութեան տակ ձգեց, որպէս զի հանդարտութեամբ կը լուսավ զնուա և առելի խորին կ'երպով համազութիմ . վասն զի թէպէս շատ եռանգետմբ խօսեցայ այս նիւթոյս վրայ՝ սակայն նոյն խոկ այս եռանգս զիս անսառւգութեան մէջ ձգեց, և ինձ առրոտմբ բայց իրական անհանգատութիւնն մի տուաւ՝ որոյ գեմ չեմ կարող զնել և կ'ուզեմ մեռքին ազատիլ :

Ընդհանրապէս վանքերու մէջ վարուած կրօնաւորական կեանքն՝ ինձ կ'երեսի թէ մարդկային բնութեան գեմ բանաբարութիւն է՝ որ զայն անտանելի սպարտաւորութեանց ներքեւ կը մնչել՝ մարդկութեան նորատակին գեմ զայն վրան ծանրացնելով, և սարսափելի ուխտերով զայն կաշկանգելով : Մարդկային կարողութիւնն որ իր եռանգետման մէջ բանաւոր և ազատ է՝ վանքերու մէջ առասկ մի հոգւոյ և մարմայ գերութեան կը գատապարատուի . գերութիւն կամաց և մասց ուխտիւ հասզանգութեան, գերութիւն մարմայ և իւր բոլոր կարողութեանց՝ ուխտիւք ողջախոհաւթեան և ազբատութեան : Իրաւ և որ ուխտելու համար բանագատութիւն չկայ . և ամեն մարդ կամաւ առնէ զայն երկայն վորժառութեան մասնակի եան, որով գործադրութեամբ

աշ կարտացեկ Շահնշախը պարզուելուս կանոններն, և  
իւր կարողութեան և կամացն ալ փորձ լինել: Բայց  
սավարարար նորբնեայութիւնն պատահեկանթեան  
ժամանակ կը կատարուի: և այս հասակին մէջ մարդ  
ամեն բանի ալ եռանգեամբ մեռք կը զարնէ: և  
սիրոն ալ յաւիտենական երանութիւնն մի սահնա-  
լու փափարով ցուած է: և այս հասակին մէջ իւր  
ամեն յօժարութիւններն և իզներն մանաւանդ  
կանաց որտին մէջ ուրիշ բան չեն բայց եթէ անք  
նուիրումն և զո՞: Արևակայութիւնն ալ այլ առելի  
այս եռանգս կը սորրուի: և Շափով ու մզմանք  
այնպիսի կենաց մեռք կը զարնէ մարդ և նոքզնչք կը  
պարտաւորի: զո՞ր Երկնից գուռն կը համարի: որ  
յետոյ բանի մի տարւոյ փորձերն են: թերեւ  
քաւարան մի գանձոյ: ուստի ելնելն գծուար է:  
վասն զի ուխտելին են: աշխարհը գառնալն գիւրին  
չե: կարծես թէ անընդիլ և մեծագու նշան մի կը  
մնայ մարդու մրցոյ: որպէս թէ ուրացութեան  
կամ ուխտագրժութեան յանցանք գործած լիներ:

Ոչ ուրանամ որ վանք մուսնելն ազատ գործ մի  
է: ասկայն կարեմք առել որ այսպիսի ծանր որոշո-  
գութիւն մի առնելու համար: որ մարդուս բոլոր  
կեանքն կը սահմանէ: առելի հաստատ և յօւսաւոր  
կամք պէտք է: որպէս զի գիտացել թէ ինչ բանի կը  
պարտաւորի: որում կարծեմ թէ բաւական երաշ-  
խաւորութիւն չկարէ գտանիլ: Եւ առելի ալ ծան-  
րագոյն է որ անտի ելնել ալ ոչ լինի: գունէ մինչև  
ուխտից պայմանագութեան լրանալուն առենքն: և թէ  
որ ուխտն մշանվենաւոր է: մինչև յօւսն իսկ: որով  
հազին կը վասկուի բանախ մի մէջ որոյ գրան առնե-  
թաղլու է այս աշխարհիս բոլոր յօյն:

Արդ ինչու մարդ այս կերպով ինքզնչք պարա-  
ւանգէ: Երբ ոչ ոք 'ի մէնջ տէր և ապագային և չկա-  
րէ պատասխանատու լինել ոչ իր յօժարութեանց

և ոչ պարագայից։ Խնդրե կենաց հանապարհն ինք  
իւր առթե փակէ, և կամուսորապէս արգելը զնէ  
այն ամեն միջոցներուն որ առաւել գործունեաց և  
երթանիկ առնեն զիետնօ։ Աւ գարձեալ ինչ բանի կը  
պարտաւորէ մարդ ինք զինքն, բայց եթէ այնպիսի  
բաներու որ բալորմին հակառակ են մարդկային  
բնութեան, այսինքն ամենուրեկը և հանապազ հնաւ,  
զանդիլ մարդկային կամաց ընազդական հակամի,  
առնեթեան զէմ՝ որ միշտ հրամայել կ'ուզէ, հպա-  
տակիլ կարգաց՝ զորս ինքն չէ յօրինած՝ գատելու  
ևս իրաւունք չունելով, մինչդեռ ամենայն ոք իւր  
անձին հնազանդիլ կ'ուզէ, կամ զուն այն բանին որ  
իրեն բանաւոր կ'երեւի։ Մանաւանդ որ այս կարգաց  
կանոնաց մէջ աղ շատ կարճամիտ և նեղացուցիւ բա-  
ներ կան, որոց վրայ առելլուկու և՝ զնասա պահել  
տալու համար սահմանուած մեծաւորաց քիւ-  
հանութիւններն և չարակամութիւններն։ Մի թէ  
տղատ և բանաւոր էակին մի արժանաւոր միջմակ և  
այս, որ միշտ պատրաստ պիտի լինի իրեն բարի  
երեցանին ձեռք զարնել, որովհետեւ անսահման  
յառաջադիմութիւնն աղ իրեն համար ինքնանին  
պեսք մի է։ Խակ վանդերու մէջ կամքն չորս պա-  
տերու մէջ փակուած, և անողոքելի կանոննելք սահ-  
մանեալ փոքրիկ սենեանիններու մէջ պաշարուած՝ ա-  
մեն որ կը ստիպուի սովորութեամբ եզաւ գործ մի  
կառարելու, թէ այն և նոր գաղափարը մ՝ աղ ու-  
նենաց մասց մէջ, կամ առելի լաւ բան մի գործելու  
առաւելին և յոյս։ Սիրաւի այս ուրիշ բան ա-  
ռել չէ՝ բայց եթէ մարդկային ազատութիւնն չնշել  
նուանել և նուաստացնել։ Մարդ պէտք է որ միշտ  
ինքն իւր անձին տէր լինի, և սուաց անձնասպան  
լինելու շնորհ սահրացնել յանձնել իւր հաւանու-  
թիւնն և իւր կարողութիւնն։

Բայց կրօնաւորական կեանքն ոչ միայն զերի առ-

նէ զմարդ բացարձակ հետզանգութեան լեռնին՝ այլ  
և նորա մարմինն և հոգին կրծառէ՝ պարտաւորե-  
լով զնա՝ ի կատարեալ ժուռեկալութիւն ողջախո-  
հութեան ուստ ասացելով։ Տարակոյս լիոյ որ  
ամեն ողջախո մարդ՝ որ իւր արժանապատուու-  
թիւնն հանաչէ՝ համազուած է որ հոգին զմարմինն  
կառավարելու է, և մանաւանդ նորա անկարգ ա-  
խորժակներն անձահարելու է, ուստի թէ յա-  
մունութեան և թէ արտաքոյ այնր ողջախոհու-  
թիւնն իւր առաքինութեանց մին լինելու է։ Բայց  
թուութեան անդիմազարձ հարիւն և որաին յօժա-  
րութենէն բացարձակապէս զնա զրկէլ ուղղէն՝ մի  
թէ իւր թուութիւնն եղծանել և զինըն մարդկու-  
թենէն հանել չէ։ Այս օրունիւակ մարդկային սեպ  
անունն՝ այնոր վերաբերեալ հակամասութիւննե-  
րէն յառաջ կուգայ, այս հակամասութիւններու ըր-  
հարարելոն՝ իրենց առարկային զիրենք զրկելով և  
անհամաներն ընկանելով, մարդկութեան բազմանա-  
լուն արդեւք դնել չէ։

Այս ուրեմն այս ողջախոհութեան ուստ մարդ-  
կութիւնն ապանեող ոճիր մի է, ազգասպանութիւն  
և և վախճանն զազչո և զգերգաստան Ծիփը է։  
Ուստի նորա որ այս անմիտ ժուռեկալութեան կը  
գատապարտեն զիրենք կամ զուրիշներն ոչ մրցյա-  
նոր ընդունած կապահքով իրենց սեպհական ընտա-  
նիքէն կ'անջատին այլ և նոր զերգաստաններ կազ-  
մելու կարողութենէն ու վշյելքէն իրենց զիրենց  
և զուրիշներն ալ կը զրկեն, և իրենց գոյութիւնն  
անպառզ առնեն։ Ուստի ինչ կը հանգիստ աստի-  
բայց եթէ այս որ անխանեմ ուխաներնին շկարե-  
լով կատարել՝ որոց գէմ իրենց խելքն և սիրան  
կը բողոքեն, և շգամենելով յանձինս զկարեոր  
ոյժ խոռացածնին կատարելու՝ բանի ծռած սամա-  
որ մի չէ որ մի կը շտկի, և թուութեան ամենէն

հզոր բնազդմաւնքն զիրենք դրեթե յակամայ կա.  
մըս կը վարեն ու սրբապիղծ անկարգութեանց մէջ  
ձգեն : Եւ ինչ հարկ կայ ինքզինք անկարելոյն  
պարտաւորել : և նաևայ հեզեզն արգելուլ երբ  
աւելի դիւրին և այնոր ընթացքն ուզգել և շափոյ  
մէջ պահել : Այս ասացածս որպէս կրօնաւորին  
այսպէս ևս ամուրի քահանային կը յարմարի , և  
այս վէրթեոյս այլ աւելի որոշիւտն աշխարհիս մէջ  
ողջախոհ մաս ու գժուարագոյն և սրբազան պաշ-  
տամանց գործադրութեան ժամանակ աւելի ա-  
ռիթներ և փորձութիւններ պատահելուն համար :  
քան թէ վանքի չորս պատին մէջ վակուած և մե-  
նաստանի միջնութեան մէջ ընակող կրօնաւորի :  
Ուստի ես և քարեկամն կարծեմք թէ բողոքականք  
իրաւունք ունեին վանքերն և կրօնաւորական ուխ-  
տերն ընթելու , և Աւետարանի պաշտօնեայնընըն՝  
գերգաստանի հոյր առնելու , որպէս զի գոնե զնո-  
սա արգելուն որ այլոց գերգաստաններն ընտովեն :

Խոկ աղքատութեան ուխտին գալով՝ պարզապէս  
անմտութիւն կը համարիմ . վասն զի ինչ հարկ կայ  
զանձն պարտաւորել աղքատութեան մէջ ապրե-  
լու , մի թէ արգեն մարգիկանց շատին վիճակն այն  
չէ : որբ այնչափ գժուարութիւն կը քաշեն իրենց  
օրական ապրուսան հոգալու՝ մեր արգի ընկերու-  
թեանց մէջ յորս վերթի աստիճանի նոխութիւնն  
և յետին կարդի աղքատութիւնն միշտ և ամեն տեղ  
զիրար կը դիմաւորեն : Դիտեմ որ միջակային բազզն  
և վիճակն մեծագրելու առաքինութիւնն է , ոյլ և  
ամենաշի միջոցներով հարստանալին ոլ լաւ և աղ-  
քատութիւնն , և թէ մեծանմութիւնն է կամաւո-  
րապէս ինք զինք զգկել՝ իւր աւելորդն մանաւանդ  
իւր հարկաւորն ուրիշի տաքու համար . սակայն ա-  
զտառութեամբ յանձն առնուլ բան մի շունելու ար-  
խուր վիճակն , կամ ունեցածն առանց հրամանի

այլոց չգործածել զոր իննթութեամբ մեծաւորի  
տեղ գրած են, ուրիշ բան չէ՝ բայց եթէ սրան մոռք  
ինք զինք մշանվենաւոր առաջնապի մի մէջ զնել, և  
առելի կախում մի ունել յայլոց. և այս բանն այլ  
առելի խելքի դեմ է՝ երբ այսոր համար մարդ մեռ-  
քըն եղած հարստութենեն կամ հանդիսաւ կեանքէ:  
հրաժարի:

Հաւանիմ որ մարդ այս աշխարհիս բարիքն չա-  
փով պէտք է վայելէ, և իրեն պէտք եղածն վայել  
չարար ունելէն ետե՛ շափազանց շայլութեան զեզ  
խութեան ու մասփառութեան ետեւ յանկանի: Հա-  
րըստութեան և վայելից մէջ շափաւորութիւնն առնեն  
ժամանակ իմաստասիրաց ապօպքած բանն է, որ  
չորս գլխաւոր կամ եթանէական առաքինութեանց  
կարգն անցուցած են զայն՝ բարեխառնութիւն ա-  
նուամբ, որ մարդուս ախորժն կամ զուարձու-  
թիւնն կը սրէ՝ իզնէրն և ախորժակներն բանառ-  
րապէս յազեցնելու սահմանին մէջ զնելով: Բայց  
ինձ յիրաւի անխելքութիւն կ'երեխ որ մարդ ան-  
թի եղած առեն շկարացե ուտել, ծարաւ եղած  
ժամանակ շինել, քուն ունեցած առեն՝ ժամանակ  
ու ունելով չշնանալ, հինումն ու հաստ հագուստ-  
ներ հագնիլ երբ կարէ վայելը ապէս զգենուզ.  
ծածկել կամ քազարկել մարմաց բնական բարե-  
մասնութիւններն, գեղեցիութեան փայն, հասակի  
ազգուորութիւնն, անձին հանցյական միրքերն՝ որք  
թէ ունեցողին և թէ առնուղին մեծ հանութիւն կը  
պատճառան, վերջապէս մենաստանի մայնութեան  
և մթութեան մէջ մարել թազել այն առն բան՝ որ  
ընկերութիւնն ու գերգաստանն կարեր գեղեցկա-  
ցընել, և այս ուրիշ բանի համար չէ՝ բայց եթէ ան-  
հրաժեշտ փորձութիւններէ փախչելու համար՝ ուս-  
տի մարդ սակաւ մի խելքով կարէ ազատիլ:

Ոչ ապաքն այս ուրիշ բան չէ՝ բայց եթէ զեզ-

ծանելու կամ շարայար գործածելու վախեն՝ չա-  
փառոր գործածութիւնն ալ արգելուլ, որպէս թէ  
որ ամենենին շքայը՝ վախեալով որ մի գուցէ քայլած  
առեն անկցի և ուղի կոտրե, կամ բան մի չուտէ  
վախեալով որ գժուարամբարաւթիւն շիմանայ : Ի  
դշտիւն առաջանածիւն, առաջ Արիստոտել, առաջի-  
նութիւնն մէջ առզի է՝ չէ թէ ծայրերն : Եւ թէ պէտ  
կենաց արուեստին մէջ մեծ իմաստառեր մի չէր ոյն  
քերթողն՝ որոյ պկայութիւնն պիտի յիշեմ, բայց  
իր քերթողական լեզուն պատճելի է՝ որ Արիստոտե-  
լի առան այս կերպ կը բացատրէ :

Յամենայնի շափ և ասհման, և ՚ի վախենընըն յանկառք,  
ի ծայրայեղաըն ոչ բնաւ գայ ուզգութիւն ինչ յերեան :

Տարակոյս շկոյ որ միանձնն կամ միանձնուն հի ըի-  
նելու կարուութիւն շկոյ ցանկութիւնն զազելու  
համար, և խելքով իւր յօտարութիւններն կառա-  
վարելու, իւր իզներն իր մինարեին յարմարցնելու,  
և իւր սասցուածքն պատշաճապէս գործածելու-  
առանց այլոց վեառ առըս, և իւր կարողութեան  
համեմատ բարիք ալ առնելու համար :

Մի թէ զուակա այսպափ ծախիւք մեծցնելս այնոր  
համար էր որ՝ կը գուշէր խեզէ բարեկամն, երթոյ  
իրեն տուած զաստիարակութիւնն և իր տաղանգն  
թաղէ անեանութ անկիրւն մի ուր մարդ սաք կոխելիք  
չունի : Եւ մի թէ այնչափ զրկանք քաշելս և զիշեր  
ցորեկ աշխատիլս հազնելու իրեն սժիս պատրաս-  
տելու համար՝ այնոր համար էր որ ինքն այնպիսի  
խեզէ կեանք մի անցնէ՝ որ իր ազատութեան յարգն  
հանցող ամենեն յետին մորգն ալ չուզեր քաշել :  
Գոնէ Քորք զթութեան առաջեալ կուսան մի լի-  
ներ՝ ինքզինք ազքատաց ծառայութեան, հիւանդաց  
ոյցելութեան և տղայոց զաստիարակութեան նուի-  
րելով, զիշեր ոյսոց մէջ ընկերութեան զուտ մի կը  
տեսնեմ, և աշխարհոս ալ այնպիսի նուիրութեան տա-

Նոզներու վրայ ներողամբու աչքով կը նայի և կը  
գովի ևս: Եւ գարձեալ այլ ըստ չե որ իր հոցին  
ու մայրն, եղ բայց թերեւ ու քոյքը հոգայ ինաւու, և  
մանաւանդ իւր այրն և զաւեներն. եթէ իւրաքան-  
չիւր որ իրեներուն համար այս բանս առնե՞ ալ  
կարօտութիւն չնեար որ ոմանք նոյն բաներն ամե-  
նուն համար ալ առնեն:

Բայց չե. Համար երթալ կարմեղական ընել,  
այսինքն առա առառերկու բանեան խելքով կա-  
խաց հետ չորս պատերու մեջ փակուիլ առանց  
օգոս և արևու խոնաւ առջ մի, մարմաց մասց և  
սրաի ամեն առասկ զրկանաց մեջ, և ամեն որ եր-  
կայն բարսկ աղօթքներ և հայրեներ զրուցել շատ  
անգամ առանց հասկանուց, որովհետեւ ժամեր-  
գութիւնն ալ լսաներեն է. և հան մութ ու առ-  
ռուցեալ առջայն մեջ ձեռակն ցուրտեն ու ամառն  
տարեն նեղուիլ, առունեց առնլու կերակուր չունել,  
և առանց արտաքին միթթարութեան կամաց կամաց  
հիւծիլ ու մաշիլ, ամեն որ ինքզինք վաղահաս որս մի  
պատրաստելով մահու: Մի թէ այսոր համար առեղ-  
ծել է Աստուած զիրենք, և իրենց ծնողք ալ որ  
այնպահ զոհազութեամբ զիրենք մեծցուցել և սի-  
րուն զաւակաց առ եղել են զիրենք ովզ ովզ թո-  
զուած առանելու համար է: — Ու, ոչ ասեմ, ոչ, և  
միայն մասնելով իսկ խելքիս կուզայ և սիրաս  
կը հմիլ:

« Ուզգ ամուր կօխէ, բարեկամ, առաջի իրեն,  
նորա ազայանաց և արաստուաց դեմ հաստատ կե-  
ցիր՝ մինչև որ բանեան միայն հանդարտի ու ա-  
մեն բան կ'անցնի. որովհետեւ առջի երեակայու-  
թեան չերմասենեն է՝ քան թէ իրական զանե-  
մունքը, և այս Աստուեց ուրեն՝ որ հիմա զաւկիդ  
սիրուն կը սորորգէ՝ հաւանականարար բնական սիրոյ  
եռանց մի է որ այնոր սիրան կը տափառակ՝ մինչև  
որ իւր առարկայն դանէ ո:

Այս եզեւ մեր երկայն խորհրդակցութեան վախ-  
հանն . ես ինչ որ ասացի այս խեղճ հօրս , և զոր մա-  
ստմի գրի տակ՝ այնպէս անկեղծութեամբ խռուեցայ՝  
ինչպէս որ կը մտածէի : Սակայն որշափ ալ կարծէի  
թէ ուղիղ եր ասացածո՞ւ այսու ամենայնիւ խեղճա-  
քողորովն հանգիստ չէ , նախ որ խեղքը ժամանակ՝  
միարս իմ զաւկիս վրայ երթալում դատաւոր և միան-  
գամայն զատախազ կը գանձէի զիս՝ որով և անկող  
մեակցութիւնս ալ կը պահանջը : Եւ յետոյ խզճիս  
մեջ ծածուկ ձայն մի ինձ տաէր թէ ազատ արարա-  
ծոյ մի վախճանին ու միջնակին մրայ բանութիւն առ-  
նելին մեծ պատասխանառութիւն եր , այնպէս որ  
հօրն որոշման մասնակից լինելով եթէ դժբաղցու-  
թիւն մի յառաջ դար՝ ինձ անմիտնար արամութիւն  
պիտի լինելը : Իսոց առարի ո՛վ գիտէ ազթիան սրանին ալ  
ինչնիր կ'անցնին , և ինչ բանի կոչուած է . որովհետեւ  
ինչ աշակես աշխարհիս մեջ կոչումն ասացեալ  
բանն կայ , և եթէ այս ազթիան կոչումն ալ կուռան  
լինել է , ես ովքեմ որ գեմ կարեմ զնել : Ապա ու-  
րեմն առելի խոչեմութեամբ մտածելու է , և այս օրն  
պիտի շիժողում որ անցնի մինչև երթամ բարեկամն  
գանձմ և պարտաւորեմ զինքն որ գետ որոշում մի  
շառնէ :

### Ուխտք կրօնաւորութեան

Կ Յունիս :

Կորեն առաջ այն խեղճ հայրն՝ որ միշտ նոյն արբա-  
նութեան մեջ է , և շատ դժուարութիւն քաշեցի  
մինչև որ խոռք առի երանէ որ քանի մի օր իր որոշումն  
զաւկին իմացնելու ուշացնէ . որովհետեւ ուշանալէն  
վուանդ մի շիայ , վամ զի զաւակն ալ գեռ քանինի  
տարուան չէ . և թէ առաջին ապաւորութեան գեմ

հակառակին վասնգաւոր է . վասն զի այն առեն  
զբացողութիւնն ինչըն յաղթած լինելով խռո-  
ված ու միջնցուցած է զայն , այնպէս որ անհարող  
լինի գտառասան առնելու այն բաներուն վրայ՝ որ  
խորհրդածութիւն կը պահպանէն . Առափ որոշե-  
ցինք որ քանի մի որ այլ գեռ մասնելոք , և նորեն իրա-  
րու մեր զբացմանքն և մասնաւնքն հաղորդեմք՝  
այս ծանր նիւթոյն վրայ՝ որ աղջիան պիճակն պիտի  
որոշէ երկրիս վրայ , և ըստ իւր խելոց նաև իւր  
հանգերձեալ կենաց պիճակն :

Առափ երեք օրե ՚ի վեր ուրիշ բան ոչ մաս-  
նեմ՝ բայց եթէ զայն , և որպէս զի իմ գաղափար  
ներս առելի միշտ լիցին՝ հարկաւոր կը սեստեմ զայնու  
զրի առնուլ՝ որ նոցա Նշմարտութիւնն և ուժն ա-  
ւելի լաւ առնաւմ : Օրագիրս կարգալով նորեն սկսոյ  
իմ առարկութեանցա վրայ մասնել . և նորեն կշիռքի  
զարնելով՝ կը խոստավանիմ որ առջինին չափ ուժով  
շերեցան ննէ . և գոնե նոցա հաւատարազոր պատաս-  
խաները գտի , այնպէս որ կշիռն իր հաւատարու-  
թիւնն զրեթէ գտաւ , և երկուց կողմանց պատճառ  
ներն ալ հաւատար ծանրութիւն ունեցան . և որով  
հեռու պատճառներն իրարու հակառակամարտ կը  
զանեմ՝ ուստի ոչ զիստեմ թէ որ կողման առաւե-  
լութիւն տամ : Բարեբազզարար խռովն իմ զաւկիս  
վրայ չէ , ապա թէ ոչ եթէ այս բանն իմ հայրական  
զբանմանս գաղչեր՝ խելքս թուցնելու բան մի չէ :  
Մարդս ուրիշի գատին մէջ առելի անխռով կը մաս-  
նէ . այսոր համար իմ որոշմանքս գրի պիտի առ-  
նում ու բարեկտմն հաղորդեմ :

Եւ յիբաւի իմ ամեն առարկութեանցա արմատն  
մի է . այսինքն թէ մենասանաց կրօնաւորական  
կեանքն հակառակ է մարգկային թութեան որոյ  
զաղաւութիւնն կը նուանէ՝ ուխտիւ հնագանգու-  
թեան , առնենք առելի կենառական թնազդութիւն և ա-

մենէն քաղցր զգածմանքն կը բռնագտատէ՝ ուխտիւ ողջախոսհութեան, և նորա կեանքն խեզք ու թշշուառ առնէ՛ ուխտիւ աղքատութեան :

Առաջին կիտին վրայ կարէ ոք մեզ առել թէ՛ ազատութիւնն պաշտպանելու պատրուակաւ՝ գուք զայն կը բռնաբարելք ու ոյնոր զեմ կը կռուիք. վասն զի ով որ աւասկ մի կեանք կ'ուզել վարել որ իրեն նմանեաց վնասակար չէ, և թերեւ նոցա օգտա կար ալ է անձնանուփրամք և սիրով թնջ իրաւամբ կ'ուզելք արգելուլ որ իրեն յարմար երեցանն չառնէ : Արդ եթէ ազջիկ զաւակ մի աշխարհէս և իր սովորութիւններեն համ չառնուր, և կը վախճայ ալ որ համ մալով պիտի կորնչի՝ ննջու սախակեմք զինքն մնալու, և այսպէս զինքն թշուառ առնեմք՝ զինքն երջանիկ առնելու պատրուակաւ, և որոյ ինքն քան զայլու աւելի լաւագոյն գատառոր է : Եւ խօսքս բարեկամին զաւակին գալով որ տարիէ մի չափաւհաս պիտի լինի՛ ինքն այն առնեն իր անձին տէր պիտի լինի՛ ուզանն առնելու, միայնակ պատասխանառու լինելով առաջի Առառեցայ և մարգկան՝ իւր կամաց որոշողութենէն յառաջ և կած հետեանացն և գործոց : Առատարակացա հիմա իրեն պարարեն և ծնուզոց հնազանդիլ, և այնպէս ալ պիտք և առնէ՛ մինչև այն ժամանակն որ առ պատկառանոց միայն նոցա խորհ հարցնելու պարտաւորութիւն կը մնայ : Մի թէ տարիէ մի ետքը աւելի լաւ պիտի զիտէ գործելիքն, և մեր հիմա զինքն արգիլելն՝ այն յօւսով չէ որ բոլորովին՝ ի բաց թողու իր միաբն գրածն :

Տարիէ մի նոյն վիշտերն նորեն պիտի սկսին, և այնափ աւելի սաստիկ պիտի լինին՝ որչափ որ մեր յոյսն ալ պարտապ պիտի երեւ և մեր իշխանութիւնն ալ հար մի պիտի չդանէ : Եւ ահա մեզ նման հայրերն ու մայրերն որ վարժել եմք մասնկառն ենէն ՚ի մեր մեր զաւակաց վրայ տիրապետէլ այս բան գտուա-

բաւ կը միանեմք ու յանձն կ'առնումք : մարերնիս  
գնելով թէ զաւկներն մերն են , և ինչ որ ուզեմք  
կարեմք առնել զնոսա : Աչ յիշեմք որ նոքա մեր քո-  
վը աւանդ են և ոչ թէ մեր ստացուածքն . ուստի  
ժամանակն երբ կը համեմ , և մեր բնական հնամա-  
կալութեան պաշտօնն կ'աւարտի՝ պէտք է որ նորէն  
գարմենմք զնոսա Այնո՞ւ որ մեզ յանձնել էր՝ իրենց  
վախճանմին սգտին համար , և զիրենք իրենց՝ որով  
հետեւ ալ կարող են ոյն վախճանն նանաւել և կա-  
տարել : Ուստի այն ժամանակ զործն իրենց և Նա-  
խարինամութեան անկանի , ոչ թէ մեզ , թէ և սրբ-  
տերնիս վշտանայ նորս հրամանացն հպատակելու :

Դարձնագ այս կրօնաւորական վիճակի հնազան-  
գութիւնն որ այսուափ անարդ կ'երեսի մեզ՝ մի թէ  
աշխարհի և ընկերութեան մեջ աւելի քանզր  
է : Միթէ հոս ալ պարտկան չեմք մանկութենե  
մինչեւ 'ի մահ հնազանգելու օրինաց՝ զորս մեք  
չեմք յօրինած , և մեծաւորաց զորս մեք չեմք ընտ-  
րած , և որոյ միշտ խոհեմութեան և հեղութեան  
օրինակ չեն : Միթէ կարգուող կինն պարտաւոր  
չեւ հնազանդութիւն խոստանալու բոլոր կենաց մեջ  
իւր երկանն՝ զոր շատ անգամ հազիւ թէ կը հնատ-  
չէ : և այս հնազանդութիւնդ ալ անզունանելի չե՞ :  
Իսկ կրօնից մեջ գոնէ մարդ կարող է առ ժամանակ  
մի պարտաւորիլ , և երբ այն ժամանակն կը լրանայ՝  
թնդն ալ ազատ է . և աւելի կարեորն ալ այս է որ  
ուխտադրութենէ առաջ քանի մի ասրի նորըն-  
ծայութենէ կ'անցնի , և այն ժամանակ մարդ կը սով-  
րի միաբանութեան կանոններն բարեկարգութիւնն  
և սովորութիւններն , և կը փորձէ թէ բազմացած  
կեանքն և վիճակին պայմաններն իրեն կը յարմարին  
թէ չէ : Ապա ուրեմն հոն մարդ բազմադակտու-  
խելամուս լինի թէ ինչ բանի պիտի պարտաւորի .  
և ժամանակ ալ ոնի մասնելու , և շատ փորձերէն

եռեւ երբ իր միտքն կ'որոշէ, զործածն բոլորովին կամացը է ի բառն յշխառանիւմը :

Ըստ հակառակին ամեւ մնաւթեան անլուծանելի պարագաւորութիւնն չառ անդամ կոյր զիուրայն լինի, առանց հանունքու - առանց նախաընթաց և բառական փորձի անձնն որոյ հետ պիտի կապուի, և զգացութեանց իրից և երեակայութեան՝ մասց առջն դրան արդիլքներովն : Այս բանս այնուագ ուժամարիտ է՝ որ եթէ ամեւ մնաւթեան համար աշ վանաց պես նորընթայութիւն մի լիներ, և կազմաներն երկորին կարեն գունէ երկու տարի ՚ի միամին թեակել՝ յուռաջ քան իրարու հետ բոլորովին կապուիլու, չառ տարակուսական է որ շատերն այս փորձեա եաւ մշտինաւորագիւ զիօրար ուղելին :

Ուրեմն կրօնաւորական ութամից գեմ եզած այս առարկուածնու ամեւ մնաւթեան պարագաւորութեան գեմ ալ կը զօրէ, որ գաշնագրելէն եռեւ չառ առելի մնաւագութիւններ կարէ յառաջ բերել, և կամ գունէ նոյնագի զգացուա պատճառներ յապարացաւ : Ես սա բանիս վրայ չառ զարմացել եմ որ Փրանկիոյ տատինն յեղափոխութեան ժամանակ՝ որ կրօնաւորական միարանութիւններն նիշուեցան՝ նոցա ստացուածքն յափշտակելու մաք, այն ժամանակի տիրողներն վազեցին զնացին միանձանց և միանձունեաց առջն՝ զորս մողեռանկութեան և բնաւորութեն զոհներ կը համարեին, և իրեւ նոցա ազատարարներն կարծեցեալ բանաւորուն զոհներն մեծա շատաշնամք որ բացին ազատաւթիւն տալով իրենց մանաւանք թէ զուրս վարեաւելով, կրօնաւորներն շատերն չեն ուղեր զուրս ենել, և իրենց ազատարարներն բնաւորաց տեղ կը զնեին, ուստի կ'երեսի թէ կարծածնուու չափ խիստ չէ այն առ զի կեանիքն, և շատերու համար աշ իր քաղցրութիւնն ունի :

Այս բարձրագիւղ ու ոքան քան զայլս աւելի կրծնաւորա-  
կան հնազանդ ու թիւնն պէմ կը մաքտախն' զինուորա-  
կան հնազանդ ու թիւնն կամակար կ' ընդուժին' որ շատ  
աւելի խիստ և նուռ նոզ է իւր բարեկարգութեամբն  
և սովորութեամբը : Առ սակայն հսս ալ մինչև ցմահ  
հնազանդ էլու և հրամանատարի մի պարզ խօսքին'  
որոյ գէմ խօսիլ ոչ լինի : Առ այս հրամանատարա պա-  
տերազմի ժամանակ բարձրագոյն հրամանի մի գործա-  
դիրն չէ . այլ հակատամարտին ուրուազինն յօրինողն  
ինքն է՝ զոր ծածուկ շինել է , և զայն հիշտ կատարել կը  
հրամայէ իր հպատակաց՝ որը ստիպեալ են զայն՝ ի  
գործ զնելու վտանգաւ խոկ կենաց՝ առանց խելքեր-  
նին համեմելու : Հան մոքրին սիսալանք մի որ քա-  
զարական վիճակի մէջ թեթեւ բան մի է , զիմասպար-  
առութիւնն կը համարուի՝ իր հետ առանց պատմուաւ ,  
որովհետեւ այնպատի հազարաւոր կամքերն և անհնա-  
կան ուժերն ուզզելու և հառարակաց գործոյ մու-  
թեամբն . այնոր համար թեթեւ անհնազանդու-  
թիւնն խիստ կերպով կը պատմուի , և ոչնչ յան-  
ցանքին մահու պարտաւոր կը սեպուի : Առ ալ հա-  
մազուած եմ որ ուրիշ կերպով բանակ մի շիարե-  
կառավարուիլ . բայց առանց զինուորական բարե-  
կարգութիւնն պահարակելու՝ ինձ կ'երեւի թէ կրօ-  
նաւորական բարեկարգութեան շարախսամերն ալ  
աւելի իրաւունք ունին զինուորական կարգի հպա-  
տակաց վրայ ցաւիլ որ իրենց երիտասարդութեան  
ամենէն գեղեցեկ տարիներն իրենց երկրէն և ընտա-  
նիքէն հեռու՝ և իրենց տրուեան կորուսանելով  
և ընտանեկան կենաց քաղցրութենեն զրկուելով  
եօթն ամբողջ տարիներ չեն կարող կարգուիլ , և այն  
հիշտ այն ժամանակն երբ աւելի պէտք ու փափաք  
ունին կարգուելու . և թէ յիրուի զերութիւն և  
քաղցրացւոյ իրաւունքն զրկուիլ և թէ կայ՝ բուն  
այս բանն է : Իրաւ և որ այս լեզվի հատագեզս ոսէւ .

զօնել կը ջանամք, և տեսն կերպով քայլուն կը ցուցանեմք որպես զի միջնուառոր մարդկանց կը ցեցնեմք զայն, որք առանց այսոր պիտի նոզակային զայն բերանենին տանուզ: Տարակոյս չունիմ որ խեղճ զինուարներն որ օրինաց պահանջմանըն և ըստ պատահման գժրազդ վիճակի գրուոց տակ կը գտուին՝ ուրիշ բանի այնշափ ոչ ցանկան ու վափաբին՝ որպատի ժամ մի յառաջ զանազ 'ի հայրենիս և իրենց գեղերու մէջ զանել իրենց թոզան սիրելիներն, թէ և զինուորութիւնն շատ վառաւոր ալ համարուի:

Կրօնաւորական Հաւզանգութեան կողմն զօրացը նոզ ուրիշ տարրերութիւն մի ալ այս է որ՝ զայն յանձն առնողներն իրենց հազին վրկելու գիտմանը և յուսով այն բանն յանձն կ'առնուն, և միանգամյան իրենց նմանեցաց պատակար լինելու վափաբով: ուր ընդհակառակն զինուորն միտքն զնելու է որ Եթէ պատերազմի զաշտին մէջ ալ չմեռնի՝ իւրկեանիքն անկելանոցաց մէջ պիտի աւարտէ, և թէ որ հաշմ ու հիւանդկախ անտի ալ ազատի և ընկերութեան մէջ մտնել՝ իր ապրուսան Տարելու կարողութիւն չունի, այլ հազիւ թէ պատառ մի հաց՝ իւրեւրութեան օրերուն համար. և եթէ գեռ առզնութիւն և զյտ ալ ունի՝ հարկ է որ նորէն իր առջ արուեստն ձեռք զարնէ՝ զօր երկայն առնն թոզել եր, և շատ գժուարութեամբ նստի իւր առջի զործին՝ որոյ վարժութիւնն կորուսան է: Նորա ևս որ միրաւորան ու հաշմացան չե՞ն շատ անդամ՝ հիւանդութեանց և ախտից Ենթակայ լինին կարծ աշխատանքներ կամ զինուորական կենաց անկարգութիւններն, որոց թնական և բարոյական հիւանդամքն զիրենը բոլոր կենաց մէջ վշտազնելն են: շատ անդամ իրենց որդուց ալ կ'անցնին:

Իսկ Եթէ կրօնաւորական կենք՝ ազատութիւնն կորինելուն վրայ որ ցաւի՝ կարեմք հաստատել որ

աշխարհիս մեջ պիտի մի չկայ որ մարդ իւր ազա-  
տութիւնն կատարելապէս վայելէ, ուր մարդ վեր-  
ջապէս ուրիշ բանի համար շաշխատիր՝ բայց եր-  
կրառոր բարիք ստանալու համար, ուր որ կրօնա-  
կան ուխտիւր Աստուծոյ ծառայութեան նուիրե-  
լով ինք զինքն գոնե համազումն և յոյս կ'ունենայ՝  
իւր յաւիտենական երթանկութիւնն պատրաստե-  
լու, և բան զամենայն մարդկային փառո գերազանց  
վարձը մի վաստկելու՝ զոր ոչ բնչ կարէ կապակէլ՚ի  
մէջ: Աւետարանին ո միայն կարեռը և մասն՞րարի ո  
ասացածն է այս :

Կրօնաւորական ութաւերն հասկանալու համար  
քրիստոնեական նկատողութեամբ հայելու է՝ ուս-  
կայն նոյն բակ անկողմանակալ իմաստաւերն լաւ կ'ըմ-  
բռնէ որ կրօնաւորական հնազանդութիւնն ոչ  
միայն զազատութիւնն չունացներ՝ այլ ընդհակա-  
ռակն զայն կը կատարելագործէ ու կը լրացնէ:  
Վասն զի եթէ յիրաւի բարոյական աղատութիւնն  
բարին և յարն ընտրելուն մէջ կայանայ, ապա պարզ  
և կատարեալ ազատութիւնն այն է՝ որ մարդ ովեաք  
չունենայ այս ընտրութիւնս առնելու որ միւս վասն-  
գաւոր և գմուարին է, այլ բացարձակապէս միա-  
նայ ընդ բարոյն իւր կամաց Աստուծոյ կամաց հետ  
նոյնութեամբն՝ որ է իւրին գերազոյն: Այդ միա-  
բանութեան մեջ Աստուծոյ կամքն կանոնաց ձեռք  
յանդիման կ'երեւի՝ որ զամենայն առնելիս հրամայէ,  
և կանոնն միւս մեծաւորաց իշխանութեամբն կը  
հրամայէ: Ազա ուրեմն ոչ մարգոյ և ոչ մարդկայնոյ  
իմիք և հնազանդութիւնն, այլ Այնմ որ իշխանու-  
թիւն ունի հրամայելու մարգոյ. և այսպէս անզա-  
գար հոգատակութեամբ նորա կամացն և կատա-  
րեալ հնազանդութեամբ հրամանաց նորա՝ հոգին  
բաժանի՝ ի չարէ, գեր՝ ի վեր ամբառնոյ քան զանի-  
բառութիւն, և հետեապէս ազատի յամենայնէ որ

գերի առնել զնայ յաշխարհիս, առ ՚ի հազորդ լինել  
անհուն ազատութեան և երջանկութեան՝ որ յա-  
ռաջ զայ յայնմանէ: — Այս և Նկեղեցւոյն ազա-  
տութիւն որգուցն Աստուծոյ կոչածն: Այսոր հա-  
մար և որ կրօնաւորական վիճակն՝ որ առետարանա-  
կան խրատուց կատարմանըն այն ազատութիւնն  
մեզ կուտոյ, քան զամենոյն վիճակս կատարեալ  
կը տեսպուի: որովհետեւ այնու մարդուս հոգին աշ-  
խարհիս մեջ անմիջապէս Աստուծոյ հետ կը միանոյ:  
Արդէն Կիկերոն իր ժամանակին համար առէր թէ  
կատարելութիւնն առառաւելութեան մերձաւոր և  
նմանող լինելուն վրայ կայանոյ. իմ կարծիքս աղ  
Կիկերոնի հետ նոյն է. բայց որըսփ ալ կը սքանչո-  
նամ այս գերազանց նմանութեանն վրայ, մանաւանդ  
Քրիստոսի և առաքելոց վրայ տեսածիս, սակայն  
այնմ հասնելու անկարող լինելու ալ կ'իմանամ. և  
գրեթէ հանդերձեալ աշխարհի իր մի կը համարիմ  
զայն՝ զոր քրիստոնեայք կը ջանան այս աշխարհիս  
մեջ ալ մուժանել, որ գովելի և պանթալի ջանք մի  
լինելով յետ այսորիկ ոչ երրեք պիտի արհամարհեա  
զայն. և սակայն գեռ բոլորովին վատահ չեմ և ցնո-  
րական ձեռնարկ մի երեսի Բնէ, գոնէ մարդկանց շա-  
տերուն համար, և մանաւանդ կանանց, որ աերնին  
կարի զգայուն և երևակայութիւնն կարի վառվուն  
լինելուն համար:

### Ուխտք կրօնաւորութեան (Չարայ արութիւն)

Ա Յանիս:

Մէք վնաեցինք որ բացարձակ ովթախութեան  
ուխտն՝ հակառակ է բնութեան, ուստի և զայն  
հրամայելն և խոսանալն ոմի՞ր և ընդգետ մարդ-

կութեան և ընկերութեան։ Ասկայն այս բանս ինձ  
մուտք կ'երևի, և կարէ ոչ այս վճառյա գէմ բողոքել  
որպէսըստ հանջա տուեալ, վասն զիմեր տուած պատ  
ճառներն ալ հատու կտրուկ և անդիմագարձ չեն։

Նախ բնութիւն տօելով ոք բնութիւնն իմանա-  
լու է։ որովհետեւ մարզս երկու բնութիւն ունի՝  
յերկուց գոյացութեանց բազկացած լինելուն հա-  
մար՝ մին ոգեկան միւսն նիւթական։ վասն զի եթէ  
մարմնով՝ անասուն է, իսկ մաքի ոգի մի է։ և թէ,  
արտ մարմնոյն պէտք եղածն ալ տալու և ապրելու  
համար՝ ասկայն ամենայն ոգեսրական իմաստաւելոց  
միաբան ասեն թէ մարմնն հոգւոյն սարուկն և գոր-  
ծին լինելով՝ նորա ախորժակն այնշափ յագեցնելու-  
է որշափ որ հարկաւոր է հոգւոյ սպասահարկու-  
թեանն։ Ուրեմն ոգեզեխն բնութիւնն վերագաս և  
նախապատիւ է, և մարմնն իւր նմա զործակցու-  
թեամբն միայն բան մի կ'արժէ, և անկարգութեան  
մէջ է՝ երբ հոգւոյ գէմ կ'ապատամի մարմնական ցան-  
կութեամբք՝ որ զինքն անքան կը դարձնեն։ ննջես  
որ ընդհակառակն կը բարձրանայ և զրեթէ կը պայ-  
ծառակերպի երբ յամենայնի հոգւոյն կը հնազանգի,  
միայն նորա ծառացութեանն կը բանի, և նորա գոր-  
ծոյն ուզածնն և կատարելագործութեանն միջոց-  
ներ կը պատրաստէ։ Նոյն ինքն Պլատոն կը համարի  
թէ մարմնն էականապէս մարդկութեան սեպհա-  
կան չէ՝ որոյ գէպ 'ի յաւիտնական իրս ունեցած  
թամբն անզոտմ կ'արգելու, այլ պատահական բանտ  
մի է՝ ուր հոգին նետուած է նախընթաց յանցանաց  
պատճոյն համար, ուստի մարդուս զիմաւոր պարտին  
որշափ հնար է շուտ 'ի մարմնոյ ելանելն է՝ նորա  
արգելքն բորտակելով, որ լինի, ասէ, մարդրագոր-  
ծութեամբ և մասնեմամբ։

Ես ալ զիտեմ՝ որ այս խոսքիս մէջ միւսն կայ-  
բայց գոնէ մեզ կը ցուցանէ թէ որշափ սակաւ յարդ-

կուտար մարմնոյ՝ իշխանն իմաստասիրաց, և որ-  
շափ մեծ համարելը մարդուս համար տահմանեաց  
վախճանն՝ ու զելով զինքն իւր բնութեան կատարել-  
լութեան առաջնորդել այսինքն մեծապէս նմանցնե-  
լու զինքն մարդու ոգուց, և Արտածոյ որ քան զա-  
մենայն ողիս մոքրագոյն է :

Այդ քրիստոնէութիւնն թէ ողիս և Պլատոնի պէս  
ոչ համարի թէ մարմինն միասակար պատահար մի է՝  
ուստի ազատելու Խարն նոյելու է, սակայն նորա  
պէս ինքն ալ մարդկային կատարելութիւնն իւր մասց  
բարձրութեան և իւր սիրոյն անարատութեան զբայ  
կը հիմնէ, այսինքն յաւթանական իրերն ժամանա-  
կաւորներէն նախապատիւ համարելու զբայ, նախ  
ամեն քրիստոնէից ուսուցանելով թէ կը պարապ-  
ուորի իւր մարմինն մասց հպատակել և միարն ալ  
Աստուծոյ, և ամենուն ալ որպէս պատուիրան կ'ա-  
պրոպէ զբարեխանութիւն և զատփաւորութիւն  
՚ի յագեցուցանել անդ զմարմնական ախորժակա,  
առ ՚ի բարձրակազ յանաւութենէն ՚ի հոգեզինու-  
թիւն, յանհարթ մարդկութենէն ՚ի կատարեալ  
մարդկութիւն :

Սակայն արգարութեան տահմանէն վեր՝ ուր որ-  
տուիրանն կը տիրէ, ուրիշ Խամբայ մի ալ կը բանայ՝  
ուր որ զմարդ աւելի բարձր կատարելութեան կը  
կոչէ՝ առ որ իրեր պարապառիշ պատուիրան ոչ զոք  
կը բանագատէ, այլ իրեր խրաս ունաց կ'առաջար-  
ել : Եւ առ ամենեախն ասելու առեն թէ Ամուսնա-  
ցէք եթէ կը փափարիք, և լաւ առնէք, վասն զի  
լու և ամուսնանուլ քան զինունուլ, շատերուն ալ  
զարձեալ տան . Մի ամուսնանուր եթէ ալ լաւ կը  
համարիք՝ միայն այս պայմանաւ որ ողբախուն մեաք  
հոգուն մաք և մարմնով, և Աստուծոյ ասյք ձեր  
բոլոր կեանքն և բոլոր ուրին : Որովհեան Արտուած  
Բարին զերագոյն՝ մեր գոյութեան վերթնական

մահմանն է, թէ յաշխարհիս և թէ ՚ի հանգերձեալն  
երթանիկ ընելու համար՝ պէտք է որ ձեր սիրան՝ ՚ի  
վեր գան զամենայն զԱստուած սիրելով նորա հետ  
կատարելապէս միանայ: Խնդիր իւր ոզորմութեամբն  
զեղ կուեց մասնակից ընելու իւր անհուն գոյաւ-  
թեանն, ուստի միայն իրեն յարելով ձեր հազին  
պիտի գանե կենաց երթանկութեան և փառաց  
լրումն: և այսոր համար ՚իրիսուս իր առակաւոր  
խօսքովն ասաց: Ան ներքինիք որ զանձինս իւրեանց  
արտրին ներքինիս վասն աբբայութեան երինից ։

Այս երկնային կեանքն՝ որոյ կնիքն և կուսական  
մաքրութիւնն, որովհետեւ հրեշտակից՝ անմարդիք  
գոլով ոչ ամուսնանան՝ ոչ ումեք պարտք գրուած է  
յԵկեղեցւոյ: այլ միայն նոցա ապապրուած է որ  
կատարելութեան կ'ուզելն զիմել, ապա այս պայման-  
ներո գրուելն եան՝ եօ ընութեան բանագատու-  
թիւն ոչ անսանեմ այս բանիս մէջ, որովհետեւ կեր-  
պիւ իւրիք բանաբարութիւն մի չկայ, և իւրաքանչիւր  
որ ազատ է խրան ընդունելու կամ չընդունելու:

Իրաւ է որ ընդունելն եան՝ զայն գործով աղ  
կատարելու համար՝ նուիրածունք կան առնելու: և  
յազմաւթիւններ տանելու: Կամ հոգևորական  
զերզատանի մէջ մոնելու համար՝ պէտք է ընտկան  
զերզատանին բաժնութիւն որ առանց կռուոյ ոչ լինի-  
և այս բանս ծնողքն կը յուսահատցնէ և երբեմն  
զաւակաց սիրան ալ կը կեղեքի: կարճութիւն և  
ոյժ պէտք է այս աբտաքին պատերազմաց զիմանա-  
լու համար, և ևս առանել ներքնոց որ յետոյ պիտի  
գան: Առան զի բնութիւնն զրկուելով իր արտին սի-  
րանեն և մարմնոյ ցանկութեան փափառածէն՝ եր-  
կայն առեն կը ծեծկուի, և գմուտարաւ տեղի կու-  
տայ վերեադոյն ազգեցութեանց, և երկրաւոր  
մարդին զիւրաւ լինողուր որ երկնաւորն իր աեզն  
բանէ: Աւ փորձառութիւնն ալ այս բանիս մէջ է, և

երկայն ժամանակի կարօս է որ բռնըրովին որոշուի : Առկայն վերտապէս հոգւոյ մարմար վյայ յազմթութիւնն անկարելի չէ . և ապացոյցն ալ այս է որ տամառները դարերէ ՚ի վեր այնչափ քրիստոնեայ հոգիներ այս յազմթութիւնն առացած էն : Այս բանիս մէջ իմաստափրութիւնն ալ հարկ էր որ զիրենք քաջազերէր . որովհետեւ այս տեսակ կոխւներն և յազմթութիւններն ցուցանեն զզորութիւն կամաց և զարժանապատռութիւն մարդոյ՝ որ մինչև ՚ի հրեշտական վերազանցութիւն կարէ բարձրանալ : Այսարակոյն այս ալ հանդերձեալ աշխարհի իր մի է , և մարդո իւր տեսպհական ուժովն այնո՞ւ վկարէ հասնել : Խնդիքն իրմէ վեր բարձրանալու և անձին յազմելու համար՝ վերագոյն զգնութեան կարօս է՝ զոր քրիստոնեայք շնորհք անուանեն կոմ նոյն ինքն Աստածոյ զօրութիւնն՝ որ ամրանեայ և զօրացուցանե զհոգիս յօժարեալս ՚ի նուիրել զինքեանս առ նո՞ւ ունհարութեամբ սիրելութեանց և կապանաց աշխարհի : Աշակերտ գուշակ Պատանի՝ չեմ կարող պախարակել այս եռանդս որ քեզէ զոգիս ՚ի պատրանց կենցազիս՝ առ ՚ի հազորդ առել զնամանեութեամբ ընդ յաւիտնական նշմարտութեանց . և որ արձակէ զսիրան ՚ի կապանաց մարմար և արեան՝ որոց անցաւոր ուրախութիւնք տաեալ թերեն սովորաբար ցաւս և արտանութիւնն անզարմանելիս՝ որոց տեղն բան մի չէ կարող լեցնել :

Բայց միթէ վայրենութիւն չէ անդատելն զորդիս ՚ի ծնողաց , և անիրաւութիւն չէ զրկել զտոս ՚ի վարձուց խնամոց իւրեանց և վաստակոց՝ յափշտակելով ՚ի նոցանե զերմանեկութիւնն վայելելոյ զորդիս զօրս այնչափ հոգամք մեծցուցին : ... Այս հաւանիմ որ այս բանս խիստ կուգայ թնութեան . և իմ հայրական սիրու կը սարապիի երթ կը մասնելու որ սոյն բանս ինձ ալ կարէ պատահիլ : Բայց ամեն բա-

Նեն առելի խելքով մտածելու եմք . արգեղօք մեզ թէ իրենց համար պիտի մեծյնեմք մեր զաւկներն , և մեր վայելից համար մեզ տրուած են նորա՝ թէ իրենց մեծագոյն բարեսյն համար . և զնոսա մեծյնելին եռե՝ երբ անսանեմք՝ ի նոսա մասմաւոր կոչում մի որոց կարգն է նաև կրօնաւորական կեանքն , մեք ով եւմք որ զայն արգելումք՝ մեր ախորժն և կարծիքն դեմ զնելով գերագոյն համաց՝ որ խօսի ի սիրտ մանեկանն . ԱՄԵՅ պատկառածն պարափակը մանկան առաջ հեթանոս ոք բարոյախօս , և անշոշը ոյս պատկառանքը ոյնչափ պիտի լինի՝ մանաւանդ քրիստոնեից և իմաստասիրաց համար , որ ամեննեն չհակառակն ոչին համբառն յոր կոչէ զնոսա Աստուած :

Եւ մի թէ կրօնաւորական կենաց յանցանք մեպուած ոյս բաժնուում յընտանեաց՝ ամուսնութիւնն ալ նոյն բանն ոչ գործէ . և կոյսերնին ամուսնացնց մասամբ և երբեմն ալ ամրողթապես ոչ կորուսնանեն իրենց զաւկին վայելքն երբ հեռու տեղ հարս կը զրկեն զնա . և միթէ մարք իրենց մանչ զաւակն իրենցմե յափշտակուած ոչ համարին երբ սուար ազդ՛ան մի հետ կարգելու համար իրեն ծնողքն իը թողու , և իրենց ազդիկներն կարգելու համար ամեն ըստք առնելին եռե՝ անժիրիթար աըրամաթեմանն մեջ ոչ անկանին երբ սուար իրենց արանց եռեն կ'երթան : Եւ սակայն ըստութեան կարգ է որ կինն իւր երկանն եռեն երթայ , և անմառնթիւն ընելը այս բանին հակառակիլ : ԱՄԵՅ կարծ ոք առելթէ այդ ալ անբնական բան է՝ որ այնչափ յաւոց և արտաստաց պատճառ լինի . բայց աշխարհին ոք բանին մը յաւ ու արտասուք չկայ թէ մինչն մեռա և թէ անսի ենես : Ասքեմն այս ամեն բան զգացմանքը յառաջ կուգայ . և զգացմանքն ալ որչափ պատկառելի են՝ սակայն ոչ երկեք զօրելու ևն ընդգետ թէ իրաւանց , որինաց , արգարութեան և արժանապատութեան մարդոց :

Բայց, ասեն, այս օրինագն ալ կարեք մայր լինել  
և նոր զերդառան մի ձևացնել, և հիմա իւր անօսա.  
Հետ ուխտերով իւր կնութեան Նկարագրեն կը  
հրաժարի. և ինքզի՞նքն ամուսոյ և մար օրինաւոր  
սիրելութենէն կը զրի՛ որ աշխարհիս մէջ ամենէն  
աւելի քաղցր ուրախութիւնն է. Ասկայն այս ալ  
հշմարիս և որ եթէ այդ աղջիկն ամուսնանալու  
յարմարութիւն և յօժարութիւն ուներ՝ մի վախեք  
այր մի կը գտներ՝ վանք ոչ բնակեր. իսկ չէ, եթէ  
այս իշխան չունի, և իւր բոլոր մէրն աւելի. Երկնից  
կ'ուզէ նուիրել, և աւելի Աստուծոյ հետ միանալ  
քան թէ մարգու. իրեն համար շտիրածեն ևս մնալն  
զգիկանք մի չէ, այլ ընդ հակառակն կրօնաւորական  
ուխտիւ իր սրանի ցանկութեանն կը հասնի:

Դարձեալ ով առել և թէ աշխարհիս վրայ կի՞ն  
մարգն ուրիշ բանի համար Եղած չէ՝ բայց եթէ զա.  
ւակ թերելու համար. և մի թէ մէք ալ հեթանոսաց  
և հրեից կարծիքն, Եմք թէ կնոր համար ամենթ և  
զաւակ չունելն. Վրիստոնեանթիւնն այսպէս ու  
մասնէ, որովհետեւ կուտանթիւնն քան զմայրու.  
թիւն զերազանց կը համարի, և կրօնաւորական  
կեանքի՛ որ բոլորովին Աստուծոյ և ընկերին նա.  
ռայտութեան նուիրուած է՝ կուտարելագոյն միջակ կը  
սեպէ. Մեր նախահարքն իրենց անկմանն յառաջ  
դրախտին մէջ բազմաւալոց ենի՛ որովհետեւ իրենց  
տացաւ. Անցեք և բազմացարուք. Բայց անտա.  
րակոյս այն առենուան բազմանալի՛ այս առուր պէս  
պիտի ցիկներ, որոյ այժմնան կերպն յայտնազէս  
մեզաց հետեւանք է, որովհետեւ այն առենուէն ՚ի միջը  
ցաւաք և հեծութեամբ լինի. Եւ բաց տափի թէ և  
աստուածային խօսքով և զօրութեամբ Խորհրդոյն  
ամուսնութիւնն վառերացած է՝ առեսյն գարձեալ  
սկզբնական մեջոց վրախանցութեան անցքն է. այն,  
պէս որ այս նամակը յաշխարհս համեսդ ամեն հոգի

անօրէնութեամբ ազատամք է և յաւիտենական  
մահուան գառապարտուած . և Անդինանիւամբ յաջայ և  
՚ի Առ Յնս Շնոր իմ , առև Սազմաներգուն : Հաս աղ  
խորհուրդ մի կայ՝ որոյ խորն չեմ կարող հիմա իշ  
նել . առկայն անտի կը հետեւի՝ որ քրիստոնէական  
հաւատոց առջին սկզբնական մեղքեն եւս եղած  
ամուսնութիւնն՝ նոյն իսկ այն մեջոց պատճառաւ .  
շատ ստորեազոյն է՝ քան ինչ որ եր առն և կնոջ  
միաւորութիւնն անմեղութեան վիճակին մեջ , որով  
նմանապէս անտի յառաջ եկած անունն ալ : Ազա  
իմա ալ խելքս կը համենի որ քրիստոնէայ կոյս մի  
որոյ հոգւոյն վրայ կը ափրէ այս կերպ տեսաւթիւնն  
և զգացութիւնն՝ ի հաւատոց ներշնչալ , ընդդիմու-  
թիւն մի ունենայ ամուսնական կենաց՝ որոյ ուրա-  
խութեան և վշարաց մեծագոյն մասն՝ ի մարմար յա-  
ռաջ կուգայ . և գերազանց սեպէ երինային հրեշ-  
տակաց կեանցին՝ որ ոչ ամուսնանան :

## Ուխոր կրօնաւորութեան (շարայարու- թիւն)

Տ Յանձնիւ :

Բացարձակ ժուժկալութեան ուխտին գլում այս  
ալ մեզագրեցինք՝ իբր թէ ընկերութեան կործան-  
ման պատճառ է , որովհետեւ մարդկային ազգի բազ-  
մանան կ'արցելու : Անտարակոյս եթէ ազգ մի բո-  
վանգակ արք և կանայք ողջախոհութիւն ուխտեին՝  
առկաւ ժամանակի մեջ այն ազգն կը համենիր . բայց  
առաջառվ եղեք որ ազգի մի շնչին յայս երեսաց պի-  
տի շինի . վասն զի ժողովրդեան մեծագոյն մասն այս  
համբաւու ոչ հետեւի : Մարմար պայմաններէն գեր՝ ի  
վեր անցնող հոգեսոր մարդիկ միշտ տակաւաւոր են , և

այս կողմանէ աշխարհին համար վտանգ մի ոչ տեսանեմ մեր օրերս : Խնչպէս երբեմն հռովմայեցւոց պետութեան ժամանակ՝ այսպէս ոչ մեր օրերս ամուսնութիւնն արդիլովն ժռւժկալ ապրելու վախճին չէ , այլ ընդհակառակն իր կրթերն աւելի համարձակ գոհացնելու իզմէն է : Ամեւսնութիւնն ծանրաբեռնով պատճառաց մին ալ կանանց նոխափրութիւնն է՝ որ երիտալու ամելու վրայ է . որք որևէ իցեւ աժամով ոչ բաւականան . գարձեալ արանց համար այն գիւրութիւնն որ ունին՝ ընտանեկան կեանքին գուրու զեզին ընկերութեանց մէջ առանց սրբաւտանումի գանելու զայն ամենայն զրո ցոփութիւնն և մեզկութիւնն կը վենասին իրենց հանոյքի կատարելու համար . այսպէս որ արք այսոր տուն տեղ չունին , և ունելու ալ հոգ ոչ առնեն : Ասոյն է ահա այն ամսարեաց բազմութիւնն որ ամսարակոյս ողջախոսութիւնն ինչ առնել է ոչ գիտեն :

Խոկ ազթիունիք՝ որ կարգուելու վայֆայք ալ ունենալով տունն կը մնան . շատ աւելի ցաւալի է իրենց վիճակն , և ինչ կ'երեւի թէ մեր այժման ընկերութիւնն ամեն բանէ աւելի՝ այս կողմանէ և մեզադրութեան արժանի է՝ որ իր օրենքովն ու սովորութիւններով այս շաբի գժուարացուցած է զամուշեանութիւնն : Յայտի է որ ազթիանց շատերուն կարգուիլ շկարելուն պատհան աժիս չունելին է . և եթէ կինն պաշտառականութեան (թրախում) զայրն զնելու անզ՝ այրն զինուն զներ՝ ազքառ ազթիանց համար այր գանելն զժուար ոչ լիներ : Եւ այն տան կինն իւր բարեմանանութեանց համար կ'առնուեր՝ ոչ թէ իր ստակին համար . կինն ալ իւր ըերած հարստութեամբն հպարտացան՝ երկան վրայ այլ ոչ նոխափրութիւնն աւելի հպարտացան . և իւր ընդպառն առարինութիւններովն և աշալուրի անանութեամբն՝ կը ջա-

Նոր իւր անձին և պիտակին համար եղած ծախըն վայսարինելու:

Այդ հիմա կը հարցանեմ ինչ լինին այսոր այն ամեն ազդեցնիք որ ամուսնանութու միջաց չունին: Բնութիւնն զիրենիք հոն կը մզէ: իրենիք ալ պետք փափռաց նուն երբեմն եռանց ու կերպ ալ ունին կարգուելու: և ընկերութիւնն կամ թէ աշխարհ իրենց ձեռք չուար որ կարգուեն: Այժեւ արտաքրոյ օրինաց ընութեան հետեւն զգայութեանց և սրախ շարժմանց բռնութենին քշուած տարուելով առանց իրենց յաժարութիւնն զաւերացնելու: կամ օրինաւոր կերպով կատարելու: Աստուծոյ երեսն անկանին: մարգեանց առջև ալ պատիւնին կարուսանեն: Այժեւ ժուժկալութիւնն յիրաւի հակարենական է: ինչպիս առնեն: ահա այս պարագայիս մէջ ընկերութիւնն է որ կը ստիպէ ընութեան հակառակ պիտին մի բռնելու: և այսպիս այն մեզագրութիւնն որ վանաց համար առնեն նոյնն կը հշմարանի նուն աշխարհի մէջ ապրող բռնագատեալ ամուսնեաց վրայ: Մի թէ սատի այս հետեւթիւնն ոչ ելանէ: թէ ուրեմն հարկ է կրտսուորական առանելոն կամ մենաստանելու: յակասաւանի պահել և պաշտպանել ուր որ աշխարհի կենաց ախորդ չունեցող կուսանք սիրով յանեն կ'առնուան երկնային կենաք ապրից ինչպէս որ իրենիք կը հաւատան: Մանաւանց թէ նոյն պահպանութեանն համար ինամբով աշխատելու է՝ որ պէս օթեանն և ապաւենն ըսրը պաշտութեան և առարինութեան վասն այնացիկ՝ որք աշխարհիս մէջ իրենց համար յարմար պիտի մի ցցանելով: և յանեկարդ կենաց ալ խորշելով գլուխնին քաշելու տեղ մի կը բնառեն: ուր որ բարեպաշտ և բարեկարդ կեանիք մի զիրենիք ազատէ յանազատութենին և 'ի կորուսական հանապարհէ' զբաղելով միանգամացի ի բարեգործութիւնս յագուար ընկերին:

Այս նիւթօյս մրայ առարկութեանց մին ալ այս  
է. Արդեօք ժուժկալ կեանք անցընելու համար ուխ-  
ափ ինքզինք պարատուորելն՝ այնպիսի խոսամունք  
մի չե՞ զբր ըստ բնական ուժոյ շկարե ոք պահել, և  
վասնգ շկայ ՚ի փորձութենէ յաղթահարուելու  
և անկանելու. Անտարակոյս այս վասնգս հոս ալ  
կայ ինչպէս այն ամենայն պարագայից մեջ որ մարդ  
խոսամունք մի առնե կամ ինքզինք բանի մի կը պար-  
տաւորէ: Բայց այս ուրիշ բան ոչ ցուցանե՞ բայց  
եթէ այս որ պէտք է պատերազմիլ և զգուշանալ  
իւր խոսամունք մրայ հաստատ մնալու. և թէ ով որ  
զանցառութիւն առնե՞ արդարութեան և խզչի գետ  
կը մեզանչէ: Կին մի որ բացարձակապէս իւր էր-  
կանն առւած և զինքն մի թէ անվասնգ կարելինել որ  
ուրիշ մի զինքն զինք չհանե՞: և միթէ ամուսնութեան  
սահմանագրութիւնն կարե՞մք մերժել ասելով թէ  
շնութեամբ կարե եղանիլ: Զար գործելն մըս  
կարելի և մարդուս ազատութեան և ակարութեան  
պատճառաւ: Մի թէ ամենեին խօսք մի ոչ առս մար-  
դուս վախճակով որ խօսրիդ մրայ շկենաս, և օրինա-  
ւոր իրաց գործածութիւնն կարե՞մք արդիլել մըս-  
քերնիս գնելով որ ՚ի շարն գործածելն կարելի է:

Անտարակոյս կուսանաց մեջ ալ զայթակզու-  
թիւններ կարեն պատահիլ որպէս և ՚ի մեջ քահա-  
նայից. Լուսեր աւգոստինեան միանմն էր իւր իր  
ուխահց գրժելով իւր ուխտազրժութեանն հետե-  
ցուց կուսան մի զնա իրեն կին առնզով, և իւր ոճիրն  
աւելի ծանրացուց՝ զայն արդարացնելու համար նոր  
վարդապետութիւն մի հնարելով: Աւետարանն զա-  
լու գայթակղութիւններն գուշակած է՝ որովհետեւ  
՚իրիստոս տեղ մի առէ թէ պիտի գան, անկայն այս  
ալ կ'աւելցնէ. զ Այս մարդոյն յօյր ձեռն զայցէ»:  
Աւրեմն այս ցաւալի անկումներս ուրիշ բան ոչ  
ցուցանեն բայց եթէ անկողներուն ակարութիւնն

ու անօրէնութիւնն, և 'ի հակառակէն օրինաց գե-  
րազանց բարոյականն՝ զոր նորս առ առա հարկա-  
նեն, որովհետեւ նոյն իսկ աշխարհիքս նոցա վրայ կը  
դայլթակղի: Այս թէ չին թագաւորք բանաւորք:  
պաշտօնակալք անհաւատարիմք, համարակալք զա-  
շաբազք, դատաւորք անիրաւոք և կոշառակուրծք,  
զօրականք մատնիչք և վաճառականք գողք, և այս  
բաներէս կը հետեւի թէ ուրեմն թագաւորութիւնն,  
կառավարութիւնն, անաւութիւնն հասարակաց,  
դատաւորութիւնն, զինուօրութիւնն և վաճառա-  
կանութիւնն չար բաներ են: Տարակոյս չինայ որ  
գայլթակղութիւնն աւելի մեծ լինի հան՝ ուր որ աւե-  
լի առաքինութիւնն և բարի օրինակ աւենել կը սկս-  
ան մարդիկ: Բայց հան ալ նիւղին ամեն աւզ՝ խեղճ  
մարդկութիւնն իւր թշուառութեամբքն կը դուսի:  
և ազատութիւնն առ շարն կամ առ բարին զա-  
նալու ազատ կարողութեամբ:

Եւ որովհետեւ խօսքիս մեջ զքահանայս ալ յիշե-  
ցի: և նոցա ամեւրի կեանիքն ալ պարսաւեցի՛ կ'ու-  
զեմ տակաւ մի այս նիւթոյս վրայ ալ խօսիլ՝ որոյ  
վրայ այնշափ վէճ լինի աշխարհիս մեջ առանց իրա-  
րու խօսքն հասկանալու: Խոչ որ կրօնաւորական  
կենաց համար ասացաք: Նոյնն բանն է նաև քահա-  
նայից համար ալ վասն զի քահանայն ալ մեծ աստի-  
նաներն առնըով բացարձակ ժուժկալ առքելու  
կը պարաւորի: Կիսեմ որ այս բանս միշտ այսպէս  
եղած լէ: և Եկեղեցւոյ առաջին գարերուն մեջ  
քահանայից ամուսնանալն թոյլ արուած էր, ինչ-  
պէս նաև զիմն ալ յունական Եկեղեցին թոյլ կու-  
տայ, և նոյն իսկ կամթողիկէ Եկեղեցին միացեալ  
յունաց համար: Այս օրագիրս միայն ինձ համար  
գրելուս՝ ոչ կամբ այս նիւթոյս վրայ հմտարար  
խօսիլ. այլ իմաստափրաբար միայն կ'ուզեմ զիրն  
նկատել քահանայն այն գաղափարով աւմելով՝ որ.

պես կը ներկայացնէ զայն յանձնին խրում Քրիստոս։  
ուստի կ'ենթագրեմ զա որպէս Այս Աստվածոյ  
կարգեալ՝ ի ծառայութիւն հոգւոց՝ որոց աստուա-  
ծային կեանքն փախանցելու և այս կենաց մեռնդն  
տալու պաշտօն ու առաքելութիւնն ունի։ Այս կը  
հարցանեմ, թէ այս հոգւոց հոգեոր հայրն՝ որ իրա-  
ւամբ այս մեռնան իրեն կը տրուի՝ որովհետեւ նոցա  
կեանք և մեռնդ կռւասոյ, պէտք չէ որ ըստ կարի  
անթառակալ լիցի ՚ի մարմնոյ և ՚ի ցանկութեանց նո-  
րա։ Խմաստառերք և քրիստոնեոցք ամենքս ալ կը  
միարանիմք՝ թէ արդի մարդուս մեջ հոգին մարմնոց  
գեմ և մարմնն հոգւոյ գեմ միշտ կռուի մեջ է, և  
իրենց զարդացունեն խռուր համեմատութեամբ կը  
յառելու։ Խակ արդ ամուսնութիւնն որշափ ալ  
մասեր է, սակայն ըստ կարդի բնութեան մարմնոց  
գործ մի է, և իր ամեն հետեանքն փռքը ՚ի չատե  
զմարդ աշխարհային իրաց կը քաշէ կը տանի՝ իր  
հաստատած գերգաստանին պատճեռաւ։ Ապա ա-  
մուսնութեալ քահանայն միանդամայն պէտք և որ  
ընի հայր ըստ մարմնոյ և հայր ըստ հոգւոյ։ Կամ  
այլապէս այրն Աստվածոյ պիտի լինի այր կնոջ, և  
իւր արտին մշշիւր որգւոց համար ունեցած թական  
սերն պէտք է միանայ իւր համբն ունեցած սիրոյն  
հետ։ Բայ արդ այս բանս կարեցի է։ իւր ընտանեաց  
սիրովն ըեցուած սիրո ունեցող մարդ մի՛ կարէ ինք-  
զինք բազորութիւն Աստվածոյ և իւր նմանեաց զոհել  
անսահման և մինչև զմահ նուիրանմբ։ Ու, այս բանս  
անկարեցի է, որշափ ալ առաքինի մարդ լինի։ մա-  
նուանդ թէ պէտք չէ ալ որ լինի, որովհետեւ իրեն  
այր և իրըն հայր՝ թերզինքն նախ իր կնոջն պարտիան  
է՝ որ առանձինն իրաւունք ունի նորա վյայ, և եր-  
կրորդ իւր որդւոց որ ՚ի նմանէ կախումն ունին, որ-  
պէս արդիւր ՚ի պատճեռէ։

Աւստի համբարձուկան հիւանդաւթեանց, ժանախանի

և հասարակաց թշուառութեան ժամանակ, նույն ազքատաց ողորմութիւն բաժնուած առեն պէտք է որ իւր անձն և ունեցածն իրեններուն համար պահէն, որով գրեթէ իրեն արգելուած է լինել հոգի քաջ որ զանձն իւր գնել ՚ի վերաց պիտարաց, որովհետու իւր կեալքն ու կարողութիւններն, ոյժն և սահցուածքն ամենէն յառաջ իրեններուն և իր ընտանեաց պահելու պարագական է: Այս բանս շատ բացայացու է, և կը հառկանամ թե ինչու քահանցական կատարելութեան գերազանց դաշտագործին համեմու համար՝ կախողիկէ Եկեղեցին սեղանոյ պաշտօնեին վյոյ պարագ կը գնել ովախոհութիւնն ամուրի կէնք: Իսկ թէ ՚ի սկզբան ոյսորէն եղած չէ՝ ոյսոր ալ պատճառն յայտնի է, վասն զի յանհարծ կատարելագոյն աստիճանն ելնել ոչ լինի, ոյլ աստիճանաբարը: Ըստյ հարկ եթ վերջապէս հոն հառնել հովուական պաշտօնեին գերազանցութեան և վիճակութեան յառաջազիմութեամբն ու զարգաց մասը:

Թող զայն որ Փրիստոս ալ չամունացաւ, և իւր աշակերտաց ալ ասաց, ո Են որ զանձինս իւրեանց արարին ներքինիս վասն արքայութեան երկիրց: ուստի քահանայն ալ ոյս սակաւաւորաց գատէն լինելու է, որովհետև քան զայլս աւելի աշակերտ է իւր վարդապէտին, և յանձնայնի ոյնոր նմանելով և հետեւելով լինի լաւագցին: Մեր իմաստասերքս՝ որ ովախոհութեան ուիստ ոչ առենք, և շատ անգամ պէտք եղածէն ալ աւելի, երկրաբարչ մարդիկ եմք, եթէ Պլատոնի հետ ուղեմք ՚ի բարձունս վերանալ և զյաւիտենական նշանարտութիւնս և զպարզ գաղափարս խորհել ամենօրեայ փորձով ալ քաջ կը տեսնեմք թէ ուշտափ նիւթական իրաց և նոյն իսկ կարեւորաց ուրծածութիւնն մեր ոգին կը ծանրացրնեն, խորհրդոց գործածութեան արդելք լինին, և

անբարեխառնութիւնն մեր սրամտութիւնն կը բը-  
թացնէ ու բարձրանալուն արգելք լինի։ Եւ սա-  
կայն մեք ուրիշ բան չեմք՝ բայց եթէ զբառնք և  
ուսումնականք և հայեցողականք, և մեր վիճակէն  
պարտաւոր չեմք մեր նմանեաց օրինակ լինելու ամե-  
նայն առաքինութեանց։ Պիւթագորաս՝ որ կ'երեկի  
թէ խորախորհուրդ իմաստասէր մի եր և զգործնա-  
կանն 'ի աւսողականէն ոչ որոշէր՝ իրեն աշակերտաց  
պարտք կը գնէր շատ տարիներ առանձնակեաց,  
մտախոհ, բարեխառն և ժուժկալ կեանք մի անցը-  
նելու, որովհետեւ համոզեալ եր թէ ոգին բարձրա-  
ցնելու և մտաց թէ տալու համար՝ մարմինն ու  
զգայութիւններն չնշելու եր։ Կարծեմ մշջերնիս  
ոչ ոք զինքն այս բանիս համար կը պարտաւէ։ Թէ և  
մոքերնէս անգամ ոչ անցանէ իր օրինակին հետեիլ։  
Եւ սակայն մեծ քան զիւթագոր է ասս և քան  
զիւր դպրոցն։ Վասն զի Քրիստոսի վարդապետու-  
թիւնն գերազանցագոյն ալայծառագոյն և հզօրա-  
գոյն է քան զնա, որպէս աշխարհիս վրայ գործած  
յեղափոխութենէն յայտնի է։ Մի թէ քահանայք  
պաշտօնեայք Աւետարանին որ յերկնից կ'ընդունին  
ասեն, իրենց կնիքն և առաքելութիւնն, նուազա-  
գոյն ինչ առնելու են հոգիներն փրկելու համար՝  
քան զպիւթագորեանս ճշմարտութեան խորհրդա-  
ցաց լինելու համար։ Ուրեմն ինչո՞ւ աշխարհնք միոյն  
վրայ կը պարտաւէ զայն ինչ՝ զոր 'ի միւսումն կը  
գովէ և կը հրաշանայ։ Ա՛հ, այսոր համար որ Պիւ-  
թագոր և իր դպրոցն մեռաւ, իսկ Յիսուս և իւր  
Եկեղեցին կենդանի են և թագաւորեն 'ի միջի մե-  
րում և նեղեն զմել։

Խոսակցութիւն ընդ կարմեղական կուսանի

Զ Յունիս :

Բայց զոնէ այդ գժբազդ ազնիկն Փայր գթու.  
Ծեան ուզեր լինել հիւանդներն գարմանելու . աղ-  
քատներն հոգալու և ժողովրդեան տղայքն կըթե.  
Ըստ համար , այն առեն մեք իմաստաւերքս ալ գթու.  
Ծեամբ կը նայէինք իր մրայ , և հայրն ալ տեսլի դիւ-  
րաւ կը հաւաներ՝ որովհետեւ այնու դռնէ ընկերու.  
Ծեան օգտակար ծառայութիւն մի մատուցած լիներ.  
և բողոր աշխարհք ալ այս նուիրմանս մրայ կը զար-  
մանայ՝ որովհետեւ աշխարհին մեջ սակաւ կը տես-  
նուի , և անհատնում պառուզներ յառաջ կը քերէ . և  
ոչ մրայն զիրենք նուիրոզներուն փրկարար է : այլ  
և ժողովրդեան երթանկութեանն և լաւանալուն ալ  
մեծապէս ձեռնուու : Այսոր համար է որ Քորք գը-  
թութեան և Աղքարք քրիստոնէական վարդապէ-  
տութեան տասցեալ միաբանութիւնք շատ ընդու-  
նելի են այսոր յաշխարհի . մասն զի մարդասիրական  
ընկերութիւններն որ այնչափ եռանդեամբ և մանա-  
ւանց լափազանց ազազակաւ ու փող հարկանելով  
մարդկան ստորնագոյն տատիններն լաւացնելու  
կ՝ աշխարհն՝ իրենց սժանդակ կը դանեն այն բարի ան-  
ձինքն՝ որ առանց մարդկային վարձուց ակնկալու-  
թեան՝ իրենք զիրենք այս ծառայութեանն կը նուի-  
րեն . և իրաւունք ալ ունին զնոսա իրենց գործակից  
ընտրելու , որովհետեւ մրայն կամթողիկէ Եկեղեցւոյ  
մեջ կարեն գտանել այնպիսի անձնանուեց մարդիկ :  
Պոնէ իմ խեղճ բարեկամս ալ այս միմթարութիւնս  
ունենար՝ որ իր զաւակն ալ գործակից լինի ընկե-  
րութեան լաւանալուն : և կարեր պարծիւ Ծէ իր  
գերզատանին մեջ ալ կայ այս տեսակ դիւցազն մի :

Բայց Եկ ամս որ իրն այսպէս չէ, այլ ազդեհն կ'ուզէ կարմեղական ըթենէլ - կարմեղական... Նարզեն գեղեկացայ թէ ինչ է կարմեղական ասոցեալն - բարձր պատերով պատեալ ամս մի մեջ փակուած քանի մի համամիա կանոնյք Են եղել՝ որ խառակրօն կանոնի մի ներքեւ կ'առրին՝ անդադար մեռուցման մեջ, և գրեթէ օրն 'ի բան և գիշերուան մի մասն ալ աղօժից հետ անցուցանելով, հասաւ ցփսի հագած, կերակութիւն շմանելու շափ, և ամենենին մարդու երես չուսնելով: Առան զի զիրենք տեսնելու համար... մեզայ, իրենց հետ խօսելու համար՝ կրկին ան վարագուրներ քառուած պատուհաններ մի խօսելու և՛ որով զիրենք ոչ տեսանես, այլ կարծես թէ ուրաւականներու հետ կը խօսակցիս: Բոլոր կեանցերնին այս բանախո մեջ կ'անցուցանեն, և վանքեն գուրս գրեթէ ուսք չեն կոփեր. կամ թէ առամ առնեն որ մեռանին՝ մինչև որ մահուամբ հոգին վանքն թողու երթայ՝ մարմինն հան ձգելով:

Սարսափելի բան չէ այս որ ծագեահասեկ աղջիկ մի գեղեցիկ հանճարեղ շնորհացից ուստեալ երբեմն ան հարուսա: Որ ընկերութեան մեջ փայլելու ամեն միթոցերն անին և կարէ երթանիկ լինել, և պատշաճ ամեւանութեամբ ալ զայն գեղեցկացնել, և նորակերտ գերդաստանի մի երանութիւն ու փառք լինել՝ երթայ թազե այս առնեն բանս վազահաս գերեզմանի մի մեջ, խաւարի մեջ թողուած ծազկի մի պէս կամ գրուանի, ներքեւ դրուած դրագի պէս, առանց մարդու մի պաւան տեսնուելու՝ բայց Եթէ իրեն անձին նելայէս որ ինքն կը կարծէ, և նոցա որոց համար տղութելով այս նեղութիւններու և շարակրութիւններու կը կրէ՝ թնչապէս որ ինքն կ'երեակայէ: Ահա մեր ազդիկն ալ այս բանին համազուած է, և այնպիսի համազուած՝ որ բալոր զինքն նուիրելու պատրաստ է:

Բայց ինքն միայն չէ այսպէս մասնողն. վասն զի ա-

մեն զին բնառելով հարցնելով ևս որ առաջ ամենենին  
այսոր վրայ չէի մտածած՝ հասկացայ որ շատ երկիր-  
ներու մէջ ալ կարմեղականաց կարգն կը հասառ-  
առաք Եղել իրենց նախկին կանաներովն և վանական  
առհմանագրութիւններովն՝ որ առաջին վեզագիրուու-  
թեան ժամանակ ընդուած էին։ Այնպէս որ սոյն  
իսկ այս թնակատաներորդ գարուս մէջ որ միշտ ազա-  
տութեան մրայ կը խռուի, և մորգիկ այնշաբէ եւ-  
ռանցն ունին անկախութեան՝ որ հազիւ օրինաց  
լուծն կարեն կրել և որ և իցեւ բարեկարգութիւն  
իրենց ծանր կռ գայ, այսպիսի ժամանակի մի մէջ ուր  
անմեռաբրութիւնն ամեն բանի կը տիրապետէ. և  
իշխանութեան և հարստութեան ծարաւն որ նորու  
գործիքն և ամենուն միրան կը բարբարէ. և որ և և  
կերպով և միջոցով այնոց հասնելու կը թանայ, առա-  
կաւին կը գտուին եղել այնպիսի հոգիներ որ Քրիս-  
տոսի և Եկեղեցւոց իրափառ հաւաալով և յաւիտնա-  
կան երանութեան յուսալով, և ամենէն առջի Աս-  
տուծոց սէրն ունելով իրենց միրան հետամեռա լինին  
Եղել բնառելու զնազանդութիւն քան թէ զիշխա-  
նութիւն, զաղքատութիւն քան զնենութիւն, և  
զմահացումն մարմնոց քան թէ այնոր վայելիքն։

Ազա ուրեմն քրիստոնէական պին զեռ ոզէ և  
Եղել մեր մէջ իւր բոլոր բորբոքեալ եռանցովն և  
թափովն և ուժով. որովհետեւ վերբապէս այս պան-  
քերու մէջ փակուած կանոյք՝ յորոց շատերն աղ-  
ընկերութեամբ բարձրագոյն գաւորեն են կիրթ և  
ուսեալ, և իրենց ժամանակակցաց հաւասար իսկ-  
լացի, և աշխարհիս մէջ փայլող կանանցնե պակաս  
չէ իրենց համեստն, կամոցին կը նարեն այս առանկ  
կեանցու որ բնութիւնն կը գոզացնէ, և այնոր մէջ  
կը հանապազրգեն ամեն բանէ զրկուած, և իրենք  
զիրենք երջանիկ ալ կը համարին յանշուք մթու-  
թեան անդ վանաց՝ զոր բնաւ ոչ կ'ուզեն թողուլ և  
լքանել։

ԱԾ խոստովանիմ ոյ այս բանս թնդակես լինի ոչ հասկանամ. ումանկը տառն թէ այս բանս գլուխնին տաքնազէն առաջ կուգայ. ուրիշներն աղ թէ շլացումն կամ պատրաճնք բնջ և մոաց. և թէ այս ալ տեսակ մի խելաբախութիւն է որ բազոր կեանքերնին կ'ուզեն ծափել սպառել մժութեան անգործութեան ունայնութեան մեջ բնութեան օրինաց և բանի թեւագրութեան հակառակ: Բայց հոգիք կանանց գատարկ և անգործ չեն կարող մնալ. միւս պէտք է որ բան մի սիրեն, ուստի առ կանայք ալ պէտք է որ սիրածնին սիրեն, և եռանդեամբ ալ սիրեն, որովհետեւ բոլոր իրենց գոյութիւնն այնոր կը նուիրեն. Ի՞նչ է ուրեմն իրենց այս ափ եռանդեամբ սիրածն այն միայնութեան մեջ. աշխարհային իրեր չեն որովհետեւ յամենայնէ հրաժարեալ են, ապա ուրեմն անգիր աշխարհի իր մի կը փափաքի իրենց սիրան՝ որոյ անշուշտ սպառորութիւններն և ուրախութիւններն այժմնին կ'ընդունին աշխարհիս զուարձութիւններն հրաժարենան մի լիներ այս կանայք ևեթ այնու վարակեալ պիտի լինեին. բայց նկ անս որ շատ արք ալ կան նոյն յիմարութենէն բռնուած. կարգուսեանք, արապեանք, կարմեզական միանմունք և այլք աշխարհիս մեջ ընցուն են՝ որ մենաստաններու մեջ փակուած՝ իրենք զիրենք բոլորովին բռնութեան մահաց. ման և ազօթից տուած են: — Եւ անկարելի է որ այսպիսի անշահասեր և բարձրակատար առաքինութեանց տէր մարդիկ, կամ գոնէ իրենք իրենց վրայ այսչափ ոյժ և ափրութիւն ունեցող մարդիկ խենթ կամ բախած լիցին: Այսափ ծանր որովոզութիւնն մի առնելու համար՝ զօրաւոր պատճառ մի պէտք է, որ իրենց ոյժ կուտայ անձերնին նուիրելու ոչ թէ վազանցիկ գործով որ գլխի բռնկածութենել յառաջ կուգայ, այլ բոլոր կեանքերնին նուիրելով, և այն ալ

անկեղծաբար՝ որովհետև զիրենք այս բանեա արգի-  
լելու համար ալ մեծ բանութիւն բանեցնելու է:

Այս հոգեխօսական խնդիրս լուծելու հետաքըրք-  
րութեամբ՝ որոյ վրայ մինչև ցայտմ մատածած չեի,  
և սիրոս հանգստացնելու համար՝ միաբար դրի որ բռն  
ազրիւրին դիմում, և սաոյդ տեղեկութիւնն անահ  
ընդունիմ. և պատրուակաւ՝ որպէս թէ ծանօթ ազ-  
գականաց տեղեկութիւն կ'ուզէի առջ կարմզակա-  
նաց կենաց վրայք, որովհետև ազթիկնին կուռմ ու-  
նել կը ցուցաներ այն կրօնքին, որ իրաւ ալ էր, կու-  
սաստանին արբասուհին ունինքրութիւն մի խնդրե-  
ցի, և մեր խօսակցութեան համառօտութիւնն գրեթէ  
այս է՝ ինչ որ պիտի գրեմ:

Նախ պէտք է խոստովանիմ որ խօսարանին երկա-  
թեայ վանդակապատ պատուհանն՝ կարգէ գուրս  
տիսուր ազգեցութիւնն մի արբար իմ վրաս, որով այն  
տեղն բանափ կը նմաներ. և մանաւանդ այն առ վա-  
րագոյրն՝ որ խօսակցիս կերպարանքն յինէն ծածկե-  
լով միայն իր ձայնն յականչս կը հաներ՝ տունց աշ-  
քերնիս զիրաբ տեսնելու և մեզ զգնելու որ իրարու-  
խօսքն հասկանամբ։ Այս արծաթի հնչեղ ձայնն որ  
մթութեան մէջն կը լսուեր՝ առջի թերան ինձ մեռե-  
լոյ ձայնի մի պէտ եկաւ՝ որ գերեզմանին խորեն ինձ  
հետ կը խօսէր։ Աակայն ես այս մահագուշակ երեւա-  
կայութեանս տեղիք լտուի, մանաւանդ թէ ուսկա-  
մի ատեն անցնելէն եաւ՝ այս կանացի վնիտ ձայնն  
որ ստուերաց մէջն կը խօսէր՝ ախորժ կուզար թնձ,  
քազցր և միանգամայն հաստատուն, և իմ հարցմանց  
սիրողաբար կը պատասխաներ. ուստի այս խորհը-  
գաւոր նորութիւնն ինձ անհանջ ոչ դայ:

« Սիրելի մայր, ասացի, որովհետև այս անունս կը  
տրուի իրեն, վստահութեամբ կուզամ մեր կրօնից  
վրայ տեղեկութիւններ հարցնելու՝ իրեն վախճանին  
բարեկարգութեանն անցուցած կեանիքնուուդ վրայ.

շեարծէք թէ պարզ հետաքրքրութիւն մի է այս գործածու, ոչ ոյլ կ'ուզեմ խեղճ անմիիթար հօր մի սիրան միսիթարել և լուսաւորել որոյ զաւակն կ'ուզեմ ձեր կրօնքն մանել. թերեւ ձեր առելիքն՝ նորա միացն որոշէ իւր հաւանաւթիւնն ապլու՝ զոր մինչև հիմա չուզեր առլ :

Աքրասուհին պարզ կերպով պատասխանեց. «Տեր իմ, մեք իւր զն ազդիկներ եմք՝ որ զԱստուած քան զայնարհու առելի կը սիրեմք, և բոլորամբն իրեն և ընկերաց ծառայութեան նուիրուելու համար՝ մնաստանիս մեջ կ'ապրիմք հնազանդութեամբ ազբատութեամբ և ոզմախոհութեամբ, մարդէ բան մի չուզելով, և ինչ որ առն շնորհակալութեամբ ընդունելով» :

«Մայր իմ, Աստուածոյ ծառայութեան համար առացանդդ կը հասկանամ, որովհետեւ ձեր ժամանակին մեծ մասն ազօթքով կ'անցուցանեք. բայց ոչ զիտեմ թէ ընկերին ծառայութեան համար ինչ առնեք, ուրովհետեւ վանքեն գուրս ոչ ելանեք, և ուրիշ կրօնաւորաց պէս հիւանդներ գարմանելու, ազքատներն հոգալու և աղայք կրթելու ոչ զբաղիք» :

«Ընկերին օգուատանելու շատ կերպեր կան, Տեր, և կը վախեմ որ գուք մերինն պիտի լըմբոնէք կամ շհաւանիք՝ եթէ քրիստոնեայ հաւատք չունիք և թէ որ ձեզ ծանօթ չէ Աւետարանին ողին՝ զոր մարդկանց մեջ տարածելու առաքելութիւնն Եկեղեցւոյ տրուած է: Ըստ աշխարհի նկատելով կը խոսանգանիմ որ մեք գատարկակեաց և անմիտ մարդիկ կը համարուիմք, սակայն խզներնիս կը մըսյէ որ երկուքն ալ չեմք» :

«ԱՌ խոսանգանիմ, մայր իմ, որ յոյժ բարեխրասկամբողիկեայներեն չեմ, սակայն կրօնից ալ թշնամի չեմ: Տղայութեանս առեն ես ալ հաւատք ունեի, և այն ժամանակի կենաց տմնեն առելի քաջցր յիշատակն առաջին հաղորդութեանս յիշատակն իւ՝ զոր

շատ լաւ կառարեցի. տակաւին այն ժամանակին սակաւ մի բան մնացած է սիրառ. դռնեւ այնչափ որ ձեր առելիքն կարեմ հասկանալ:

Ա Տեր, որովհետեւ զուք անկեզն կերպով կը խօսիք, ես ալ պէտք է որ նոյն կերպով պատասխանեմ, և պարզաբար զբուցեմ ձեզ թէ մեր ժամանակն ինչ բանի կը գործածեմք, և ինչպէս այնու վասահ եմք մեր նմանեաց օդասկար լինելու ։ Եթէ ոչ առանձլուն իսկ, դռնեւ այնչափ՝ որյափ որ ձեր համրած արտաքին գործերը են ինչպէս այն ամեն բան որ ՚ի սիրոյ յառաջ կռւգան, և սակայն մեր կռջումն չէ այնոց զբաղվէն։ Տերն մեր Յիսուս Քրիստոս մեր ալ օրինակն է ինչպէս ուրիշ ամեն կռւսանաց. բայց իւրաքանչիւր կրօնք՝ նորա վարուց միոյ մասին յատկապէս նմանելու համար կռջուած է, և այս զմանզան նմանութիւնները նոյն ոգուով կենզանացեալ՝ իւրաքանչիւրն իր շափով Փրկչին կեանքն յառաջ կը բերէ եկեղեցւոյ մեջ ։

Ա Որդին Առառեայ որ զմարդիկ փրկելու համար մարդացաւ։ Նոցա մրգաց քաւութիւնն վրան առնլով և քոխանակ նոցա աստուածայինն արգարութեանն մոխարինելով իւր առաքելութիւնն կատարեց անդադար ազգեկողվ վասն նոցա՝ զորս իրեն եզրարս կոյնելու արժանի համարեցաւ, և մանաւանդ նոցա համար մեռնելով։ Բայց մի և նոյն առենն որ կ'ազգութէր և ինքզինք կը նուիրեր՝ իր երկրաւոր կեանքն ալ զնոսա ուսուցանելու և իրենց հոգւոյն և մարմնոյն ցաւերն բժշկելու և ամենայն կերպով զիրենք միսիթարելու կ'անցներ։ Միաբանութիւններ կան որ նման կը հետեւին գլխաւորապէս սիրոյ արտաքին գործերովն, և իրենց գործած անհունն բարիքն աւելի անհունն ալքին կը զարնէ՛ որովհետու այնոր արգիւնքն անմիջապէս կը առնենն ու կը վայելն։ Խակ ուրիշ-

ներն՝ ընդ որս և մեք կը փափաքիմք՝ Փրկչին նմանելու իր առաքելութեան ամենէն առելի կարևոր մասմէն՝ որ եր տալ զկեանս իւր վասն փրկութեան մեզաւորաց և հեղուլ զարիւն իւր՝ ՚ի վերայ խաչին առ ՚ի փրկառաւորի զնոսա։ Առափ մեք առ կը բանամք չարշարակից լինել Փրիստոսի՝ միանալով ընդ նմա իւր ոգութիւն, նախ վասն քաւութեան մեր յատուկ մեզայն, և յետոյ վասն այլոց մեզաւորաց՝ որ Աստուծոյ արդարութեան վրայ ոչ մտածեն, և փոխանակ սոցա մեք զմեզ կը նուիրեմք յազմակէզ։

« Թերեւ Թերեւ, ասաց քահանայն ժամանակ, մանաւանգ երբ ցուցանեմ ձեզ որ այս մասիս մեջ ամենին անտեղութիւն լինյ : Ծեպէա ես ալ համազուած եմ որ մասաց զարմանալի և անհասանելի:

կ'երեի : Այսու զի եթէ առանց նախապաշտրման և  
անկեղծաբար ուղեւք ինձ մտիկ առնել՝ ինչպէս որ  
ուրիշ անդամ քործն առած եմ, կը յաւամ համա-  
զել զձեղ թէ մարմաց յարութիւնն կարելի է և կը  
ցուցուի բնութեան շատ գործերէն՝ որք անտարա-  
կոյս յարութեան չափ տարօրինակ չեն, որովհետեւ  
ամեն որ մեր աշոց առջն կը կատարուին, և մեր  
մեռին ալ կը ստիպուի զայն ընդունելու՝ թէ և  
մեկնութիւնն մի չկարացէ տալ : Ազա ուրեմն գեր-  
բնական խորհուրդ մի մեկնելու համար բնական խոր-  
հրդոց գիմեմք՝ որք թէ և նոյնպէս պայծառ չեն՝  
առկային անհերքելի են, որով իրաւունք ունենամք  
հարցանելու թէ արգելոք որ կողման հաւատք ըն-  
ծայելը աւելիք գտնւար է, կամ թէ ասեմք թէ ար-  
գելոք ինչլքերնիս չհամելուն համար՝ զերբնականն  
որ ուրանամք՝ պիտի շատիպուիմք բնութեան մեջ  
եղած գաղանիքն ալ ուրանալու, որովհետեւ սորա  
ալ մեզ համար անբացատրելի են :

Ես . — « Եատ հետարրբութեամք մտիկ պիտի  
առնեմ ասացածներուու : և ապահով եղեք առանց  
կողմանակցութեան և պարզմուութեամք սրտի . որով  
հետեւ ուր որ գտուի Շնմարտութիւնն կը սիրեմ, և  
մեր վրայ ալ վստահութիւն ունիմ :

Քանինայն . — « Հազար ութէ հարիւր տարիէն ա-  
ռելիք կայ՝ որ Պաւլոս առաքեալ Աթենքի հրապա-  
րակին մէջ Աւետարանն քարոզած առեն՝ ուր որ  
քաղաքացիք կը ժողովէին նոր լուրեր լսելու հա-  
մար, բազմութիւնն իր տարօրինակ վարդապետու-  
թիւնն լսելով՝ զինքն սկսաւ ծաղրել, և սերմանափաղ  
կոչել զինքն . ու երբ Ուրիսապագոս տարին զինքն՝ որ  
իմաստնոց և իմաստափրաց ժողովարանն էր, և հան  
ալ սկսաւ Յիսուսի Քրիստոսի վրայ խօսիլ թէ ինչ-  
պէս մորդկանց փրկութեանն համար մեռել և յա-  
րութիւն առել էր՝ գարձեալ ամենքն սկսան ինառաւ

ու ծիծաղիլ և արհամարհանոց ասէին . Բաւական  
է՝ ուրիշ անգամ մտիկ առեւմբ :

« Նոյն առաքեալն ու կարնթացիս իւր առաջին  
թուղթն գրած ժամանակ՝ անտարակոյս միտքն է .  
կամ է Արխոսապարին մէջ յարութիւն զեմ բերուած  
առարկութիւններն . որովհետեւ նոյն թղթոյն ԺԵՐ  
դլիոյն մէջ ցուցանելն եաւ թէ Յիսուսի Քրիստոսի  
յարութիւնն մեր յարութեան երաշխաւորութիւնն  
է՝ ասէ . . . Բայց ԺԵՐԵՍ ոք ինձ հարցանէ՝ թէ մե-  
ռելներն ինչպէս յարութիւն պիտի առնուն , և  
ինչ մարմնով պիտի գան : Այս ինչպէս յայտնի  
կ'երեխ , սիրելի , որ այն գարուն իմաստակըն ալ-  
հիմակուաններուն պէս առաջնապեալ էին այս մար-  
մայ յարութեան ինդրոյն վրայ : Ուստի ինձ ալ ա-  
մենէն լսուն այն կ'երեխ որ մեր հարցման պատաս-  
խան տամ Պաւլոս առաքելոյն ասացածովն՝ որ յա-  
րութիւնն ինչպէս պիտի լինի այն բացատրել չէ  
միտքն՝ այլ այնոր կարելութիւնն ցուցանել՝ "Ի բնա-  
կան կարգեւ առնուած հանդիտութեամբ մի , մեր  
հիմակուան մարմինն սերմանն մի նմանցնելով" յորմէ  
ժամանակաւ բոյս մի պիտի եղնէ իր ցողունովն սե-  
րեներով ծաղկով ու սերմանմք : Ուստի՝ ասէ նա , թէ  
մարմինն որ "ի սերմանէ անտի եղանէ" ոչ նոյն սերմի-  
նէ ինչ որ մեր աշաց կ'երեւէր՝ այլ այն սերմանն մէջ  
կ'զած մարմինն . և ցանովն նոյն մարմինն ցցաներ՝ այլ  
զերմէն որ ունի յինքեան զմարմինն զայն : Նոյնն ա-  
մելու է նաև այն մարմինյն համար՝ որով յարու-  
թիւն պիտի առնումք :

\* Արգելն Յիսուս Քրիստոս ասացած էր . « Եթէ  
ոչ համ ցործնոյ անկեալ յերկիր մռանիցի՝ բնիքն  
միայն կոյ , ապա եթէ մռանիցի՝ բազում արդիւնն  
առնէ : այսպէս ալ , ասէ Պաւլոս առաքեալ , մեր  
մարմինն պէսք է որ մռնի՝ կենդանալու համար .  
բայց Աստուած իւրաքանչիւր սերմանն իր սեպհական

մարտին կուտայ՝ որպես և կուտի. վասն զի առեն մար-  
մին նոյն մարտին չեւ, հասպա մարդոց մարտին ուրիշ  
է, անառաջ մարտին ուրիշ, թաշնոց մարտին ուրիշ  
է և ձիանց մարտին ուրիշ, Արքեաւոր մարտիներ  
ալ կան, Երկրաւոր մարտիներ ալ, արևոն վասպեն  
ուրիշ է, լուսաբնն ուրիշ, ասազերուն ալ ուրիշ:  
Այսպես և մեռելոց յարութիւնն ալ : Արականու-  
թեամբ ցանուած մարտին՝ առանց ապահովութեան  
յարութիւն պիտի առնու, անարգութեամբ մեր-  
մանուածն վասպ պիտի յառնէ, ակարութեամբ  
սերմանուածն՝ զրութեամբ պիտի կենդանանց.  
շնչաւոր մարտին սերմանուածն՝ որպես մարտին պիտի  
գանաց : Որովհեան, կը դոչե առաքեալի, եթե  
շնչաւոր մարտին կայ՝ ապա ոգեար մարտին ալ կայ,  
ինչպես որ զրուած է : Առաջին մարդն Ազամ եղա-  
շունց կենդանի, և Երկրորդ Ազամ՝ ի հոգի կենդան-  
աբար : Բայց չեւ թե առաջ հոգեարն՝ հասպա շնչա-  
ւորն (ական) ու եարը հոգեարն : Առաջին մարդն  
յերկրի առնուած է հոգեզեն, որպես նաև իւր զա-  
կըներն : Իսկ Երկրորդն յերկնից Տեր և որպես և իր  
զաւկներն : Եւ ինչպես որ հոգեզենին կերպարաններն  
հագեր ենք՝ Երկնաւորին կերպարանքն ալ պիտի  
հագնիմբ - վասն զի մարտին և արիւն զարքոցութիւն  
Երկնից ոչ ժառանգեն, և ոչ ալ ապահովութիւնն  
զանազանանութիւնն կը ժառանգե ... Խորհուրդ  
մ' ալ առեմ ձեզ, ամենքս ալ յարութիւն պիտի առ-  
նումք՝ բայց ամենքս ալ պիտի շիմանութիւնք, յանեկար-  
ծ ակի, յական թաթափել՝ վերցնին վազին առեն՝ վասն  
զի վոզ պիտի զարնուի, և մոռեալներն առանց ապա-  
հանութեան պիտի յառնեն, և մեք ալ պիտի նարո-  
գութիւնք : Վասն զի պիտի և որ այս ապահովանցու-  
մարտին՝ անապահովութիւն զգենու, և մահկանա-  
ցու մարտին՝ անմահաւթիւն զգենու : և ոյն առեն  
պիտի կատարուի Գրոց այն խոզին՝ Ընկլաւ մահ՝ ի

յազմութիւն։ Ուր և մաս յազմութիւն քոյ։ ուր ևն գժախը խայթոցք քոյ։ Ուստի ասցուց գոհութիւն Առաջածոյ որ այս մեզ զյազմութիւն 'ի մեան Տեան մերոյ Յիսուսի Քրիստոսի ։

Ես. — « ՈՇ Տեր վարդապետ, գոշեցի բոլորովին յանձնես գուրս ելած։ Բնչ գերապանծ խօսքեր են սոքա, և ինչպիսի նոր հորիզոն մի կը բանան իմ յափշտակուած ոգւցյա առն։ Այսպիսի լեզու մի բնաւ լուսւած չէ՝ թէ զազափարաց վահմութեան և թէ կերպին պայծառութեան կողմաննէ. Կոյն իսկ Պլատոնի մեջ բան մի կարգացած չեմ՝ որ այս խօրութեան և պայծառութեան համար։ Եւ զիս աւելի ցեցողն այն լուսաւոր հանգիտութիւնն կամ նմանութիւնն է որ իր բնական լուսավիք՝ բնութեան վեր իր մի կը լուսաւորէ. այնպէս որ երեելի և անոանելի երբ զաներեցիմ և զանտասանելիս կը յայննն, և մեր ակար մասց կ'օդնեն զնոսա հասկանալու համար։ Այս բանս ինձ նոր իմաստասիրութիւն մի նշնարել կուտայ՝ որոյ նախազգացմունքն միշտ ունեցած էի. և որոյ շատիզն պիտի լինի՝ հաւատոյ լոյսն բանի կամ մասց լուսոյն հետ միացնել։ Բայց այսպիսի գիտութեան առաջին պայմանն է հաւատա ունել այն յայտնեալ խօսքին՝ որ լուսաւորէր և արատփայլէր շուրջանակի Սրբոյն Պաւղոսի. որ թշուառարար իմ խաւարին մասց մեջ կայծն անգամ չէ մնացել . . . . .»

Բանանայն. — « Սիրեցեալ Տեր, ոյդ լոյսն կարէ իջանել մեր մթորն՝ եթէ բոլորով սրտիւ խնդրեք զայն. և այն փափաքն զոր այժմ ցուցանելք այնոր սկզբնաւորութիւնն է. աստուածային լոյսն ալ արեւոն լուսոյն պէս արդեւք լցնելուց պէս ամեն անզ կը ծառալի։ Բայց առաջ տանիմը այն հանգիտութիւնն որ մեզ այնչափ ազգու երեցաւ, որպէս զի այնու մեր ինզիրն ալ լուսաւորուի, օգնելով մեզ որ մարմնոյ յարութիւնն կարելի լինելն ըմբռնելք.

որ կը յուսամ թէ արդեն անտեղի բան մի ոչ երեխ  
ձեզ ։ — Պաւլոս առաքելոյն ասացած էն կը ահա-  
նելք ։ որ մեր ապագայ մարդին ։ Ներկայ մարդինոյս  
նկատմամբ այնպէս է ։ որպէս ծաղիկն աերժան քով ։  
յորմէ ելանէ ։ և որ նոյն գոյացութիւնն է՝ առկայի  
այլակերպեալ ։ և նոյն եակն է՝ ուրիշ ձերքեւ ։ և  
թիւպէս հողն ցանուած փանաքի սերմն ժամանակէ  
մի եալն գեղեցիկ և անուշահոս ծաղիկ մի պէս կ'ե-  
րեխ ։ այսպէս նիւթական մարդոս սերմննեալ ի մար-  
մին ։ որ պիտի զայ որ ողեղեն մարմին պիտի երեխ զոր  
և պիտի զգենուամբ ի վախճանն զարուց ։ Բնապէս կ'ե-  
րեխ քեզ այս յանդուգն բացատրութիւնն ։ կարծեմ  
իմաստափրութիւնն ընտալ չէ համարժակած այսպի-  
սի բացատրութիւն մի գործածել ։ այլ ընդհակառա-  
կըն մեծ սիսալինն մէջ անկած է ոգին և նիւթն նոյ-  
նացնելով ։ զոր Պաւլոս առաքեալ ոչ երբեք գործած  
է ։ Բնին միշտ զնոսա իրարու կը մօտեցնէ ։ անդրա-  
գարժ թափանցողութեամբ բայց ոչ երբեք իրարու  
հետ շփովելով ։ և նոյն կատարեալ միութիւնն կը  
բացատրէ ։ Երկուքին ալ հազորդակցութեամբն ընդ-  
առուածային ոգուց և ընդ աստուածային կենաց ։  
որ ուրիշ կերպով շնասկութիր բայց եթէ վերա-  
մամբ մարդկութեան յաստուածութիւնն անդր ի կը ը-  
կին բնութեան Աստուծոյ մարդացելոյ ։

Ես ։ — Ա Անտարտիկյա Բանին մարմնաւորութեան  
գերապանն հետեւութիւնն է այս ։ զոր անենեին չեմ  
խորհած ։ և հիմա կը սկսիմ իմանալ որ Փրիստոս  
երկրիս զբոյ մարդկուցին պատմութեան կեդրոնն է ։  
առանց նորու բան մի չեմք կարող հասկանալ մար-  
դուս ծագմանն ։ Ներկայ պինակին ։ և ապագայ առհ-  
մանեալ պայմանին զբոյ ։

Բանանայն ։ — Աստուած տար որ այս համարտու-  
թիւնն ըստ ըմբռնեիք բոլոր իր խորութեամբն բար-  
ձրութեամբն ու լայնութեամբն ։ վասն զի այս իսկ և

քրիստոնէական հաւատաց մասմաց սկիզբն . որպէս  
Յիսուս Քրիստոս սկիզբն և ավելացն է ակաց և աղ-  
րիւր կենդանութեան : Բայց մեր միջնարանութենին  
գուրու չելնելու համար՝ առ այժմ այս միայն հաս-  
տատեմք՝ որ ինչպէս իմանայ Աւետարանն մարմնոց  
յարութիւնն այնոր (այսինքն մարմնոյ) եղծումն չէ .  
և Յարութիւնն ու է վախճան նորմայ՝ այլ փափառնեան նորու ։  
առեւ սուրբ Անոն պատ , և կը յաւելըս . Ուսին անց-  
ակ' բնադիւնն ու եղծանի . որտես կ'անցնի՝ բայց բնու-  
թիւնն նոյն կը մնայ . Այնոր համար Յոր երանելի  
իւր մարմնին շօշափելով կը գոչեր . և Գիտեմ որ այս  
մարմնով յարութիւն պիտի առնում :

Ա Հօմա բարե համն ցեք . Տեր , ստեղափկ մի ևս իմ  
ետեւ և գալու հանգիտութեանց այս լուսաւոր Խօս-  
տուս մեջ՝ զոր Քրիստոս մեր տոքի բացաւ իւր զեզե-  
ցիկ առակներովն , և զոր առաքելոք և վարդապետք  
առաջ առարին զաներեցիթ մն երեւելոք և զգերբնա-  
կանն բնականաւ բացարելով . յորոց միջի Տեր-  
տուլիանոս իր Յաղագ յարութիւնն նորմայ Խօսին մեջ  
տաեւ . և Ուսազի այ կայոց կը նահիւնն է դարութիւն . ուշն  
դիւրուգուն հասաւունիւն նորմարեն . և միւսիւն բնադիւնն .  
որով տաեւ կ'ուզէ թէ զրութիւնն կամ զհամա-  
դոյս լաւ քննելով . մարդ կը պատրաստուի ՚ի հա-  
ւատու յայտնեալ բանին . ինչպէս քերթող մի առաց

Բանելն մուաց ՚ի տազու իմ՝ անեւ քզմարդ ՚ի հաւատու :

» Արդ եթէ Պաւլոս առաքելոյն պէս՝ համագոյից  
զանազան պետութիւններն զնեւմք՝ որինակներ և  
զրեթէ մարդարեւթիւններ զտանեմք յարութեան  
մարմնոյ՝ էակաց մշանդենաւոր կերպարանափառու-  
թեանց մեջ , որոց էւս թիւնն և անհաւատկանութիւնն  
կան և Թաման իրենց որտեսներն և երեսյթներն անգա-  
գար ցույնուած ժամանակ . ինչպատճեւթեան ըստ .

ւական հմտութիւն չունիմ որ այս ամեն օրինակ ներս ձեզ յիշեցընք. միոյն քանի մի սպառագիւններն յառաջ բերեմ զորս աշխարհ ամեն դիտէ :

Ա Զարն իրեն մասնկանց սեզմութեան և ընդարձակութեան համեմատ՝ երեք զանազան վիճակ ունի. Երբ ցուրտն զինքն կը սեղմէ՝ կը պնդանայ և հաստատուն մարդին կը գանձայ, և այս վիճակիս մէջ կարծես թէ մահուան վիճակ կ'առնու և այնոր կնիքն մրայն կ'երեսի որ է ցրտութիւն անշարժութիւն և անգործութիւն. և առ ժամանակ մի հեղուկի որակ ներն կորուանելով՝ այնոր պաշտօններն ցկարե կատարել : Բայց երբ շերմութիւնն այնոր մէջ կը թափանցէ՝ շարժումն և կեանք կը սատնայ, և վազելով կ'երթայ անդերն կը բեզմաւորէ, և նորաւարահար մեքենայից շարժումն կուտայ : Եւ եթէ մինչև եռացման աստիճան զինքն տարցնես՝ հեղուկէն ձգական հոսանուած կը գանձայ, և չոգիանալով այնպիսի զարութիւն մի կ'ունենայ՝ որ սարսափելի ծանրութիւններ վեր կը վերցընէ և բազմութեան կառաց խումբ մի արտգութեամբ կը քշէ կը սանի : Ո՞վ կարեր են թագրել թէ լնացեալ ջուրն՝ այսպիսի զօրութիւն ունենայ : Թէ որ սառցոցն՝ որ կեանքն կ'ընդարձացնէ՝ չոգւոյ հետ բազգատես՝ որ այնպիսի հզօր կեանք մի յառաջ կը բերէ, ոչ ապարեն այնպիս հաւաալդ կուգայ՝ որ երկու զանազան մանաւանդ թէ իրարուհակառակ գոյացութիւններ են. առկայն ներքսապէս մի և նոյն բնութիւնն է, և որակն միոյն փռիւածն է. Ուստի աշակէ բնակիւն ու կոչուն : Այսպէս է մարմայ յարութիւնն ալ. Ուշանի ուստիւնքն և յանձն պըսպէսէ : Երկրաւոր վիճակի մէջ մեռելոյ պէս է՝ համեմատութեամբ երկնային վիճակին՝ զոր որ մի պիտի զգենու :

Ա Ազամաննգի՝ անյագ անօթն այն լուսոյ և ամեննէն հզօր ցուացնողն, որ քան զամենայն մարդին ՚ի ներ-

քոյ արեգակնան պայծառ և վնիա է, և այս պատճեաւուաւ թանկազին զարդ է աւզանց և գահու և զեղեցկաւթեան, ուրիշ բան չէ՝ բայց եթէ անունու ոյլակերպեալ՝ որ բնութեան մեջ ամենեն զբմահար մարդին է, և կարծես թէ ապրուարոսի խաւարեն ելած է։ Առ սակայն նոյն գոյացութիւնն է՝ հրով զտեալ և բիւրեզացեալ՝ որ այնոր անմարրութիւնն զտելով և խաւարեն հալածելով՝ արեւու պէս կը պայծառացրի։ Անոյն առանձնդ փոխութիւն առանկ մի յարութիւն չէ, կամ անցք ՚ի խաւարոյին պիհակէ ՚ի ըռուաւորն, և սակայն երկու պիհակաց մեջ ալ բնութիւնն նոյն կը մնայ, և որտեղ միայն կը փոխուի։ Ուստի անշանէ՝ բնութիւնն ու կշանէն ։

○ Աւազը մոխիրն ու կապարն ան, և լոսիլէն և որոշեալ շատիով իրարու հետ խառնելէն և առ՝ քու բայց մի սասամիկ կրակի մեջ զիր Երկայն առեն, յետոյ այն հալած նիւթի արօյը տախտակի մի վրայ թափէ, և կ'ունենաս մեր հայելեաց բիւրեզն, զոր եթէ յղկես և կը այեկես՝ սրանչելի կերպով լոյսն կը ցուցացնէ, և կամ զանազան ձեռքով որ կարուի՝ պայլուն կայծականց պէս մեր աշքն կ'առնու։ Առ սակայն առաջն զբմահար մարդին է, մոխիրն ոյրած բռնոց խացորդն է, և կապարն ծանր մարդին հակառակ և անընդունակ լուսոյ։ Անտարակոյս հոս ալ որակաց փոփոխութիւնն և այլակերպութիւնն մի կայ, իսկ գոյացութեանց բնութիւնն նոյն մնացած է։ Ուստի անշանէ՝ բնութիւնն ու կշանէն, այսպէս է և ՚ի յարութեան մարմնոց ։

○ Կենքանական պետաւթեան մեջ ալ՝ ամբողջ զաս մի միջանակեր կան՝ որ բոլոր իրենց կեանցն երեք զանազան պիհակներէ կ'անցնին։ Կամ որպէս որդ Երկրաբարչ և հոգաբնակ, յետոյ կը փակուին զերեզմանի մի մեջ՝ ուր ժամանակ մի անշարժ կը մնան հարսնառակի պիհակի մեջ, և վերջը յանկարու իրենց

գերեզմանն ծակելով՝ և յաղթանակաւ անտի ելնելով՝ արդիաթևեալ յօդս կը թաշին երգիներանդ պայծառ գոյներով Արգեք մարմաց վերջնական յարութեան և իւր կերպարանափոխութեամբ ստացած զօրութեան՝ քան զայս գեղեցիկ նշանակ և սրբնակ կարէ՛ լինել ։ Առան զի այս գեղատեսիլ թիթեղիիկ յառաջազոյն որդ մի էր, և ինքնին թազուելով՝ առերեցիթ մահ մի ունեցաւ, և յեայ իւր ընութեան զօրութեամբն անտի ելնելով՝ գեղ ՚ի ըստ երկինց յարեաւ և թաւու։ Միւս նոյն ետքն է՝ բայց զանազան վիճակներով, յարս իւր որակներն կը փախուին՝ բայց ընութիւնն նոյն կը մնայ ։ այսպէս և ՚ի յարութեան մարմաց ։ Ու-ին աւշան՝ բնութիւնն ու եզրակածն ։

Ա Վերջապէս, սիրեցեալ Տէր, գուք քան զիս այլ ըստ գիտեք որ մարդոյ կազմուորութիւնն իւր ամեն մասանց մէջ նոմին նոյնութեամբ չմնար ։ այլ հիւլէներն անգագար տարուրեր մի կ'ունենան՝ շարժմամբ և մնագեամբ իւր զօրութիւնն կորուսանելով և նորոգուելով ։ և ոմանք ՚ի բնախօսաց առեն թէ եօթն տարւոյ մէջ՝ մարդուս մարմին բովանդակապէս կը նորոգուի, և առկայն միւս նոյն մարմինն է և նոյն մարդն, այնպէս որ իւր մարդկային գոյութեան մէջ անգագար և գարեւագարձ շրջան մի կայ և զծման և նորոգման, և մշտնշենաւոր անցք մի ՚ի կենաց ՚ի մահ և ՚ի մահուանե ՚ի կեանս ։ Եւ առկայն անմնական նոյնութիւն անհամամն ոչ բնաւ այլայլի, վառն զի որակաց փափոխութեան մէջ՝ բնութիւնն նոյն կը մնայ ։ Ու-ին աւշան՝ բնութիւնն ու եզրակածն ։

Ա Արգ հիմա բնութեան այս ամեն օրինակներս յարմարցուցեք վերջին կերպարանափոխութեան մարդկային մարմաց՝ ՚ի մեծի առուր վերջնաց գատաստանին ։ Մի թէ այս հրաշարի երեսյթներն որ ամեն որ մեր աշաց առնեն կը կատարուին, մարդա-

ըետիւն մայն մի չե՞ն որ առեն թէ ձեր մարմինն աղ՝  
աշխարհաւեր երկնային հրոյն զօրութեամբն՝ յան-  
խոյ՝ յագամանդ պիտի փոխուի, յաւազյ ՚ի մաս-  
րոյ և ՚ի կապարե՛ թիւրեղ պիտի դառնայ, և երկայն  
առեն հողաբարչ կեանք անցուցանելն եաւ երկրիս  
վրոյ իբրեւ որդն, և հարմուտի պէս զերեզմանի մեջ  
փակուելն եաւ՝ պիտի խորտակէ մահուան շղթայ-  
ներն և թեև պիտի առնու յերկինս թաշելու հո-  
մար։ Բայց թէ ինչպէս պիտի ըինի այս այլակերպու-  
թիւնս, այն ես ալ ոչ գիտեմ։ Վասն զի սուրբ խոսքն  
մեզ ուսուցանէ ինչ որ պիտի ըինի։ Բայց ոչ առէ թէ  
ինչպէս։ Արդեւ իբ մի բացատրել չկարելուս սպա-  
հառաւ։ Իրաւունք ունիմք զայն մերժելու և ուրա-  
նալու։ ապա ուրացելք աղամանզն, ուրացելք բիւ-  
րեղն, ուրացելք թիթեղիկն որ ձեր աշաց առն կը  
թաշտամ։ Վասն զի յասպարեղ կարգամ զձեղ և քաջ  
առեմ եթէ այս այլակերպութիւններս բացատրելք։

### Յարութիւն մարմնոյ (շարայարութիւն)

23 Յուլիս։

Երեկ այցելութեան մի պատճառաւ։ քահանային  
հետ խօսակցութեանց համառատութիւնն ընդհա-  
տելով՝ հիմա կարուած տեղին յառաջ կը վարեմ։

Մահմանայն։ — « Կարծեմ Ձեզ կարացի ցուցա-  
նել, միբեցեալ Տէր, թէ մարմնոյ յարութիւնն կա-  
րելի է՝ որպէս ուսուցանէ զայն վարդապետութիւնն  
կամ ողիկէ։ Անոյ հիմա այնոր կարեորութիւնն աղ  
ցուցանել, ոչ եթէ իբր զի յարութիւնն կարեոր  
հետառաթիւն է մարգկային մարմնոյ բնութեան՝ որ  
կականապէս իրեն ոչ պատկանի, որպէս և ոչ իսկ  
առառածային կենաց հազարդակցութիւնն սեպհա-

կանութիւն ինչ է հոգւոյն. բայց 'ի մոյ կողմանէ  
անանորինելի պայման մի է այս յաւիտենական ար-  
գարութեան կատարեալ կերպով վնարուելուն, և  
'ի միւս կողմանէ անհերքելի հետեւութիւն մրաս-  
րութեան մարդկութեան ընդ աստուածութեան 'ի  
Յիսուս Քրիստոս ։ :

Ես. — « Հայոց աւեանէ մը : Հզօրէն հզօրագոյնն  
կ'երթամք : Գոյեցի յակամայ կամ : Շնորհակալ էմ  
ձեզ. Տեր վարդապետ, որ վրաս համարումն ունե-  
լով՝ մասց ակարութեանն համեմատ խռովերթից  
ոչ մեզացընէք : Չեր անկեզնութիւնն շիտակ իր  
նպատակին կը հասնի, և կը խռատավանիմ որ հե-  
տաքրքրութիւնն կարգէ գուրս կը շարժի այս ազա-  
ցուցութիւնն ալ լսելու զոր կը խռատանաք : Իմ  
անստուգութեանն մէջ ալ մեծ վասահութիւն ու-  
նիմ, որովհետեւ ձեր բազմարինակ հանգիստութիւն-  
ներն այնչափ ապաւորութիւն արարին վրաս՝ որ  
հաւատոյ այս մասին մէջ՝ ալ անեկզութիւնն ոչ ան-  
սանեմ՝ որ յառաջ զիս բոլորովին կ'ըմբռսացնէք :  
Սակայն կարեւորութիւնն ու կարելութիւն իրարժէ  
շատ հեռու են՝ անցուք ինչպէս պիտի կարեք անց-  
նիք այս հեռաւորութիւնն ։ :

Վահանաւոյն. — « Ամենապարզ կերպով մի, սիրելի .  
նախ պարզապես մասց կամ բանի օգնութեամբն՝ որ  
կը պահանջէ որ արդարութիւնն կատարուի աշխար-  
հիս վրայ կամ ուրիշ աեզ. կամ թէ ասեմք մարզուս  
արդարութեան վրայ անեցան գաղափարին կատա-  
րեալ իրականութիւնն պէտք է որ վնարի : Եւ յե-  
տոյ եթէ կ'ընդունիք որ Յիսուսի Քրիստոսի առա-  
քելութիւն յաշխարհա՝ մարդու ամրովապէս նորա-  
ծնելու համար էր՝ առափ պիտի ցուցանեմ ձեզ որ  
մարդուս մարմարի վառաւորուիլն ալ՝ այնոր հար-  
կաւոր հեռաւութիւնն է . վասն զի մարմարին ալ լինե-  
լով էական մասն մարդկութեան՝ զոր Բանն էաւ իր

վրայ, պետք է որ մարտինն ալ հոգւոյն հետ՝ ի միա-  
սին մասնակցի նորա առաջածածութեանն, որ ուրիշ  
կերպով ոչ լինի՝ բայց եթե յարութեամբ։ Հոս  
տեղու ալ պայծառ նկարներ չեմ կարող դնել ձեր  
առջին, այլ խորին գաղափարներ՝ զոր սուրբ խօսք  
ուսուցանեն, և զորս ձեր միտքն կարե ըմբռնել՝ ե-  
թե անկողմասիրութեամբ յառաջ քան զամենայն  
զննմարտութիւնն որոնէ ։

Ես. — « Ականջու ձեզ է, և քաջած ոգիս ձեր  
բանիցն կը սպասէ ։

Քամանայն. — « Առաջին կեան բացատրելու աւելի  
դիւրին է, անեն մարդ զիտէ որ գատաստանարան մի  
երբոր ոճրագործութեամբ ամբաստանուած մարդ  
մի կ'ուզէ գատել՝ առջի առնելիքն այն է որ ստուզէ  
թէ արգելոք ամբաստանեալ անձն՝ նցն է ոճիրն գոր-  
ծող համարուած մարդոյն հետ, և այս բանս բա-  
րոյական պատասխանառութեան սկիզբէն յառաջ  
կու գոյ՝ որով իւրաքանչիւր ոք պատասխանառու է  
իւր ազատ գործոցն և այնոր հետեանցն ոգիաի կրէ։  
Արդ ինչ որ մարդկանց ատեանին մէջ կը գործա-  
գրուի՝ նոյնն պիտի լինի Աստուծոյ ատենին մէջ ալ-  
որովհետեւ արգարութիւնն արեզերական է, և երկ-  
նից և երկրի համար ալ նոյն է։ Արդ վերջին գատաս-  
տանի սուաջին պայմանն պիտի լինի ստուզէլ զեյ-  
նութիւն անձանց գատելեաց. այնպէս որ յիւրա-  
քանչիւրութեան պիտի լինի նոյն անձն՝ ինչ որ էր այս  
աշխարհիս մէջ՝ հագին և մարտինն ի միտքն, որով  
հետեւ մարդս յերկոցունց յայսցանէ բազկացեալ է.  
և այն երկուքովն գործել է ինչ որ գործել է եթե  
բարի և եթե չար։ Յիրաւի մարտինն գործիք մի ե-  
զած է միայն, բայց իրականապէս մասնակից եզած  
է բարւոյ կամ չարի՝ զայնս իրականացնելու համար  
ծտուցելով։ Եւ ինչպէս որ աշխարհիս վրայ մարդ-  
կային անձն գործէ՝ ի ձեռն մարմնոյ որպէս և ՚ի ձեռն

հոգւց, որովհետեւ ասի. Աւանեմ, շրթիմ, ննջիմ, որ-  
պէս ասի. Զգամ, խորհիմ, կամիմ. ապա հարկ է որ  
այս անձնա ամբողջ երեխ յատենի գերազայն գատա-  
ւորին. իւր գործոց ամեն գիտմանքովն. ուստի  
պէտք է որ տանու իւր մարդին՝ որ լրացուցիչ մասն  
է իւր մարդկութեան, որպէս զի այս յետին այ  
ամբողջապէս տանու իւր գործովք արժանացած  
վարձքն կամ պատիժն. զոր առաքեալն Պաւլոս ու-  
սուցանե մեզ առելով. « Անկայու մու յանդին լնել  
իս առաջի սունեն Քէտուստ. զի ընկայի իւրաքանչիւր իւրու-  
թարուն զր նու գործեալ յասկը ենի բարի և ենի լոր ։ (ի-  
Կորնթ. Ե. 10). Յայտնի է որ այս մասիս մեջ բանն  
մասց ընդ յայտնութեան կը միաբանի ։ »

« Հիմա եթէ մուք վերանամք գերազայն կարգի մի-  
արդէն ընդունած լինելով թէ Բանն առառածանցին  
էլ յերկիր առ 'ի փրկել և վերածնանել զմարդն  
անեկեալ. և մարդկութիւնն իւր վրայ ուրիշ բանի  
համար չտառ. բայց եթէ այս վախճանու, ապա  
պիտի հանաչեմք որ իւր զոհագործութեան զօրու-  
թեամբն զնա բավանգակապէս նորոգան և մարմնով  
և հոգուով 'ի միասին. և այսպէս ըստ ասից առաք-  
ըլոյն իւր յարութիւնն որով գերեզմանէն ելու. և  
համբարձումն որով փառաք յերկինս վերացաւ մինչև  
յաթռո Յաւիտեականին. երաշխուորութիւն և  
գրաւական են մեր մարմնոյն յարութեանն և ապա-  
գայ վերացման և հազարդակցութեան ասուստ-  
ծոցին կենաց յանձնն Աստուծոյ մարդացելոյ. Վան  
զի իւր մարմնաւորութեան զորուովն Քիբուտոսի մար-  
մնն զոր եառ յարգանդի կուսին մեր մարմնն է, և  
արինն զոր առ 'ի նմանն ' մեր արիւնն է. և երբ Ե-  
կեզեցին վերածնանի զնեզ մերաւութեամբ՝ այս վե-  
րածնութեամբս առնե զնեզ նոր մարդ՝ զոր և խառ-  
նե 'ի մարդին Յիսուսի Քիբուտոսի՝ որով լինիմք ան-  
գամբ նորա. Արդ նոյն առաքեալն առէ թէ ուր որ

պըսուին է՝ այէսիք է որ անզանեւթն ալ հան ժողովին. և Փրկչին գործն այն առեն պիտի աւարտի՛ և մարդկութեան վերաբն ըրացու մն այն առեն պիտի կատարուի՛ երբ մարդին լիցի ինչ որ առհմանանձ է առառած ային շնորհքն, այսինքն անցանել յազականութեան յանապահականութիւն. ՚ի ակարութեան ՚ի զօրութիւն և յանարդութեան ՚ի ցուսու. Զոր Պատզոս առարկա համարձակ կ'անուանէ մարդին ոգեսոր որ շնչառոր մարմանյն պիտի յանորդէ. և այսու այլակերպութեամբ պիտի ստանոյ Փրկչին աստուածային մարմանյն ամեն անպհականութիւններն կամ յատկութեաններն, ինչպէս որ երևեցաւ իր կենցանութեան առաջարկութեամբ պիտի ստանոյ Փրկչին աստուածային մարմանյն ամեն առընդ անդեւ. և ինչպէս որ կ'արտափայը յափառենական ըստոյն մէջ. Այսու զեակ միայն հարկ մարդս բավանդակապէս մատնել ՚ի յերկինս, և արիանն նիսուասի Փրկչուասի վաստիցաւիրեն համար այս փառքս. Այդ կը հարցանեմ. մի ընդի, աշխարհիս մէջ ո՞ր կրանքն ո՞ր վարդապետութիւնն եղած է՝ որ այսպիսի բարձր վիճակ մի խռուացցէլ է մարդկան ազդի. և մի թէ ո՞ւ կարեմբ սուրբ Պրուց հէտ առելու. Ո՞չ ամեննեին ազդ մի եղած չէ՝ որոյ աստուածներն այնպի մաս լինին իրեն ինչպէս մեր Առառածն մեր հետեւ միացաւ. Այսու զի մեր բնութիւնն առնկն ենք՝ որպէս զի մեք իր որդիքն և Եղբարքն լինիմք. իր փառքէն և երանութեանն ալ մասն հանեց մեզ. ինքն մարդացաւ զմեզ աստուածայինելու համար, և զմեզ իւր ամենակարողութեանն հազորքէց՝ որպէս ինքն հազորքեալ էր մեր ակարութեանն ։

Ա Աերթապէս այս ալ գիտելու էք որ մարմանյ վերապատռութիւնն այսինքն առաջին յարգն զանալն քրիստոնէին համար արգէն այս աշխարհէն կը սկսի, և ապագայ յարութեամբ պիտի աւարտի.

որոյ գրաւականն և միջոցներն Ակեղեցւոյ խորհըրդաց ձեռաք այնոր մէջ կը գրուին. Առան զի այս մարմինս որ ծածկոյթ է հոգւոյն և սորտ հզու սպասաւորն լինելու է բոլոր կենաց մէջ բարւոյն և չարի հաղորդ է, այնպէս որ հոգւոյն ընդունած շատ շնորհքներն անգամ՝ մարմինն և 'ի զգայարակնաց կ'անցնին իրեն՝ իւրեանց հետին և զօրութեան մի մասն այնոր զբոյ թողլով. այսպէս մարմինն կ'ոզոզի թրով մերառութեան, և ոգին որ կը ծառալի խոսքով և ջրով՝ զայն կը կենդանացնէ. որովհեան առ 'ի մըտանել 'ի յերկինն հարկ է վերսատին ծնանել 'ի ջրոյ և 'ի յոգւոյ. Այսպէս գրութի խորհըրդաց մէջ աշնոյն ոգին մարմինն կը թափանցէ՝ քահանացին. կամ եպիսկոպոսին որհնութեամբն և սուրբ ոնմամբ: Հազորդութեան խորհըրդավ մարմինն կը կերակրի մարմինվ և արեամբ Յիսուսի Քրիստոսի: Եւ այս անմահնութեան սերմանուս՝ հետզհետէ եղծանելի մարմինն մէջ դրուելով՝ գրաւ մի են յաւիտենական կենաց խոսացելոց. որք պիտի նվին ծազկին ու պազարերեն՝ հոգւոց արեգական ուղղակի աղջեցութեամբն՝ յարութեան փառաւոր օրն՝ յորում ամենեցին պիտի երեխն իրենց մարմիննի, թէ և ամեներին պիտի չփախութն: Բայց մէք, առէ առաքեալն, պիտի փախութիմք. վասն զի յաւիտենական կենաց համար յարութիւն պիտի տանումք: 'ի յարութիւնն կենաց, իսկ այլք գատասատնի պատճենն կրելու համար, 'ի յարութիւն դաշտառաց: Առաւելոյ որդիքն և եղբարբ Յիսուսի Քրիստոսի պիտի երեխն իրենց հոգւոյն ոգէս վճիտ մարմինվ, որովհետեւ իրենց մարրագործութիւնն աւարտած լինելով՝ զջեցած պիտի լինեին զանազանականութիւնն և զանազանութիւն. իսկ որոց հոգին որ ազտոտ մնացած է՝ յատուածային լուսոյն հետի լինելով՝ պիտի ընդունին աշխարհիւ յանցանք ազտոտած մարմիննին, և այն

ժամական հակումն որ աշխարհիս վրայ ունեցան զեզ  
՚ի չարն՝ զիրենք պիտի գահավիժե՞ի խաւարն ար-  
տարին, այսինքն արտաքոյ աստուածային կենաց՝  
իրենց անկարգութեանց ամսմալի խարանագրոց-  
մովն՝ իրենց հակամին վրայ անջնջելի դրով իրու ա-  
նարգութեան կենդանի կնիք կրելով» :

« Իրաւունք չունեի ուրեմն, սիրելի, հաստատե-  
լու թէ մարմնոյ յարութիւնն հարկաւոր է, որով  
հետեւ կը տեսնեք որ առանց այնոր արդարութեան  
անվիժար հասուցումն չեմք կարող ըմբռնել, և ոչ ՚ի  
միտ առնուլ ՚ի մէջ մարդկան Փրեյբն առաքելու-  
թեան կատարումն, և ոչ մարգելութեան նշմարիտ  
վերապատճեննեն: Որովհեան մարմին լրացու-  
ցիւ մասն է մարդոյ, և չե կարող յաւիտեանս բա-  
ժանեալ լինել յայնմանէ ոչ յայտ աշխարհիս և ոչ  
՚ի միւսումն, ոչ ՚ի ժամանակի և ոչ ՚ի յաւիտեան-  
կանութեան» :

Ես. — « Յիրաւի, Տեր հայր, լսածներս զիս շատ  
կը զարմացնեն: Ճեր ասացանեներուն գէմառարկու-  
թիւն մի չունիմ, և կը հաւտատամ թէ նշմարառ-  
թիւնն ընդ մեզ է: Բայց զիտեք որ իմաստասերք  
իրենց ապաւորութիւններեն, զգածմունքեն և ե-  
րեակայութենեն կը կասկածին, և թէպէտ լսածս  
ինձ բանաւոր կ'երենի, սակայն որովհեան այս տե-  
սակ գազափարաց վարժած չեմ, և այսօրինակ իմաս-  
տասիրելն ալ յինէն սատր է, ոչ զիտեմ ինչ խոր-  
հիմ և ճեր զտանիմ: Կը յուսամ որ այս առնենքս  
իմ հոգւոցս օգտակար լիցին, և շատ հետի չեմ հա-  
սնելու Հաւատամբի վերջին մասին՝ ՚ի յարութիւն  
մարմնոյ և ՚ի կեանս յաւիտեանականս: Առ այժմ այս  
միայն կը զրոյցեմ՝ իմաստասիրութիւնն թնաւ զիս  
այս խորութեանս իջուցած չեր, և գուք նոր աշխար-  
հի մի խորհրդազգած արարեք զիս՝ որոյ մէջ խար-  
իսափելով յառաջ կ'երթամ, և որոյ միմնովորան տե-

սակ մի մարտուք կուտայ ինձ և գլուխու կը դառնայ: Ասկայն բացասարութիւն մ'ազ պիտի խնդրեմ՝ ի ձեւը զոր այժմ ոչ համարժակիմ, որովհետեւ իս-սակցութիւննիւս արդեն շատ է բիւրեցաւ և զուք ալ հոգնեցաք»:

Քահանանայն. — « Ոստեցեք, Տէր, ծանրութիւն լինեցէն մի վախեք: Ինձ մեծ զուարձութիւն է՝ այս ծանր խնդրոց վրայ ձեր հետ խօսակցիլ, և երջանիկ կը համարիմ զիս եթէ ասացածնուզ ովես՝ իմ ակար խօսքերս կարեն կերպիւ իւիք այն խնդրներն ձեր աշաց առջեւ ըռւսաւորել»:

Ես. — « Որովհետեւ կը ներեք՝ ես ալ կը համար-ձակիմ ձեր առջև զնել առարկութիւն մի՝ զոր և ինձ առնելի՝ պինդեռ միուքս չեի գրան այս նիւթեա ձեզ հարցնելու, և կը խոսանվանիմ որ այնոր պա-տասխան տայ չկարելուս համար՝ առ ձեզ զիմեցի: Պիստեմ որ առնելիքս սամերկան առարկութիւն մի է՝ սակայն այնու հանգերէ շատերուն համար զը-ժուարակնեիւն խնդիր մի է՝ որպէս նաև ինձ: Թէ ընկերութեանց և թէ իմաստասիրաց խօսակցու-թեանց մէջ շատ անդամնել եմ այս առարկու-թիւնս՝ որ իրենց յազմութեան և ծազու նիւթ մի եղան է, և ես ալ գոհացուցից լուծում մի չեմ զը-տան այս խնդրոյս: Խրաւ է որ այն առեն խորախոր-հաւարդ կերպով այս նիւթ զյս չեի պարապել, որ ար-դեն ինձ անսակզնութիւն կ'երևէք: Խսկ այսօր արա-մագրութիւնս ու միուքս գոխուած է, և ձեր յոյժ հաւանական խօսքերէն եաւ: » կը յուսամ որ այս մերժին գմւարութենէն ալ զիս որիտի ազատեք»:

Քահանանայն. — « Զեք առարկութեան կանխարա-նութեամբն զիս գրեթէ կը վախցիեք, սիրեցեալ Տէր, և թէրեւս պիտի սախառութիմ խօսանվանելու թէ պատասխանելու կարողութիւն շաւնիմ: Եթէ ի-րաւցնէ այնպէս է՝ անկեղծութեամբ կը զրացեմ.

սրովհետեւ միտքս գրած չեմ թէ ամեն զժուարու-  
թիւն կարեմ լուծել, և ոչ ալ յազդովապէս նաև լ  
րամայի իրաց գիտելու ո :

Ես. — « Դուք ինձ ցուցիք որ յարութիւնն մարմ-  
նոյ կարելի է և մանգամայն հարկաւոր . հիմա շատ  
հետաքրքիր եմ պիտերու թէ մեր կարծեաբն այս  
կարելութիւնս թնապէս ՚ի գործ պիտի գրաւի, և այս  
հարկաւորութիւնս թնապէս պիտի կատարաւի . և  
թնջ հայրբով՝ երկրիս վրայ ապրազ և իրենց մարմնն  
հոն ձգելով զնացող անթիւ հոգիներն՝ իւրաքան-  
չիւրն միջը իւր սեպհական մարմնն պիտի առնու,  
որպէս զի իւրաքանչիւր մարդ գերագոյն առեանին  
առն ամբողջապէս երի իւր անձնական նոյնու-  
թեամբն՝ որպէս պահանջնէ արամարտաշխական ար-  
գարութիւնն ո :

Վահանացի. — « Այս սամպական առարկուածս  
որ շատ անգամ ընկերութեանց մէջ կը զրուցուի՝ և  
ալ հազար անգամ վարժարաններու մէջ լսած եմ-  
բայց այս մեծ շինութութիւնս և անօրոշելի կար-  
ծուած խանուրդս զիս ոչ վախցնէ : Թէ որ այս նիւ-  
թոյս վրայ վարդապէտական վնիու մի կամ ուսութեա-  
կան բացատրութիւն մի ու զիք՝ պարզապէտ առեմ որ  
պատասխան մի շունչիմ տալու . Եկեղեցին այսոր  
հիատմամբ գրական բան մի ոչ ուսուցանէ, մարդ-  
կային գիտութիւնն ալ՝ որ բան զիս աւելի լաւ ճա-  
ռացէք՝ այս ինձբոյս վրայ ուրիշ բանի համար խոր-  
հած չէ՝ բայց եթէ զայն անտեղի հրատարակելու և  
նազգիկու համար : Հաւատքն գրականապէս կը հաս-  
տառէ՝ որ իւրաքանչիւր մարդ իւրով մարմնով յա-  
րութիւն պիտի առնու, բայց ոչ առէ թէ այս բանս  
թնապէս պիտի ընկի. և Եկեղեցին կը հաւատայ թէ  
Աստուծոյ ամենակարողութիւնն այսոր հնարքն ալ  
մասնած է՝ իր խոսումնեցն կատարելու համար :  
Համաց պից մէջ շատ բաներու համար իմաստունք

ալ կը ստիպուին նոյն կերպ մտածելու , մանաւանդ էակաց գոյացութեանցն զորութեանց և ծածուկ որակաց վրայ խօսելու ժամանակ . գուք ալ ձեր փորձառութեամբն դիտեք . որ բնական և բնազանցական նիւթոց քննութեան ատեն՝ առելի կը նկարագրեն զդալի և ոգեկան զործերն՝ քան թէ կը բացատրեն : Այթէ հոգեխօսութեան , բնախօսութեան , բնական և բժշկական դիտութեանց նկարագրական մասն զուրս հանես յիրաւի շատ բան մի ոչ մեաց այն դիտութեանց մէջ : Ուստի աստուածաբանք ալ՝ որ հաւատոյ գերբնական նիւթոց կը պարապին՝ աստումնականապէս ալ առեալ՝ քան զիմաստունս առելի տղիտական պիհակի մէջ չեն այս կոզմանէ . որովհետեւ ուսմանց մէջ ալ շատ բաներ կան զորս պարզապէս հաւատալու և ընդունելու և քան թէ բացատրելու և մեկնելու ։

« Այս գատաստանական բացառութիւնս զնելին եաւ . որ բնազանցական շատ ինդիբներու ալ կը յարմարի , պարզապէս ձեզ կը պատասխանէմ որ մարմնոյ յարութիւնն ինչ կերպով լինելիքն քան զմեղ առելի ոչ դիտեմ : Խսկ եթէ զարձեալ թախանէք՝ ինչպէս որ կարծէմ . ուրիշ բան չեմ կարող առնել՝ բայց եթէ ձեր առջնին զնելի իմ անմնական գաղափարս կամ առեսութեանս կերպն՝ որպէս պարզ կարծիք կամ ենթադրութիւն մի ինչպէս կ'ուզեա համարէ՝ զոր մեզ կը թոզում առնել զոր և կամք ցիք : որովհետեւ ես ալ շատ վստահութիւն շունիմ այնոր պրոյ :

« Ի բաց թազեալ քերթոզաց և արուեստագիտաց երեակայեալ դիւտերն այս նիւթոցս մէջ՝ ոչ կամբմ զարձեալ զկոյ առնուլ և իբր ՚ի պատկերի ցուցանելք գերեզմանաց բացուիլն , սոկրներու իլլբափիլն և հաւաքուիլն մարդու կմախիպներ ձեանալու համար , ներզից չապաց երակաց և չնչերակաց այնոց վրայ

սպանիլն : և զնաներաց և մորթոյ տարածութիւն այս  
մեռելագարձ ուրուականներն ծածկելու համար . որ  
անտարակոյս այս ամեն բանս պիտի կատարուի՝ ու-  
րովհետեւ սուրբ Գիրք ալ նոյն բանն ասեն , բայց ոչ  
զիստմ թէ ինչ կերպով . և որոց ուրիշ հնարք չու-  
նիմ ցուցանելու՝ բայց եթէ զամենակարողութիւնն  
Աստուծոյ՝ որ զամենայն ինչ արար յունքէ՝ որ ձեզ  
ալ այլ աւելի գժուարին և անբացարելի երեկու-  
է անտարակոյս՝ քան թէ այսաւ եզածներով նորին  
բան մի յօրինել :

Ա Արդ այժմ պարզ իմաստասիրաբար խորհելով .  
որովհետեւ այ աստուծաբանն չէ ձեր հետ խօսողն ,  
մի միոյն խորհրդածութիւն մի կուզեմ առնել որ  
թերեւս ձեզ ալ ծանրակշիռ երեկոցի . այսինքն թէ  
մարդինք կարեն նորին յօրինիլ . որպէս յառաջադպոյն  
յօրինեցան . արդ ձնեգագործութեամբ յօրինման  
մէջ ինչ կը տեսնեմք . բեզմի իմն 'ի զանգուածի մօր ,  
և ոզի կենդանացուցիլ 'ի սերման հօր՝ որ բնութեան  
մէջ ասարածուած կէնաց ոգւոյն դորթիքն է . և միու-  
թեամբ այս երկուց եզերաց՝ Երբորդ ոմն կը յօրինի  
իրենց պէս ոգեսորեալ և կենաւորեալ . այնպէս որ  
իւր անհատականութեան մէջ զերկուան ալ կը ներ-  
կայացնէ : Մի անգամ յօրինուելին ետև նոր ան-  
հատն կը մնանի իւր զանուած աեզւոյն մէջ՝ նախ  
արեամբ մօրն և յետոյ նորա կաթուիլ . և վերթապէս  
երկրիս վրայ զառուած ամեն տեսակ նիւթովը՝ զորս  
կարէ մարտել . Արդ ես ինքնիրենս ասեմ . այս անհա-  
տիս մէջ ալ՝ որ երկոցունց խառն արդիւնքն է . կոյ  
զանգուած և խարիսխ մի կենաց՝ որ ինչ ալ հանգի-  
պի՛ է և մասոցէ միշտ ընձիւզ և կենդրոն իւր եւո-  
թեան . և երբ այս կեդրոնս կամ մայր հիւլէս մա-  
հուամբ կը բաժնուի նախ 'ի հոգւոյն զոր Աստուծու-  
այնոր հետ շազկապել էր . և յետոյ յամենայն նիւ-  
թեզէն մասնկանց՝ որ իւր գործ արանաւորութիւնն

կը կազմեն՝ պէտք է որ այն մայր հիւլին առջ մի  
մեայ՝ երկրաւոր տարերաց խանակութեան և աշ-  
խարհիս պաշտոյն մէջ։ Արդ երբ կենաց և մահու տի-  
րոջ հրամանութիւն՝ այն հոգին՝ որ առժամանակեաց  
բաժնուած էր՝ ի մարմանոյն որոյ կենացացուցիչ  
սկիզբն եր կամ խոկական ձևն կամ որպէս առէն  
զայրացականը յաւ բառնեան նորին այն զանգուածին  
վայ համար և զայն բան, գրեթէ որպէս ի սկզբան  
հօր սերին մայրական բեղին կը թափանցէ, ոչ ա-  
պաքին նոր յօրինուած մի յառաջ դալու և անտի  
անգին և անգ»։

«Միայն ասրբերութիւն մի կայ՝ որոյ համար  
զերբարական ուժի կարսութիւն կը առանձմ զոր տ-  
նուածն ոք հրացը։ այսինքն կազմուարութեան զար-  
գացումն որ ըստ կորդի բնութեան զանգազարար և  
ծանր ծանր լինի, հռո յանկարծակի պիտի լինի յա-  
ռար անդ յարութեան։ Իմ Ենթագրութեանս գըլ-  
խուոր գժուարութիւնն այսոր մէջ է։ զոր այլ կեր-  
պավ չեմ կարող բացատրէլ՝ բայց եթէ աստուա-  
ծոյին ամենակարոզութեամբ, որոյ զերագոյն զո-  
րութեան նկատմամբ՝ միոք հաւասարապէս գժուա-  
րութիւն կրեն բացատրելու տիեզերաց սկզբաւու-  
րութիւնն որպէս և զբումն, վասն զի միոք միայն  
իւր բնական ըստովն չկարէ հասկանալ թէ ոչնչիւ-  
նու մի լինի։ որովհեան մասց հիմնական առանձիւ-  
թին մի է Յանձն ունեւ։ Բայց առանի այսարինակ նորին  
բազկացած մարմինն՝ անտարակոյս նոյն մարմինն լինի  
նոյն որ յառաջ, որովհեան նոյն բարիսին և նոյն  
կեղրանն ունեիք։ վասն զի բնական որ իր երկրաւոր կե-  
նաց ժամանակի իւր նոյնութեան մէջ անփոփոխ մնա-  
ցած է՝ թէ և անոնելու համար նիւթե զէն մնաեր  
կըած և մարտած է՝ որ անգազար նորոգութիւնն մի  
գործած էն յինքեան, այսպէս աղ զարձեաց նոյն  
պիտի մեայ՝ թէ և նորանոր ասրերը միահազոյն ի։

ըեւ հետ միանան առ ՚ի վերաստին յօրինիլ և երեւլ  
առաջի գերազոյն գատաւորին ։

Ա Աշաւասիկ. Տէր, մարքնոյ յարութեան ինչպէս  
Մինելիքին վրայ գազափար մի խորհուրդ մի կարծիք  
և Ենթադրութիւն մի զոր մեջ կը թողում. ուստի  
ձեր իմաստասիրական նրբանութիւնն ինչ հե-  
տեանք կ'ուզէ թող հանե. Բայց նորեն կը կրկնեմ.  
Եկեղեցին այս նիւթոյս վրայ մեջ բան մի ոչ ուսու-  
ցանե. և մեք պարաւառ ոչ հանձնիմք զմեզ՝ իր մեզ  
չուսուցածն բացատրելու. թէ և հաստատապէս կը  
հաւատամք ինչ որ նա մեզ ուսուցանե. այսինքն թէ  
՚ի վերջում աւուր այն այս մեր մարմանվա յարու-  
թիւն պիտի առնումք. որպէս առէ Բոդ երանելին.՝  
որպէս զի վարձքն ու պատմէն Խիշ նոյն մարդոյն  
արուի որ գործեաց զբարին կամ զար. կամ որպէս  
առէ առարեալն ո չը չկաւցի իշխանութար իսրաւ նորու-  
թէ Ի՞ւ Գործեաց յայց նեն բոյ և են ըստ ։

Այս խօսքին վրայ որուած շնորհակալ եղէ բարի  
քահանային՝ իր հանձնարեզ և անկեզծ բացատրու-  
թեանց համար՝ որ խօսքն ապաւորութիւն արարին  
վրաս. և խոստանազով նորեն զիրար աւսնելու ի-  
բարմէ յօյժ բարեկամարտր բաժնուեցանք՝ մեքն  
պիտ հանգարան և զուտարթ մասց և սրբի խաղաղու-  
թիւն ունոզ մարդու մի պես. իսկ ես մատիսէ և  
տագնապէալ՝ սակայն հոգւոյս մեջ կրելով իւր  
զաւարթութեան հառագայթն և յաւոյ Կը Սը ։

### Ներքին ալԵկոնութիւն

Տն Յուղիս:

Միշտ և հանապազ իմ քահանայիս հետ վերջին  
խոստակցութեանս վրայ կը մասնեմ. և քանի մի օրեւ-

ըւ ՚ի վեր անդագար մասց մեջ զայն կ'որոշամ, ինչ-  
պէս որ մարդ գեղեցիկ երդ մի լսելով՝ առանց ան-  
գրագառնալու զայն կը մըմաց: Բնուր թնութեան  
մեջ յարութիւն կը առանեմ, ուր կեանքն եղանէ ՚ի  
մահուանէ առ ՚ի մասնել անդրեն ՚ի նոյն, և յետոյ  
վերսախին ծնանել. և այս ամեն այլակերպութիւն-  
ներս այնպէս խորհրդաւոր կերպով կը կատարուին:  
որ կը սախուիմ զայն ընդունելու արգիւնքն ա-  
շացաւ առջև տեսնելով, թէ և բացատրելու կերպն ոչ  
պիտօն: Եթի իմաստնոց գրած զբքերն կը կարգամ:  
երկայն բարակ երեսութից նկարագրութիւններ կը  
գանեմ որ եզածն կը հաստատեն՝ առանց առելու  
թէ ինչու և ինչպէս լինի: Նոյն բանն կարող եմ ա-  
ռել ուրեմն նույ մեռելոց յարութեան համար՝ ա-  
ռանց իմ իմաստամբութիւնս նուաստացնելու .  
վասն զի վերտապէս հարկ է որ թնութեան պետու-  
թեանց այս անդագար կերպարանափոխութիւններս  
վերջ մի ունիցին, և արարշութեան մեծ գործն՝ որ  
թերեւս առկաւին չատ գարեւ անցնելով պիտի զար-  
գանոյ հասնի իւր կատարելութեանն լիովին յայտ-  
նութեամբ գաղափարի արարշին՝ որոյ թարգմանն  
ու յայտնին մն արարանք: Ազա մարմնոյ յարու-  
թեան կարելութիւնն աշխարհիս վրայ կ'երենի կե-  
նաց անդագար այլագիտութիւններովն՝ զոր ուրա-  
նալու և մերժելու համար հաստատ պատճեռ մի  
չունիք:

Բայց յայտնանե՛ յարութեան թնականապէս կարե-  
լի լինելուն հաստատութիւն է այնոր բարոյական  
կարեսրութիւնն ալ որոյ վրայ յառաջազայն իսկ իմ  
խօսակցիս հետ համամբա էի, այնպէս որ իր ապա-  
ցոյցն իմ նախազգացմանքս հաստատեց: Իբրև ի-  
մաստանք և բարոյախօս կ'ընդունենի որ պատիմն  
արգար լինելու համար՝ միշտ յանցաւորին վրայ ան-  
կանելու էր, ուստի և զատաւորին առաջին պարագան

և ստուգել ամրաստանելըյն և յանցանքն գործողին նոյնութիւնն : Այսոր համար է որ վերջին գատառտանն կը պահանջէ զյանդիմանութիւն կամ զերեւըն մարդոյ յանդիման տաենի իւր բնութեան ամրոց լութեամբն : Է որովհեան մարմին և անդամիք գործակից եղած են բարի կամ չար գործոց պէտք է որ իրան պատկանաւորեալք անձին մարդոյ իրենց մասն ստանան 'ի վարժատրութեան և 'ի պատմաւորութեան . որ մասց ազաց առջե յոյժ յայտնի բան է Բայց թէ որ խօսիս վրայ հաստատուն կամ՝ այս կետես եան եկանն ալ պէտք է ընդունիմ : Վասն զի ընդունած բարոյական կարեորութեան հետեանք է ընական կարելութիւնն , որովհետեւ մին առանց միշտին ոչ կարէ գործադրուիլ կամ իրականանալ :

Ահաւասիկ այս երկու կէտերս ալ հաստատուեցան . բայց Երբ և Բնապէս լինելը՝ իմ խելքես և Երեակայութենես գուրա է : Սակայն քահանային ասացածին պէտ այս աշխարհիս գիտութեան մէջ ալ այնպահ այսպիսի անձանեած Խոշե լինենք կը գըտնէմք՝ որ միւս աշխարհին համար ալ քանի մի այն պիսի անլուծանելի խնդիրներ կարեմք ընդունիլ՝ որում ես ալ դժուարութիւն մի ոչ քաշեմ : Վասն զի Բնապատասխան կարեմ տալ եթէ որ ինձ ասէ . Երկրիս կեանքն ինչ լինելը ինչ չես կարող բացատրել՝ ոչ կ'ուզես որ ես քեզ երկնային կեանքն բացատրեմ :

Եւ սակայն սա գործարանաւոր մարմնոց զանգուածից կարծեացն կամ ենթադրութեան շատ հաւանեցայ , որ մահուանէ եան երկրիս մէջ կենդանի պիտի մնան առանց խառնուելու՝ որչափ ալ կերպարանափոխութեանց ներքեանկանին . իւրաքանչյեւրն յանձին բերելով զանցնըլիլ . կնիք անձին որ զնա ոգեսորած էր , այնպէս որ վերջին գատառտանին օրն հոգին զայն պիտի առնու և զբենու անյապազ մար-

Հաւցմանմբ . այս կարծիքու միայն կը հանգարսեցնէ , և կերպիւ թերե խնդիրն կը բացառիւ : Պահանջոյն իւր այս անոնքին իւր անձնական կարծիք իւր առանց զոյն պաշտպանելու , և կամակար ազ հրաժարելով յայնունեւ եթէ մեջն անուզու . թիւն կամ անպատճենեթիւն մի երեխ . որովհետեւ Եկեղեցն այս խնդրոյս որոշակի բացառրութիւն մի առանց չլինելու , իրեն ու ու անկաներ : Խակ ես զեռ այն առանքնան լու կամ ազիկ այ մի չեմ որ այս նիւ . թըս ինձ անզանազան բան մի երեխ , ուստի ուրիշ անդամ լու մի պիտի քննեմ այս իւր ենթադրու . թիւնն .

Այսու անձնոյնիւ առ բահանջոյն զիտութեան և իմաստափրական նրբանաւթեան վաս շատ զար . մացայ , որովհետեւ այսպիսի բարձր հայեցողութեան մի կարեառութիւն չառյն իսկ ցուցանել թէ հանդա . ծուազ և բազմատեսակ ծանօթութեանց ակր մարգ . և , և մասնաւոր հանձնու ունի զննելու և մեկնելու . զբութիւնն , և անտի թեազանցական հանգիւու . թիւններ հանելու և բարցյականի յարմարցելու : Խմաստափրաց շատերն մեծ պարսանդք պիտի համա . րեին իրենց : Եթէ այսպիսի զազափար մի զանեին . զոր քահանջոյն այնչափ որորզութեամբ և խնձոր . հաւթեամբ առնեա կը զնեւր : Այս մարդուն բոլ զի . առանձնեն առելի բան մի կոյ : որ է տապինութիւն : որ անշուշտ իր քրիստոնէական հաւաարեն և բա . հանոյական կարգեն յառաջ կուզայ :

Սիրոզար իր ձեռքն ու զնելէն և իրեն բառնուեւ . լին եաւ : Խանդոյն նըր իրենս ունեխ . Եւ սակայն ա . հաւաաիկ այն մարդիկն որոց զի մ այցափ նախապա . շարժունք և առելութիւն ունեիք : և զիրենք ազիւսի . ակզ կը զնեմք : որովհետեւ մեր կը բարուն ոչ աշխատ . ամեն և աշխարհին մեջ համբու սպասեալ ու ու զին : մեր մարերնիս գրան եմք որ իրենց հաւաարեն իմա .

ցականութիւննին կը թմբեցէն, և զերի եղած են  
անրանացուցի բանաթեան՝ որ ոզին և խիզնն  
մաննամայն կը չնշէ: Առ մեր իրենց գետ ունեցած  
հակառակութիւնն ալ կը յառելու: Երբ կը մասնեմք  
որ Խորա մեր նախանձորդներն հակառակորդներն  
ենք թշնամիներն են, պատճառաւ որ մեր կանաչց  
և որդուց վրոյ կ'իշխոն և բոլոր ժողովուրդն ան-  
քերնին անցուցած են: և զնոսա կվարական իշխան  
նութեան գործիքն և զահիններն կը համարիմք: ո՞ւ  
կը ջանան զմարդիկ աղքառաթեան և նուասու-  
թեան մեջ բանելու: որպէս զի անելի գիրաւու մրա-  
նին սիրեն և իրենց շահան գործածեն: Առ այս  
կարգիքնիս ամեն կերպով ծառալել կը ջանամք որս-  
գրաց և գրեանց ձեւոր և այլ կերպերով՝ ուր որ  
մեր խօսքն կ'անցնի: և ուր որ յայտնի ու համարձա-  
կիմք ամելու: այլարանութիւններով և երգիծարա-  
նութիւններով զայն կ'իմացնեմք:

Առ ամեայն ոյս քահանայս որ զիս ոչ հանաչեր:  
և թերևս կը թշնամի լինելու ալ լսած եր՝ զիս  
սիրով և բարեսրառութեամբ ընկալու: և հարցմանց  
պատասխան տուաւ, որ կարեր շատ լաւ փախուստ  
առաջ իրեն՝ ի թշնամու կատկած ելու: և բաց յայս-  
մանէ այնչափ զիսութիւն գոմի՝ ի նման որըսափ առա-  
քինութիւն, և թերևս մեր որերու քան զամենայն  
իմաստաներս՝ ոզի իմաստափրաւթեան: Տես թէ թէ  
ամել և ցեղից և արուս ստակաց նախապաշարութեան:  
և մարդիկ որշափ առելի երջանիկ և մանաւանդ ա-  
ռելի արդար և իրարու բարեւեր լինեն: թէ և ոյս  
նախապաշտամունքս՝ ի բաց գնենի: Եկեղեցականք  
զեղ ընդհանրապէս ամրարիշաւ կը համարին, առ-  
արակայս յանիրաւի: որովհետեւ մեզ ալ կը համա-  
տամք Առաւեծոյ, հոգւոյ անձնահութեան և հանգեր-  
մեալ կենաց: թէ և անել զնարար առելով մեր հա-  
ստոքն Առավերիք և 1793ի աստական մարգարտի:

բաց հաւատքին կը նմանի, և եթէ այնպէս ոչ չէ՝ գոնէ շատ վատթար քրիստոնեայներ ենք։ Համալսարանի հետամուտք ոչ զոնէ մեծաւ մասամբ, կրօնից գաղափարներն և արարողութիւններն կը համարին թէ առասպեցներ, երեակերպութիւններ և կեղծուապատճիր բաներ են, և զքահանայս ակարամբան և կեղծաւոր կը սեպեն։ Առջիս եղած փորձն ինձ ցուցանէ՝ որ այս մերժիններս ոչ շատ կը սիրացին, և իրենց նախապաշարմամբ շատ անգամ կ'անիրաւին որովհետեւ առաւորած և հանցած քահանայս ոչ միայն անօթու և կեղծաւոր չէ, այլ և դիտուն իմաստուն ողջամբան և արգար մարդ մի է։

## Արանչելիք կամ Հրաշը

25 Յուլիս :

Այս առաւտա Երբ գրառենեակս հանդարս նուտած կ'աշխատէի՝ յանկարծ մեծաւ շտռապնամբ գուռու կռնակի վրայ բացուեցաւ և վազեմի բարեկամներն ու և անուանմբ զօրապեսն մոլուրկի մի պէս ներս մտնելով, շիրոված խռոված առաջ բարեւ մի տալու խըզ գուռկ ձայնով մի յերեսս ի վեր կը գումքը և Բարեկամ, գու հրայից կը հաւատան։ Ու երբոր ես այս անակնկալ հարցման վրայ առջած։ Երեսն կը նայեի գիտելով որ այսպիսի իրաց վրայ առնենքն մուտած շուներ, նա իմ զարմանքս աեմնելով նորեն պռաաց։ Այս աեւսնեմ հրաշից կը հաւատան։ — « Իրաւցնե, զօրապետ, պատասխանեցի տարակուտած, ոչ գիտեմ ինչ զրուցեմ. այս բանս հաւատքէ ու խղճէ կը կախուի, ուստի ամեն մարդ ինչ որ ուզէ ու կարէ թող խորհի ։ »

— « Սիրելի, գու իմ հարցմանս պատասխան

տալու տեղ՝ վախուսակ կ'ուզես տալ. բայց Ես հռո  
պարզ հետաքրքրութեան համար չեմ եկած, և ինձ  
շանկած բանին խառնուիլ չեմ միոքս. որովհեան գի-  
տես որ կրօնական նիսթոց անխափր եմ: Կ'ուզեմ  
պարզապէս խորհուրդ հարցանել քեզ այս նիսթիս  
վրայ, որովհեան խմառաատէր լինելով քան զիս ա-  
ւելի լաւ գիտես, որ զինուոր եմ և անդիի աշխար-  
հին վրայ շատ չեմ մնածեր. ուստի իմ ուզածն այն  
չեմ որ ինձ ուսուցանես թէ անդիի աշխարհը կոյ թէ  
չե. վասն զի ես ալ Աստուծոյ և հանգերծեալ կենաց  
կը հաւատամ: Հապա այս կ'ուզեմ գիտել թէ անդիի  
աշխարհի ազգեցութիւններն այս աշխարհիս մէջ ալ  
կ'իմացութին թէ չե » :

— « Այս ասացածդ ծանր ինգիր մի է, զօրա-  
պետ, որ շատ բացառութիւններ կը վերցնէ: Բայց  
կարեն ինձ ասել թէ ինչ Խանձ խածու այսօր գլուխո-  
որ այսպահ կը քերուըտիս, և մինչև հիմա մոքեդ  
շանցած բանն գիտել կ'ուզես » :

— « Դու ուզածիդ շափի ինդա, որովհեան իմ  
տեսածս գու չես աեսած. տասուերկու տարուան  
աղու մի յանկարծակի առողջանալի՝ որ իմ զրօրօր.  
գիս է, և վեց ամիսէ՝ ի վեր սարսափելի հիւանդու-  
թիւն մի վրան գալով՝ գիշեր ցորեկ հանգստութիւն  
շուներ, այնպիսի անիմանալի հիւանդութիւն որ ա-  
մենին հաշակաւոր թժիշիններն անգամ բան մի չեն  
կարող հասկնալ, և որ բոլոր գեղագործներն յու-  
սահատցուց ... Եւ ահա այս հիւանդս վայրիկ անի  
մի մէջ առաջնացաւ: Ուուրբ Վինդենախոս Պաւլայե-  
ցոյ խորանին առջե՝ ի պատիւ նորա իննօրեայ չեր-  
մեան գութենէ մի ետև: Ճշմարիտ հրաշք մի է այս  
այնպէս չէ, թէ որ հրաշք ասացեալ բանն կոյ կամ  
կարե լինել. այս է ահա քեզ հարցնելիքս ալ » :

— « Բայց նախ և առաջ, զօրապետ, տեսածիդ  
վրայ ապահով ես, չկարէ լինել որ ...

Խոսքս զեռ թերանս էր՝ իր լեզուին ոռվորութիւն  
եղած երգումնի մի գոյեց. « Ի՞նչ, զու զիս կօյր և  
անմիտ մարդու տեղ գրած ես, ահաբ ասեմք քեզ,  
տեսի, թմ աշխատ աեսի ու ձեռօրս չուափեցի. այս  
աւնողն չը տեսներ » :

Ես ալ իմացոյ որ իր անձնամիրութեանն գարոյ.  
բայց տակաւ մի մասնելու համար ժամանակ վասար-  
կիլ ուղելով, և իր աներկմիա հաստատութիւններն  
ալ հետաքրքրութիւնն չարժելով՝ առացի. « Կամէ  
առեւնմ, զօրապետ, քիչ մի հանգարան, և պարզա-  
պես պատճե ինձ առանձդ. ես քոյ խռովիդ վասա-  
հութիւն ունիմ, որովհետեւ զբեզ ոզնամիտ մարդ մի  
հանցած էմ՝ որ երեցիթներէ ոչ խարուիս, և ան-  
կեզ ութիւնդ ալ զիտելով վատահ էմ որ Աշմար-  
տութիւնն յականցոյս իսկ ոչ այլայլես. ուրեմն զիտ-  
ցածդ ինձ պատճե՝ ինչպէս զիտյն իրողութիւն մի  
կը պատճե քննիչ գատաւորին առջն « :

— « Այս բանիս պատճենութիւնն երկայն է, ասաց.  
բայց որշափ կարելի է կը համառառեմ՝ զիսաւոր  
պարագայներն միայն յիշելով : Պիտու որ եղբայրս  
որ կառավարութեան բարձր պաշտօնիւ դրսերն կը  
զանուի, երես աղջիկ զաւակ ունի՛ մին տանեւ ու  
հինգ և միւսն տասներկու տարուան՝ որոց մայրն  
մեռած լինելուն՝ զիրենք գիշերօնդիկ հարիզու Այցե.  
լութեան կուսասասն գրած է, հոգն ու հսկազու-  
թիւնն գուրեթնուս յանձնելով՝ որ համհարեզ և  
միան զանցոյն ուրբա կին մի է : Արդ այս եղբարոր-  
դեակներուս կրասերն վանքին մեջ հիւանդացաւ,  
զարմանացի հիւանդութիւն մի՝ որ շատ աեսակ հի-  
ւանդութեանց երեսյթներ միանդանցոյն կ' երեւեին  
մրոն, այնպէս որ մայրաբազքիս ամենէն նարար  
բժիշկներն՝ բան մի չեին կարող հասկնալ : Խեղչ  
ազայն այրուզ տենդով մի կը հիւանդէր՝ հանգերմ քնա-  
ծութեամբ ու սասամի ցաւովք գլխոյ . այնպէս որ

աշաց աւառնթեան զուգահեռականութիւնն աղ  
խանդարելով՝ աւասծն երկու կը աեսէց, և պարա-  
նոցին ջզերն աղ խառաւալով՝ դլուին այնպէս հա-  
կած էր ձախ ուսին մրայ՝ որ երկու ձեռք հազիւ  
կարեիր բաժնել, ձախ բազուկն աղ միշտ մարմելոյն  
ու կոզին կազմ էր. մարմելոյն մելքեն վեր եզած  
մասն բոլորովին իր շարժումն կորուսած էր, որուն  
Քը ԾՈՂՌՈՎՈՅԻՆ անդամացոյն, ամենենին բան ուտելու  
ախորժակ չուներ, մարսազական անցքերն աղ ակա-  
րացան՝ տակու մի բան ուտելուն պէս բռուն ջուցին  
ցեցու մեկը կ'իմանեար՝ կրծոց և փորի մելտեցի դըն.  
զերաց՝ կը աեսկու որ ամեն բան կատարեալ էր, և  
մեռնիլն բան մի չեր. Յաւերուն զադրած ժամա-  
նակ՝ ուզեցին կապրու գուրս հանել զինքն՝ որ սա-  
կառ մի մարդու ոգ առնաւ, բայց այնպատի աւրուեցաւ  
որ շուտով սահպուեցան եւ դարձնելու. ։

Ա Ժամանակէ մի ետու՝ երբ բժիշկներն յշյուերնին  
կարեցին և թէշ առնելու ոչ գիտեին՝ հիւանդն հօրա-  
քոյրն ու քոյրն երկուքն աղ լի հաւատով՝ ուխտ  
գրին՝ որ Աստուծոյ գիտեն՝ որ ամենն ան բժիշկն  
է՝ որովհետեւ աէր և արարիշ և կենաց և կենդանու-  
թեան, և թնաքրույ աղօմքը մի ական ու սուրբն  
Ավետինաբիռ Պաւլոցեցի՝ որոյ անախականութիւնն  
էը կատարուեր՝ կարծեմ նշխարաց փոխադրու-  
թեան տարեզարձն. Եղբայրոս աղ որ բարի քրիս-  
տոնոց մի և եկեղեցնեամ՝ նոյն մասնակից լինելու  
համար, և որոշեցին որ թնաքրույ աղօմքից վերջին  
օրն՝ հիւանդն՝ ի համբոյր նշխարաց սբրոյն տանին  
որ Լազարեան քահանայից մատուռն գրուած էր՝ ի  
յարգութիւն հաւատացելոց. Ազդիկն աղ որ բան մի  
ուզելու կամ չուզելու կարողութիւն չուներ՝ այս  
բանիս հաւատեցաւ՝ առանց շատ հասկենալու թէ ըն-  
ատեիցն ինչ գործի հետ էին իրեն համար. Առափ  
արշագի կարելի էր հագուեցուցել ևն զինքն և եկե-

զեցին տանելով՝ կողմանական մասրան մի մեջ գրել  
են անկողնի մի վրայ, ուր պատարաց տեսելով՝ ի.  
ըեներուն հետ հազարդուել է։ Այս առեն հոյրն  
զինքն գրելով ծանր թռառն պետք որովհետև շար-  
ժելու կարգութիւն չուներ, բրոխ և միւս եզրոր-  
որդույս հետ ՚ի ծառեր իջել է որրոյն հշխարաց  
տախ և համբուրել տուել է։ Նոյն առեն ազայն  
հօրեւ առեւ. Զիս նստեցաւ. հոյրն առջի թերան ցանցու-  
կը զարնեւ՝ առելով թէ շիտրէ նստիլ. բայց ազիկն  
քաջցրութեամբ նորեն առեւ. Ասրես զիս նստեցեւ.  
Հոյրն ալ կը նստեցնէ. հիւանդն քարե աստիճանին  
վրայ շիտակ և հաստատ կը կանգնի առանց մեջքն  
ծակցու և առանց առզ մի կոթնելու. զըսին և ու-  
սերն սախորական գիրքն կ'առնուն, ձախ բազուկն  
մարմնեն կը բաժնուի և որունքն կը սկսին շարժիլ.  
Հոյրն զայս առնեկցուն բոլորովին շփոթան՝ նորեն  
կը գրեւ ազջիկն, և անկողնոյն վրայ կը տանի՛ առ-  
սածին շհաւատլով. իսկ ազայն ինքնիրեն ելնելով  
ազօթագիրք մի կ'առզէ՝ որ ասկաւ մի առեն զեռ ա-  
զօթէ։ Այս բժշկութեանս լուրն շուտով մի եկեղե-  
ցայն մեջ կը տարածուի՝ որ հաւատացելոց բազմու-  
թեամբ լի եր, և բոլոր ժաղովուրդն ծնիան վրայ  
կուգան Աստուծոյ վառք և գոհութիւն առլու-  
համար։

« Ես զորեւ մի ունելով՝ իրենց հետ եկեղեցին չեի  
կարգացած երթալ, միաբա ալ գրան լինելով թէ  
ինձ պետք անհուտատ մի բանի պիտի շփար հան առզն.  
ուստի անհամբերութեամբ իրենց գարւին կը սպա-  
սէի, որովհետեւ զործածնին անխոհմութիւն կը սե-  
պէի, որ իմ խելքովն հիւանդին վիճակն կարեր ծան-  
րացնել. Երբոր գարձան՝ եղբայրա թերառ հիւանդն  
գիրիս գրաւ, և իր վրայ երեցած շփոթութենին  
ու զիմաց այլայլութենին այնպէս կարծեցի որ ա-  
մեն բան լինցած եր, և փութով ասրի ազայն ան-

կողեցին վրայ դրի և բարձեր ուզեցի որ ամեն դին  
տեղաւորեմ. ինչպէս ամեն որ առնեինք. Բայց ահա-  
նելով որ նա անկողնոյն վրայ եւ շիտակ կանգնեցաւ.  
առարափած եւ քաշուեցայ, և դոզդովուն ձայնով և  
միանգամայն երկիւղիւ և յուսով գուեցի. Մաթիլա:  
թէ որ առողջացար եւ բնա պաշիկ մի տուր. Մա-  
թիլտ մինակ ուր ելու. 'անկողնեն իջաւ, և քանի մի  
քայլ տանըով.' Եկաւ միզս պայտուեցաւ. երկու ձեռ-  
քերովն զիս գրկելով. եւ ալ զնա որտիս վրայ կը  
անզմէն՝ որ լանջացա մէջ կը նետէր. Այս առեն ինքն  
պատճեց՝ որ սուրբ նշխառաց զայլուուն պէս՝ բան մի  
զգաց որ պարանոցին թզերն կ'արձակեն. Նուազ  
առան բժշկին մարդ զրկեցին՝ որ գաղով հիւանդն  
զնենց և ասաց որ բժշկուած էր. և եզած պատճեն.  
Թիւնն լուելով՝ ժպտելով մի ասաց. «Սուրբ Վին-  
գենտիոս Պաւլոսեցին քան զիս նարաւար բժիշկ մի է  
եղել» :

«Երկրորդ օրն ժամն ուժեւն առաջ՝ աղջիկն գրե-  
թէ մինակ հագուեցաւ, և Այցելութեան կուսա-  
տանին մասուած տարին՝ ուր պատարագ մի մասու-  
ցաւ. 'ի շնորհակալութիւն. և հազորզութեան ժա-  
մանակ առանց տեղ մի կոթնելու շիտակ մինչև խո-  
րանին վանդակին առջն կ'երթաց, ձնեան վրայ կու-  
գայ, ուստի ելնելով նորեն իր տեղն կը գառնաց:  
Նոյն օրն իր բժշկին ոյցելութեան զնաց որ նորա  
իմ թեհիս կոթնած անդուխէն վեր ելնելն տեսնե-  
լով՝ նորեն հաստատեց թէ կատարեալ առողջացած  
էր. Այսօր Երեք օր է՝ որ ամեննին ցաւ մի չզգար և  
տան մէջ կը պաշտի. Ես ալ հիմա անեն կու զամ և  
ոյս նոր լուրս ձեզ կը բերեմ, և ապրութիւնս զեռ  
անցած չէ անսածներուս վրայ, և միանգամայն  
կ'ուղեմ լուել թէ զու փորձ իմաստաւէր մի լինելով  
ինչ կը մտածես այս եղաներուս վրայ. Առան զի  
զու ալ դիտես՝ որ մինչև հիմա թէ և կրօնից թշնա-

մի շեմ և զայն կը պատռեմ, սակայն առելի իմաստափաց քովն յահախել եմ քան թէ քահանայից։ Բայց այս ծանր գեղաքիս մէջ՝ որ լուծ ու առաջներովս գեղ բոլորովն այլայլուծ եմ՝ ինձ կ'երեկի թէ եղածն խորախորհուրդ կ'երառվ քննելն հարկաւոր ու պատշաճ է զիտուն և խեղացի մարդու մի հետուամի հոս մեզ զայն առելի յարմար համարեցաց, քան թէ ուրիշներու երթալու։

— « Ենորհակալ եմ մեզ սիրելի զօրապետ, ձեր բարի համարման վրայ զոր ունիք իմ վրաս և որով ինձ կը վասահիք, թէ և կարծեմ որ այս գործոյս մէջ շատ սպասկար պիտի շնչարեմ լինել մեզ, և թէ հարցանես թէ ինձու։ Համառա մի պատասխան տամ, իմաստասիրութիւնն սկիզբն գրանց լինելով որ միայն մոաց և զբայութեանց ըմբռնողութեան ներքեւ անկած բաներու կարէ միտ զնել՝ գերբնական կամ արտաքիական ասացեալ իրաց քննութեան ժամանակ ոչ կորուսանե, որովհետեւ կը համարի թէ զայն հանուչելու միջոց և հնարք մի չունի, ուստի կան իմաստասիրք որ իրաւունք ունել համարին նոցա գոյութիւնն ալ ուրանալու, այսինքն գերբնական բան շնչաց առեն, և միջնեւ այս կետս ոչ հասանեմ, որովհետեւ միայն գրանց չեմ որ մոացս զօրութիւնն իրականութեան և համարութեան չափն է։ Բաւական կը սեպեմ այս առանկ իրաց հաստատութիւններն թօղուլ ինչ որ են, և զայնո ընդունողներն ալ ոչ մեղադրեմ, որովհետեւ մոաց և խղճի ազատութիւնն կը պատռեմ, բայց եռ իմ կողմանեւս նոցա յարդ տալին կը զբուշանամ։ Միով բանիւ այս և այլ ուրիշ շատ պատճառաց համար որ հիմա բացարելն առելորդ է՝ գերբնական ասացեալ բաներն յինեն ստաբ համարիմ։

« Բայց ասամի մեր իմաստասիրական շատիզն բոլորովն փարձառական լինելով՝ ներածութիւններ և

հետեւ թիւններ հանելին առաջ գործն չցիւ սուս-  
դելու կը նայիմք : Արդ այս բանիս մէջ ինչ կը աեւ-  
նամք . նախ ծանր հիւանդաւթեան մի երեսցիներ՝ ո-  
րոց քրոյ ոչ տարակուսիմք՝ որովհեան իմաստուն  
թէիւններ զայն քննել և հաստատել են ասեք . յե-  
տոյ տարօրինակ և յանկարծական առաջնութիւնն  
մի . որ է ասել ախտակրական երեւութից յաջորդել  
է առաջնութեան երեսցին մի . որպա այնպիսի յաջոր-  
դական գործեր են՝ որոց ներքին կապակցութիւնն  
ոչ աեւանեմ . և բայ մի չկայ որ ինձ ապացուցանէ  
թէ որքա իրարմէ կախուն ունեին : կամ ուրիշ կերպ  
խօսելով ոչ կարեմ համարիլ թէ առաջնութեան  
գործն՝ այդ տասցան բարեպաշտական գործերէ դ  
յառաջ եկած լիցի . 'ի միշտ միւսն հետացնելին ինչ  
յանդգնութիւն կ'երեի . և շատ կը վախեմ որ մի  
գուցէ այն իմաստակութեան մէջ անկանիմք որ ասի  
յէ՞ ուրագի՞ : ոսո կը այսորի : Վասն զի մերջապէս ա-  
ռաջնութեան պատճառն մէջ անծանօթ լինելով՝ կա-  
րեմք զայն նոյնափ իրաւամք՝ նախընթաց զեղերէն  
յառաջ եկած սեպել , կամ բնութեան բռւն նը-  
գանց՝ որ այն պարագայներով գրգռուել է . կամ  
թէ ... :

— Ա Բայց , սիրելի իմաստակրս , գուեց խօսք  
